7655

1937

281.6
9.69

04 NOV 2009

28.6
Գ-69

ԴՈՒՐԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ, ԹԻՒ 11


ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱՆԱՊԱՏԱԿԱՆԸ ԵՒ „ՆԱՐԵԿ"Ը

(ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՓՈՐՁ)

ԳԻՒՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ԵՐՈՒՍԱՂԷՄ
ՏՊԱՐԱՆ ՍՐԲՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ
1937

20 MAR 2013
7655





51606-65

ՀԵՂԻՆԱԿԻՆ ՄԱՍԻՆ

Ներկայ հատորը, զոր մտածումն ունեցանք հրատարակելու «Դուրեան Մատենադարան»ի շարքին մէջ, գործն է Ս. Էջմիածնի միաբաններէն հանգուցեալ Տ. Գիւտ Եպս. Տ. Ղազարեանի:

1927 ին, իմիք՝ հեղինակը ղրկած էր անոր բընագիրը Գահիրէի Առաջնորդարանը, հրատարակութեան փափաքով: Այդ միջոցին կարելի եղած չըլլալով գոհացում տալ այդ փափաքին, ձեռագիրը ղրկուած էր հոս Երուսաղէմ, յարմար պատեհութեամբ օր մը Ս. Աթոռոյս տպարանէն ի լոյս ընծայուելու յոյսով, ինչ որ անկ կը իրականանայ:

Կը գտնենք որ մեզի կարելի չեղաւ Գիւտ Եպիսկոպոսի վերաբերմամբ ունենալ կենսագրական մանրամասն տեղեկութիւններ: Ինչ որ գիտենք այս տեսակետով՝ սա է միայն թէ ծնած է Թիֆլիս 1880 ին. իր նախկին անունն եղած է Իսահակ. աշակերտած Գեորգեան ճեմարանին, 1916 ին վարդապետ ձեռնադրուած, եւ 1922 ին՝ եպիսկոպոս:

Բարձրագոյն կրթութեան հետեւած է Մոսկուա եւ Գերմանիա. սէխարհական՝ ուսուցչութիւն ըրած է Շուշիի թեմական դպրոցին մէջ, 1908 են յետոյ, եւ ժամանակ մը տնօրէնի պաշտօն վարած նոյն հաստատի օրիորդաց Մարիամեան վարժարանի մէջ: Ուսուցչական պաշտօն վարած է նաեւ Բաքու, Արմաւիր եւ Ախալցխա:

Վերջապէս, մին է եղած Մայր-Աթոռոյ այն միա-

բանձերեն, որոնք համալսարանական ուսում են ըստացած, բայց ո՛չ այն խումբեն՝ որուն կը պատկանինք հանգ. Կարապետ Եպս. Տ. Մկրտչեան, Գարեգին Արք. Եպիսկոպոս Յովսեփեան, Տիրայր Արեպս., Երուանդ Տ. Միքայելեան՝ նախկին վարդապետը, եւայլն, իրենց աստուածաբանական զարգացումով եւ բանասիրական եւ հայագիտական երկերով ծանօթ հոգեւորականները։

«Իր կրթութիւնը պատմա–բանասիրական էր, բայց իրեն կը պակսէր բանասիրական խառնուածքը», ինչպես կը գրէ մեզի գինքը մօտեն ճանչցող յարգելի բարեկամ մը. «Գիտութեան նա դիմած էր, ոչ թէ գիտութիւն մշակելու, այլ իր հարցասիրութեան գոհացում տալու համար». ուսուցիչ եղած միջոցին դասաւանդած էր Ռուսաց լեզու եւ ընդհանուր պատմութիւն։ Իբր գրաւոր երկ, բացի Թիֆլիսի «Հովիւ» կամ «Հովիտ» կրթաբերթին աշխատակցութենեն, գիտենք միայն Սեւանի անապատին վրայ գրուած համառօտ ուսումնասիրութիւն մը, այդ վանքին պատմական, ճգնաւորական, հոգեւորական, մտաւորական, միաբանական, վարչական եւ եղմական նկարագրին մասին. տեղւոյն վրայ գրուած հետաքրքրական գործ մը, որ հրատարակուած է «Հանդես Ամսօրեայ»ի մէջ (1928 տարի. էջ 51. 168 եւ 504. 1929 տարի. էջ 48. 234. 289. 384) եւ ներկայ հատորը։

Ասոնցմէ զատ, ինչպես ինքն իսկ գրած էր մեզ 1927 ին, ունեցած է գործ մը, դեռ անտիպ, «Ռուսահայ Եկեղեցին, 1892 – 1920» ընդհանուր վերնագրին տակ, երեք մասերէ բաղկացած ուսումնասիրութիւն մը, Մկրտիչ Ա. Խրիմեան, Մատթեոս Բ. Իզմիրլեան եւ Գէորգ Ե. Սուրենեան կաթողիկոսներու ժամանակի վերաբերմամբ։

Թէ այս գործը, իբրեւ Հայրապետական իշխանու-

թեան կեդրոնին մէջ նոյն իսկ եւ պատմուած եղելութեանց մեծ մասամբ ժամանակակից եւ ականատես ու խղճամիտ անձէ մը գրի առնուած երկ, ո՛րքան շահեկան պիտի եղած ըլլայ իբրեւ ուսումնասիրութիւն, ոչ մէկ տարակոյս կրնայ ըլլալ այդ մասին։ Երբ ներկայ հատորին ձեռագրին հետ անոր ձեռագիրն ալ կրցած այն տեղ փոխադրել այս կողմը, ապահովաբար մեր այս շարքին կարեւորագոյն գիրքերեն մին պիտի ըլլար ան։

Աւելորդ չենք համարիր այս տեղ դնել այս առթիւ մանրամասնութիւնը այս գործին բովանդակութեան, իր գրչով նոյն իսկ հաղորդուած մեզի 1927 ին.

«Ա. *Մկրտիչ Ա.*, ա.— Ռուսահայոց վիճակը 90 ական թուերին. բ.— Խրիմեանի ընտրութիւնը. գ.— Ռուսահայ եկեղեցու վիճակը մինչեւ 1905 թ. յեղափոխութիւնը. դ.— Մայր Աթոռի տնտեսական դրութիւնը եւ կուլտուրական աշխատանքը. ե.— Եկեղեցական դպրոցները.— զ.— Տանկահայերի կոտորածը եւ հայ եկեղեցու ձեռք առած միջոցները. է.— Եկեղեցական կալւածներու գրաւումը (1903 թ.). ը.— Կովկասի հայ–թուրքական կոտորածը. թ.— Ռուսահայ ազգային կեդրոնական ժողովը. եկեղեցական բարեկարգումներ եւ Խրիմեանի մահը։ Աշխատանքն ունի 46 յատելուած. ամբողջը միջին դիրքով (8°.). տպագրական 400–450 էջ։

«Բ. *Մատթէոս Բ.*, ա.— Հայ եկեղեցու կացութիւնը կաթողիկոսական ընտրութեան շրջանում. բ.— Էջմիածնի դրութիւնը եւ Մատթեոս Բ.ի Մայր Աթոռ ժամանելը. գ.— Դրսի հայութեան վիճակը. թեմական խորհուրդ. ներքին խնդիրներ. դպրոցական հարցը. կաթուղիկոսին մահը. եւ 16 յատելուած. տպագրական մօտ 100–120 էջ։

«Գ. *Գէորգ Ե.*, ա.— Ռուսահայերի հաստատակա-

կան վիճակը 1870–1900 թ. բ.— Գեորգ Ե.ի ընտրութիւնը. գ.— Խաղաղ շրջանի գործունեութիւն. դ.— Համազգային մեծ յոբելեանը (Տաւերի գիւտի 1400 ամեակ եւ Տպագրութեան 500 ամեակ). ե.— Տանկահայ հարցը, 1912–1914 թ. զ.— Հայերի մասնակցութիւնը մեծ պատերազմին. է.— Հայերի կոտորածը Տանկաստանում (ըստ Հայրապետական Դիւանի տեղեկերի). ը.— Հայ գաղթականները Կովկասում. «Ընդայրական Օգնութիւն». թ.— Եկեղեցական — Բարեկարգումներ 1917 թւին ռուսական յեղափոխութիւնից յետոյ. ժ.— Հայաստանի Հանրապետութիւնը 1918 թւին եւ հայ եկեղեցու համար սկսող նոր շրջան. եւս 77 յաւելուած. մօտ 600 էջ տպագրական: Երեք աշխատանքը միասին մօտ 1200–1300 էջ տպագրական:

«Բովանդակութիւնից էլ երեւում է, որ կան խընդիրներ, որոնց մասին կան լոյս տեսած աշխատանքներ. սակայն այդ աշխատանքներում հայ եկեղեցու, յատկապես Մայր Աթոռի ունեցած աշխատանքը պարզուած չէ. այս տեսակէտից կարծում եմ կարեւոր է, որ նորից լուսաբանուեն:

«Յաւելուածները առաւելապէս վաւերագրեր են, որոնց մէջ կան այնպիսիները, որոնք դեռ տպագրուած չեն, կան եւ այնպիսիները, որոնք թեեւ տպագրուած են, բայց կամ մոռացել են կամ մամուլի մէջ են տուած եւ ամենքի ձեռքը չեն հասնում հեշտութեամբ»:

✲

Հակառակ գիտական իր կարեւոր պատրաստութեան, Գիւտ եպիսկոպոս կը թուի շատ ուշ՝ եպիսկոպոսացումեն յետոյ միայն նուիրուած ըլլալ գրական աշխատանքի: Այդ վիճակը հետեւանք է եղած հաւանաբար

իր մէջ անձնական եւ պարագայական պատճառներու:

Սկիզբեն Ֆիզիքապես ոչ բաջակազմ, մանկան խառնուածքի տէր, վերացական գաղափարներէ իչ մը շատ տարուած, երազուն եւ «իր ներքինը չափազանց պրպտող» հոգի, իր երկրորդական կրթութեան շրջանը անկիկա Մայր Աթոռոյ մէջ աւարտած է Խրիմեանի կաթողիկոսութեան վերջին տարիներուն, երբ ընդհանուր եւ ազգային իրադարձութիւններ վերիվայրած էին Կովկասահայոց ներքին կեանքը, ուր քաղաքական հոսանքներ թրծանայ եւ հայ-թաթարական դէպքերէ ազդուած, իրենց ամենէն սաստիկ բախին մէջ էին ինկեր, եւ էջմիածինը, ուր այդ հոսանքները չէին կրնար առանց ազդեցութեան մնալ՝ մասնաւորաբար նեմարանին եւ միաբանութեան երիտասարդ տարրերուն վրայ:

Մայր Աթոռոյ մէջ այդ ցնցիչ ազդեցութեան զոհերէն եղած էր նաեւ Գիւտ, որ, իրեն դպրոցակից եւ ասիճանակից ուրիշներու հետ պահ մը կարծեր էր թէ հոգեւորական ասպարէզին դուրս, առանց սեմի, աւելի դիւրութիւն պիտի ունենար ազատօրէն ծառայելու իտեալի մը՝ որուն համար նոյն իսկ թերեւս մտեր էր այդ ասպարէզին ներս: Սխալ ըմբռնուած «ազատութեան» մը նամբուն վրայ ապրուած տարիներու կեանքը ասկայն, իրեն պես դիւրազգած հոգիի մը համար մանաւանդ պատրաստներով եւ լկտիներով լի, երբ ի վերջոյ նորէն ցոյց տուեր էին իրեն վանական կեանքը, այս անգամ անկիկա հոն բերեր էր բոլորովին վատուժած մարմինի մը մէջ նաեւ չարչարուած հոգի մը, որուն մէջ դեմ առ դեմ միտ իրարու, ու երկուքեն մին առանց բայլ մ'իսկ տեղի տուած ըլլալու միւսին՝ կանգնած էին հաւատքի զգացումն ու գիտական միտքը:

Ասկէց՝ անշուշտ՝ անդոհի այն մռայլը, որ կը

պտուտքի շարունակ իր ներսը, երկու ոյժերու միջեւ տարուբերուող սիրտի ու միտքի անվերջ կոծկոծանքով, միջնէ իր կեանքին եղերական վախճանը:

Հոգեկան այս վիճակը սակայն, նեռի ազդելէ իր բարոյական նկարագրին վրայ, աւելի սրատրաւ դարձուցած է կարծես իր մէջ մարդը: Հոգեւորական կեանքի վերջին վերադարձէն յետոյ, իր բարի, անկեղծ, լուրջ եւ ծայր աստիճան բարեգութ նկարագրովը սիրելի դարձած է ամենուն, Միաբանութեան, ժողովուրդին եւ Գեորգ Ե. կաթողիկոսին, որ հայրական անունս ալ ապահովութիւն ունեցած է միշտ իրեն համար:

Եպիսկոպոսանալէն յետոյ, հոգեկան հաւեմատապէս հանդարս օրերու ընթացքին է որ պէտ է գրուած ըլլայ երէ վերջին կաթողիկոսներու ժամանակին նուիրած իր այդ ուսումնասիրութիւնը: Իսկ աւելի վերջը, խալխային դեպքերու եւ ազգային կեանքի՝ մեր բնաբխարհին մէջ ստացած բացառիկ այն կացութեան միջոցի՞ն արդեօք, նորէն կը թուի վերսկսած ըլլալ իր մէջ, այս անգամ թերեւս աւելի բուռն մրրկումներով, զգացմանց եւ խոկումներու կռիւը: Մանրազնին երկայնմտութեամբ եւ յատուկ մտածողութեամբ տղուած այն էջերուն մէջ, ուր Սեւանը կ'ուսումնասիրէ, կարծես կը պատկերանայ աշխարհին խուճապահար փախած մարդուն սէրը դէպի մենակեաց կենցաղի խաղաղութիւնը: Իսկ «Նարեկ»ի նուիրուած այս հատորին մէջ, որ, իբրեւ հայ անապատական հոգիին վրայ հանչեցողական տեսութեանց փունջ մը, իբրեւ նորութիւն մանաւանդ, ունի իր ուրոյն արժէքը, իմիգիմին է որ կարծես վերլուծումը կ'ընէ ան յանախ:

Թէ իբրեւ գրչի մարդ եւ մտաւորական ի՛նչ է իր բուն արժէքը, մերձաւորապէս կրնայ հասկնալ մարդ՝

կարդալով իր այս երկու գրուածքները. բայց հանչնալու համար բուն իսկ մարդը, որ այլապէս գրաւիչ եղած ըլլալ կը թուի իր մէջ հաւ մասնագիրը, պէտ է լսել իրեն հետ մտերիմ արտակցութեան մէջ ապրածներուն, որոնք անչափ տպաւորուած են իր անձնէն:

Անոնցմէ ամենէն արժանահաւատներէն մէկիքն են յաջորդ տողերը, որոնցմէ եթէ բաւական մը զեղչենք իսկ, իբրեւ խանդավառ բարեկամի զմայլանքին բաժինը, դեռ շատ բան կը մնայ ի գովեստ ստոյգ արժանիքի մը:

« . . . Ձեզ պիտի յայտնեմ, որ աւելի նրբին մրտաւորականի ես գրեթէ հանդիպած չեմ իմ կեանքի հանապարհին: Հոգեկան իր խոր մտակոյքի լաւագոյն արտայայտութիւններից մէկը — իր անսահման անկեղծութիւնն էր: Անկեղծ էր քնքն իրեն հետ . . . :

«Երէ արբութիւններ նրան պահում էին յաւիտենական տառապանքների մէջ — Հայրենիք, Հայ Եկեղեցի եւ Գիրք: Մէկ մոլի, պատճառուներ հասնող մէկ կոյր սէր ուներ դէպի Գիրքը, մանաւանդ իր սիրած Գիրքը: Այդպէս էր նաեւ իր հասուն տարիքին մէջ . . . : Յիշում եմ թէ ի՛նչպէս յանախ իր սիրած գրքերից մէկնումէկը կ'առներ թեւի տակ, հրճուանքով կը սկսէր պտտել սենեակում, կը համբուրէր, կը սեղմէր կրծքին, հատուածներ կը կարդար, նորից կը համբուրէր: Դրսից դիտողը երբէք չէր կարող կռահել, թէ այսքան մանուր կրակ եւ մանկական այսքան անմեղութիւն կայ այս խոնուն հոգեւորականի մէջ — արտաքնապէս այնքան լուրջ, այնքան մռայլ ու թախծոտ դէմքով: Պատճառներ հասնող սէր ուներ յատկապէս երկու գրիչների հանդէպ — *Նարեկացի* եւ *Դոստոեվսկիյի:* Գրեթէ ամեն օր սրանցից

մեկնումեկին պիտի առներ եւ Աւետարանի նման այս կամ այն գլուխը կարդար։

«Իր նկարագրի ցայտուն գծերից մեկն էր իր վառ սերը դեպի աշխատանքը։ Nel lavoro avrai luce di vita (Աշխատանքի մէջ պիտի ունենաս կեանքի լոյսը) — Միքել Անճելոյի այս իմաստուն խօսքը ասուած էր նաեւ այս մարդու համար։ Մեկն էր մեր այն հին ու խնկելի հոգեւորականներից, որոնք յարատեւ տքնութեան մէջ անցրուընջ մաշում էին իրենց կեանքը։ Հանգիստ չունէր, վաղ առաւոտից մինչեւ ուշ գիշեր շարունակ աշխատանքի մէջ էր, շարունակ գործի վրայ։ Ու միշտ նոյն բարմ, նոյն եռուն ու որոնող մարդը։ Ոչինչ, ոչինչ չունէր այս աշխարհում — իր խուցը եւ վանքի մի կտոր հացը, ահա՛ բոլորը։ Եւ գոհ էր. նիւթը այնքան տեղ ունէր իր հոգիի մէջ, որքան այդ անհրաժեշտ էր իր նիհար, նուրբ եւ փխրուն մարմնի գոյութիւնը խոր տալու համար...։

«Յանձին Գիւս եպիսկոպոսի ոչ միայն Հայ ժողովուրդը կորցրեց իր լաւագոյն բարեկամներից մեկին, այլ եւ Հայ Եկեղեցին։ Կրօնաւոր էր իր բովանդակ էութեամբ, իր հոգու բոլոր թելերով կապուած էր Հայ Եկեղեցուն, նրա մէջ տեսնելով պահապանը իր որբ Հայրենիքի եւ իր հալածական ժողովրդի։ Իսկապես որ մի զարմանալի եւ հմայիչ մարդ էր, մեկը այն հոգեւորականներից, որոնք փառաւորեցին Հայ Եկեղեցին»։

Հայ Եկեղեցու պատմութեան չ'ուսումնասիրուած հարցերից մեկն էլ հայ անապատները եւ անապատականների կեանքն է։

Վերջիններիս դերը Եկեղեցու եւ հայ կեանքի պատմութեան մէջ ուրոյն է եւ ուշագրաւ։

Գր. Նարեկացին եւ իր հռչակաւոր հոգեբուխիւն *„Նարեկ"*ը հայ անապատական կեանքի ամենացայտուն օրինակն է. որի պարզաբանութեան են նուիրուած յետագայ տողերը, իբրեւ ուսումնասիրութեան առաջին փորձ։

ԳԻՒՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱՆԱՊԱՏԱԿԱՆԸ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱՆԱՊԱՏԱԿԱՆԸ

Գլ. Ա.

Ցոյն-հռոմէական աշխարհը եւ եկեղեցու կազմակերպումը Բ.—Ե. դարերում։

1.— *Մինչդեռ Հռոմում Հանրապետական սկզբունքները, հին հռոմէական զգաստ, աշխատասէր կեանքը մեռնում էր յանձին Օգոստոս կայսեր, եւ սկիզբն առնում բռնապետական կառավարութիւնն ու շռայլ կեանքը, Գալիլիայում հանդէս էր գալիս նոյն ՀրՔանում Հ.քաւորի, աղքատի ու մարդկանց հաւասարութեան, այլ եւ հոգեկան անվերջ յառաջդիմութեան մեծ Քարոզիչը։*

Կարծես պատմութեանը հաճելի էր երկու հակադիր ոյժերի միաժամանակ հանդէս բերելը, որ պայքարն աւելի ուժեղ լինի եւ մարդկութեանը համոզէ, որ նիւթական ոյժի ամենամեծ ու ուժգին արտայայտութիւնն իսկ անզօր է մարդկային հոգեկան կատարելագործման սրբազան աշխատանքը կատարելու, եթէ իւր հիմքում չունի հոգեկանի առողջ ու անմեռ սաղմը։

Ճշմարիտ է, Օգոստոս կայսրը կարող էր հպարտանալ, որ իւր իշխանութեան տակ գտնուող ժամանակի քաղաքակրթ ու վայրենի աշխարհները՝ կըրթուած արևելքն ու վայրենի արևմուտքը «Հռոմէա-

կան խաղաղութիւն» են վայելում. նա գուցէ իւր ինքնասիրութիւնը չոյուած էր համարում, երբ իւր պատւին տրուած մի գրութեան մէջ ասւում էր «Ծովն ու ցամաքը հանգստով զբաղանում են, քաղաքները ծաղկում են հաչտութեան ու խաղաղութեան մէջ» — բայց հռոմէական լեգէոնների լայն սրերի վրայ հաստատուած այդ խաղաղութեան արժէքը չատ էր կասկածելի որ հէնց նրա յաջորդների ժամանակ չխախտուէր իւր հիմքից՝ վերջնական փլուզման տանելու այդ վիթխարի կայսերութեանը:

Հռոմէական կայսրը ի զուր չէր, իւր մահից յետոյ ապա և կենդանութեան ժամանակ, աստուածացւում, քանի որ յանձինս նրա մեծ պետութեան գաղափարն էր պաչտւում. պետութիւնը կրօնից ու բարոյականութիւնից բարձր էր և հռոմէական կայսեր, այդ երբեմնի բռնակալի ու չլայտութեան հանճարեղ ծառայողի «հանճարին» չպաչտողը պետութեան թշնամի էր նկատւում:

Երբ հռոմէացի իմաստասէրը, որ եւ է պատրիկի Լուկուլլոսեան ճաչին ամենայն սառնասրտութեամբ կարող էր ասել «աստուածներն այժմ միայն ճարտասանական ձևեր են», բնական է, որ կեսարի հանճարի պաչտամունքն էլ, մարմնացած որեւէ արձանում, ոչ թէ որեւէ կրօնական արժէք պիտի ունենար, այլ զուտ քաղաքական, որի դէմ ելնողին պէտք էր խըստագոյնս պատժի ենթարկել:

Հռոմն արդէն դադարել էր զտարիւն հռոմէացիների քաղաք լինելուց. «հռոմէական քաղաքացու» պատուաւոր իրաւունքը եւ խորը ըմբռնումը այժմ տեղի էր տւել այն բազմաթիւ ազատագրւածներին, գրամատիրական ձեռնարկութիւններով զբաղուողնե-

րին, որոնցմով օրէցօր ճոխանում էր Նոր Բաբելոնը, որոնց ձեռքով ընդարձակւում էր սարկատիրութիւնը և գերեվաճառութիւնը յօգուտ «ուտենք ու խմենք, որովհետև վաղը մեռնելու ենք» սկզբունքի սակաւաթիւ հետևողների:

Դեռ առաջին դարում մեր չրջանի՝ արդէն կարելի էր Հռոմը այլ ևս ոչ հռոմէացիների, ոչ էլ Իտալացիների (Իտալիկների) քաղաք անուանել, այլ ամեն ազգերի, կոսմօպօլիս մի քաղաք: Այդտեղ կարելի էր հանդիպել՝ յոյնի և եթովպացու, գերմանացու և գալլիացու, չինացու և հրէայի, արաբի և եգիպտացու, մեդացու և պարսկի և հնդիկի և հայի ևայլն:

Իւպիտերի, Իւնօնայի, Նեպտունի, Մարսի և այլ հռոմէական աստուածների տաճարներին կից կառուցուել ու կառուցւում էին Սերապիսի, Իզիտայի, Կեբեելայի, Միհրի և այլ արևելեան աստուածների տաճարները, որոնց ոչ պակաս յաճախում էին «հետաքրքրութեան սիրահար» հռոմէացի ազնուական տիկինները, յուսահատ ու ձանձրացած պատրիկները, տեսնելու այն աճպարարական հանդէսները այդ տաճարներում, որ ճարպիկ քրմերը կազմակերպում էին ամպրոպ, կայծակ, հողմ, աստուածների խօսակցութիւն առաջ բերելով, հաչմանդամներին բժչկելով, որոնց վաղօրօք վարձատրում էին բժչկութեան օրը հաչմանդամ ձևանալու և քրմի աղօթքով «հրաչքով» բժչկելու: Ժողովուրդների խառնարան քաղաքը միաժամանակ եւ կրօնների, բարոյական ուսմունքների խառնարան էր, ուր ամեն ինչ կեանքի հաճոյքը աւելացնելու, կեանքը գրաւիչ, գիւրալի ու հեշտասէր դարձնելու արժէք ունէր:

«Մենք, գրում է Սենեկան, պէտք է փնտռենք

որեւէ տեղ մի արգարի եւ միշտ նրան աչքի առաջ ունենանք, որ կարողանանք ապրել եւ գործել այնպէս, որպէս թէ նա նայում է մեզ: Մեր մեղսալի մտադրութիւնների մեծ մասը չէին իրականանար, եթէ մեր բոլոր արարքները ունենային վկաներ: Մեր սրտի համար անհրաժեշտ է ունենալ որեւէ մէկին, որի պատկերը լուսաւորում է մեր ինտիմ կեանքը: Բախտաւոր է նա, ով յարգում է մէկին այնքան սրբի տեղ, որ իւր ամբողջ կեանքը կարգաւորում է նրա պատկերով, որ ապրում է իւր յիշողութեան մէջ»:

«Այս տրամադրութիւնը, որ այսքան պայծառ արտայայտութիւն է ստացել այս խօսքերում, ասում է հեղինակը՝ Ա. Դրևսը, շատ տարածուած էր հին դասական կուլտուրական աշխարհում մեր դարեշրջանի սկզբում: Անյուսալիութիւն, ամեն տեսակ երկրայինի ապականացու լինելու տանջող զգացումը իբր ծանր մղձաւանջ կախուած էր այդ շրջանում շատ հոգիների վրայ: . . . Այն նաեւ հաւատը որ կար թէ բնութիւնը և հոգին ներդաշնակ միութիւն են կազմում, այն պարզամիտ վստահութիւնը, որ իրերը իրական զօրութիւն ունին, այն ինչոր Միջերկրականի շրջիկ ապրող ժողովուրդների երիտասարդական կենսական ոյժերի արտայայտութիւնն էր վաղուց և անվերադարձ անյետացել էր»(*):

Ահա ի՞նչ վիճակ ունէր ժամանակի մտային դաշը, որ կրօնական ամենատեսակ ուսմունքների հետ ծանօթանալով չէր կարողանում գտնել «այն մէկին» որը իւր կեանքի ուղեցոյց պիտի լինի և չունէ տուողը:

(*) Ա. Դրևս, Յիսուսի առասպելը. Մ(ոսկուա), 1923, էջ 4-5:

Թէ ինչ սոսկալի անկման էր հասել մեծ կայսերութեան կենտրոնի, կառավարող դասի և անհատների կեանքը՝ գեղեցիկ նկարագրել են Հ. Սենկևիչը իւր «Ցո՞ Երթաս», Ֆարրարը «Քրիստոնէութեան Սրճալոյսին», Ուօլլէսը «Բէն Հուր» լուրջ ուսումնասիրուած վէպերում: Փոքրաթիւ կառավարողների ու զբաղմատէրերի դասակարգը, որ շուրջ 100 միլիոն ազգաբնակութիւն ունեցող կայսերութեան մի հարիւրերորդ մասն էլ չէր գուցէ, իւր առասպելականութեան հասնող զեղխ կեանքը սարկութեան չղթաներում հիւծուողների, թիատարտութեան դատապարտուածների, սովամահ եղող գիւղացիների, հռոմէական և այլ մեծ քաղաքների կրկէսներում գաղանամարտութեան և ըմբշամարտութեան, սուսերամարտութեան եղնող գլատիատորների արեան ու արցունքի վրայ էր հիմնել:

Հռոմը, Աղեքսանդրիան և Անտիոքը, մեծ կայսերութեան այդ երեք մեծ քաղաքներն էին հին աշխարհի — եթէ այդ որոշումը տեղին է առհասարակ գործածել — կուլտուրայի որբան-կենտրոնները, ուր որ եթէ մի կողմում մի խումբ գեղարուեստագէտներ ու փիլիսոփաներ իրենց հանճարն էին հրահրում նոր ըմբռնումներ առաջ բերելու, պաղ, կեանքից կտրուած ու վերացականութեան կնիքով դրոշմուած ըմբռնումներ, միւս կողմում միլիոնաւորներն էին չքաւորութեան որջերում վայնասունի մէջ կորչում, անկարողութեան խռպոտ ճիպերով մահուան գիրկը նետուում, դասական կուլտուրայի լաւագոյն արտայայտութիւններին և անտեղեակ և անտարբեր:

Շռայլութեան տենչով համակուած հռոմէական նահանգները կառավարող կոնսուլները և պրօկոնսուլ-

ները մի քանի տարուայ ընթացքում միլիոնների հաբրստութիւն ձեռք բերելու համառութիւնն ունէին հեշտութեամբ, և իրենց իսկ հրապարակական մեծ կողոպուտ-թալանները մասնակից կեսարները ամենեւին չէին էլ մտածում խօսք ասելու, որ հէնց իրենց կեբակրող պահող ժողովուրդը սնանկանում, չքաւորութեան դուռն է հասնում, որ հարկերի ծանրութեան տակ ազգաբնակութիւնը տնտեսապէս սնանկանում է և թափառականութեան ոգով բռնւում, աւազակութեան արհեստը իւրացնում, պրօլետարիատի թիւը բազմապատկում, «հաց ու զւարճութիւն» աղաղակող, կաշառուող, անգիտակից ամբոխի քանակը մեծացնում։

Որքան Հռոմում չռայլութեան տենչը կատարելագործւում և արտառոց, զարհուրելի արատայայտութիւններ էր ստանում՝ այնքան դրամի պահանջը բնականաբար մեծանում էր, այնքան պետական նոր բանոր հարկերը ծանրանում բազմապատկւում էին ու անգործների, փախստականների թիւն աւելանում։ Ի զուր Եգիպտոսի փոխարքայ Սեմպրոնի Լիբերալիսը 154 թ. Ք. յ. գրում էր «Ես գիտեմ, որ չատերը իրենց հայրենիքը թողնում են իրենց ընտանեկան հանգամանքների վատ լինելու պատճառով. ուրիշները կարճ ժամանակուայ հիւանդութեան պատճառով — փախել են անձնական հարկերից. նրանք այժմ էլ օտարութեան մէջ են մնում, հրատարակուած հրամաններից վախենալով»(*)։ Անապատները փախչողները, ճգնարանները մտնողները, աւազակների խմբերում

(*) Հելմգոլտ, Պատմութիւն մարդկութեան. հատ. Գ., էջ 677։

գտնուողները իրենց ապահով վայրերից չէին վերադառնում։

Եգիպտոսը իւր կուլտուրայով, գիտութեամբ եւ բնակչութեան խտութեամբ Ք. — Դ. դարերում հռոմէական կայսերութեան մէջ առաջնակարգ տեղ էր գրաւում. բայց հասարակական-քաղաքական պայմանները, հողագործների, խաչնարածների և մասամբ քաղաքի արհեստաւորների համար այնքան ծանր էին, որ այդ դժբախտները գերադասում էին անապատ քաչել, վանք մտնել, քան վերադառնալ։ Փախչողհետացողների հոսանքը հետզհետէ սաստկանում էր ու սպառնական կերպարանք ստանում։ Որքան և պետութիւնը այդ վտանգի առաջն առնելու համար յատուկ, կտրուկ օրէնքներ էր հրատարակում, այնուամենայնիւ անապատները լցւում էին, կազմւում էին նորանոր անապատներ(*)։

Տնտեսական ճգնաժամը ուժեղանում էր տարեցտարի, վաճառականութիւնը անապահով էր դարձել, պետութեան ֆինանսները սնանկանում էին. միւս կողմից արեւմուտքում սկսել էին բարբարոսների յարձակումները սաստկանալ, ուժեղ թափ առնել ըստ կասած Ա. դարից, գերմանացիների արշաւանքներից մինչև Դ. — Ե. դարերի ազգերի մեծ արշաւանքը, նոր ժողովուրդների թարմ հոսանքը, որ երկուսի բաժանուած կայսերութեան արեւմտեան մասի անկման և արեւելեանի սահմանները բաւական նեղանալու հետեւանքն ունեցաւ։

Եթէ հռոմէական ճարճատուող կայսերութեան

(*) Վ. Շուլցէ. Պատմութիւն ցոյն-հռոմէական հեթանոսութեան կործանման. 1887, էջ 223-24։

մէջ քաղաքական ծանրութեան կենտրոնն արեւմուտքն էր, ապա կուլտուրական–կրթականը արեւելքն էր, Աղէքսանդրիան ու Ասորիքն էին ժամանակի հելլէն ու սեմիտական գիտութիւնների աշխատանոցները։ Զանազան փիլիսոփայական ուսմունքներ Գ. — Դ. դարերում զարգացան. ուժեղ հոսանքը նոր–պղատոնական փիլիսոփայութիւնն էր և նոր–պիւթագորեանը, որոնք և մեծ եռանդով աւանդւում էին Աղէքսանդրիայի դպրոցում, ցոյն փիլիսոփայութիւնը սեմիտականի տարրերով խճողուած ծաղկում էր արեւելքում և ժամանակի գիտական աշխարհի համբաւը այդ քաղաքին էր վերապահուած։

Աշխարհի զանազան կողմերից այդտեղ էին ընտապում գիտական ուսումնասիրութիւնների համար։ այդտեղ սկիզբն առաւ «Բան»ի (Լօգոսի) ուսմունքը, որ յետոյ հեշտութեամբ քրիստոնէութեան անցաւ։ Մեռած, պաղ էր ու հասարակութեան համար կենդանի արժէք ունենալուց շատ հեռու այդ փիլիսոփայութիւնը, մի խումբ մտացիների մտաւոր փորձերի, գիտողութիւնների առարկայ էր այն և շատ հեռու կենդանի ժողովրդական կրօն դառնալուց, միլիոնաւոր աղքատ դասակարգին բաւարարելուց։

Քաղաքական կեանքի աստիճանական քայքայում, տնտեսական սնանկութիւն, կրօնական անտարբերութիւն, բարոյական սկզբունքների կամ բացակայութիւն կամ եղածի թմրածութիւն, գիտութեան մեկուսացում, առանձնացում, դասակարգերի յարաբերութեան սաստիկ լարուածութիւն, պրօլէտարիատի բազմանալ, բուրժուազիայի թւական սահմանափակում և բարոյական անկում, բարբարոս ցեղերի տեղահան լինել, Հռոմի չռայլութեան նախճիրները

մինչեւ անպատկառութեան աստիճան բազմապատկում, ահա ի՞նչ պայմաններում Նազարէթցի Յիսուսի ձկնորս առաքեալներն սկսեցին իրենց Մեծ վարդապետի ուսմունքը քարոզել, Գալիլիա, Երուսաղէմ, ապա Ասորիք, Փ. Ասիա և Յունաստան ու Հռոմ անցնելով, իրենց մէջ աւելի պատրաստի ու եռանդուն քարոզիչ–պրօպականտիստ ունենալով Տարսոնցի Պօղոսին, որ ծանօթ էր մասամբ ժամանակի յունական գիտութեան ու հռոմէական կայսերութեան կարգ ու կանոնին, անկման դիմող վիճակին, և որը քարոզիչ լինելու հմտութեանը, լեզուի ճարտասանութեանը տիրապետում էր՝ և իւր լսողների հոգեբանութիւնը հեշտութեամբ էր ըմբռնում։

2. — Եթէ Գալիլիայի տասներկու հաղիւ գրել կարդալ իմացող ձկնորսները կարողացան մարդորս դառնալ և Գալիլիայի սահմաններից ելնելով հետզհետէ հռոմէական կայսերութեան զանազան մասերում, անգամ Հռոմում, իրենց նոր ուսմունքը արմատաւորել, դրան նպաստեցին վերեւը թւած պայմաններից զատ պիտի աւելացնել Մարդու Որդու անձնաւորութեան այն մեծ հմայքը որ ունեցել էր հոգով վերածնւած այդ առաջին քարոզիչների վրայ և այն հոգեկան տարտամ վիճակը, որ ունէր ժամանակի մարդը, սպասողական չբաւարարուած ձգտումը, որ նկատւում էր դեռևս նիւթականի յղփացման ծովում խապար չխորասուզւած հոգիների մէջ։

Զարմանալի չէ, որ հռոմէացի և յոյն հեղինակները Ա. դարում քրիստոնեաներին ծաղրում էին «յիմարներ, ցած ծագումի գիւղացիներ» անուանելով, արհամարհում էին և անպատւութեան մատնում, ո–

րովհետև քրիստոնեաները «չքաւորութիւնից, սովից, ցրտից, աչխատանքից հիւծուած մարդիկ էին, որ հաւաքուած են հասարակութեան տականքներից»։ Չէ՞ որ ըստ հռոմէացի գիտունի և պատրիկի՝ ճշմարտութիւնը, խոստութիւնը միայն ունևորի մեծնաչնորհն էր և ստրուկը, գերին, գիւղացին, չքաւորը միայն աչխատանքի, դրամ վաստակելու ասուն, կենդանի գործիքն էր, հետևապէս ծիծաղելի կլիներ ինչոր ըստրուկների, չքաւորների մէջ կրօնական ճշմարտութիւն գտնել, նրանց արժէք տալ և նրանցից երկիւղ ունենալ։ Ճշմարիտ է Մեծ Վարդապետը ասել էր. «Գոհանամ զքէն Հայր Տէր երկնի և երկրի, զի ծածկեցեր զայս յիմաստնոց եւ ի գիտնոց եւ յայտնեցեր տղայոց», բայց այդ ճշմարտութիւնը դասակարգային քարացած գիտակցութեամբ յղփացած պատրիկին անհասկանալի էր և ծիծաղելի։ Որքան և Ներոնը քրիստոնեաների դէմ հալածանք սկսեց, բայց այդ մի պատահական երևոյթ էր, պայազատ Ներոնի այլասերուած հաճոյքների զանազանակերպութեան համար. քրիստոնէութիւնը դեռ արհամարհուած դասակարգի ուսմունք էր, այն դասակարգի, որը այդ երկրում ոչ մի մխիթարութիւն չունէր. «Լսում էր այդ քարոզը տանջուող եւ չարչարուող մարդը եւ նրա սիրտը լցւում էր մխիթարանք. նա տեսնում էր, որ իւր բոլոր տանջանքները ոչինչ են համեմատած երկնքի կեանքի հետ, որ նրան խոստանում էին. նա սկսեց գիտակցել իւր մէջ մարդը եւ ամբողջ սրտով դարձաւ Քրիստոսին։ Հին աստուածները թշնում էին նրան հարուստների և տէրերի համար, և միայն նոր ուսմունքի մէջ զգում էր նա դէպի լինքը ուշադրութիւն և կարեկցութիւն»։ — «Առաջին քրիստոնեաների մէջ իշխում էր ամենալաւ եղբայրական սէրը. հարուստները սիրով օգնում էին խեղճերին և յաճախ իրենց ըստացուածքի բաւական մեծ մասը տալիս էին նրանց կարիքների համար»(*)։

Ճշմարիտ է, առաջին դարի քրիստոնեաների մէջ եղել են նաև կրթուած դասի պատկանող անձինք, բայց թիւով չատ քիչ, որովհետև Մեծ Վարդապետի ուսումը «երանի աղքատաց» ուշագրաւ խօսքով էր սկսուած ու նրա աղքատ առաքեալներն էլ հռոմէական լայնածաւալ կայսերութեան 90 առ հարիւրը կազմող աղքատների մէջ էին գնացել քարոզելու, մարդկանց, որոնց անհասունի էին հաւասարացրել յոյն–հռոմէական աղնուական դասակարգը, որոնց համար կեանքը անլոյս խաւար էր, իրենց մահը կեանքի վերջը, տարտարոսի և ունայնութեան բաժին։

Նոր հասարակական կարգ ու կանոն մտցնող ուսմունքին անձնւիրութեամբ, իդէալիստական անձնազոհութեամբ նւիրուած քարոզիչները իրենց նոր կեանքը կոմմունիստական հիմքերի վրայ էին դրել եւ առաքօրէն հետեւորդներ էին ձեռք բերում, Փ. Ասիայում, Յունաստանում, Հռոմում նոր քարոզած վարդապետութեան գարմանալի գրաւիչ պատկերներ, օրինակներ տալով։ Առաջին քրիստոնէական համայնքը պրօլետարական էր իւր դասակարգային կազմով, քրիստոնէական կոմմունիստական իւր կենցաղով, առանց մտածուած դասակարգային գիտակցութեան տեսլների վրայ հիմնուած լինելու։ Եւ եղբայրութիւն, հաւասարութիւն, յաւիտենական կեանք քա-

(*) Նիկ. Անտրէեւ. Հին Հռոմը, Պետերբուրգ, 1921, էջ 118 - 119։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ–Арм ССР
им. А. Мясникяна

բոզող առաքեալը իւր իսկ արեան գնով, տանջանքի — խաչի ճանապարհը բռնելով ողողում, ոռոգում էր խոպան դաշտ–արտերը նոր ուսմունքի առողջ սերմերը ցանելով, որոնք մէկէն 40 և 100 էին տալիս:

Հռոմէական կայսրների հալածանքները սկսեցին աւելի ևս զարկ տալ այդ նոր ուսմունքին հետևորդների թիւը բազմապատկելուն, որովհետև բուռն ոգով տոգորուած քրիստոնեաները ահագին թիւով մարտիրոսներ, նահատակներ էին տալիս առաջին երեք–չորս դարերում այդ ահաւոր պայքարի մէջ, և որքան կայսրները սաստկացնում էին հալածանքը անզուսպ քրիստոնեաների դէմ ու նրանց ընկճելու համար նոր–նոր հրէշաւոր արտայայտութիւններ գտնում՝ այնքան աւելանում էր նահատակների թիւը, որոնց խիզախ, աննկուն դիմադրաւումը մահուան դժոխին արտայայտութիւններին, էլ աւելի էր ուժեղացնում մնացողներին, և մեծացնում հետևողների թիւը:

Բ. դարուց սկսած մինչև Դ. դարու սկիզբները քրիստոնեաներին հալածելը ամենքի իրաւունքն էր՝ ով քրիստոնեայ չէր. և շատերն էին իրենց հարստանալու աղբիւր դարձրել քրիստոնեաներին մատնելը, մինչև այն աստիճան, որ սովորական դատարանն անգամ աւելորդ էր համարւում քրիստոնէին խարոյկ բարձրացնելու համար: Ժողովրդական դժբախտութիւնների, համաճարակ ցաւերի, հիւանդութիւնների պատճառ համարւում էին քրիստոնեաները և մասայական կոտորածներ էին լինում. առաջ էր գալիս երկրում մի տեսակ անիշխանական վիճակ, ուստի Անտոնիոս Պիոս կայսրը (138–161 թ.) հարկադրուած էր յատուկ օրէնք հրատարակել, որ քրիստոնեաներին ևս պէտք է օրէնքով ու դատաստանով պատժի ենթարկել և ոչ քմահաճոյքով:

Կեսարի հանճարի պաշտամունքը ժխտող քրիստոնեաները բնականաբար հակապետական պլտի ճանաչէին, որքան էլ թէ Պօղոս առաքեալը պնդէր, որ ինքը կայսեր ու պետութեան դէմ չէ քարոզում և թէ հեթանոս Յուստին, Տատիան, Մուցիֆէլիքս գրողները իրենց գրուածքներում ցոյց տուին, որ քրիստոնեաները հակապետական չեն: Դեցիոս կայսրից սկսած սկսում է սիստեմատիկ հալածանք քրիստոնեաների դէմ. 250 թուին յատուկ օրէնք է լոյս տեսնում այդ առթիւ, որովհետև քրիստոնեաների թիւը բազմացել էր և գոյութիւն ունէին կազմակերպուած համայնքներ: Քրիստոնեաներ կային թէ զօրքում, թէ պետական պաշտօնէութեան մէջ, թէ նոյնիսկ պալատականների շարքերում: Վաղերիանոս կայսրը 258 թուից հալածանք սկսեց քրիստոնեայ հոգևորականների դէմ յատկապէս, նոյնքան ապարդիւն, որքան և Դիոկղէտիանոսը, որը 8 տարի չարունակ սարսափելի հալածանք է սկսում ողջ կայսրութեան մէջ, մինչեւ որ վերջապէս Կոստանդին մեծ կայսրը 312–313 թուի Միլանի հրովարտակով քրիստոնէութիւնն էլ միւս կրօններին հաւասար է ճանաչւում, իսկ 392 թուին Թէոդոս կայսրը քրիստոնէութիւնը պետական կրօնք է հրատարակում. հեթանոսութեան առանձնաշնորհեալ վիճակը փոխանցւում է քրիստոնէական կրօնին և այժմ դերերը փոխւում են: Իր չղթաներից ինքն իրան ազատող ամբոխը քանդում է հեթանոսական տաճարներ, կոթողներ, հեթանոս դասախօսին ծեծելով մահացնում, սակայն «եթէ Քրիստոսի անունով բոլորովին անտեղի կարգադրութիւններ էին անում՝ սրանում մեղաւորը ինքը ուսմունքը չէր, այլ դեռ չմեղմացած բարքը մարդկանց, որոնք թէև ընդունել էին

քրիստոնէութիւնը, այնուամենայնիւ իրենց վարուեցողութեան կերպերի մէջ դեռ ազէտ հեթանոսներ էին»(*):

Այդ յաղթութիւնը դեռ թւական գերազանցութեան նշան չէր. քանի որ Դ. դարում էլ 100 միլիոն բնակչութիւն ունեցող հռոմէական կայսրութեան մէջ հազիւ 10 միլիոն քրիստոնեայ լինէր: Հեթանոս աշխարհի պայքարը քրիստոնէութեան դէմ սաստիկ էր եւ նա չատ դանդաղութեամբ էր տեղի տալիս նոր կրօնքին, չնայելով որ վերջինս պետական ոյժի վրայ էր հիմնուած:

Դ. դարուց սկսած նոր կրօնը աստիճանաբար հեռանում է իւր նախկին ոգևորուած համայնական կոմմունիստական և պրօլետարական ոգուց և հետզհետէ դառնում է ազնուական դասին յարմարուող ուսմունք, թէև ոչ այն չափերով, ինչպէս այդ ունեցաւ Միջին դարերի վերջերում, երբ իւր կապը բոլորովին թուլացաւ այն մեծ աղբիւրի հետ, որը հիմք էր դրել նոյն դարաշրջանի եկեղեցուն:

Մարդու Որդու կեանքի յեղաշրջման կենդանի քարոզը հետզհետէ սկսեց ծէսի, պաշտամունքի, եկեղեցական կարգերի ու կանոնների մէջ խճողուած նաև ոչ սակաւ հեթանոսական տարրերով լցուած պաշտամունք դառնալ: «Ինչ որ դասականութեան մէջ արժէքաւոր էր, չկորչելու համար քրիստոնէութեան շրջանում մնաց՝ իւր անանց արժէքը ապագայ ժամանակներում մարդկութեան մէջ միշտ նորից պահելու»(**): Բացի սրանից դեռ կային այն ահագին փոփոխութիւն-

(*) Ն. Անդրէեւ. Հին Հռոմը, էջ 123:

(**) Շուլցէ. նոյն աշխատ. էջ 398:

ները, որ կրում էր նոր ուսմունքը հետզհետէ յարմարուելով բարձր դասակարգերի պահանջներին, որի դէմ միշտ էլ բողոքողներ եղել են, և դրանց թւում աւելի ուժեղ ու երկարատեւ բողոքողները անապատականներն էին, քրիստոնէական ուսմունքի սկզբունքները իրենց անհատական կեանքում իրականացնելու ձգտողները, թէև ոչ բոլորը, այլ չատ քչերը, բայց դրա փոխարէն հեղինակաւոր ու հոսանք առաջ բերողները:

Քրիստոնէութիւնը առաջին դարերում եղել է առաւելապէս քաղաքների էքսաւոր դասի, պրօլետարիատի կրօն, միայն Դ.—Դ. դարերում տարածուել է նաև գիւղական համայնքներում արևելքում, առաւելապէս անապատականների շնորհիւ: Անապատականն էր իւր կենցաղով, իւր քարոզով ու «հրաշքով» հեթանոսութեան դէմ մաքառում գիւղերում, մինչդեռ քաղաքում սկսել էին արդէն գիտական բանակռիւներով մաքառիլ հեթանոսութեան դէմ:

3.— Հնում, ինչպէս և այժմ դեռ չատ տեղերում կրօնը ժողովրդի կեանքի բոլոր երևոյթների ղեկավարող ոյժն էր. Ֆիւստէլ-դէ-Կուլանժն այդ առթիւ ասում է. «Ինչպէս խաղաղ ժամանակ, այնպէս էլ պատերազմի շրջանում կրօնը միջամտում էր (մարդու) բոլոր գործերին: Նա մուտք էր գործում ամեն տեղ և տիրում էր մարդուն. նրա մարմինը, հոգին, մանաւանդ հասարակական կեանքը, նրա հանգիստը, խնճոյքները, ժողովները, դատերը, կռիւները, ամեն ինչ իւր վրայ նոյն կրօնի ոյժն էր զգում: Նա ղեկավարում էր ու կանոնաւորում մարդկային բոլոր ա-

բարքները, կառավարում էր նրա կեանքի բոլոր մո-

մէնները, կազմակերպում էր նրա բոլոր սովորութիւնները . . .(*)։

Քրիստոնէութեան առաջին դարերում, չնորհիւ կրօնի ազատութեան, կրօնական հրաչքներով լի սովորութիւնները արմատաւորւել էին ամենքի մէջ, յատկապէս՝ հալածուած, տնտեսապէս ու քաղաքականապէս ճնշուած դասակարգերի, գիւղացիութեան և պրօլէտարիատի մէջ։ Իրենց անտանելի վիճակի փոփոխութիւնը դասակարգային գիտակցուած կազմակերպութեան մէջ չէ որ որոնում է այդ ահագին բազմութիւնը, այլ զանազան քրմերի, կոյսերի, մոգերի, որոնց հետ խառնւել էին նաև բախտախնդիր աճպարարների խմբեր, «հրաչքներ», գուշակութիւններ, բժշկութիւններ անողներ։ Զոհաբերութիւնները, տօները, ուխտագնացութիւնները, այլ և այլ արարողութիւններին մասնակցելը այդ դժբախտ, ոգեթ հոսանքի վերկութեան, իրեն դառն վիճակից ազատելու միջոցներն էին։ Հրաչքների սիրահար էր Հռոմի էքսաւոր դասը և մեծ երկիւղով ու հետացմունքով այն կրօնական ուսմունքին էր հետեւում, որի ներկայացուցիչը աւելի մեծ հրաչք էր գործում։

Քրիստոնէութեան առաջին քարոզիչների յաջողութեան մի գրաւականն էլ այն «հրաչագործութիւններն» էին, որ առաքեալները կատարում էին հրաչքի սպասող ժողովրդի համար։ «Առաքեալների ձեռքով բազմաթիւ նշաններ ու արուեստներ էին լինում ժողովրդի մէջ»(**)։ Առաքեալները, յատկապէս Պօ-

(*) Մակ-Դնուգալլ. Ընկերային հոգեբանութեան հիմնական խնդիրները. 1916, էջ 227-28։

(**) Գործք Առաքելոց, գլ. ե. 12։

ղոսը, իբր աւելի հանճարեղ և հեղինակաւոր քարոզիչ, գիտէր հաշւի առնել ժողովրդի տրամադրութիւնը, երբեմն համակերպել նրա պահանջներին՝ միանգամից նոր ուսմունքից չխրտնեցնելու համար, որ իւր տիեզերական և յաւիտենական բնոյթով շատ էլ մատչելի չէր լինի այն տարրերին, որոնց մէջ նա քարոզում էր։

Իւր ամբողջ կեանքը ամենայն մանրամասնութիւններով կրօնական արարողութիւնների հետ կապած պրօլէտարիատը անկարող էր աստւածային Մեծ Մարգարէի վարդապետութեան ուղն ու ծուծը՝ յաւիտենական ներքին հոգեկան զարգացման, բարոյական բացարձակ մեծութեան աստւածացման հասնելու գաղափարները մարսել, ըմբռնել։ Նրան իրական չօշափելի տւեալներ էին պէտք, նրա կեանքը և կենսական արտայայտութիւնները ղեկավարող ձևեր, միջոցներ, չօշափելին, տեսանելի աչքի, քան մտքի, կերակուր էր պէտք։ Այդպէս էր դաստիարակուել նա, այդպէս էր ապրել դարեր շարունակ և տարբեր կերպով անկարող էր քրիստոնէական կրօնի բարոյական այժ լինելը ըմբռնել։

Հետզհետէ քրիստոնէական համայնքները մեծանալուց, տարածւելուց յետոյ առաջ են գալիս կարգեր, ծէսեր, արարողութիւններ։ Այլևս քարոզիչը չէր կեանքին թելադրողը, այլ կեանքն էր նրան պահանջներ առաջադրողը, որոնց համակերպում էր համայնքի ղեկավարը։

Առաքեալների ժամանակից սկսած առաջ են գալիս եկեղեցում սարկաւագներ, քահանաներ, Բ. — Դ. դարերում հիմք է առնում քրիստոնէական եկեղեցու հարուստ պաշտօնէութիւնը, սկսած պատրիարքից

մինչև եկեղեցու դռնապանը, որը երկնքի պաշտօնէութեան հրեշտակների ու սրանց 9ը դասերի նմանութիւնը պիտի բերէր երկրի վրայ:

Քրիստոնէական բարոյական ուսմունքը տեսականութեան է վերածւում Գ. եւ Դ. դարերում, երբ քրիստոնէական եկեղեցու մէջ են մտնում նաեւ յոյն զանազան փիլիսոփայական դպրոցների հետեւողներ. օրինակ Յուստին վկան, Տերտուղիանոսը, Կղէմէս Ա-ղէքսանդրացի, Կիպրիանոս և այլք, մարդիկ, որոնք յունական փիլիսոփայութեան տեսութիւններով էին կրթուած, որոնց համար մետաֆիզիկ աշխարհայեացքն էր կարեւոր, քան իրական աշխարհը: Այս և սրանց նման այլ եկեղեցական հայրեր (Որոգինէս յատկապէս) յունական փիլիսոփայութեան տեսակներով էին մարզուած և իրենց հետ բերած գաղափարների համեմատ սկսեցին կազմակերպել և քրիստոնէութեան ուսմունքը, առաջ բերելով տեսական վէճերի մի անվերջ շարք՝ զուտ բնազանցական բնոյթով. սկիզբը դրին քրիստոնէական աստուածաբանութեան ու սխոլաստիկայի:

Քրիստոնէութիւնը պայքարում էր իւր հակառակորդ հեթանոսութեան դէմ՝ նրա զէնքերը փոխառնելով. այդ զէնքերի մէջ էր նաև անապատականը, ճգնաւորը որը իւր կենցաղով, իւր նպատակով, իւր աղօթքով եւ ձգտումներով այդ շրջանում ձեւականի, պաշտամունքի, ծէսի տեսիլից գնացող հոգեւորականութիւնից դեռ շատ էր տարբերւում եւ ներհակ ոյժ էր, մինչև որ նրան եւս ամենազօր հոգեւոր պաշտօնէութիւնը «զսպեց» և իւր կողմը դարձրեց: Անապատականի հանդէս գալը, իբր ուժեղ տարր, Դ. դարու երեւոյթ է, այն շրջանի, երբ հեթանոսութիւնը իւր սովորութիւնները, կարգերը այլ և այլ անուան

տակ քրիստոնէական եկեղեցու մէջ էր մտցնում: Եթէ քրիստոնէական բարոյական կատարելագործման սաղմը կար, անհատական կեանքով Յիսուսի սիրոյ վարդապետութիւնը իրականացնել աշխատող, ապա այդ չրջանում ամենից աւելի ռէլիէֆ երեւում էր այդ անապատականի մէջ, այն անապատականի, որը որոշ հոգեկան ապրումների հետեւանքով էր առանձնացել և աշխարհը ուրացել, և ոչ այն բազմութեան, որը առաւելապէս պետական հարկերից, զինուորագրութիւնից, քրիստոնեաների դէմ հանուած կատաղի հալածանքից խուսափողներից էր կազմուած եւ որոնց թիւը հազարների էր հասնում:

Անապատականը եկեղեցական երեւոյթ չէր, այլ հասարակական և նոր կազմուող քրիստոնէական համայնքների մէջ թարմութեան կենսունակութիւնն էր մտցնում իւր գոյութեան սկզբնական չրջանում, առանց եկեղեցու հետ անմիջական կապ հաստատելու և եկեղեցական իերարխիայի մէջ մտցնելու:

Գլ. Բ.

Անապատականի առանձնայատուկ կողմը եւ կրօնական սահմանումը (եfasազ)

1.— *Անապատականը իւր կենցաղով, իւր բնակավայրով, ապրելու եղանակով ու հոգեկան ապրումներով միշտ ուշագրաւ է եղել և հետաքրքրութիւն ու բարեպաշտական զգացում առաջ բերող: Անապատականը իւր չրջապատից շատ է տարբերւել իւր կեանքի օրէնքներով և շատերի համար նա՝ հնում՝ եղել է սրբութեան, աստուածային ոյժի ներկայացուցիչ, նորերս՝ մեծ մասամբ թերահաւատ վերաբերմունքի, եթէ ոչ անհաւատալութեան, անգամ քամահարանքի առարկայ:*

Այդ հակասական ըմբռնումները և վերաբերմունքները առաջ են եկել նրա խիստ անհատականօրէն ապրելու և հոգեկան ուրոյն կեանք ունենալու պատճառներից: Ամբը հոգեբանական, առանց կանխորոշ կարծիքներով համեմած քննութիւնը ցոյց է տալիս, որ իսկական և ոչ պաշտօնական անապատականը ուշագրաւ է իւր հոգեկան առանձնայատուկ ապրումներով և ուսանելի շատ կողմեր ունի կեանքի ըմբռնման ու գնահատութեան տեսակէտից:

Անապատականի կեանքն ուսումնասիրողը և ներկայ հասարակական կեանքի բազմաթիւ երևոյթները դիտողը կը նկատէ ամենից առաջ, որ անապատականը իւր հոգեկան կատարելագործման, կրքերի դէմ մղած զարհուրելի ու սահմռկեցուցիչ պայքարով դեռ մեռած երևոյթ չէ, որ նա այժմ էլ կայ ու կը մնայ

քանի դեռ մարդը իւր մէջ ունի հոգեկան կատարելագործման ձգտումը:

Ուշադրութեան առնելով այն հանգամանքը, որ անապատականը միշտ անապատում առանձնացողը ու իւր ներքին աշխարհի հետ պայքարողը չէ միայն, այլ անապատական է եղել՝ որ հասարակութեան մէջ է ապրել ու անհատական կեանքի գոհաբերութեամբ հասարակութեանն է ծառայել, չքաւորին է օգնել, այլասերուածներին է ոտքի կանգնեցրել, որ եղել են հոգու արիութեամբ սպառազինուած ճգնաւորներ, որոնք ժամանակի բռնակալներին դիմագրաւել են եւ իրենց ազդու խօսքով զգաստութեան հրաւիրել, կը տեսնենք, որ ներկայումս էլ առանձնանալու, ինքն իր հետ լինելու, իրեն գտնելու և հասկանալու ձգտումը ոչ պակաս գոյութիւն ունի շատ ու շատ ինտելիգենտների մէջ, թէև այդ առանձնանալու ձգտումը նրանց անապատ չի տանում և միայն իւրեանց սենեակում կամ առժամապէս չրջապատող հասարակութիւնից հեռանալով է երևան գալիս: Շատերն են այժմ էլ «մենակ մարդիկ», մենակ հոգու աշխարհով, ներքին ապրումներով և այդ մենակութիւնը նրանց տալիս է քնքոյշ թախիծ և կրօնական տրամադրութիւն: Իսկ անձնականի գոհաբերելը, իւր հաճոյքները զոհելը յօգուտ հասարակականի՝ մի՞թէ գեղեցիկ օրինակներով երևան չէ գալիս զանազան լրջմիտ ու հոգով այդ գործի համար կոչուած յեղափոխականների մէջ: Էականը քարայրում նստել, կուրծք ծեծել ու վրան, գլխին մոխիր ցանելը չէր անապատականի համար, ինչպէս սխալմամբ ենթադրւում է, այլ իւր հոգեկան ոյժերը իւր իսկ հոգում պայծառ կերպով նկարուած ու ապրող իդէալին ծառայեցնելը: Ձևը չէ

կարևորը, այլ էուԹիւնը, իսկ էուԹիւնը անապատականի հոգու մէջ ոյժերի կատարելագործումն է։

Ոչ միայն կրԹուած մտայնիների, այլ նաև հասարակ անպաճոյճ հոգիներին մէջ կը հանդիպէք մարդկանց, որոնք կամաւորապէս իրենք իրենց որևէ կիրքը, լինի այդ Թէկուզ մի անմեղ կիրք, զսպելու միջոցներ են գործ դնում, իրենց անձը ճնշելով։ Կան անհատներ, որոնք երազի, տեսիլքի պատճառով հրաժարւում են տարիներով ալկոհոլից, ծխախոտից, մսեղէնից կամ այս ու այն պտուղը՝ խնձոր, խաղող և այլն ուտելուց։ Որքան և մանր, պատահական լինին այդ երևոյԹները բայց ապացոյց են մարդկային հոգու իւր կրքերի դէմ իւրայատուկ ձևով պայքարելու ձգտման։ Անապատականի մէջ այս ձգտումը կենտրոնական տեղ է գրաւում։

Անապատականը խիստ տարբերւում է, սկզբնական չըջանում, հոգևորականի աստիճան ունեցող որևէ եկեղեցական պաշտօնէից, Թէ իւր կեանքով, Թէ իւր ապրելակերպով, Թէ զգեստով, Թէ աշխարհայեացքով. այս հանգամանքը ուշադրութեան պիտի առնել և չմոռանալ, որ անապատականը մեծ մասամբ աշխարհիկ մի մարդ է, առանձնացած որևէ տեղ կամ որևէ առաքինի գործի նւիրւած մինչև իր մահ։ Նա էլ մարգարէի նման աւելի շատ հոգեկան վերածնութիւն, ներքին յեղաշրջում առաջ բերող է, քան քարացած ծէսի ու որոշ կարգ ու կանոնի տակ դրւած պաշտամունքի ծառայող մի քուրմ։ Նրա համար կեանքը վերջ ի վերջոյ մի խաղալիք չէ և ոչ էլ մի ուրախ զւարճալիք, այլ տառապանքի մի հովիտ. նա աշխատում է իւր համար կեանքի գաղտնիքը լուծել կամքի ամենաբարձր աստիճանի ոյժը գործ դնե-

լով։ Այն զարմանալի ինքնամփոփումը և իւր հոգեկանի բնազդների, զգացումների, մտքերի բոլոր ելևէջներին բարեխղճութեամբ հետևիլը և պայքարը, որ անապատականն ունեցել է, նրան հոգեկան սքանչացման, տեսիլքների, երազների, անհասկանալի աշխարհն է փոխադրել երբեմն։ Նման երևոյԹ տեսնում ենք այժմ էլ դեռ համալսարանական կրթութիւն ունեցող այլ և այլ անհատների մէջ, որոնց մասին մանրամասն տեղեկութիւն է տալիս յայտնի հոգեբան Ջէմսը, Թէ ինչպէս զանազան ամերիկացիներ հոգեպէս վերածնւել են, իրենց հոգեկան այս ու այն դառն վիճակից ազատւել որևէ տեսիլքի, ներքին ապրումի չնորհիւ, որը՝ կրողին, տեսնողին իրրև իրական է երևցել(*)։ Հոգեբանօրէն բացատրելով հեղինակը այդ նեարդերի սաստիկ լարումի հետևանք է համարում, բայց բացատրել չի նշանակում երևոյԹի գոյութիւնը և նրա արժէքը ժխտել։ Մեզ հետաքրքրողն այն է, որ անապատականի կենցաղի այդ ամենից աւելի տրակուսանքի ու Թերահաւատութեան տեղիք տուող երևոյԹն այժմ էլ գոյութիւն ունի և այդ գիծը համամարդկային է և ոչ առանձնայատուկ միայն անապատականին։

Միսիոնարների կեանքից յայտնի են շատ դէպքեր, երբ նրանք վայրենիների մէջ քրիստոնէութիւն քարոզելիս իրենց բարոյական հեղինակութեամբ, հոգու ուժեղ ազդեցութեամբ ու արիութեամբ կարողացել են վայրենիների մարդակերութեան ախորժակը զսպել, իրենց սպառնացող վտանգից խուսափիլ և

(*) Վ. Ջէմս, Կրօնական փորձի բազմակերպութիւնը, Մ(ոսկուա), 1910, էջ 240-46։

զսպել կատաղի կրքով լցւածին: Ոչ մի այլ արտաքին ոյժ, քան հոգու արիութիւնը, որը արտայայտել ու դեղեցիկ նկատւել է նորա, այդ հոգով ըմբռնուածի, դէմքին: Նման երեւոյթներով հարուստ է և անապատականի կեանքը և այն ինչ որ միսիոնարների կեանքում ըմբռնելի ապա ուրեմն և ընդունելի է, ոչ պակաս իրաւունքով և անապատականի կեանքում պիտի հասկանալի և բացատրելի նկատել: Եթէ անգամ հոգեկան արիութիւնը արտայայտւել է որ և է ամեհի գազանի զսպման մէջ, որը նոյնպէս անապատականի կեանքում պատահում է, զարմանալու չէ, քանի որ այժմ էլ կան յայտնի թովիչներ օձերի, գազանների զսպողներ որոնք իրենց չնորհքը ցուցադրում են հետաքրքիր երեւոյթներ սիրող զբաղասէր հասարակութեան առաջ գրեթէ ամեն տեղ:

Նոյն հոգեկան առանձնայատուկ տրամադրութեան և ուժգին ներքին ապրումի հետեւանքը և Ամերիկայում գոյութիւն ունեցող, այսպէս կոչուած «հոգեւոր բժշկութեան» հոսանքը, որ հիւանդներին բժշկում են մի տեսակ ներշնչմամբ, ինչպէս այժմեան հիպնոտիզմները(*): Որքան եւ այս երեւոյթը բացատրել կարելի լինի, բայց և այնպէս փաստը մնում է փաստ և հետաքրքիր է հասկանալու նաև անապատականի կատարած նման ձեւի բժշկութիւնները:

Անապատականը իր կեանքով իրը անհատական երեւոյթ չէ որ այժմ էլ զանազան անհատների մէջ երեւան է գալիս, այլ իրրև հասարակական հոսանք էլ գոյութիւն ունի դեռ: Անգլիայում և Ամերիկայում «մեթոդիստների»ի և «էվակիրների»ի կրօնական

(*) Ջէմս, նոյն աշխատութիւնը, էջ 85:

հոսանքների մէջ ասկէտական գծեր կան, ինչպէս օրինակ այլ եւ այլ զբաղմունքներից հրաժարւելը, պարզ զգեստ հագնելը, անպաճոյճ կենցաղ ունենալը, ինքնամփոփման հետեւիլը եւայլն: Ճգնաւորը, ասկէտը իւր կեանքով ու հոգու կազմութեամբ միստիկ է, եւ անհատականութիւնը նրա մէջ զարգացած է: Այդ ինքնուրոյնութիւնը — անհատօրէն ապրիլը և տիեզերականին, աստուածայինին մասնակից լինելու ձգտումը — նրան ամբոխից, մասսայից հեռացնում, առանձնացնում է և նրան դարձնում իւրայատուկ մարդ, որոշ տեսակներով և անգամ տաղանդով. «Մարդը քաշւում էր անապատ», անտառներ, պահք էր պահում, աղօթում և ամեն տեսակ ճգնական վարժութիւններ անում, սեռականը սպանում — և այս ամենը համաձայն խստիւ մշակուած ճգնական տեխնիկայի կանոնների, որով կարգադրւած էր, ի միջի այլոց, ըզգայութեան օրգանների ֆոնկցիաները ճնշել (մանաւանդ աչքերը և ականջները): Այդ դժւար գործերը, որ պահանջում էր հոգու անսովոր ոյժ և առանձին յատկութիւններ նոյնիսկ, այո, տաղանդ . . .» (*):

Անապատականների մէջ մեծերը, առաջնորդները յիրաւի մեծ միստիկական տրամադրութիւն են ունեցել հոգեկան, և նրանց տեսիլքները, հրաշքները, միստիկ ուժեղ ապրումների արդիւնքներ են: Ընդհանրապէս մնացած սովորական անապատականները, որոնք վանքերում են ապրել նոյնպիսի միստիկ տրամադրութիւններ ունեցել, սակայն դա այսպէս ասուած «միջա-

(*) Ի՞նչ է միստիկան, Դ. Օվսեաննիկո-Կուլիկովսկի, վնատնիկ Եւրոպի (Եւրոպայի համբաւարեր) ամսագիր, 1916, հոկտ. էջ 155:

վայրի» միստիկա է, բոլորին յատուկ չնորհիւ դրսի պայմանների և ոչ իւր հոգու առանձնայատուկ պահանջի։

Միստիկան եղել է անապատական չարչարալից, դժւար կեանքի մէջ լոյս սփռող, մխիթարութիւն մտցնող ճանապարհը, որով անապատականը իւր ճգնութիւնը նպատակի հասած է համարել։

Ընդունելով, որ միստիկան անապատականի կեանքում խոշոր տեղ է գրաւել ու նրա կենցաղի միջավայրը միստիկային շատ յարմար է եղել, պէտք է ասել, որ այդ նոյն միստիկայի, այդ զգայական լարուած դրութեան չնորհիւ, որը բաւերով արտայայտել չի կարելի, այժմ էլ հնդկական «իօգիները»ը ձգտում են գեր–բնականին ու զերզգայականի հետ ձուլւում, հալւում, միանում են։ «Իօգին» այն է ասում, ապրում, որը սովորական մարդուն և անըմբռնելի և անհասկանալի է։ Պարսիկ սօֆիաները, դերվիշները նման կրօնական սքանչացման են ենթարկում և այդ ժամանակ «նրանք տեսնում են հրեշտակներին և մարգարէների հոգիներին, լսում են նրանց ձայնը, արժանանում են նրանց ողորմածութեանը»(*)։

Ցայսօր էլ հայոց մեծ ուխտատեղիներում, ուր որ չրջապատը ուխտագնացութեան չնորհիւ փոխւում է, շարականաց, վառւող մոմերի, խնկի ու աղօթաւորների փսփսուքի չնորհիւ, նաև ուխտաւորելու առանձնայատուկ դրութեան կէս մութ մի քարայրի կամ մատուռի չնորհիւ, կը տեսնէք որ եւ է «ընկնաւորի» «ղուլի» որն սկսում է էքստազի մէջ ընկնել (հաշւի չառնելով ի հարկէ կեղծարարներին որոնք նոյնպէս

(*) Իզիդ (izida)։

կան) և խօսիլ, յանուն իւր «աղայի» գուշակութիւններ անել ապագայի վերաբերմամբ և չրջապատի համար, այդ հոգով բռնուածը դառնում է սուրբ, զարմանքի առարկայ, անգամ մոմ են վառում վրան, խաչահամբոյր ձգում. ընդարմացած ղուլը միանգամայն անտարբեր է լինում այդ ամենին, և ժամ ու աւելի տեւող անկենդան վիճակից յետոյ արթնանում ու կարծես ոչինչ չի յիշում անցուդարձից(*)։

Քրիստոնեայ մի քանի եկեղեցիներում՝ կաթոլիկ, օրթոտոքս, անապատական դեռ կայ։ Կաթոլիկ եկեղեցին, որ առհասարակ միստիկայի սիրահար է ու հռոմէական բնաւորութեան համաձայն ամեն ինչ իրաւաբանական նօրմայով, օրէնքներով արտայայտել դիտէ, դեռ 1898 թւին էլ հրատարակել է J. Ribot-ի "L'Ascetique Chrestienne» գիրքը, ուր որոշուած են ճգնական կեանքի ձևերը, միջոցները, ապաչխարելու եղանակը, սքանչացման ճանապարհը։

Անապատականի ապաչխարութեան, պահքի, ծոմապահութեան «մեղայ»ի կարգերը մտել են եկեղեցում, և ցայսօր պահում են, թէև այժմ արդէն առաւելապէս ձևական արժէքով, բայց և որոշ կրօնական տրամադրութեամբ հարուստ անհատի համար իրական արժէքով, որոնց հետևելով վերջինս հոգու հանգիստ, խղճի անդորրութիւն է ձեռք բերում։ Ռուս եկեղեցում, ռուս ժողովրդի մէջ յատուկ ուշադրութեան առնուող "starez"ները "nerodivni"ները զանազան երկաթի կտորներ մարմնի վրայ կրող ու իրենց տանջել ցանկացող այդ նոր ճգնաւորները ոչ այլ ինչ

(*) Ֆ. Զոլա-Լուրդ, Կ. Միխայլովսկի.— Անապատականի կախարդութիւն (մոգութիւն)։

են, եթէ ոչ հին անապատական կեանքի չարունակութիւնը։

Աւելի հարազատօրէն Դ. դարու անապատականի կենցաղը այժմ էլ իւր արտաքինի կողմից պահւում է հարէշների մէջ, որոնց կրօնաւորներն ապրում են նեղլիկ, փոքր խցիկներում, հագնում են կաշազգեստ, կան նրանց մէջ այնպիսիները, որ ուխտել են որ և է աղօթք, սաղմոս բազմաթիւ անգամ կրկնել, կամ երբեք չլուացուել, մուրացկանութեամբ ապրել ևայլն(*)։

Հայ եկեղեցում ևս ճգնաւորներ ժ-ԺԲ դարում եղել են դեռ, թէ անապատներում, թէ գրսում–քաղաքներում. նրանցից մէկը Սևանայ ճգնաւոր Մելքոնն է եղել, այդ անապատի վերջին ճգնաւորը, որը 45 տարի ապրել է կղզում և երբեք դուրս չէ եկել միաբաններից անջատ, կղզու գագաթին ունեցել է իւր գործիքները և անընդհատ աշխատել է, ճանապարհներ է չինել, և լոկ հացով, ջրով բաւականացել. (Տե՛ս «Գեղարքունի», Մեսրոպ արք. Սմբատեանի, էջ 117–18)։ Մի ուրիշը Մազարթի վանքի՝ Նախավկայի մօտ մի լերան վրայ է ապրել տասնեակ տարիներ և մարդկանց հետ հաղորդակցութիւն չի ունեցել բացի մի կրօնաւորից, որը գնացել է մօտը և հաղորդել է. կեբակուր տւողը եղել է շրջակայքի գիւղացին(**)։

Թւած օրինակները ցոյց են տալիս, որ անապատականը իւր կենցաղի, իւր ներքին հոգեկան կեանքի այլ և այլ արտայայտութիւններով ապրում է և այժմ,

(*) Տե՛ս «Արարատ», 1895 թ., էջ 289, 348 և շար. «Հաբէշների եկեղեցին». «Նրանց ներկայ վիճակը», պրօֆ. Լօֆթսի։

(**) Տե՛ս «Արարատ», 1877 թ., էջ 37 և շարկ.։

թէ իբր անհատական, թէ իբր հասարակական երևոյթ, և եթէ այնուամենայնիւ թերահաւատ վերաբերմունքի ու միակողմանի քննութեան է արժանանում, և իբր աւելի շատ բացասական, քան դրական երևոյթ նըկատւում, այդ նախ այն պատճառով, որ նրանում այդ ուրոյն կեանքը իւր ամբողջութեամբ է երևան գալիս, խտացրած, կենտրոնացած, մի անհատի մէջ, երկրորդ՝ որ լուրջ ուշադրութեան չի առնւում այն կրօնական հոգեբանական առանձնայատուկ վիճակը, որը նրան կրօնական զմայլանքի–էքստազի մէջ է ձգում, և երրորդ՝ որ անապատականը աւելի անհատական — ինտիվիտուալիստական, քան սոցիալական արժէք ունի, իսկ ներկայիս մարդը հասարակութիւնն է գերարժէք համարում և ոչ անհատի ուրոյն կեանքը։

2. — Անապատականը որքան և որոշ հասարակական կարգերի ու սոցիալական պայմանների արդիւնք է իւր ծագման շրջանում, և այդ կողմից նրա գործելակերպը՝ հոգեկան աշխարհը պարզուում է, բայց և ունեցել է նա իւր զուտ անհատական առանձնայատկութիւնը, որից բղխել է նրա կրօնական կեանքի երանգաւորումը։ Անապատականի անհատական կրօնական հոգեբանութիւնը լրիւ պարզաբանել դժւար է, մի միայն համեմատութիւնների մեթոդով մօտաւորապէս կարելի է վերծանել այն։

Անհատը հասարակութեան մի տարրը լինելով հանդերձ, թէ իւր նիւթական ապրուստի ձևերով, թէ իւր մարմնական արտաքինով հասարակութիւնը կազմող միւս տարրերից միշտ էլ զանազանւում է։ Աւելի տարբերութիւն ունի նա իւր հոգեկան կեանքում, որը որքան և նիւթ առնում է դրսից՝ բայց իւր հոգու

ներքին իբրայատուկ հնոց-բովում վերամշակւում է այնպէս, որ դիտողին հասկանալի է լինում, թէ նման արտայայտութիւնը տւեալ անհատին է յատուկ միայն: Անապատականի հոգեկան կեանքը այդ տեսակէտից աւելի չեշտուած անհատականութիւն ունի: Անապատականները իրենց վերջնական նպատակի տեսակէտից թէև միևնոյն գաղափարի մարդիկներ են եղել, սակայն չնորհիւ իրենց անհատական առանձնայատկութեան՝ տարբեր ճանապարհներով են դիմել այդ նպատակին և իրարից բաժանւել, գատւել են: «Ճգնաւորի նպատակն էր մտածմունքների կենտրոնացում և անհատական վայելումն Աստուծոյ մերձաւորութեան: Նրա նպատակն էր իւր անձի բարոյական կատարելագործումը»(*) — վանականի-անապատականի — նպատակն էր իւր բոլոր մտածմունքները Աստուծոյ վրայ կենտրոնացնել, ինքն իրեն այնպէս մարզել, որ այդ մտածողութիւնը Աստուծոյ մասին ամէն տեղ նրան ուղեկցէ և նոյնիսկ ամենաչնչին գործերի ժամանակ նրա ներքին դրդիչը լինի»(**): Ուշագրաւն այս որոշումների մէջ այն է, որ անապատականը իւր հոգեկան բոլոր ոյժերը մի տեղ է կենտրոնացնում. նրա հոգում միայն մի գաղափար է, որ գօմլներ-գերիշխող է հանդիսանում. նա մի տեսակ նեղ մանագէտ է գառնում և ոչ հանրագէտ-էնցիկլօպէդիստ: Այդ ոյժերի կենտրոնացումն է ահա, որ նրան հնարաւորութիւն է տալիս իւր գաղափարը տարածելու լայնութեամբ և մեծացնելու խորութեամբ: Այդ մասնագիտացումն հոգեկան ոյժերի անապատականի անհատականացման ամենամեծ աղբիւրն է, այդ լարումն է ծնում նրա մէջ այն տեսիլները, որին ինքն իսկ երկրպագում է դրսի ոյժ համարելով, ճիշդ այն քանդակագործի նման, որ իւր հանճարի չնորհիւ իւր իսկ մարմարիոնից կերտած անչունչ արձանի վերջը ինքն է ամենից առաջ երկրպագում նրան արտաքոյ ոյժի, զօրութեան ներկայացուցիչ-ամփոփող նկատելով (*):

Անապատականների ըմբռնումները Աստուծոյ մասին վերլուծելով տեսնում ենք, որ դրանք երբեմն իրար հակասում են, ժխտում, որ մի ընդհանուր հասկացողութիւն չէ իշխում բոլորի մէջ և այս հանգամանքը բացատրւում է նրանով, որ անապատականը պատրաստի, որոշ գաղափար չէ ընդունում դրսից այլ նա իւր հոգու խորքում մշակում, վերլուծում է այն իւր պահանջների համեմատ կաղապարում: Իզուր չէ, որ լատինական առածն ասում է թէ Աստուած է — Coincidentia oppositorum — հակասութիւնների զուգադիպութիւն. այն մեծ ու անչէջ կիզակէտը, ուր կեանքի հակասութիւնները կենտրոնանում, միութիւն համերաշխութիւն են կազմում: Վերջնական միութիւն, խաղաղութիւն ստեղծողը աշխարհի բարու ու չարի կռիւներով, անարդարութեան ու արդարութեան երևոյթներով հարուստ բազմազան երեւոյթների համար Աստծու գաղափարն է և անապատականը իւր ներսը և դրսի աշխարհը վերլուծելով ու հակասութիւնների հանդիպելով, չկարողանալով լուծել դրանց հանգոյցը Աստծու մէջ է, որտեղ եւ առեղծուածի պատասխանը գտնում:

(*) «Արարատ», 1818 թ., էջ 108:

(**) «Արարատ», 1899 թ., էջ 177. յունական վանականութիւն:

(*) Լացարուս. Առ ի յուսումն զգայախաբութեանց. Պարբերագիր ժողովուրդի հոգեբանութեան, 1866, V. էջ 127:

Ուշիլ է նկատում Գ. Զիմմելը, թէ «նպատակները և սկզբունքային նախադրեալները են որոշում այն հարցը, թէ ի՞նչպիսի աշխարհ է ստեղծագործելու հոգին, և իրական աշխարհը միայն մէկն է հնարաւոր չատ աշխարհներից»(*)։ Իւրաքանչիւր հոգի իւր ձգտման, իւր ներքին աշխարհի պահանջ եղող անզուսպ տենչի համաձայն նկատում և ստեղծում է իւր աշխարհը, որպիսի երևոյթ կայ ոչ միայն նոր կրօնական ուսմունքները քարոզողների, այլ և նոր հասանք առաջ բերող փիլիսոփաների, գեղարուեստին ծառայողների մէջ։

Անապատականի ստեղծագործած աշխարհը կրօնական է և նրա համար աւելի իրական, արժէքաւոր քան իւր զգայարաններով տեսած, չօչափած ու ապրած աշխարհը։ Նրանց այդ առթիւ ունեցած ապրումները իրական են և նրանց համոզել, թէ իրենց տեսած տեսիլքը զառանցանք է, թէ նրանց երևակայած աշխարհը ցնորք է՝ իզուր կը լինի։ Նման տեսակի ապրումներ ունեցող և այժմ հոգեկան այլ կազմ ունեցող անձինք, որոնք հոգեբանական յատուկ ուսումնասիրութեան նիւթ են դարձել և չատ խնդիրների պարզաբանութեան պատճառ(**)։

Այն անձնուրաց, գլխովին նուիրումը կրօնական ոգուն, Աստծու գաղափարի ներապրմանը, այն մեծ լարումը կամքի, այն ամենօրեայ վարժութիւնը կրքերի դէմ պայքարելու, այն սաստիկ յուզումը և զգացեղը, այն թախծոտ միայնութիւնը, որ անապատականը իւր կեանքում ունենում է՝ նրան կարող էին

(*) Զիմմել. կրօն. Մոսկուա, 1909, էջ 6։
(**) Տե՛ս այս առթիւ Զիմմելի նոյն աշխատ., էջ 46-49։

գուցէ և նիւրդային-պատօլոգիական վիճակի հասցընել, երբ սովորական զգայականը դադարում է ներգործող ոյժ լինելուց և առաջ է գալիս զգայութիւնների աւրօֆիա, ընդարմացում, և անհաւանական չէ որ նման վիճակներ ունեցել է և անապատականը։ Հոգեկան-պատօլոգիական անհատն առհասարակ իւր զգայական ապրումների տեսակէտից չուտ տպաւորուող է. նա հեշտութեամբ գերի է դառնում իրեն գրաւող գաղափարին, idée fixe նրան կլանում է իւր մէջ և իւր ետևից քաշում, տանում է։ Այդ դէպքում նման անհատը նկատում է պատօլոգիական հիւանդը. և ըստ Լոմպրոզոյի նա կամ հանճարեղութեան կամ խելագարութեան է թեքւում։ «Իւրաքանչիւր անհատ, ասում է Հիլբեռը, որի կեանքը բաւականին հետաքրքիր է որ այն արժանի լինի ուսումնասիրութեան, անպայման հոգեկան հիւանդների չարքին է դառնում։ Եւ անհրաժեշտ է նկատել որ, որքան աւելի հանճարեղ է մարդ, այնքան աւելի է թեքւում նա սովորական նորմայից»(*)։ Բայց ամենից դժուարը այդ «սովորական նորման» նրա սահմանները որոշելն է. որովհետև չկայ դրա համար իրական-մաթեմատիկական ճշգրիտ մի չափ, որը մշտական, կայուն լինի։ Այդ նորման անհատական ըմբռնման հետևանքն է փոփոխական, առաձգական ու քմահաճոյ բացատրութիւնների տեղիք տուող. այդ է պատճառը, որ հոգեկան հիւանդների բուժարանում պատահում են յիրաւի առողջ մարդիկ, ուրոյն հոգեկան կազմով, որին սակայն «նորման» որակող բժիշկը, քննողը հիւանդ է համարում և տա-

(*) Զիմմել, նոյն տեղը, էջ 14։

բլներով իսկական հիւանդների մէջ պահելով՝ նրան էլ վերջիվերջոյ հաւասարակշռութիւնից հանում. եւ այսպիսի ողբերգական երեւոյթներ կան արձանագրըւած նոյն հիւանդների տարեգրութիւններում:

Երբ լուրջ գիտնական Ջէմսը իւր մասին կարող է ասել, թէ «իմ գիտութեան ողջ համախմբումը ինձ համոզում է այն բանում, որ իմ պարզ գիտակցութեան բովանդակութիւնը կազմող աշխարհը միայն մէկն է այն բազմաթիւ աշխարհներից, որ կան իմ գիտակցութեան հեռաւոր չրջաններում»(*) պարզում է այն խնդիրը, որ գիտակցութեան բովանդակութիւնը տարբեր աշխարհներ ունի, և որ մէկի համար մի աշխարհը կարող է իրական ու արժէքաւոր լինել, միւսի համար նոյն գիտակցութեան մի այլ աշխարհը. և սակայն այդ տարբերութիւնը պատճառ չպիտի լինի առաջինին առողջ, երկրորդին հիւանդ հոգի ունենալը վերագրել:

«Կրօնական անձնաւորութեանը կարելի է որոշել իբր մի անձի, որը հասարակական տեսակէտից կապուած է ոչ միայն բոլոր կենդանի արարածների հետ, որոնց հետ մեզ փորձն է ծանօթացնում, այլ և այն բոլոր արարածների հետ է կապուած, որոնցով միտքը լցնում է աշխարհը(**): Իսկ կրօնական անձի երեւակայութիւնը վառ է, միտքը զգայուն և ֆանտաստիկին թեքուած, և նա աշխարհը լցնում է իւր ստեղծագործած էակներով, որոնց հետ կենդանի կապ է ունենում, որոնց և պաշտում է և որոնցից երկիւղ

(*) Ջէմս, նոյն տեղը էջ 500:

(**) Գիւյո. Ապագայի անհաւատութիւնը, Պետերբուրգ, 1908, էջ XVIII:

կրում: Այս տիպի անձն է անապատականը, որի ամբողջ երեւակայութիւնն ուղղուած է գերզգայականին, «միւս կեանքին» ուր որ նրա միտքը սովորական իրական–ռեալ աշխարհի օրէնքներով չի ղեկավարուում, այլ բացարձակի, յաւիտենականի ազդեցութեան տակ ստեղծագործում է, որովհետեւ այդ «միւս կեանքում» այս սովորական կեանքի նորմաները չեն գործադրւում և այնտեղ իւրայատուկ պայմաններ կան ժամանակի, տարածութեան, պատճառի, հետեւանքի համար: «Այն կեանքը» միայն բացարձակին — Աբսոլուտին է իւր մէջ պարփակում. հետեւապէս այն բոլոր սահմանափակումները, որ այս կեանքը տալիս է, բացակայում են այնտեղ:

Ընդունինք Ջէմսի հետ, որ «եթէ չիրաւի գոյութիւն ունի մի ինչ որ բան, որը տալիս է գերզգայականի իմացումը, ինչ որ բարձր իրականի ըմբռնում, ապա ամենևին անհնարին չէ, որ նեարդային, պաթոլոգիական բնաւորութիւնը է մէկը գլխաւոր պայմաններից այդպիսի ըմբռնում, իմացութիւն ունենալու համար»(*): Սովորականէ տարբեր հոգե–նեարդային տարբեր վիճակը այս դէպքում միայն մէկն է գլխաւոր պայմաններից և ո՛չ լրիւ ամբողջութիւնը, իսկ ամբողջը բնորոշել դժւար է և գուցէ անհնարին: Հոգեկան աշխարհը յարաճուն, յարափոփոխ է միշտ, նորանոր ապրումներով հարստացող, որը քանդել ու կառուցանելու անընդհատ աշխատանքն է կատարուում: Անապատականի հոգին եթէ ունենում է և հոգե–նեարդային հիւանդագին վիճակ, բայց այդ էլ անցնում է, նորն է տեղը բռնում. զգաստը, իրականը, իւր նա-

(*) Ջէմս. նոյն տեղը, էջ 21:

խորդ վիճակից մի «անգիտակից տւեալ» ապրում է մէջը և նրան նոր մաքառման դրդում։

«Կրօնը է սոցիօլօգիա — հասարակապետութիւն ըմբռնուած, իբր մեզ շրջապատող բոլոր իրերի, ֆիզիքական, բնազանցական և բարոյական բացատրութիւն տուողը։ Նա մի համակարգութիւն է, որը բնական և նոյնիսկ գերբնական ոյժերին վերածում մարդկային տիպի, իսկ սրանց փոխյարաբերութիւնը հասարակական փոխյարաբերութիւնների»(*)։ Նման տիպի սոցիօլօգիա է ստեղծում և անապատականը, ուր գերիշխողը «միւս կեանքն է», բայց այդ «միւս հանդերձեալ կեանքը» իւր ազդեցութիւնն ունի թէ՛ անապատականի և թէ՛ նրան մօտ եղողների փոխյարաբերութիւնները որոշելու։

Անապատականի ստեղծագործած կրօն–սոցիօլօգիան առաւելապէս զգայութիւնների–էմօցիաների, զգացմունքների, ինտուիցիաների և անգիտակցականի աշխարհի արդիւնք է և այդ աշխարհը յաճախ տրամաբանական կանոններին չի ենթարկւում, ուստի և դառնում է տարօրինակ։ «Նախկին ժամանակների ճգնաւորութիւնը հրապուրում էր սրտառուչ, բայց միանգամայն ապարդիւն ապրումներով, կամ այլասերւում՝ դառնում էր կատաղի եսականութիւն առանձին անհատների համար, որոնք նպատակ էին դնում անհատական կատարելագործումը»(**)։ Այս բնորոշումը ճշմարիտ է երբ ի նկատի ունենանք հաւաքական գաղափարը ճգնաւորութեան, սակայն թերի և առանձին՝ խոշոր անհատ անապատականների համար, որոնց ճգնութիւնը, ոչ թէ որոշուած կարգերը կատարելուն էր ուղղուած, որոնք ոչ թէ օրէնքն էին գործադրում և փարիսեցու ձևապաշտութեամբ սաստկացած ծուներին թիւն ու պահքի, ծոմի օրերը չատացնում, այլ իրենք էին իրենց կրքի դէմ մաքառելու միջոցները մշակում, և ամեն անգամ գայթակղւելուց յետոյ ճգնութեան նոր եղանակ էին մշակում իրենց սոցիօլօգիա–կրօնի թերի կողմերը ամբողջացնելու։

Այս ճգնութեան նպատակը ցաւին, մահուանը, անաբդարութեան խիզախօրէն դիմագրաւելն էր, ուստի և նոյն հեղինակն ասում է «Ասկէտիզմը կեանքն ըմբռնում է այնպիսի խորութեամբ, որի համեմատութեամբ բնագիտական օպտիմիզը հոգեպէս թուլացածի եւ բարոյական դատարկութեան անպէտք բառերով ծածկուածի տպաւորութիւն է թողնում»(*)։ Ցիրաւի այն սառնասրտութիւնը, այն հոգեկան մեծ կորովը, որ ցոյց է տւել անապատականը նիւթական–կենսական դժւարութիւնները յաղթահարելու, բռնութիւններին դիմագրաւելու ու մահուանը դէմ գնալու դէպքում՝ ապացոյց է, որ անապատականը իւր ուրոյն աշխարհն ստեղծելով ու նրանով, նրա համար ապրելով կարող կը լինէր դիմագրաւել այդ ամենին ընդարմացած նեարդերով ու անզգայ։ Միայն այդ խորը հոգեկան ապրումի, ոգևորուած, կրօնական սքանչացման չնորհիւ է որ, անապատականը, նահատակը, մարտիրոսը կարողացել է գազանի առաջ պատառոտելու ելնել ազօթքը բերնին, բոցավառ խարոյկի վրայ իրեն վարդերի մէջ զգալ, կամ օրհնել իրեն աղրողներին։ Կրօնական զմայլանքները պիտի բացատրել

(*) Գիւյո. նոյն տեղը. էջ 91։
(**) Ջէմս. էջ 355։

(*) Ջէմս. էջ 354։

և այն, որ Ներոնի և յաջորդ կայսրների հալածանքների ժամանակ քրիստոնեաները հանգիստ սրտով գաղանների կուր էին դառնում, ջահեր դարձող սիւնեբին փաթաթւում, դահճին՝ վիզը երկարացնում, աղօթք մրմնջալով ու իրենց առաջ երկինքը բացած, Աստուծոյ հրեշտակները երևացող տեսնում։

Կրօնական զգացումը չէ միայն որ սքանչացման է հասցնում անհատին, այլ եւ հայրենիքի, ազատութեան գաղափարները. եթէ որևէ հռոմէացի Մայիուս Սցէվոլուիստ բազուկը կրակի վրայ կը բռնէր ու կ'այրէր յանուն հայրենիքի, եթէ որևէ յեղափոխական կախաղան կը բարձրանար ազատութեան գովքը բերանին, եթէ որևէ գիտնական այրեւելիս իսկ կը պընդէր իւր գտած ճշմարտութիւնը, իսկ այսպիսիների թիւը պատմութեան մէջ շատ է, ապա ամենից առաջ չնորհիւ իւր մէջ կրած գաղափարի ոյժի, այն ներքին զմայլանքի, որ նրան դարձնէ ներուս։

Անապատականը իւր ուղեղի հիւթով և նեարդերի արիւնով իւր երջանկութեան աշխարհն է ապրեցնում, և այս տեսակէտից նա «խորապէս գրաւիչ, հետաքրքիր մի պրօբլէմ է»(*)։ Հոգու աշխարհը մարմնի աշխարհից գերադասող անապատականը այն ըմբռնումն ունէր, որ հոգին մարմնին գերի է և պէտք է նրան ազատել. «հոգու փրկութիւն ասելով, ասում է Զիմմէլը, ես չեմ հասկանում միայն հանդերձեալ կեանքը, այլ հոգու լաւագոյն ձգտումների կատարումը, նրա ամենախորի կատարելութեան հասնիլը, որը գործ ունի միայն հոգու իւր և Աստուծոյ հետ»(**)։

(*) Զիմմէլ. նոյն տեղը, էջ 40։
(**) » » » » »

Ամբողջապէս գերզգայական աշխարհում ապրող ու պայքարող, գերզգայականին ձգտող անապատականը իւր սօցիօլօգիա–կրօնով, իւր սքանչացումով ու մեղաւոր զգալու ըմբռնումով երկուութիւն է ներկայացնում. այն երկուութիւնը որ գրականութեան մէջ էլ յաճախ քննուած ու ուսումնասիրուած է, որը իւր էութեամբ այժմ էլ կայ, որի արդիւնք պայքարը իւրաքանչիւր մտածող անհատ ունի ու դրսևորում է այս ու այն ձևով։

Անապատականի կեանքը իւր միօրինակութեան, իւր պարզ արտաքինի տակ բարդ հոգեբանական բովանդակութիւնն ունի. առանց այս էական կազմի վրայ լուրջ ուշադրութիւն դարձնելու անապատականին ուսումն ունեցողի համար նրա կեանքը միօրինակ, ձանձրանալի ու ապարդիւն աշխատանք կ'երևայ։ Անապատականի կենցաղը իւր ամբողջութեան մէջ մի ներդաշնակ միութիւն է նրա հոգեկան պայքարի հետ։ Նա ծոմ ու պաս է պահում, սիւնը բարձրանում, քարայրի մէջ մտնում ու փակւում, մարդի երես չի տեսնում, քուրձ է հագնում ու լալիս, աղքատութիւն է անում, երկիրներ է շրջում, որովհետև նրա հոգին անհանգիստ է, որովհետև նրա մէջ երկուութեան պայքարը ուժեղ է և միութեան չի վերածւել։ Շատերն են մինչև կեանքի վերջը այդ երկուութեան մէջ մնում. բայց և պատահում են երկուութեան պայքարից յաղթող ելնողներ, թէև սակաւաթիւ, որոնց կեանքը այնուհետև դառնում է խաղաղ վերջալոյս թխպոտ, կարկտաբեր ու անձրևաբեր օր եղած իրենց կեանքի համար։

Ցմռռանանք, որ իմ խօսքը ընդհանրապէս մեծ, հեղինակութիւն եղող անապատականների մասին է

և ոչ պատահականների, իրենց կեանքը մշակուած կարգ ու կանոնի յարմարացողների, որոնց համար ճգնութիւնը արհեստ էր դառնում և որոնց թիւը հարիւր հազարների էր հասնում:

Անապատականների կենսագրութիւնները առաւելապէս յետագայում են կազմուած ու չափազանցուած թիւններով, հրաշապատումներով լի: Կրողը աշխատել է մի կողմից իւր «հերոս»ի վարկը բարձրացնել հրաշքներ վերագրելով նրան, միւս կողմից ժամանակի ժողովրդական ճաշակին է յարմարցնել լեգենտաթ տարրը խառնելով իւր գրուածքում և երրորդ կողմից շատ է ազդել հեթանոս գրականութիւնից, որից և փոխ է առել շատ բան(*): Այս պատճառով անապատականի լրիւ պատկերը վերականգնելը դժուար է և գուցէ անհնարին: Նրա կեանքում հրաշապատումն ու իրականը, եղածն ու ցանկալին այնպէս նրբօրէն են հիւսուել, որ տարրալուծել քիմիկոսի բարեխղճութեամբ սև միկրոսկոպով եղածն ու աւելցածը որոշել բնագէտի հմտութեամբ դժուար է: Անապատականի կենսագրութեան մէջ մեծ տեղ ունին և հասարականի այսինքն ժամանակի ժողովրդական ըմբռնումները, որոնք անհարազատ չեն եղել նաև անապատականին. նա իւր հերթին աշխատել է ժողովուրդի այդ ըմբռնումն էլ իրականացնել իւր կեանքում: Այս տեսակէտից անապատականի կեանքի պարզաբանութիւնը որոշ չափով լոյս է սփռում նաեւ ժամանակի հասարակական հոգեկան դրութեան վրայ(**):

(*) Լուցիուս. Սրբազան պաշտամունքի սկիզբը քրիստոնեայ եկեղեցու մէջ. Տիւբինգէն, 1904, էջ 345-49:

(**) Անապատականների մասին տուած յետագայ տեղեկութիւնները առել եմ լիակատար «Վարք Սրբոց»ի մէջ,

Գլ. Գ.

Անապատ եւ անապատ հաստատողներ:

1.— Անապատական անունը ցոյց է տալիս, թէ ո՞ւր էր ապրում հասարակական կեանքից առանձնացողը: Որքան և սկզբում անապատական անունը բնակավայրից է առաջ գալիս, բայց յետագայում այդ անունը աւելի շատ համապատասխանում է անհատի վարած կեանքի եղանակին, քան բնակավայրին, երբ անապատականը մշակում է իւր յատուկ կենցաղի ձևը, իւր նիստ ու կացի, ձգտումների որոշ համակարգութիւնը, որը յետոյ աւելի ու աւելի է մշակւում ու դառնում «անապատական կարգի» կանոնագրութիւն:

Անապատ քաշուիլը, առանձնանալը քրիստոնէական երեւոյթ չէ և նրա հետ չէ մուտք գործել

վենետիկի հրատարակութիւն և Հարանց վարքից ու խրատներից, նաև ցայսմաւուրքներից. աշխատելով աւելի շատ հոգեբանական երևոյթները ուշադրութեան առնել, քան հրաշապատումը, և այն, որ կողմնակի ազդեցութեան կնիք ունի իւր վրայ: Որքան է յայտնի մեզանում անապատականների կենսագրութիւնների բանասիրական-մատենագրական լուրջ գիտական ուսումնասիրութիւններ պակասում են, ուստի և ձեռքիս տակ չունէի բուն բնագիրները, կենսագրութիւնները և ակամայից բաւականացայ յիշեալ աղբիւրներով: Անշուշտ իմ աշխատանքի մէջ կը լինին այս տեսակէտից և թերութիւններ, որոնք գուցէ կը մեղմանան միայն նրանով, որ ես պատմական-բանասիրական ուսումնասիրութիւն չէ որ կատարում եմ, այլ հոգեբանական վերլուծութեան մի փորձ, ուր որ երևոյթն է գլխաւոր տեղը բռնում և այն բացատրելը:

քրիստոնէութիւնն այս դէպքում էլ օգտւում է հին հեթանոսական կրօնների տուեալներից և իւրատեսակ փոփոխում ու վերջնվերջոյ մի կազմակերպուած, ճիւղաւորուած հաստատութեան վերածում:

Ս. Գրքից յայտնի է, որ Աբրահամի ժամանակ, հրեաների ցեղական վիճակ ունենալու շրջանում, Մելիքսեդեկը 7 տարի անապատում է անցկացնում կեանքը, մարգկանցից միանգամայն կտրուած: Նրա ձեռքի եղունգները թզաչափ մեծանում են, գլխի մազերը աճում, հասնում մինչև ծնկները, թիկունքը կրիայի պատեանի պէս կարծրանում է: Նա ուտում էր ծառերի ոստերի ծայրեր և առաւօտեան ցօղը բոյսերի վրայից լիզում ջրի տեղ: Հրէից մէջ անապատ քաշուող եղել է և Մովսէսը, թէև կարճ ժամանակով, և Եղիա մարգարէն, որ ապրել է Յորդանանի դէմ ձգուող Քոռաթի անապատում. Յորդանանի անապատ է քաշւել և Յովհաննէս Մկրտիչը, ինքը Յիսուս նոյնպէս 40 օր անապատում առանձնացել է և սատանայից փորձուել: Դէպքեր, որոնք յայտնի էին քրիստոնեաներին Ս. Գրքից ու Աւետարանից և որոնց նմանւելը, որոնց ճանապարհով գնալը աւելի մոլեռանդ ու նոր կրօնին փարողի համար գրաւիչ պիտի լինէր, գրդէր նոյնն անելու:

Քրիստոսից 53 տարի առաջ Պաղեստինի անապատում ապրում էր Բանու ասկէտը, որ ուտում էր վայրի բոյսեր և պտուղներ, հագնում էր ծառի տերևներ և մկրտում էր իրեն քարոզը լսողներին և ընդունողներին, ինչպէս յետոյ Յովհաննէս Մկրտիչն է անում Յորդանանի ափին: Հրէական ուսմունքի մի ճիւղն էր և Յեսսէեանների աղանդը Քրիստոսից 150 տարի առաջ ծնունդ առած: Այդ ուսման հետևողները

կոմմունիստական կենցաղ ունէին. ամէն ինչ հասարակաց էր՝ կերակուր, զգեստ. սեպհականութիւն մասնաւոր չունէին: Նոյնպէս հրեաների մէջ սկիզբն առաւ Աղեքսանդրիայում տերապեւտների օրդէնը, որոնք թողնում էին տուն տեղ, կին, ունեցածը բաժանում բարեկամներին և առանձնանում եգիպտոսի անապատը: Սրանց կերակուրն էր հաց, աղ և ջուր. գինի և միս չէին գործածում, ենթադրւում է որ այս ուսմունքն ազդել է հէսսեանների վրայ(*):

Արևելեան միւս հին կրօններն էլ ունեցել են իրենց անապատականները: Քրիստոսից 162 տարի առաջ Մէմֆիսի Սերապիայում ապրում էր մի ճգնաւոր երկար տարիներ կարօտեալներին օգնելով, նրանց համար միջնորդելով իշխանութիւնների առաջ: Ասկետական նիստ ու կաց ունէին և Իզիդա աստուածուհու քրմերն Եգիպտոսում. որոնք ժուժկալ կեանք էին վարում, խստիւ ուշադրութիւն էին դարձնում ամեն տեսակ անմաքրութիւնից հեռու լինելու վրայ, հագնում էին ոչ բրդից գործած կտորներ. կոյս էին մնում, իրենց մեղքերի համար իրենց մարմինն վէրքեր էին պատճառում, զղջման գալու պաս պահելու վարժութիւններ էին անում(**):

Եղել են և յոյն փիլիսոփաներ, որոնք թողել են իրենց հայրենիքը, տունը, վարել են ճգնաւորական կեանք. միս չեն կերել, գինի չեն խմել, չեն ամուսնացել, որոնել են հոգեկան, բարոյական ու կրօնական կատարելութիւն:

(*) Կառւցկի. Քրիստոնէութեան ծագումը, Պետերբուրգ, 1920. էջ 255:

(**) Մանրամասնութիւնները տե՛ս Spultze, նոյն աշխատանքը, էջ 369-370:

Բրահմանները, որոնց մասին յոյները Հերոդոտից և Աղեքսանդր Մակենդոնացուց սկսած տեղեկութիւններ ունէին, ապագան գուշակում են, իբր թէ հրաշքով կերակուր են ստանում, իբր թէ չար ոգով բռնուածներին բժշկում են։

Այս երևոյթները անծանօթ չէին քրիստոնեաներին, մանաւանդ Եգիպտոսում, ուր ամենից շատ տարածւում ու զարգանում է անապատականութիւնը։ Հեթանոսութեան դէմ մրցիլ ցանկացող քրիստոնէութիւնն աշխատում էր նման զէնքերով պայքարիլ հակառակորդի դէմ, փոխ առնելով նրանը եւ զանոնք բարոյացնելով կատարելագործելով, աշխատում էր նոր կրօնն էլ բարձրացնել, ճոխացնել եւ հեղինակաւոր դարձնել այն միջոցներով որ ժողովրդին ամենից աւելի էր գրաւում և արժէք ունէր մանաւանդ սկզբնական շրջանում, երբ պայքարը սուր էր եւ նոր կրօնը իւր թարմութիւնն ու ոյժը պահում էր։

Անապատներով հարուստ է ամենից շատ հին կուլտուրայի շրջանում Աֆրիկան, ուր ամենից շատ սեմիտական ցեղի մէջ անապատականութիւնը զարգանում է։ Եգիպտոսի արևմտեան կողմում ձգւում է Լիբիայի անապատը, հարաւում Ասորիքի անապատը։ Լիբիայի անապատում կան եւ օազիսներ, ուր 300–500 տեսակի բոյսեր են աճում։

Եգիպտոսի անապատներից քրիստոնեային գրաւողը եղել է Սինայի անապատը, ուր Սինա լերան վրայ, ըստ Ս. Գրոց աւանդութեան, Մովսէսին Աստուած երևացել է և հետևապէս սրբատեղի դարձել, նաև Թէբէյի անապատը։ Այն անապատում «ժայռեր, լերկ, կարծր, թուխ կարմիր ժայռեր են ամեն կողմ, չկայ թուփ, մի խոտ ծղօտ և ոչ իսկ կպչուն մամուռ. . .

ներքևը ողորկուած գրանիտ, վերևում երկինք»(*)։ Սինայի անապատից քաղաքներն այնքան հեռու չէին, որ ոտքով չգնային անապատականները իրենց համար անհրաժեշտը ձեռք բերելու։ Անապատականներից ոմանք մօտակայ լեռների վրայ որս էին անում. որովհետև աւազակային խմբերը երբեմն յարձակւում էին նրանց վրայ. ունէին և իրենց փոքրիկ ամրոցը, ուր վտանգի ժամանակ հաւաքւում, պաշտպանւում էին։

Եգիպտական անապատում, կեանքն առանձին դժուարութիւն չէր ներկայացնում։ Նրա կլիման մեծ ծախսեր չէր պահանջում տուն չինելու, զգեստ, վառելիք ձեռք բերելու, վատ եղանակներին պաշտպանւելու։ Բացի այդ անապատը քաղաքին մօտ էր, այնպէս որ անապատականը իւր բարեկամների միջոցով կարող էր հեշտութեամբ ստանալ անհրաժեշտը, իսկ ցանկութեան դէպքում կարող էր ինքը ձեռք բերել մի քանի ժամ ճանապարհ կտրելով»(**)։

Սակայն անապատն ունէր եւ «ներքնագոյն» աւելի խոր ընկած մասեր, ուր որ հասնելու համար 10–15 օր ճանապարհ պէտք էր գնալ ոտքով, այս տեղերում եւս առանձնացող անապատականներ են եղել։ Անապատի լեռներում կային այրեր, ուր եւ տեղաւորւում էին անապատականները, և՛ միայնակ և՛ երբեմն 2–3 հոգով։ Անապատով անցնում էին երբեմն կարաւաններ վաճառականների, որոնք անապատականներին հանդիպելու դէպքում իրենց հոգու փրկութեան համար ուտելիք էին տալիս։ Կային եւ անապատականներ, որոնք օազիսների մօտ են ապրել.

(*) Էբէրսի «Մարդ եմ» վէպը, էջ 1։
(**) Կաուցկի, նոյն տեղը, էջ 255։

այրերի առաջ եղել են արմաւենիները, այրի մէջ աղբիւր. եղել են և Նեղոսի ափերին մօտ ապրողներ:

Անապատականների թիւը մեծանալուց յետոյ սկսել են վանքեր չինել, ուր տեղաւորուել են 700–1000, անգամ 5000 հոգի: Ամենից մեծը դրանց մէջ եղել է Սկիտը Աղէքսանդրիայից մօտ. որը անապատականի համար Դ. — Ե. դարերում եղել է նոյնը գրեթէ, ինչ որ ժամանակի Հռոմը աշխարհի համար: Բնական է, որ այդքան բազմութիւն ունեցող անապատը պիտի ունենար իւր տնտեսութիւնը, իւր վարուցանքը, իւր պարտէզը, ևայլն: Սկիտն ունէր ուղտեր, որ այրերում էին պահւում, ունէր պարտէզ. Աղէքսանդրիայից Սկիտ էին գալիս վաճառականներ և վաճառում գինի: Այդ մեծ անապատն արդէն չեղել էր իւր սկզբնական նպատակից և դարձել էր մի վանք, ուր ընդհանուր օրէնքն ու կարգն էր իշխում և ոչ անհատական ձգտումը: Մի այլ անապատ, որ վանքի էր վերածւել և որը տեսել էր Մակար անապատականը, ունէր 15 կարկատող, 20 ներկարար, 5 հիւսն, 10 դարբին, 7 ուղտապան, 40 հոգի աշխատաւորներ, որոնք իրենց աշխատանքով իրենց էին կերակրում և բանտարկեալներին օգնում:

Այսպիսով անապատը մի ընդհանուր, որոշ տեղ չէ, ուր ոչ բուսականութիւն կայ, ոչ կենդանութիւն, ուր միայն աւազ է ու մեռած բնութիւնը. անապատը աշխարհագրութեան մէջ կիրառուող տերմինով չպիտի հասկանալ: Կրօնական ըմբռնմամբ անապատը առանձնանալու աղօթելու յարմարութիւն, տեղի տեսակէտից նա տարբեր կլիմայ, տարբեր բուսականութիւն, բնակչութիւն ունեցող վայրերից տարբեր հեռաւորութիւն ունէր: Այդ պատճառով անապատական անունը որոշ,

պարզ մշակած մի կիրառումով չպիտի հասկանալ, ինչպէս թիւրիմացութեամբ ցայսօր կարծեն շատ շատերը, որ անապատականը ճիշդ որ անապատ — անկենդան, մեռած բնութեան մէջ է ապրում, հացից ու ջրից զրկուած. այդքան ծայրայեղ վիճակ ունեցողներ գրեթէ չեն եղել. բացառութիւններն էլ երկար չեն մնացել նման վայրերում:

Բացի Եգիպտոսից՝ անապատականների բնակավայրեր համախմբումների և անհատական առանձնական կեանք վարելու վայրեր եղել են նաև Պաղեստինում, ուր Յորդանանի անապատն էր, որ ձգւում էր Յորդանանի և Երիքովի ծանծաղուտներից դէպի Մեռեալ Ծովը: Յորդանանի ափին բուսած էին եղէգներ, որոնց մէջ կային գազաններ. անապատի օդը կիզիչ էր, կային ծծմբային կոյտեր ծովի ափին: Բացի այդ կար և յայնկոյս Յորդանանու անապատը, որն ունէր «ներքնագոյն» մաս ուր հասնելու համար օրեր էին պէտք:

Անապատները Դ. դարուց սկսած զարգանում են նաև Միջագետքի Ասորիքում, Հնդկաց աշխարհում, Պարսկաստանում, Հայաստանում, երբ արդէն անապատականը որոշ կենցաղ վարող, հասարակութիւնից հեռացող էր նկատւում: Հայաստանում ևս Գրիգոր Լուսաւորչից սկսած անապատներ են առաջ գալիս. Ինննակնեան վանքի մօտ, Հարանց անապատ, Մամբրէի անապատ, վերջերը Սևան, Լիմ, Կաուց կղզիներում, որոնք Եգիպտոսի անապատի հետ աշխարհագրական տեսակէտից նմանութիւն չունէին, այլ իրենց բովանդակութեամբ էին համարւում անապատներ:

Անապատականութիւնը եկեղեցական իշխանութեան կողմից ընդունելի դառնալուց յետոյ, որպիսին

նա սկզբում չէր և անկախ, ինքնուրոյն էր առաջ եկել, դառնում է որոշ եկեղեցական հիմնարկութիւն, որը կարելի էր հիմնել այս կամ այն տեղը. ինչպէս օրինակ Բարսեղ Կեսարացին հիմք դրեց Կապադովկիայում, Եփրեմ Սուրինը Միջագետքում, Իլլարիոնը Պաղեստինում, Գրիգոր Լուսաւորիչը Հայաստանում: Այս անապատները տարբերւում էին Եգիպտոսում ըսկիզբն առած նախկին անապատներից թէ իրենց կազմութեամբ, թէ նպատակով:

Եգիպտոսն ունէր յիրաւի անապատ աշխարհագրական մտքով եւ նրա անապատը առանձնանալու յարմարութիւն ունէր. մինչդեռ եկեղեցական Հայրերի հիմնածները աւելի շատ «արհեստական» անապատներ էին: Եգիպտոսի անապատը եղել է միւս անապատների տոն տուողը և օրինակը, ուստի և անապատականների մասին խօսելիս առաւելապէս ի նկատի ունենք այս տեղ, մեծ անապատում ապրողներին, որոնք իրենց կեանքով օրինակ են դարձել միւսացածներին և սրանց կենսագրութիւնները եղել են նմանողութեան աղբիւրներ:

2.— Տասնեակ և էլ աւելի հազարների հասնող անապատականների թիւը հէնց միայն Եգիպտոսում, Դ.— Ե. դարերում, որ մի ժամանակ նոյն իսկ հռոմէական կայսերութեան մտահոգութեան առարկան դարձաւ, կազմել էր բազմատեսակ հասարակական դասակարգերից ու խաւերից: Ինչպէս նախնական քրիստոնէութեան հետևողները աւելի աղքատները, հալածուածներն էին, այնպէս և անապատ քաշուողները սկզբում աւելի չունևոր դասին պատկանողներն էին: Քրիստոնէութեան քաղաքացիական, ապա և պետական կրօնի իրաւունք ձեռք բերելուց յետոյ, անապատականների կազմն էլ փոխուեց, դարձաւ բազմօրինակ: Մինչդեռ եկեղեցում-դրսում դասակարգային խտրականութիւնը մնաց իր ոյժի մէջ, հալիւ նկատելի մեղմ վերաբերմունքի վերածելով անհատների կողմից դէպի պրօլէտարիատը, այն էլ կարճ ժամանակով, անապատում դասակարգային տարբերութիւնը վերանում էր, այստեղ հաւասար էին բոլորը «մեղաւոր» լինելու գիտակցութեան պատճառով: Վանքերում կենցաղի համար կօմմունիստական սկզբունքը կիրառւեց ու «եղբայր»ները և «հայր»երը (այսինքն կրտսերներն ու աւագները) նոյն ապրուստն ու հագուստն ունէին. տարբերութիւնը «սրբակեաց» լինելու մէջ էր, որ առաջ էր գալիս անհատի հոգեկան աւելների, իր գործադրած ճգնական աւելի տևական ու դժւարին միջոցներ գործադրելուց:

Անապատ քաշուողները սկզբում եգիպտացիներ էին, ապա և յոյները, ասորիները, հրեաները, որոնք կամ իրենց հայրենիքի անապատներն էին քաշւում կամ գնում էին Եգիպտոսի անապատը, իբրև կենտրոնական անապատ: Անապատականների մէջ գերակշռողը կազմում էր գիւղական չքաւոր և քաղաքների արհեստաւորների դասը, կայլն և քաղաքացիները, ազնուական դասի ներկայացուցիչներ, երբեմն նաև իշխանական տոհմից եղածներ: Մեծ մասամբ անգրագէտ էին. անապատում էին սովորում աղօթքը, սաղմոս կարդալը: Հետզհետէ երևան եկան և Աբէնքի, Աղէքսանդրիայի, Անտիոքի դպրոցներում սովորածներ, փիլիսոփաներ, ճարտասաններ, որոնք անապատականի համար գրագիտութիւնը պարտաւորական դարձրին: Մինչդեռ անապատականը սկզբում սոսկ

աղօթող էր անպաճոյճ բառերով և կարիք չէր զգում գրքի, որովհետև ինչպէս Անտոն անապատականն էր ասում, որը համարւում է անապատական կարգի հիմնագիր, «Բնութիւնն է այն մեծ գիրքը, որտեղ կարդալ կարելի է և սովորել աշխարհի և Աստծու գաղտնիքները», գրագէտ անապատականների երևան գալուց յետոյ գրի յարգը մեծանում է մինչև պարտադրապէս սովորելու աստիճանը. սկսում են ձեռագրներ արտագրելով պարապել և իրենց նիւթական ապրուստի համար միջոցներ հայթայթել այդ ձևով:

Անապատականները երկու սեռից էին՝ կին եւ տղամարդ. տղամարդկանց թիւը շատ աւելի էր, քան կանանց. կանայք ևս տարբեր դասակարգերից էին, որոնց մէջ աւելի շատ էին ունևորները, ապահովուածները: Կային և «մանուկ»ներ, պատանիներ, որոնց ծնողներն էին ուղարկում անապատ որ եւ է «հօր» մօտ ուսանելու կամ իրենք էին փախչում անապատ:

Տարբեր ուղղութիւնների ու կրօնների մարդիկ էին անապատականները. տարբեր կրօնի՝ այն մտքով, որ քրիստոնեայ մկրտուելուց առաջ այլ և այլ կրօնների հետևողներ էին և իրենց այդ մտայնութիւնը քրիստոնեայ դառնալուց յետոյ երեւում էր իրենց ճգնական կեանքի մէջ: Այդ ահագին բազմութիւնը, որ տեղաւորուած էր այրերում, գետերի ափերին, յատկապէս մեծ սկիտում ու վանքերում տարբեր դըրդումներից ու հանգամանքներից էր անապատ քաշւել: Հռոմէական կայսերութեան քաղաքական ու տնտեսական հասարակական դրութիւնը Ք. — ե. դարերում բաւական նպաստել էլ հասարակական կարգերից դըժգոհներին առանձնանալ, հեռանալ մի տեղ, մի համայնքի մէջ, որը նրանց իրենց ծանր վիճակից ազա-

տել կարող էր: Այն ահագին հարկահանութիւնը, այն միլիոնաւոր ստրկութիւնը, որ առաջ էր գալիս չքաւորների իրենց պարտքը վճարել չկարողանալուց, պատերազմում գերի ընկնելուց, այն խժդժութիւնները, որ հռոմէական կայսերութեան պաշտօնեաները թոյլ էին տալիս իրենց ընչաքաղցութեան համար ուժասպառ գիւղացիների վրայ, այն դժբախտ և տընտեսական անտանելի վիճակը, որ ունէր գիւղացիութիւնը չնորհիւ բազմաթիւ աւազակախմբերի յարձակումների, բարբարոսների արշաւանքների, միացած ստեղծել էին տնտեսական ու իրաւական ծանր վիճակ և մարդիկ իրենց գոյութեան ապահովութեան համար փախչում էին անապատ, թողնում իրենց արիւն քըրտինք քամողների: Դրանք այն անկազմակերպ պրօլետարիատի ներկայացուցիչներն էին որոնք բողոքով լցուած էին ժամանակի իրաւակարգի դէմ, բայց դասակարգային գիտակցութեան բացակայութեան չնորհիւ, կազմակերպող ձեռքեր չլինելու պատճառով, անապատ էին փախչում կամ աւազակութեան կամ աղօթքի, նայելով ով ի՞նչ բնութեան, խառնուածքի տէր էր:

Քրիստոնեաների դէմ կայսրների հանած հալածանքը ոչ պակաս պատճառ էր դառնում անապատները փախչելու, երբ քրիստոնէի հասարակ քաղաքացու իրաւունքն իսկ կապտուած էր, երբ նա չունէր անձի և գործի տարրական ապահովութեան իրաւունք, երբ նրան ամեն ոք կարող էր դահճին ու դատաւորին մատնել, բնականաբար նա աշխատում էր իւր անձը փրկել, մանաւանդ հոգով թոյլերը, որոնց համար անապատը ապահով վայրն էր, այդպիսի քրիստոնեաները եղած չեղածը ծախում էին ու կինը մարդու ե-

չեխաների հետ մեկնում էր անապատ, ամեն մեկը իւր համապատասխան վանքն առանձնանալով։

Այս էր ընդհանուր պատկերը անապատ քաշուող մեծամասնութեան, մասսայի, թէև դրանց մէջ էլ կային անհատական ներքին դրդումներից ընդհանուրի մէջ մտածներ, բայց թւով քիչ էին և ուժեղ հոսանքում դրեթէ կորչում էին։

Անապատականների կազմի պատկերը լրիւ դարձընելու համար պէտք է ասել եւ այն, որ դրանց մէջ եղած բարձր դասի ներկայացուցիչներն էլ ժամանակի մեծ քաղաքների՝ Աղէքսանդրիայի, Անտիոքի, Հռոմի չռայլ, զեղխ կեանքի վայելքները ստանալուց յետոյ ձանձրացած, հիասթափուածներն էին մեծ մասամբ, որոնք անապատ էին քաշւում, նոր կեանք փորձելու. է՛ որ մնում էին մինչև վերջը, է՛ որ նորից աշխարհ էին գնում։ Յետագայում անապատ են քաշւում նաև պատրիարքներ, եպիսկոպոսներ, կայսրներ, իշխաններ, որոնք իրենց ճոխ կեանքի տեղ պարզ անապատականի կեանքն են վարում։

Սակայն անապատականներին դոյն տուողը, անապատականի տիպը որոշողը և նրան հասարակական կրօնական արժէք դարձնողը առաւելապէս այն տարբեր դասակարգերի անհատ ներկայացուցիչներն են եղել, որոնք հոգեկան ուրոյն խառնուածքի չնորհիւ հասարակութիւնից հեռացել են ու միայնակեացի կեանք են վարել։ Այն յատուկ աշխարհայեացքը, որ նրանք կազմել են կեանքի, գոյութեան մասին, այն իւրատեսակ ըմբռնումը, որ քրիստոնէութիւնը նրանց տուել է, հոգեկան աշխարհում առաջ բերելով յեղաշրջում, դրդել է նրանց առանձնութեան մէջ ինքնամփոփ կեանք վարել և հոգու աշխարհը փրկելու լաւ

ձև է ասել մաքրելու դժուարին գործին կենալ։ Ժամանակի հասարակական միջավայրը, որքան և նպաստաւոր է եղել նման անհատների համար, բայց և իրենց անհատական խառնուածքը մեծ դեր է կատարել սրանց ճգնութեան մէջ և այդ անհատականն է, որ նրանց ընդհանուր հոսանքից տարբերել է. ինչպէս այժմ էլ դեռ հասարակական–քաղաքական մեծ հոսանքներին մէջ կան և կը լինին առաջնորդող, տոն տուող անհատներ։ Մեծ անապատականների մէջ այդ անհատականն է, որ ուշագրաւ է, որը իւր մէջ ամփոփելով հանդերձ ընդհանուր հասարակականը, ունէ այնուամենայնիւ իւրայատուկ անհատականը, որը հասարակականին գունաւորում է, դարձնում մի ուրոյն ճիւղ, ուրոյն հատուած ընդհանուր հոսանքից զատ։

Ժամանակակից մտայինին դժւար է լիովին վերապրել ու համակրիլ այն աշխարհայեացքով ու մտայնութեամբ, որ քրիստոնէութիւնը առաջ էր բերել քայքայուող հռոմէական կայսերութեան ժամանակ նորին ակնկալող, անորոշին ձգտող ու հնից ձանձրացած, հիասթափուած մտայինների մէջ։ 16–17 դար առաջ ապրող մտայինի համար քրիստոնէութեան և հեթանոսութեան խառնուրդ նոր ուսմունքը իւր յարութեան գաղափարով, իւր հանդերձեալ կեանքի պատկերով, իւր երկնքի ու դժոխքի նկարագրով իրական արժէք էր և կենդանի ոյժ, որին ծառայելը, հասնիլը կէտ նպատակ էր դառնում որոնող, տանջուող հոգիների համար։

Մտայինը իւր աշխարհայեացքը լրացնելու և յարմարցնելու նպատակով էր անապատ քաշւում, գիւղացին հարկից էր փախչում, քաղաքի արհեստաւորը զինուորագրութիւնից ու հալածանքից, քաղաքացին

երկիւղից, իշխանը ձանձրոյթից, եպիսկոպոսը խիստ կրօնական ոգուց, և ամեն մէկն էլ վերջիվերջոյ Աստծու հովանին էր փնտռում, իւրեն հոգին էր փրկել ցանկանում: Աստուած լինքը անընդհատ որոնման գաղափար է և աստուածաբանողներ եղել են ու կան. խոշոր անապատականը նոյն աստուածաբանողն է, որը փիլիսոփայական դպրոցներում իւր որոնմանը յագուրդ չգտնելով անապատ է քաշւում, կամ որի համար սովորական կեանքը վերագնահատւում է ու դառնում անարժէք, անիմաստ: Անապատը նրան դաստիարակւում է իւր մէջավայրում, լինքն էլ անապատին եւ գոյն է տալիս իւր հոգու կարող ոյժերի չնորհիւ:

Թէ տնտեսականի, թէ մտաւորի տեսակէտից անապատականները խառնուրդ էին և ոչ միաձոյլ մի ամբողջութիւն, եւ նրանց կենցաղն ու ձգտումները տարբերւում էին իրարից, երբեմն էլ միմիանց հակասում, ժխտում:

Գլ. Դ.

Անապատականի կենցաղը:

Անապատականը եկեղեցական կազմակերպութեան արդիւնք չէ, այլ առաջ է եկել լինքնուրոյն, երբ զարգացել է, ստւարացել, երբ նա ունեցել է իւր ուրոյն դիրքը հասարակութեան մէջ և արժէքը պետութեան աչքում, նոր այդ ժամանակ եկեղեցին հաշւի է առել նրան ու աշխատել է իւր կողմը գրաւել: Որքան և երկուսի՝ եկեղեցու եւ անապատականի յարաբերութիւնը սուր է եղել, բայց և այնպէս եկեղեցուն յաջողւել է հետզհետէ այդ լինքնուրոյն և լինքնամփոփ մեծութիւնների հետևողներին իւր հովանու տակ առնել և նրան որոշ չրջանակի մէջ դնել: Անապատականը եղել է բողոքող յարմարուող քաղաքականութեան հետևող եկեղեցուն և հեթանոսացող քրիստոնէութեան. նա եղել է մի տեսակ արթուն խիղճ բիւրոկրատիզի և աշնւականութեան փէչերի տակ մտնող եկեղեցականութեան համար. բայց վանքեր—անապատներ առաջ գալուց յետոյ, երբ մտել են նրանք էլ որ և է եպիսկոպոսի հակողութեան տակ նրա մէջ այդ ոգին թուլացել է, թէև չի հանգել. այդ բողոքաւոր ոգին ճնացել է անհատ մեծութիւնների մէջ միայն, որոնք Աւետարանի ոգին իւրացնելու դժւար աշխատանքին էին նւիրում իրենց:

Սկզբում անապատականը աշխարհիկ անձն էր. չունէր որ և է հոգևորական աստիճան. եկեղեցու նկատմամբ չունէր որ և է պաշտօնական պարտաւորութիւն: Այլ և այլ հասարակական ու անհատական պատ-

ճառներից անապատ քաշուողը ինքն էր իւր համար իւր կենցաղի, աղօթքի, ճգնութեան ձևերը որոշողը, իւր իսկ ըմբռնումների համաձայն: Առաջին անապատականները միայնակեացներ էին, չունէին ոչ ընկեր, ոչ ծառայող: Երբ հետզհետէ հեղինակաւոր անապատականների թիւն աւելանում է՝ սկսում են ուրիշներն էլ սրանցից օրինակ առնելու համար գալ սրանց մօտ, ճգնութեան և աղօթքի ձևերը սովորելու: Միայնակեացների թիւը պակասում է, առաջ է գալիս եղբայրանոցը, ուր ապրում են երկու երկու, կամ աւելի թւով, իսկ երբ մի տեղ խմբական կեանք է սկսւում բնականաբար առաջ են գալիս ընդհանուր կարգեր, օրէնքներ, լինում է ղեկավարող. այսպիսով կազմակերպւում է աստիճանաբար վանքը, վանականութիւնը և վանական կանոնադրութիւնը:

Վանական կեանքի սկիզբը դնողը անապատականն է, և այնուհետև անապատ քաշուողներից մեծ մասը վանքերում են տեղաւորւում: Վանքը եկեղեցուն կից կազմակերպութիւն է այլ ևս, նրա վրայ տարածւում է եկեղեցու իշխանութիւնը. վանքերում լինում են հոգևոր աստիճաններ ունեցող անձինք:

Միայնակեաց անապատականը ինքնուրոյն կեանք վարելով իւրայատուկ կենցաղի էլ ձև ունէր: Մեծ անապատականները այդ տեսակէտից միօրինակ, միաձև կեանք չեն ունեցել և ոչ էլ միատեսակ աղօթքի, ճգնութեան կարգ: Վանքում եղող վանականը ունէր բոլոր անելիքների — կենցաղի, աղօթքի, հագուստի, նիստ ու կացի մշակւած ձեւ եւ դրանցից իրաւունք չունէր դուրս գալու: Այլ էլ մեծ անապատականը, որը ինքն էր իւր գլխի տէր. նա ինքն էր կարգ սահմանողը և ոչ կարգին, որոշուած օրէնքին ենթար-

կուողը. այդ պատճառով հնարաւոր չէ մի ընդհանուր կենցաղի ձև նկարագրել անապատականի, այլ պէտք է մեծ անապատականների կենցաղից — կենսագրութիւններից եւ տւած խրատներից նմոյշներ հանել եւ գաղափար կազմել թէ ի՞նչպէս էր անցկացնում անապատականը իւր օրը:

Աչքի ընկնող անապատականները — ճգնաւորները հետևեալներն են ըստ Վարք Սրբոցի. առաջին չրջանում, տղամարդիկ — 1. Անտոն անապատական. 2. Մակար. 3. Տիմոթէոս. 4. Պափնուտիոս. 5. Ոնուփրիոս. 6. Պօղոս Լուստրացի. 7. Ապաուրա. 8. Ամոն. 9. Աբասիոս. 10. Պելենիոս. 11. Յովհան Գրնեցի. 12. Աբբա Մարկոս. 13. Պօղ Միայնակեաց. 14. Պօղոս անապատական. 15. Մատրիանոս կրօնաւոր. 16. Սիմէօն Սիւնակեաց. 17. Իլարիոն կրօնաւոր. 18. Պօղոս Ալէքսանդրացի. 19. Եփրեմ Խուրի Ասորի. 20. Նեղոս Եգիպտացի. 21. Մարկոս սալոն, որ է յիմար. 22. Յօհան անապատական. 23. Կամաւոր աղքատ (Ալէքսիանոս) որդի Հռոմայ թագաւորի. 24. Եւագր. 25. Պարսամ: Կին անապատականներ՝ 1. Մարիամ, որ է Մարիանոս. 2. Եփրոսինա. 3. Թէոդորոս. 4. Մարիամ Եգիպտացի: Սրքա ոչ դասակարգային, ոչ աշխարհայեաց.քի, ոչ կենցաղի, ոչ ճգնութեան, ոչ աղօթքի համանմանութիւն չեն ունեցել, և մի տեսակ նոր դպրոցների հիմնադիրներ են, աւել կամ պակաս չափով:

Անապատականին միայնութեան ու ճգնութեան տանողը հոգին մաքրելու, իւր զգացած կամ կատարած մեղքերը քաւելու, ապաշխարելու, կրքերի դէմ մաքառելու բուռն ձգտումն է եղել: Սորանից իւրաքանչիւրը իւր յատուկ մեղքն է ունեցել և յատուկ

ըմբռնումը մեղքի եւ հոգու փրկութեան, ուստի եւ իւրայատուկ կենցաղով էլ աշխատել է մեղքը քաւել։ Անապատականի կեանքը, կենցաղը, ուտել–խմելը, քնակարանը, ապաշխարելու եղանակը, հանդերձը, աղօթքի ձեը իւր վրայ կրում է ապաշխարութեան — մեղք քաւելու կնիք։ Անապատականի հոգեկան աշխարհի ըմբռնման ու կենցաղի, ապրուստի մէջ համեմատաբար աւելի ներդաշնակութիւն է եղել, քան սովորական գրսի աշխարհիկ մարդու և եկեղեցական պաշտօնեի մէջ։ Անապատականը իւր ըմբռնած կեանքը աշխատել է իրականացնել, նա աշխատել է գաղափարի և իրականութեան մէջ համերաշխութիւն առաջ բերել, իւր անձնական կեանքում այդ տեսակէտից նա եղել է գաղափարի մարդ, հոգու հերոս։ Կարեւորը ներկայ դէպքում այն չէ, թէ ո՞րքան ճըշմարիտ է, առողջ է նրա գաղափարը, ո՞րքան օգտակար է հասարակական զարգացման տեսակէտից, այլ այն, որ նա գործի ու խօսքի, իւր հոգի մէջ իշխող երկու հակամարտ ուժերի մէջ համերաշխութեան առաջ բերելուն է ձգտել։ Անապատականը այդ համերաշխութիւնը առաջ բերելու համար ծանր զոհաբերութիւններ է արել, չնորհիւ գաղափարի ոյժի, չնորհիւ տոկուն կամքի։

Այդ անձնուրաց ու գաղափարական ճիգ ու ջանքն է որ գրաւել է չատերին, գարձել է օրինակ ուրիշների համար, գարձել է որոշ կարգ ու կանոն և հիմք եւ այդպիսով նրա անհատական կեանքը ստացել է հասարակական արժէք. այս տեսակէտից է, որ ըստ իս, նրա — անապատականի կեանքը հասարակական զարգացման խնդրում տեղ ունի, եթէ հաշւի չառնենք այն անապատականներին, որոնք հասարակութեան մէջ գործել են, քարոզել են, բարեգործութեան օրինակներ են տւել եւ իշխանաւորների են ղսպել(*)։

Մի ժամանակ յոյն վանականութիւնն՝ այնքան ուժեղ կազմակերպութիւն էր գարձել, որ Բիւզանդական կայսրները նրանց, մանաւանդ մեծ ճգնաւորներին, հաշւի էին առնում եւ որ եւ է եկեղեցական փոփոխութիւն–ռէֆորմ մտցնելու դէպքում հարկ էին համարում նրանց էլ ժողովների հրաւիրել, նրանց կարծիքները իմանալու և համաձայնութիւնն առնելու։ Այս հաշւի առնելու հիմքը անապատականի բարոյական արժէք լինելն էր, նրա վարած առաքինի և խիստ ճգնական կեանքի պատճառով ժողովրդի աչքում հեղինակութիւն դառնալը. եկեղեցական իշխանութիւնն էլ գիտէր այդ. գիտակցում էր, որ «սուրբ»ի հռչակ ունեցող ճգնաւորի խօսքը ժողովրդի համար օրէնք է(**)։ Ահա նաև ո՞րտեղ է երևում անապատականի հասարակական արժէք լինելը։

Ժողովրդին գրաւողը անապատականի արտաքին կենցաղն էր. այն իւրատեսակ ապրուստի ձեը, որը իւր վրայ զրկանքի, նեղութեան, մարմինը ճգնելու կնիքն ունէր. իսկ նրա հոգեկան ապրումները ժողովրդին անծանօթ էին մնում մեծ մասամբ. և անապատականը անչուշտ ժողովրդի այդ ըմբռնման ազդեցութեան տակ երբեմն ծայրայեղութեան էր հասցընում իւր արտաքին ճգնութիւնը ու աւելի ևս համոյում իրեն տեսնող–լսողին։

(*) Տե՛ս Գ. Պետրովի «Մեծ հովիւ» պատմւածքը, «Արարատ» 1909, յուլ. — օգոստ.։

(**) «Ցուցական վանականութիւն», «Արարատ», 1898, մարտ — ապրիլ, և շարուն։

կայ անապատական, որն ապրում է մի այրում. ունի օջաղ կրակի համար, կրակահան մի գործիք՝ գայլիկոն, ջրի կուժ. այրի մօտ եղող մի նկուղում պահում է պաքսիմատ, կճաճեր, որոնցից մէկում կայ ալիւր, միւսում ճնճուղի իւղ, երրորդում՝ արմաւ, չորրորդում աղ, եւայլն: Մի ուրիշն ունի երեք խուց. մէկում աղօթում է, միւսում աշխատում, երրորդում իւր մարմնի պէտքերը հոգում, կան այնպիսիները, որոնք այս ամենից զուրկ են. ապրում են մի այրում, ուր ջուր կայ, այրի մօտ արմաւենու ծառեր, որի պտուղները ուտում են, տերեւներից զգեստ են կարում, կեղեւից ոտնաման են հիւսում: Կան և ծովի ափ են, անտառի մէջ, գետի եզերքին, որ և է խոր գբում (որտեղից և գբնեցի անունը) որ և է սիւնի վրայ (որտեղից և սիւնակեացներ) ապրողներ: Բնակարանները միշտ էլ նոյն տեղերը չեն ճնում, այլ փոփոխում են. այրից հեռանում է գետի ափը, կամ ծովի ափից վանք է գնում, կամ խուցից քաղաք է գնում, մի առ ժամանակ էլ այնտեղ ապրում. չարուեստակ նոյն տեղը ճնացողների թիւը քիչ է: Կան նաև հասարակութեան մէջ՝ գիւղերին կից, գիւղերում, քաղաքներում, խրճիթներում, եկեղեցիների գաւիթներում, կրպակներում ապրողներ, որ և է մէկի մօտ ծառայ մտնող, իրեն յիմար ձեւացնելով փողոցները թափառող, եւայլն: Բնակարանի տեղը և ձեւը այսպիսով միեւնոյն չէ, այլ տարբեր, և այս տարբերութիւնները մի կողմից ներքին հոգեկան տրամադրութիւնների փոփոխութիւնից է առաջ գալիս, միւս կողմից տարբեր աշխարհայեացք ունենալուց:

Ոմանք յայտնում են՝ «Անապատը կրօնաւորի համար նոյն է, ինչ որ ձկան համար ջուրը», կամ

«Շտապի՛ր քաղաքից և կ'ապրես», ուրիշներն էլ միայն քաղաք՝ Աղէքսանդրիան գնում, իրենց ձեռագործները վաճառելու (օրինակ Թերապիայի անապատականները) կամ մուրում են իրենց ապրուստի միջոցները, այլ և գնում են հասարակաց տներ և իրենց խրատներով, իրենց քարոզով աշխատում են ազդել անբարոյ կանանց վրայ:

Կան այնպիսիները, որ մերկ են չրջում, կան որ կենդանիների հետ են կեանքները անցկացնում, որոնց վրայ մազեր են բուսում, երկայնում և գառնում են նախնական մարդուն նման, որոնց վրայ նայելն իսկ երկիւղ էր ազդում. ոմանք էլ հագնում են սպիտակ կամ գորշ կտաւից հանդերձ, ունենում են ոչխարենի ուսին, չեն լւացւում. ոմանք մազէ փիլոն են կրում, տակները ձգում են խսիր, ունենում են միայն ջրի թաս և սրանով նրա զգեստն ու խցի կահաւորութիւնները վերջանում է: Ընդհանուր տիրող կարծիքն այն է եղել զգեստի մասին, որ կրօնաւորի հանդերձը այնքան գծուծ վատ պիտի լինի, որ եթէ փողոց ձգեն, երեք օր ինայ և ոչ ոք չուզենայ վերցնել: Բայց Դ. դարու վերջերում մի անապատական գանգատւում է, որ վանքերում եղածները թանգագին կտորներից են զգեստներ կարում, որը չռայլութիւն է և կրօնաւորին անվայել:

Մի անապատականի սկզբունքով, որչափ մարմինը գիրանայ, այնքան հոգին կը նուազի, որչափ մարմինը վատնւի, այնքան հոգին կը գիրանայ. այս սկզբունքի հիման վրայ առհասարակ անապատականի կենցաղը աւելի ժուժկալ, համեստ պիտի լինէր: Եւ յիրաւի անապատականների մէջ եղել են ուտելու, խմելու տեսակէտից մինչև կասկածելութեան աստի-

ճանը սակաւապէտներ։ Մէկն օրինակ 35 տարի չա-
բունակ չաբաթական մի անգամ է հաց ու ջուր առ-
նում. մի ուրիշը 30 տարի միս չի ուտում. մի եր-
րորդը 40 օր քիչ ոսպ է ուտում եւ ջուր խմում եւ
դրանով բաւականանում։ Մի ծեր բուրվառի մոխիրը
խառնում էր հացի հետ եւ այնպէս ուտում եւ այդ
նրա մշտական կերակուրն էր։ Մեծ սկիտում ոմանք
պահքերին միայն աղ ու հաց են ուտում (որից եւ
այժմ առաջ է եկել աղուհացից օրերը)։ Մի ծեր տա-
րեկան ուտում էր մի պայուսեակ ալիւր և դրանով
էր բաւականում. մի ուրիշ ծեր 53 տարի չարունակ
պաս է պահում. մի ուրիշը 40 օր աչխատում է ջուր
չխմել և չի խմում. կուժն ամեն օր ջրով լցնում է
դնում դրան առաջ եւ առաւօտը թափում, նորից
գնում ջուր բերում բայց չի խմում։

Ոմանք տարիներ չարունակ տաք կերակուր չեն
կերել, բանջարով են բաւականացել. իսկ ուրիշներն
էլ ունեցել են հողէ աման (պոյտ) և մէջը բանջար
են եփել։

Միևնոյն անապատականը երբեմն մի ծառի տակ
կանգնել է ոտքի վրայ չարունակ ու աղօթել է, ապա
գացել է ծովի ափը, անտեղից է գնացել է մի փոս
փորել՝ նրա մէջ մտել, մէկը 50 տարի մի ժայռի միջի
ուզում է ապրել. միւսը իւր խցի դուռը քարով չա-
րել է և խցում մնացել, գիւղացիներն են եկել քան-
դել. մէկն էլ երկինքն ու աստղերը չի ուզեցել տես-
նել և իւր վրայ այնքան երկաթներ է կախել, որ
միշտ ծռած է ման եկել։ Ոմանք մտել են «ներքնա-
գոյն անապատ» եւ տասնեակ տարիներ ճգնել են,
մարդու երես չեն տեսել ու անդորրութեան մէջ ա-
ղօթել են ու անդորրութեան մէջ էլ մեռել. երբ յե-

տագայում անապատականների կենսագրութեամբ հե-
տաքրքրուողներն են եկել և փնտռել, գտել են դրանց
այրերը ու տեսել, որ և զգեստները և մարմիններն
արդէն փոշի են դարձել և այդ անապատականների
անուններն իսկ անյայտ են մնացել։ Եղել են որոշ
խցում ապրողներ, որոնք խցից դուրս չեն եկել.
դրան յետևից խօսել են իրենց այցելուների հետ, ա-
ռանց նրանց երեսը տեսնելու։ Սրանց հակառակ եղել
են իրենց խցի դուռը երբեք չփակողներ, ամենքի ա-
ռաջ բաց պահողներ, հիւրեր, օտար եղբայրներ ըն-
դունողներ, սրանց հետ զրուցողներ, խրատ տուողները։

Կան անապատականներ, որոնք քուրձ (խորգ) են
հագնում մարմինը տանջելու, մաչկեղէն գօտի են
կապում և ապրում են այնպիսի խցում, ուր ոչ կանգ-
նիլ կը լինի և ոչ չորչել։ Մուց կայ, որ ունի 5 ոտ-
նաչափ բարձրութիւն, 4 ոտնաչափ լայնութիւն և 8
ոտնաչափ երկարութիւն. անապատականն էլ քնում է
գետնին, քուրձը հողին։ Շատ անապատականներ են
եղել, որ իրենց մարմինը չեն լուացել, չեն տեսել ի-
րենց մարմինը մինչև կեանքի վերջը իբր պիղծ բան։
Ջնայելով այդ ծանր պայմաններին ապրել են բաւա-
կան երկար, 80, 100, անգամ 110 տարի։

Մեծ անապատներում զգեստների միօրինակու-
թիւն մտնելուց յետոյ հագնում են երիճազ, գլխին
դնում են քուսլթա (կնկուղ, վեղար), թիկունքին
մաչկիակ ձգում, մի ղենջակ սփածանելիք փաթա-
թում առաջը։ Կնկուղը համարւում էր անմեղութեան
օրինակ, սքեմը՝ խաչի, գօտին՝ արիութեան։

Անապատական կար, որ ամբողջ օրն աղօթում
էր, արևը ծագելուց մինչև միւս առաւօտ, մի ուրիշը
օրական 1000 ծունը էր դնում. կար մի այլը, որ աշ-

խատում է, քարից, կաւից, արմաւենու տերևներից իրեր է չինում և տանում վաճառում։ Համբաւաւոր անապատականի համար քաղաքից նւէրներ է բերում. ոմանց ծանօթներն են կէս կամ մի տարու ուտելիք բերում։ Տաբենայի վանքի վանականները հաց ուտելու ժամանակ երեսները ծածկում էին, գլուխները կախ, ուտելիս իրար հետ չեն խօսում. յաճախ ձեռքները բերաններն են տանում, իբր թէ բան են ուտում, բայց իրօք չեն ուտում. ոսպէ թանիկից 2–3 գդալ ուտում են, մնացածը թողնում ամանում։ Ցորդանանի անապատում ապրողները մեծապասի առաջին շաբաթը ելնում են վանքից ու գնում դուրս, բուն անապատը՝ ամեն ոք իւր կարողութեան չափ աւելի ևս ճգնելու։ Ոմանք իրենց հետ տանում են քիչ հաց, ոմանք՝ թուզ, արմաւ, ոմանք էլ՝ ոչինչ։ Ցարութեան կիւրակէին վերադառնում են կրկին վանք, 7 շաբաթ անապատում միայնակեացի կեանք վարելուց յետոյ, անապատում աշխատում են իրար չհանդիպել, հեռուից տեսնելով իրար՝ խուսափում են, վանք վերադառնալուց յետոյ իրար չեն ասում թէ ո՞վ ինչ ձևով է անցկացրել ճգնութիւնը։

Երբ երիտասարդ կամ պատանի է գալիս անապատ ճգնելու, սովորաբար որ և է ծեր անապատականի մօտ է գնում սովորելու. եթէ վանք է մտնում, ուղարկում են վանքի «ծեր»ի մօտ, որ վարժւի վանքի կարգերին։

Անապատականները երբեմն իրար այցելում են, տեսնում են միմեանց ճգնական կեանքը, իրարից նոր բան են սովորում. երբ մէկը տեսնում է, որ միւսն իրենից աւելի խիստ ճգնական կեանք է վարում՝ ինքն էլ աշխատում է նրան նմանել։ Մակար Եգիպտացին

7 տարի կրակից չանցած կերակուր է ուտում. երբ լսում է, որ մի անապատական մի նկանակի $^{1}/_{9}$րդ մասն է ուտում օրական, ինքն էլ իւր ոսպը լցնում է մի նեղ բերան սափորի մէջ ու հանում այնքան, որքան բուռը կը լցնէը, և 3 տարի էլ այսպէս է ապրում. 4 տարի էլ մի նկանակի $^{1}/_{5}$րդ մասն է ուտում, մի տարուայ մէջ 4 դորակ ջուր է խմում. մի կրօնաւոր գոմէշի նման խոտ է արածում. կայ անապատական, որ որոշում է ողջ կեանքում խնձոր չուտել և չի ուտում. մի ուրիշը ձէթից, գինուց, մսից է հրաժարուում։ Աբբայ Մարկոսը 30 տարի մի լերան այրում ճգնաւորում է սովով, ծարաւով ու մերկութեամբ անցկացնելով կեանքը. սոված ժամանակ հող է ուտում, ծարաւ ժամանակ ծովի ջուր խմում և մեռնելու ժամանակ ասում է. «Դու, լի՛մ մարմին, ցաւերի ու վշասների, դժւարութիւնների բնակարան ես եղել»։ Եղիա միայնակեացը օրական 3 նուկի հաց էր ուտում և 3 ձիթապտուղ։ Եղել են և քնի դէմ մաքառողներ, գիշերները չքնողներ, թէեւ ոչ տարիներով. եղել են նստուկ կամ կանգնած քնողներ. ծոմ պահելը առաքինութիւն էր, ծոմապահութեան վարժւել են աստիճանաբար. առաջ 2, ապա 3 օր հաց չեն ուտում, ապա նոյնիսկ մէկ շաբաթ. ծոմ են պահում և էլ աւելի(*)։

Անապատականի աքնութեան գեղեցիկ նկարագիրն է տալիս և Ծովհ. Մանդակունին իւր «Վասն պահոց պնդութեան» ճառին մէջ։ Նկարագրելով առաջինն հարանց առաքինութիւնը ասում է. «Զի ոմանք ի նոցանէ խոտաբուտ ճարակօք ևեթ չատացան,

(*) Մէկ շաբաթ ծոմ պահելու դէպք եղել է 15–20 տարի առաջ Սևանում։

և ոմանք ճաշակօք մրգոց միայն վարեցան: Ոմանք զծայրս ծառոցն և զարմատս խոտոց միայն ուտէին. ոմանք սակաւ լինչ ընչովք ժուժկալէին. ոմանք երեք նուկի հացիւ ժամէ ի ժամ. ոմանք զչորրորդ մասն նկանակի, և այլք զվեցերորդն. ոմանք զթեփ ցորենոյ արարին կերակուր. ոմանք խոզաբուտ եղջերաւն միայն զտագնապ քաղցին դադարեցուցանէին: Ոմանք զհաղորդութիւն հոգևոր կերակրոյն աւուրն բաւական համարէին ի պէտս մարմնոյն. բայց այլ փոփոխութիւն լինչ կերակրոց ամենևին մեռեալ էր ի նոցանէ: Զի ոմանք ժամէ ի ժամ ճաշակէին. ոմանք յետ երկուց աւուրց. ոմանք յետ երից. ոմանք յետ եօթն աւուր. և որ ևս աւելի: Ցիշէին զպէտս կերակրոյն և զայն կշռով ճաշակէին, և ջուր չափով ըմպէին, և անդադար հեծութեամբ յաղօթս և ի պաշտօն պարապէին, և զգիշերն ամենայն յարտասուս և յողբս անցուցանէին. և աղերսալի մաղթանօք և հառաչանօք զԱստուած հաշտեցուցանէին: Ոմանք զլարիւք անկեալ ննջէին. ոմանք ոտանաւոր տքնութեամբ զգիշերն անցուցանէին. ոմանք սակաւ լինչ նայելով. ոմանք մինչև ցառաւօտն զձեռս ի վեր ամբարձեալ ունէին. ոմանց զպարանոցն խոնարհեցուցեալ մինչև ի լուսանալն ժուժկալէին. ոմանք աղօթս հարիւրաւորս նկարէին: Ոմանք անխօսք լինէին, միայն խօսէին զսաղմոս. ոմանք առանց հարցմանց ուրուք ոչ բարբառէին. ոմանք ընտրութեամբ յօգուտ ընկերին միայն խօսէին, և մշտաջան վաստակօք և պաղատանօք զօրն անցուցանէին, և վասն հոգևոր լինչ խրատու ի տար աշխարհս անցանէին, և զթշնամիսն իբրև զբարեկամս սիրէին, և խոնարհութեամբ զընկերն լաւ քան զանձինս համարէին և վասն հնազանդութեան ի հուր ևս մտանէին,

և ի գազանս դիմէին, և զանձինս ի ծառայութիւն ընկերին մատուցանէին, և յարդար վաստակոց զանկն և զտնանկն և զհիւանդն կերակրէին: . . . որով և բազում նշանս և սքանչելիս առնէին, զդևս հանէին, զհիւանդս բժշկէին, զմեռեալս յարուցանէին, ի վերայ ջուրց գնային, և զընթացս արեգականն դադարեցուցանէին ուղիղ պահոցն մաքրութեամբ»(*):

Կային գրականութեամբ պարապող անապատականներ ևս, որոնք կամ գրում էին խրատներ, աղօթքներ, կամ ձեռագրներ էին արտագրում, կամ կենսագրութիւններ էին գրում մեծ անապատականների, կամ Ս. Գիրքն էին անընդհատ տասնեակ և աւելի անգամ կարդում:

Ահա մի անապատականի օրեայ կեանքի պատկեր. առաւօտը ելնելուց յետոյ արմաւինուց գործում է որ և է բան և սաղմոս ասում միաժամանակ. ապա երրորդ, յետոյ վեցերորդ ժամու աղօթքներն է ասում, ապա մի քիչ քնում, ելնում և դուրսը չրջում, յետոյ խուցը մտնում եւ ձեռագործով պարապում, մինչև որ 3 քուրձ է պատրաստում, ապա իններորդ ժամու աղօթքն է ասում և երեկոյեանը, յետոյ 100 ծունր է կրկնում, մի քիչ քնում, ելնում հասարակաց, գիշերային և առաւօտեան աղօթքն ասում, երկրորդ օրը իններորդ ժամին մի բան է եփում, ուտում և այսպէս չարունակ: Հետաքրքիր է և Պօղոս ու Պօղ անապատականների կենցաղի մանրամասնութիւնները, որոնք տարբեր են սովորականից(**):

(*) Տե՛ս Յովհ. Ման. «Ձառք», Վեն. 1831, էջ 20-21, Ձառը վերագրւում է եփր. Խուրին Ասորուն, ուստի և նրկարագիրը ընդհանրապէս արևելեան անապատականին է:

(**) Տե՛ս վարք Սրբոց, հ. ժ-րդ. էջ 239-252:

Ըստ արևելեան սովորութեան, երբ անապատականի մօտ անապատականն այլեւ է գնում, տանտէրը եկուորին դիմաւորում է «Օրհնեա՛ Տէր» խօսքով. խուցը մտնելուց յետոյ ոտքերը լւանում է. ապա սկսում են երկնառաք սաղմոս ասել, յետոյ հաց են ուտում. նորից աղօթում այնքան ժամանակ, մինչեւ որ նրանցից աւագը, ծերը, կ'ասէ «Ամէն». ապա աղօթքը կը վերջանայ: Երբ Երուսաղէմի եղբայրները— անապատականները այլեւ են գալիս մեծ սկիտը, սրանք դիմաւորում են եկողներին սաղմոս ասելով, երգով. տանում են սկիտը, լւանում են ոտները, նոր միայն սկսում են խօսել:

Ընդհանուր հրահանգ է եղել վանքերում, որ երբ մի եղբայր միւսի մօտ է գնում չարամեն, չախրեն և իրենց ճգնական դժւարութիւնները չ'ցոյց տան, մինչեւ մենակ ժամանակ են անում: Մեծ վանքերում եղբայրները, երբ որևէ անկարգութիւն են արել, նրանց վանքի մէջ եղած բանտն են դրել: Յայտնի է որ մեծ սկիտի երիտասարդ եղբայրները յաճախ փախել են Աղէքսանդրիա, ուր որ անբարոյական հիմնարկութիւններ շատ են եղել. ոմանք այլևս չեն վերադարձել, ոմանք վերադարձել են և երբ պարզուել է նրանց յանցանքը՝ բանտ են դրել, արջառաջլով (մի տեսակ կապիտ մարակ), երկար սկսել են հարուածել մինչեւ լաց լինելը, ուշ չագնաց դառնալը: Առհասարակ նորեկներին թէև խիստ հսկել են, բայց հեշտից դժւարին անցնելու մեթոդով են դաստիարակել. ոմանց պատւիրել են նախ խցից մի շաբաթ դուրս չգալ, ապա օրական որոշ քանակութեամբ ծունը դնել, ապա միայն օրուայ որոշ ժամին մի անգամ հաց ուտել, ապա 1–2 օր ծոմ պահել, մինչեւ որ հետզհետէ վարժւել են խստակեցութեան:

Միայնակեաց այրաբնակները կարիք են ունեցել հաղորդւելու, ճաշակւելու, ուստի կամ իրենք են գնացել մօտակայ գիւղի երէցի մօտ, կամ սա եկել շաբաթը մի անգամ այրերը չրջել, հաղորդել ու հեռացել: Առհասարակ եկեղեցական պաշտօնեայ լինելուց խուսափել են. պատահել է որ, որ և է համայնք ընտրել է մի ականաւոր անապատականի իրենց եպիսկոպոս, որոնք սակայն այնուամենայնիւ, հրաժարել են ու մերժել: Ամմոնիոս ճգնաւորը իւր ականջը կտրել է որ, եպիսկոպոս չձեռնադրւի. մարմնական արատ ունեցողը չէր կարող հոգևոր աստիճան ունենալ. մի տեսակ աս էլ ընտրութիւն է եղել (selection):

Մեծ անապատում պահք պահելը՝ չորեքշաբթի և ուրբաթ օրերը՝ իբր յիշատակ Քրիստոսի չարչարանաց և խաչելութեան ընդհանուր կարգ է եղել, բայց եղել են և աւելի օրեր պահք պահողներ: Միասին աղօթելուց, կերակուր ընդունելուց յետոյ սկսել են ցրւել անապատի զանազան կողմերը, ոմանք սաղմոսել են, և աշխատել սաղմոսն անգիր անել, ոմանք Ս. Գիրքն են կարդացել, ոմանք աղօթել են ողջ գիշերը և առաւօտ նոր վերադարձել վանք:

Համայնական–կոմմունալ–սկզբունքը վանքերում գերիշխողն է եղել, անձնական սեպհականութիւն չի ճանաչել, աշխատանքը պարտադիր է եղել բոլորի համար, բացի ծերերից և հիւանդներից, աշխատանքի արդիւնքը եղել է կոմմունալինը—եղբայրութեանը: Մեծ վանքերում ծառեր են տնկել, պտղատու պարտէզներ, վար ու ցանքս են արել, ուր չեն գործել՝ անասուն են պահել. եղել են և ուրիշներ՝ գիւղացիների մօտ գնացողներ, որոնք իբր հոգևոր–բանաւոր աշխատել են և արդիւնքը բերել վանքի միաբանու-

թեան համար: Առհասարակ վանքերում դեռ նախնական քրիստոնէական կօմմունալ կեանքի սկզբունքները կային որ երկար չարունակուեց, մինչև վերջերս, թէև բաւական աղաւաղուած ու կրճատուած:

Վանքերում ճգնական կեանքը գրեթէ իւր բոլոր մանրամասնութիւններով մշակուում է և դառնում մի հրահանգ–կանոնադրութիւն այնպէս, ինչպէս մի դիւրօթիկ դպրոց կարող է ունենալ: Մեծ անապատականների խրատներում կան այդ հրահանգները, որ տրուում էին երիտասարդներին իբրև ուղեցոյց. դրանք իրենց մէջ ունէին քաղաքավարութեան տարրեր էս, որոնք այժմ էլ դեռ յարգի են կիրթ հասարակութեան անդամների համար: Սերապիոն եպիսկոպոսի խրատը. «երբ քեզ բան չեն հարցնում, մի՛ խօսիր. երբ ծերերը խօսում են, հարցրու թէ կարելի՞ է լսել, երբ թոյլ տան՝ ինա՛յ և լսի՛ր. բամբասանք մի՛ անիր. խօսք մի՛ տար ու բեր: Առաւօտը, երբ ելնում ես, նախ Աստծու մասին մտածիր, ապա անելիքներիդ: Եթէ յոգնած մարդ գայ մօտդ՝ ոտքը լայ, եթէ աղտոտ չոր ունի՝ այն էլ լայ. սենեակում հողաթափ մի՛ հագնի. քնած ժամանակ ձեռքդ վերմակի տակ մի՛ պահի. ծերի հետ տեղ գնալիս նրա բեռը դու վերցրու. կնոջ հանգերձներին մի՛ նայիր. մինչև գլուխդ կէսը քնիր, յետոյ աղօթիր. մի բան վաճառելիս ինչ որ տան՝ ընդունի՛ր, մի բան գնելիս ինչ որ ուզեն՝ տուր եթէ խուց ես չունեցել, ապա հեռացիր ու նորից եկել ես բնակուելու ու տեսնում ես որ նոր եղբայր է ապրում մէջը՝ մի՛ պահանջիր որ հեռանայ: Ընկերոջ մասին չարախօսութիւն մի՛ լսիր. հերձուածող եղբայր եթէ մօտդ գայ ընդունիր և աղօթիր որ, նա մոլորութիւնից դառնայ: Գինի մի՛ խմիր: Աչակերտը իւր կամքը

պիտի թողնէ եւ առհասարակ վարդապետի, ծերի հրամանը լսէ: Երիտասարդը չպիտի պառկէ քնելու, այլ նստած կամ ոտքի կանգնած ժամանակ պիտի քնէ, հանգստանայ: Ազգականներից ու մերձաւորներից հեռու պիտի լինի, ցերեկը խուցից դուրս չգայ առաջին տարին: Հագնի գծուծ զգեստ, անպաճոյճ կօշիկ, մի ծածկոյթ միայն մարմնի վրայ, որովհետև Քրիստոս ասել է. «Մի՛ ունեցէք ոսկի, ոչ էլ արծաթ և ոչ էլ պղինձ ձեր գօտիներում և ոչ էլ երկու հանդերձ. ճանապարհին պարկ մի՛ վերցրէք և հողաթափ մի՛ հագնէք»:

Յովհաննէս աստուածաբանի խրատներից. «Երիտասարդ եղբայրը ոչ մի օտար մարմին, իւր իսկ մարմինը չպիտի տեսնէ. հաց ուտելու ժամանակ խուխը դուրսը ձգէ. է՛յօրանջէ. ձեռքը չմեկնէ կերակուր առնելու. կնոջ հետ հաց չուտէ, հետը խօսելիս երեսին չնայէ: Իշխանների հետ բարեկամ չլինի: Ինոնարհ, երկայնամիտ ու հեզ լինի. եղբօրը օգնէ»:

Նեղոսը ամենից շատ խրատներ ունի գրած անապատականների համար: Նա յայտնում է, որ կրօնաւորը պէտք է տրտում և տխուր լինի. լայ, հառաչէ, մօր կամ քրոջ հետ ոչ ման գայ, ոչ հաց ուտէ, չբարկանայ, ախորժած բանը չուտէ, սիրածը չը հագնէ, գեղեցիկ մանուկ չտեսնէ, կանանց վանքում չապրէ, իւր կամքը չկատարէ:

Անապատականի համար պարտադիր էր իւր մեղքերը ծերին, մեծին, վանահօրը ասելը: Վանքում ամեն օր կատարուում էր այդ: Այժմ եկեղեցիներում գործադրուող «Մեղայ»ում, որ մարդկային կրքերի, տգեղ արարքների նկատմամբ գործադրել է տարբեր խմբագրութիւններով անապատներում, նկատել պէտք

է որ, յիշած յանցանքները չափազանցութիւն չեն, այլ իւրեանց հոգու եւ մարմնի բոլոր ելեւէջները, սպրդումները, գայթակղութիւնները, բարեխղճութեան հետեւող անապատականների դիտողութիւններն են. և այդ յանցանքները այժմ էլ մեծ քաղաքներում կան, և դեռ աւելին: Առհասարակ անապատականի մեղքի դէմ պայքարիլը դիտողական հոգեբանութեան առատ նիւթ է մատակարարում: Քանի որ անապատականի իտէալն էր «հրեշտակ»ի նման լինել, կրքերից ազատ, մարմնի պահանջների նուազագոյնը ունեցող, նմանող «վերնային»ին՝ բնական է որ նա պիտի կենցաղի ամենածանր պայմաններն ունենար, որովհետեւ հրեշտակը մարմին չունի և սրա պահանջներից էլ ազատ լինքն էլ ուրեմն պիտի լինի «անմարմին»: Հաբանց վարքն այդ առթիւ ասում է. «Այս կեանքէ զբաղմունքներից հեռացել էք, անապատ առանձնալով բնակուել, ձեր մարմնի համար անտանելի դժուար վարք ընտրել և վերիններին ընկեր դարձել հոգով և մարմնով»:

Անապատականների համար մշակուած կանոնները դժուարին են եղել, և քչերն են հետեւել դրանց. Փիլիքսիանոս հայրն ասում է. որ անապատ քաշուողներից հազարից 999ը անկարգ ու անկանոն կեանք են վարում. մի ուրիշն ասում է. «Մեր բերանները պատ պահելուց հոտել են, բայց այն ինչ որ Աստուած է ցանկանում՝ չունինք. այսինքն խոնարհութիւն»: Անապատականն լինքն ըմբռնում է որ, անապատ քաշուելը առաքինի դառնալ չի նշանակում, որ անապատում եղողներից չատերի համար այդ միայն ձև է, որ կանոնները դարձել են ծէսեր ու Քրիստոսի կենդանի ոգին բացակայում է:

Անապատականի խիստ ճգնական կեանքը լիովին չէր բղխում Քրիստոսի կեանքից, քանի որ Քրիստոս, ինքը աշխատում էր հասարակութեան մէջ, իւր մարմինը նման ձևի ճնշումների չէր ենթարկում, հարսանիքի, հրաւէրի մասնակցում էր: Անապատականի ճնշումը մի կողմից մարդկային հոգեբանութեանը յատուկ ռէակցիան է այն կեանքի, որ անապատականը մինչև անապատ քաշուելն ունեցել է, միւս կողմից հակադրութիւն էր իւր ժամանակի հասարակական չռայլ, ճոխ կեանքի, մի կեանք, ուր մարդու բարոյական ըմբռնումները խափան ընդարմանում ու անյետանում էին:

Անապատականի կենցաղը անհետեւանք չէր մնում հասարակութեան համար. անապատ այցելողները լինում էին թէ հասարակ ժողովրդից երկու սեռից, թէ ազնուականներից, որոնք ճգնական խիստ կեանքը տեսնելով մի տեսակ սթափւում էին, իրենք իրենց հոգին էին տալիս իրենց արածների համար և աշխատում էին չափաւորել իրենց պահանջները: Ի հարկէ սթափուողների թիւը գուցէ 1000ից մէկ երկուսի էր հասնում միայն, բայց սրանք էլ իրենց հերթին որ և է խմորում առաջ էին բերում շրջապատում. և անապատականի կենցաղը մի տեսակ օրինակ էր դառնում դուրսն ապրող հոգու վերածնութեան պահանջ ունեցողների համար:

Հասարակական կարգերից դժգոհ տարրեր — խզուղ անապատականները հասարակութիւնից առանձնանալով այնուամենայնիւ իրենց կապը հասարակութեան հետ չէին կտրում. իրենց կենցաղով ու վարքով ընդունք մի տեսակ լուռ և համեստ չափերով յեղափոխուող, վերածնուող աշխատաւորներ են եղել: Նման-

օրինակ երևոյթ պատմութեան մէջ էլ է եղել. անկեղծ յեղափոխականների կենցաղի մանրամասնութիւնները իրեն հետևողների համար օրինակ է դարձել:

Այժմ էլ դեռ անապատականի կենցաղը շատ ու շատ մտայինների հետաքրքրում է իբր իւրատեսակ ձև. և քչերը չեն որ, գնում են զանազան սկիտներ այցի, քչերը չեն որ, խօսում, զրուցում են «ծեր»ի հետ. յայտնի է որ, ռուս գրականութիւնը հարուստ է ռուս վանականների, սկիտների նկարագրութիւններով (Լէսկովի երկեր): Նոյն և աւելի չափով հետաքրքրութիւն էր զարթեցնում անապատականի կենցաղը քրիստոնէութեան առաջին դարերում, երբ այդ ուսմունքը թարմ էր, անապատականը անաղարտ, անապատական չարժումը ուժեղ (*):

(*) Անդրէ Ֆրանս, Թաիս:

Գլ. ե.

Մեղքը եւ անապատականի պայքարը նրա դեմ:

1.— Լաւն ու վատն, չարն ու բարու գաղափարները նոյնքան պատմական խոր հնութիւն ունին, որքան խելօք ու յիմար, ուժեղ ու թոյլ մարդկանց գոյութիւնները, և եթէ երկինքը բարու, երկիրը չարի ներկայացուցիչներ են դարձել հին կրօնների մէջ, գաղափարներ որոնք յետոյ քրիստոնէութեան են անցել, ապա դրանք միայն պարզ հոգեբանական ըմբռնումներ են, որոնք ցայսօր ապրում են ժողովրդի մէջ:

Անապատ քաշուող միայնակեացը այդ գաղափարներով ապրող, չարի ու բարու անընդհատ կռիւը յանձինս սատանայի ու հրեշտակի պատկերացնող միջավայրից էր եկնում ու նոյն աշխարհայեացքը իւր հետ անապատ տանում: Անապատականը իւր կեանքում ամենից շատ Սաղմոսն էր կարդում և Ս. Գիրքն ընդհանրապէս, որոնց մէջ առաւելապէս մեղքի, զըղջման գաղափարները արծարծուած են. և անապատականի միտքը աւելի ևս լարուում էր, զգացմունքները աւելի թափ էին առնում այդ ուղղութեամբ. նրա համար իւր կարդացածը անխախտ ճշմարտութիւններ էին և հաւատոյ առարկաներ:

Սաղմոսները ընդհանրապէս մեղաւոր հոգիների, վշտեր ու տառապանքներ կրողների հոգեկան ապրումներն են արտայայտում. ուստի եւ սաղմոսը հաճելի է և հարազատ անապատականին հոգուն, որի մօտ մեղքի գիտակցութիւնը ամենից զօրեղ էր: Սաղմոսներում Աստուած տանկի, որբի, այրու պաշտ-

պան աստուած է. սաղմոսերգուն վկայում է, որ այդ Աստուածը միշտ էլ արդարադատ է եղել, նա անանկներին չի մոռացել. նա կենդանի Աստուած է և ոչ մեռած, հեթանոսների աստուածների նման: Նրան մարդու բոլոր խորհուրդները յայտնի են, ուստի և երբ մարդ յանցանք է գործում և չի ղղջում՝ տուժում է. այդպիսինի մարմնին բժշկութիւն չի լինում, ոչ էլ ոսկերներին խաղաղութիւն, և նա կարող է դժոխք գնալ: Այդ վտանգից ազատելու միակ միջոցը աղօթքն է, ղղջալը, քուրձ հագնելը, պաս պահելը, ողջ դիշերը անկողինը արցունքով թրջելը, լւանալը: Տէրը քաղցր է, բարի. Տէրն է, որ բարձրացնում է, Տէրն է, որ խոնարհեցնում է, Տէրն է աղքատացնում, Տէրն է հարստացնում, Տէրն էլ գիտէ, որ բոլոր մարդիկ յանցաւոր են. եթէ մարդկանց բոլոր յանցանքները քննէ, ոչ ոք չի կարող արդարանալ. միայն Տիրոջ ողորմածութիւնն է, որ յաւիտեան մնում է:

Այս ու նման գաղափարներով էր կերակրւում փորձութեան ենթած անապատականը: Նրա բնակավայրը — անապատը — չարերի սատանաների բնակավայրն էր, ըստ ժամանակի ժողովրդի հաւատալիքի, ուստի և անապատականը անընդհատ պայքարում է սատանայի դէմ: Սատանան դժգոհում է, որ անապատականները գնում են անապատ. նա գանգատւում է մի ճգնաւորի, թէ ինչո՞ւ իրենց բնակավայրը խլել են ձեռքներից, և խնդրում է որ անապատից հեռանան: Մի անապատական ասում է, որ աշխարհը ալեկոծող ջրի է նման, ուր մարդու պատկերը չի երևում լրիւ. իսկ անապատը խաղաղ ջուրն է, որի մէջ մարդու պատկերն երեւում է. ուստի և անապատականը աշխարհում եղած ժամանակ իւր մեղքերը չի տեսնում, իսկ անապատում նրա հոգու աչքի առաջ ամեն ինչ պարզւում է, տեսնում է իւր թերութիւնները:

Անապատականի գլխաւոր ձգտումը իւր մեղքերի դէմ պայքարելն է այս կամ այն եղանակով. մեղք ասելով նա հասկանում է այն բոլոր ձգտումները ու արարքները, որոնք հակասում են Աւետարանի գաղափարին և արգելք են լինում իւր կեանքը անօրինելու ըստ Աւետարանի:

Թէև կայ անապատական (պիմէն), որը սատանայ, դև գաղափարը իբր մի որոշ էակ չէ ընդունում, այլ նրա համար սատանան մարդու վատ կամքն է, բայց մեծ մասամբ սատանան մի էակ է, մարմին առնող, մի ոյժ, որն ամենից շատ հէնց անապատականի դէմ է պայքարում: Սատանայի համար մի անապատականի գայթակղեցնելն աւելի մեծ գործ է, քան տասնեակ հազարաւոր աշխարհականների պատերազմի, թալանի դրդելը: Երբ մի անգամ սատանաները իրենց պետին զեկուցում են, թէ մէկը մարդ ու կնոջ բաժանեց, միւսը իշխաններին պատերազմի դրդեց, երրորդը՝ աւազակներին գրգռեց կողոպուտի և թալանի, պետը գոհ չի մնում. միայն երբ 40 տարի մի անապատականի գայթակղեցնելու համար հեռացած սատանան գալիս յայտնում է, որ վերջապէս յաղթել է անապատականին, պետը գոհանում է և գովում այդ քաջին:

Սատանան բոլոր կրքերի, վատ հակումների մարմնացումն է, և անապատականը այդ կրքերի — սատանաների — դէմ է պայքարում. հոգեբանօրէն պարզ է, որ

անապատականը իւր հոգու աշխարհը զանազան բնազդներից ու վատ հակումներից պահելու գործն է կատարում, մի գործ որ այժմեան գիտակցօրէն ու նպատակաւոր կեանք վարել ցանկացողների համար էլ դիւրաթիւն ունի, միայն տարբեր նպատակի ուղղուած և տարբեր ճանապարհով կատարուող: Անապատականը իւր կրքերը մարմնացում է յանձինս սատանայի և այդպէսով այժի դէմ ուղղում իւր ահեղ պայքարը:

Սատանան, ըստ անապատականի, նախկին հրեշտակն է, ամենազօր այժ. որովհետև հպարտացել է, և չի փառաբանել աստծուն, խորտակւել է և ընկել անդարամեռը. և նա ամեն կերպ պայքարում է այն մարդու դէմ, որն աշխատում է հրեշտակ դառնալ և սատանայի նախկին տեղը բռնել: Սատանան կեանքի բոլոր երևոյթներում երևան է գալիս և այժ, կարողութիւն ունի պայքարելու ուզած ձևով. նրանց թիւը անսահման է: «Նրանց բազմութիւնը չատ մեծ է. նրանցով լի է աշխարհ»: Նրանք զանազան կերպարանքներ ունին. խորամանկ են, յանդուգն և յամառ. մեևնոյն մարդուն փորձում են բազմապիսի ձևերով և չատ անգամ: երբեմն վախեցնում են, երբեմն խաբում, երբեմն գայթակղեցնում, երբեմն արհաւիրք են ստեղծում, երբեմն այլ և այլ կերպարանքներով՝ կնոջ, գազանի, սողունի, ճիւաղի, մարդու, օձի, կարիճի, ուղտի և այլն նման երևում: Երևում են նաև իբր կրօնաւոր, իբր հրեշտակ, աղօթաւոր, որ միամիտ անապատականներին մոլորեցնեն: Ըստ Յոբի գրքի՝ սատանայի աչքը արուսեակի տեսք ունի, բերանից բորբոքուած ճառագայթներ են դուրս գալիս, ռունդներից կրակի չանթեր են թափւում, բերանից կայծակներ, հուր և բոց է ելնում. բերանի չոգին կայծակներ են:

Նրա համար երկաթը յարդ է, պղինձը փտած փայտ, ծովը՝ չնչոց. տարտարոսի վրայ է ճեմում, բայց Տիրոջ հրամանով այնուամենայնիւ հաւատացեալի ոտքի կոխան է լինում: Նա խօսում է, խուճապում է, կեղծաւորում, թնդիւն է բարձրացնում, թռչկոտում, ծիծաղում, եթէ մարդ նրան չի նայում լաց է լինում և ողբում: Նրանք ամեն ձևով կարող են մարդու մէջ մտնել. փակ դռներով, օձի հետ, քնած ժամանակ. նրանք մարդու նման միս ու արիւն չունին, այլ ճկուն են: Նրանք Աստծու հրամանով գնում են մարդկանց փորձելու, ինչպէս Յոբի դէպքն է: Նա խկոյն մարդուն յալթում է, երբ մարդը թոյլ է. նրանք ամենից չատ սարսափում են Յիսուսի խաչից. ում սատանան երևում է՝ նա երբ խաչ հանէ երեսին, խկոյն սատանան կը չքանայ, նրանցով ողջ աշխարհը ինչպէս մի ցանցով պատած է, նրանք մժղուկների նման օդում վխտում են. նրանք ամեն տեղ են, ամեն ժամանակ, և մահ չկայ նրանց: Սատանան անապատականին գայթակղեցնում է այն կողմից, որը նրա ամենաթոյլ կողմն է:

Մարդիկ տարբեր խառնուածք ու հակումներ ունին, տարբեր թոյլ կողմեր. սատանան էլ համաձայն իւրաքանչիւրի խառնուածքի է գործում. մէկի մէջ կերակրի ցանկութիւնն է ուժեղացնում, երբ սա որոշում է քիչ ուտել և խմել, միւսին աղօթքի ժամանակ մտքերն է խառնում, ցրում, որ չկենդրոնանայ, երրորդին կնոջ ձևով է երևում, չորրորդին իւր հարազատի՝ քրոջ կամ մօր, որոնց կարօտն է քաշում, հինգերորդին փառքով է ուզում շլացնել, վեցերորդին հարստութեամբ, և այլն:

Յատկապէս դիւրերը անապատականի համար ա-

մենազարհուրելի ժամանակն է փորձութեան ենթար-
կըւելու, նախ որ խաւարը սատանայի սիրած բնակա-
վայրն է, երկրորդ՝ անապատի միայնութեան մէջ
մարդը բնազդօրէն երկիւղ է կրում, միտքը լարւում
է և ամեն տեսակ փորձանքներ պատկերացնում, մա-
նաւանդ անհաւատ անապատականի համար. բնական
է, որ նա սատանային տեսնէր, նրա վառ ու բորբոք-
ուած երեւակայութիւնը, լարուած ջղերը նրա առաջ
տեսիլքներ, պատկերներ, ուրուականներ նկարէր և
անապատականին պայքարի հրաւիրէր կամ վախե-
ցընէր, հալածէր անապատից:

Սատանայի և անապատականի մէջ ամենից ա-
ւելի կատաղի կռիւը սեռական խնդրում է երեւում.
«Կիրքն իրը հուր այրում է նրա սիրտը»: Անապատա-
կանի և վանականի ամենից ցաւոտ կողմը սեռական
խնդիրն է, և այդ առթիւ մեծ անապատականները շատ
խրատներ ունին գրած: Անապատականներից մէկի
կարծիքով անապատականը կնոջից է ծնուած, եթէ
կնոջ մօտենայ կը հալւի և կը կորչի, այնպէս ինչպէս
աղը թէև ջրից է գոյանում, բայց երբ ջրի մէջ է
ընկնում, լուծւում, հալւում է: Անապատականը կը
կարծէ, որ իրեն ու աշխարհականին սեռական գայ-
թակղութեան դէպքում միակերպ չեն դատի հանդեր-
ձեալում, որովհետև աշխարհականը դրսում չրջապա-
տուած է գայթակղութիւններով, իսկ ինքը կանանց-
ից հեռու է և եթէ ինքը գայթակղւում է, աւելի
շատ ինքն է մեղաւոր, քան կինը: Սատանայի և ա-
նապատականի սեռական խնդրի պայքարը երկարատև
է, բուռն ու քաոսնեալի հետևանքներով լի: Պատա-
հում է դէպք, որ սատանան իսկ յոգնում է գայթա-
կղութեան փորձեր կատարելուց, որովհետև ամեն

գայթակղութիւնից յետոյ անապատականը ղղջում է:
Սատանան հարցնում է սրտնեղած. «Մի՞թէ չես ամա-
չում, այդքան գայթակղելուց յետոյ էլ ինչո՞ւ ես
ղղջում»: Անապատականը պատասխանում է թէ «Ես
քո դէմ պիտի մարտնչիմ մինչև վերջը, տեսնեմ դո՞ւ
կը յաղթես, թէ Աստուած»:

Քիչ չեն այն դէպքերը, երբ սատանան գայթա-
կղեցնում է անապատականին. անգամ 30 տարի ինքն
իրեն տանջող անապատականին գայթակղեցնում է.
պատահում է, որ իւր անզուսպ կրքերի դէմ պայ-
քարող անապատականը թուլանում հեռանում է նո-
րից աշխարհ. պատահում է, որ կէս ճանապարհին
նրա մէջ կրկին յեղաշրջում է կատարւում (*): Բայց
և կան խիստ տոկուն կամքի տէրեր, որոնք զարհուրե-
լի միջոցներ գործ դնելով կարողանում են պայքա-
րիլ. օրինակ մէկը, երբ իւր մօտ կին է գալիս և ինք-
ը գայթակղեցնելուն մօտ է լինում, ելնում է խցից
դուրս, կրակ վառում և իւր ամօթոց անդամը կրակի
վրայ այրում ու տանջւում ասելով, եթէ այս երկրի
վրայ հուրն այսքան ծանր տանջանքներ է պատճա-
ռում, հապա ի՞նչ կը լինի յաւիտենական դժոխքի
հուրը. մի ուրիշը նման դէպքում իւր ձեռքերի և ոտ-
քերի մատներն է այրում և գայթակղեցնող կնոջն էլ
զգաստացնում: Պոռնիկ Մարիամ եգիպտացին տարի-
ներ չարունակ Յորդանանի անապատում պայքարում
է իւր կրքերի դէմ. մի անձնաւորութիւն, որ տաս-
նեակ տարիներ Աղէքսանդրիայում պոռնկութիւն էր
արել, մի անգամից կտրւում է այդ կեանքից: Կեն-

(*) Տե՛ս այդ առթիւ «Մարդ եմ» վէպը, որը քսա երե-
սնյին Պօղոս Թերայեցու կեանքին է վերաբերում:

սագրութիւնից յայտնի է, որ նրա մէջ և ուտելու և պճնելու պոռնկանալու կրքերը յաճախ են գլուխ բարձրացել, բայց նա պայքարել է և յաղթել։ Եղել է այնպիսին, որ նման դէպքում գուբ է փորել և մտել մէջը ձմեռ ժամանակ։

Սեռականի պայքարը շատ ծանր ու երկարատև պայքար է. և անապատականը որքան և հեռացած էր աշխարհից, բայց առիթներ ունենում էր գայթակղելու։ Ինական ու զուտ մարդկային է, որ մեծանուն Անտոն անապատականը երբեմն էլ ուրախանում էր, զարճանում և ոչ միայն ճգնում, պատճառաբանելով, թէ չափից աւելի ոյժերը լարեցնելը վտանգաւոր է, երբեմն պէտք է կարդերը թուլացնել, որ մարմինն խպաո չ'ընկճէ։ Ինքն անապատականը իւր մի աղօթքում խոստովանում է սատանայն, կրքի ուժեղ լինելը. նա ասում է. «Տէ'ր արժանի արա՛ ինձ քեզ ծառայելու այնպէս, ինչպէս սատանային ծառայելի և քեզ սիրել այնպէս, ինչպէս նրան սիրեցի»։ Մի ճշմարիտ ու հոգեբանական խոստովանութիւն և որով անապատականի կեանքը աւելի հետաքրքիր է դառնում, քանի որ նկարւում է ոչ քօղարկուած մարքերի, ոչ կեղծաւորութիւն ու վարիսեցիութիւն, այլ ճշմարիտ խոստովանութիւն։

Այդ սեռական պայքարը այնքան ուժեղ է եղել, թէ մէյնակեացի համար, թէ վանքում ապրողի, որ շատ անգամ նրան հոգեկան անհաւասարակշռութեան է հասցրել և պատճառ դարձել կենդանրաւ անելու իրեն։ Ոմանք ինքնասպան են եղել այդ պայքարի պատճառով, ոմանք գահավէժ, ոմանք իրենց աչքերն են հանել, ոմանք ներքինացրել են իրենց, ոմանք չիմարացել — ցնորել, ոմանք փախել են դուրս, ո-

մանք գաղտնի պոռնկատներ են գնացել։ Ամբողջ վիսպական գրականութիւնը այժմ էլ դեռ լի է սեռական խնդրի չուրջը պրպտող հարցերով. հերոսները ոսմանները, դրամանների՝ յաճախ ինքնասպան են լինում, խելագարւում, առանձնանում. թէեւ աշխարհական մարդիկ են և աշխարհում ապրող. անապատականն էլ իւրատեսակ ոսման ունի այդ դէպքում։

Սատանայի բնակավայրը դժոխքն է, որն ըստ անապատականի այնքան խորն է, որքան երկինքը երկրից հեռու է. դժոխքն են գնում անզեղջ մեղաւորները, ոսից մինչեւ պարանոցը կրակի մէջ են, մխմեանց երես չեն տեսնում, ամէն մէկը իւր ընկերոջ թիկունքին է նայում. այնտեղ սարսափելի խաւար է։ Դժոխքում ամեն տեսակ տանջանք կայ՝ անչէնջանելի հուր, անքուն որդ, մթագին տարտարոս, սատանների կրճտոց, ահ, երկիւղ, ողբ, կոծ, արցունքի գուբ ևայլն(*)։ Այս արհաւիրքները անապատականին երկիւղ են ազդում. նա համոզւած է դրանց իրական գոյութեանը և գիտէ որ, եթէ չմաքառէ իւր մեղքերի դէմ դժոխք կը ընկնի ու կը պատժւի։ Երկիւղն էլ անապատականի կեանքում խոշոր տեղ ունի և պատճառ է դառնում նրա համար ուժգնօս պայքարելու կրքերի դէմ։

Անապատականի կարծիքով Աստուած լինքն է թոյլ տալիս, որ սատանան իւր դէմ պայքարէ, որպէսզի իրեն՝ Աստծուն չմոռանան։ Միայնակեացը համոզւած է, որ առանց փորձութեան մաքրւել չի կարելի. մինչև փորձութեան մէջ չ'ընկնի՝ չի երեւայ իւր արժանաւորութիւնը։

(*) Դժոխքի գեղեցիկ նկարագիրը կայ Դանտէի «Աստուածային կատակերգութեան» մէջ։

ժէքը: Ուստի կայ անապատական, որ ասում է թէ խցում նստիլ ու իրեն զսպելը չէ առաքինութիւն, այլ դուրս գալը, կեանք մտնելը և գայթակղութիւնների դէմ մաքառելը: Այս գաղափարին հետևողներ եղել են ու գնացել են քաղաք թշւառներին խնամել, իրենց իրը ստրուկ վաճառել և ստացած դրամով օգնել աղքատին, պառնիկներին են աշխատել զգաստացնել. այդ տեսակէտից բացարձակ միայնակեցութիւնը երբե՛ք էլ չի եղել իշխող իտէալ անապատականների մէջ:

Մի այլ ապացոյց ևս, որ անապատն ու անապատականը հէնց անապատականի կարծիքով գերագոյն բարիքը չէ և ոչ էլ փրկութեան միակ ճանապարհը: Անապատականը գիտէ, որ դրսում — աշխարհում էլ կան աւելի մաքուրները, քան անապատականն ինքը. այսպէս մի գիւղում ապրում էին մի հովիւ և իւր կինը, որ իրենց վաստակածի երկու երրորդը աղքատներին են բաժանում, գիշերը քուրձ են հագնում և որոնք Աստծու առաջ աւելի արդար են ճանաչւում, քան տարիներով անապատում մի ճգնող, կամ մի քահանայ, որ կնոջ հետ տարեկան երեք անգամ է մերձաւորութիւն ունեցել և առաքինի կեանք է վարել՝ աւելի գերագասել է, քան կնոջ երես չտեսնող, անգամ մօրն ու քրոջը ձեռք չտուղ, այլ գետն անցընելու ժամանակ ձեռքերը չորով փաթաթող և այդպէս մօրն ու քրոջը գետն անցկացնող մէկը:

Անապատականը մեղքի խնդրում էլ անկախ մըտածող է եղել և ինքնուրոյն աշխարհ ստեղծող իւր համար:

Ձղջման հասնելու համար կարևորը տարիներով ծոմ պահելը, քուրձ հագնիլը, մարմինը զանազան միջոցներով նեղելը չէ, այլ հոգու վերածնութիւնը,

որ կարող է մի ժամում և տեսանելի կարճ ժամանակում կատարուել, ինչպէս խաչի վրայ աւազակի դէպքն է և Զաքէոս մաքսաւորինը: Մի պառնիկ կին, ըստ Վարք Սրբոցի, երկար պառնկութիւն անելուց յետոյ զղջացել է ու մեկնել է մի վանք ապաշխարելու, ճանապարհին սկսել է լալ աղիողորմ և մեղքերը քաւել, բայց վանք չմտած վախճանուել է: Վերջին Դատաստանի ժամանակ մինչդեռ սատանաները նրա մեղքերը իրենց գրքերից հանել ու դրել են կշիռքի մի նժարում, հրեշտակները կշռի միւս նժարում դրել են այն մի չիչ արցունքը, որ նա վանք գնալիս ճանապարհին թափել է և այդ մի չիչ արցունքը աւելի ծանր է եղել, քան տարիներով գործած նրա մեղքը: Դրա դիմաց մի պատանի, որ դեռ մանուկ ժամանակից ճգնել է անապատում, պահեցող է եղել և ժուժկալ, մահից յետոյ արդարների շարքը չի մտել, որովհետև իւր հոգու խորքում հպարտութեան զգացումն է ունեցել, թէ իւր ճգնութեամբ ինքը արդարացել է: Պարզ ապացոյցներ են, որ ճգնազգաց կեանք վարելը, տարիներով սիւների վրայ ապրելը, գերեզմի մէջ մտնելը, հացից ու ջրից զրկելը, քնի, հանգստի դէմ մաքառելը դեռ մաքրուել չի նշանակում, հարկաւոր է հոգու վերածնութիւն, անկեղծ զղջում, որով մարդը իւր սխալը ըմբռնում է և իրեն ուղղում:

Անապատականն ինքն էլ պարզ ասում է, որ անապատում նստողը իրեն սուրբ չպէտք է համարէ. նա չպէտք է արհամարհէ իւր սպասաւորին, որովհետև յայտնի չէ թէ Աստծու հոգին ո՞ւմ վրայ է, ի՞նչ թէ՞ սպասաւորի: Անապատականն ասում է, որ Աստուած չա՞տ գազանի ծառաներ ունի և ոչ օք չի իմանում թէ նրանք չիրաւի Աստծու ծառաներն են:

եկեղեցին է եղել, որ անապատականներին մի ընդհանուր յայտարարի է վերածել, նրանց ընդհանուր խէալ է վերացրել և ասկէտական կեանքը բարձրագոյն առաքինութիւն է յայտարարել, մինչդեռ հէնց նոյն եկեղեցու հրատարակած և եկեղեցիներում էլ կարդացուող Վարք Սրբոցից, Յայսմաւուրքից պարզ երևում է, որ անապատականը ինքը հակառակ կարծիք է եղել և նրա համար մի ընդհանուր աշխարհայեացք չի եղել. եղել են այդ ասկէտական կեանքը փառաբանողներ, բայց և եղել են դրան հակասականը. եղել են աշխարհը ուրացողներ, բայց և աշխարհում գործողներ, ամուսնութիւնը մեղք համարողներ և ընդհակառակը: Ժխտել չի կարելի, որ ընդհանուր ֆօնը այդ կեանքի — ապաշխարողական է և ժուժկալ, սակայն այդ ֆօնի մէջ կան առանձին գոյներ, անկախ մեծութիւններ, որոնք ֆօնից դուրս են ու այնուամենայնիւ անապատական են կոչւում:

2. — Անապատականը ունի կեանքի կատարելագործման իւր խէալը. այդ քրիստոնէական կոմմունիզմն է, այն հասարակական իրաւակարգը, երբ մարդն այլևս չահագործող չէ, երբ մարդու երջանկութիւնը նիւթական հարստութիւնը չէ, այլ հոգեկան արժէքը: Նա համոզւած է, որ մարդը յաւիտենական կեանք ունի, որ այս երկրաւոր կեանքը չափազանց խեղճ, ողորմելի է: Անապատականը երկրի վրայ տեւող 100 և մի քիչ աւելի տեւող տարիների կեանքով չի բաւականանում. նա ձգտում է յաւիտենական, անմահ կեանքին: Նա համոզւած է, որ եթէ մարդը մի ժամանակ ուզեցել է աստուածանալ (Ադամի դէպքը դրախտում) և չի յաջողւել, ապա Աստուած ինքն է

մարդացել ու ցոյց տւել մարդուն աստուածանալու ճանապարհը: Ճշմարիտ է՝ ժամանակի ըմբռնումների տեսակէտից այս ամենը անապատականի համար հրաշապատումով է ողողւած, սակայն անապատականի ձգտումների ու պայքարի փիլիսոփայական հիմքը այդ ըմբռնումն է, որ նրա համար կեանքի ուղ ու ծուծն է դառնում եւ տոն տալիս նրա գործողութիւններին: Յաւիտենականը, բացարձակը անապատականի համար պարզւած խնդիր է, և նրան հասնելը նրա հոգու բուռն պահանջն է: Իւր խէալի և իւր շրջանի հասարակական պայմանների մէջ տեսնելով խորը տարբերութիւն, անապատականը սկսում է պայքար. պայքար մինակ մարդու, անհատական ոյժերի վրայ վստահացած, որ աւելի դժւար է, քան խմբական, դասակարգային կազմակերպւած պայքարը: Անապատականի համար «աշխարհը մի ձմեռ է, ձմեռը ծառերը նեղութիւն են կրում ցրտից, որ գարնանը բացւեն, տերեւազեղուն, ծաղկեն, այդպէս էլ անապատականը պիտի ճգնէ աշխարհ, որ առաքինութիւններ ձեռք բերելով կարողանայ ծաղկել եւ օգուտ տալ»: Անապատականի ճգնութեան համար շատ ուշ, կազմւել է մի դեղատոմս, ուր պարզ երևում է անապատականի հասարակական կեանքի համար պատրաստւելու գաղափարը. «Ա՛ռ ապաշխարութեան չաքարը, եղբայրութեան ծաղիկը, աշխատասիրութեան տերեւը, խոնարհութեան պտուղը, լցրու ողորմածութեան հաւանգը և աղա՛, ծուռը դնելով, քամի՛ր տուայտանքի դաստառակով և դիշերուայ մէջ արցունքով խմիր»: Հասարակական կեանքին ծառայելու նշանաբան է եղբայրասիրութիւնը, ողորմածութիւնը, խոնարհութիւնը: Անապատականի համար այս առաքինութիւնները ցոյց տալու համար

ամենից առաջ վանքն էր ծառայում իբր փորձաքար. վանքը սրբերի բնակավայր չի եղել և ոչ էլ հրեշտակների բնակարան. վանքերում եղածներից մեծագոյն մասը ունեցել է մարդկային սովորական թերութիւնները: Նեղոս հայրը դրա համար էլ ասում է. «Աւելի լաւ է գինի խմել, միս ուտել, քան եղբօր միսը ծամել»: Այդպիսի միջավայրում անապատականը բազմաթիւ առիթներ ունէր իւր առաքինութիւնը հրապարակ բերելու: Այդպիսի միջավայրում է, որ կազմւում է «Մեղան», որը իրականութիւնից է նիւթ առել: Այդ «Մեղայ»ում է որ երևում է մեղքը իւր բոլոր մանրամասնութիւններով:

Ըստ Աթանասի, Մեղայի մեղքի տեղը մարդուն հոգին է, մարմինը և միտքը. մեղքը կատարում է եւ գիտակցութեամբ եւ անգիտակցաբար, կամայ եւ ակամայ: Նա մեղայ է գալիս 365 զօդուածով մարմնի, 12 անդամով, 5 զգայարանքով. ըստ այդ Մեղայի մեղք է աչքով լաւ նկար տեսնելը, քիթով լաւ հոտ առնելը, բերանով համագամ քաղցրութիւն ճաշակելը, ձեռքով մեղքը չօշափելը, ոտքով անպատշաճ տեղեր գնալը. եօթ մահացու մեղք կայ. հպարտութիւն, ամբարտաւանութիւն, գոռոզութիւն, սնափառութիւն, փառասիրութիւն, պատուասիրութիւն, զգեստասիրութիւն կեղծարելը. Մեղք է գազանաբար յարձակուելը, եղբօրը կծելը, կապ ու կռիւը, հայհոյանքը, խռով կենալը, անասուններին խփելը, խըստասրտութիւնը, երկմտելը, թերահաւատելը, տրտընջալը, Ս. Գիրք չկարդալը, նզովելը: Անապատականը ընդունում է, որ իւր մեղքը ծովի աւազից էլ շատ է:

«Մեղա»ն անապատականը ասում էր խոստովանահօրը և միաժամանակ իւր յատուկ յանցանքն ասում. այդ ձևով նա թեթևացնում էր իւր խիղճը: Անապատականը կարող էր ծածկել իւր արածը, չասել, բայց չատերն են նրանց մէջ քաղաքացիական քաջութիւն ունեցել խոստովանելու, գիտնալով, որ իրեն որևէ պատիժ կտան, դուրս վանքից հեռացնեն: Մի վանքի վանահայր եպիսկոպոս գայթակղւում է և իւր միաբաններին խոստովանում է մեղքը և խնդրում է որ հեռացնեն իրեն, երբ միաբանները չեն համաձայնում, նա իւր գլուխը դնում է վանքի չէմքին, որ բոլոր միաբանները գան ոտքը դնեն նրա գլխին և անցնեն. այդ ձևով էլ ապաշխարում է նա իւր մեղքը: Մեղա–ն ասւում էր ամէն առաւօտ վանքում ծընկաչոք ի լուր ամենքի. որովհետև այն խիստ պահանջները, որ Մեղայ–ում կայ՝ ոչ մի կրօնաւոր չէր կարող լրիւ կատարել, հետևապէս որևէ մեղք մէկը կ'ունենար: Մեղա–ն այնուհետև մտնում է նաև եկեղեցու մէջ և հաղորդուողը պարտաւոր է մեղա–ն ասել ապա հաղորդւել:

Անապատականներից չատերը ոչ միայն անապատ քաշւելուց առաջ, այլ և անապատում «բազում յոյժ յանցանս» գործած են լինում և անընդհատ պայքարում է, գայթում է եղնում, նորից գայթում և այդպէս անընդհատ մինչև կեանքի վերջը: Անապատական է եղել, որ 3 տարի չարունակ պռոնկացել է, ամեն անգամ էլ պռոնկանալուց առաջ ղղման արցունք է թափել և նրա մեղքը, ըստ նրա վարքագրութեան, ներւել է: Ցայտնի է, որ կաթոլիկ աշխարհում դէպքեր են եղել, երբ սպանութեան գնացող եղեռնագործը դիմել է առաջ խոստովանահօրը, հաղորդւել է, ապա գնացել է եղեռնը կատարել: Կան պռոնկացող կանայք, որոնք իրենց մարմինը վաճա-

ռելուց առաջ աղօթում են, խաչ հանում երեսներին: Երկու հակոտնեայ ըմբռնումներ միաժամանակ նոյն անհատի մէջ ապրում են ու զօրծում և անհատը վարքն վճիռը տարօրինակ չի գտնում: Յիրաւի մարդկային հոգին շատ է խոր ու հակասութիւններով լի որ հնար լինի այդ խճճուած աշխարհը պարզ ֆորմուլայի վերածել ու տրամաբանօրէն բացատրել:

Անապատականը որ համարում է լրեն մեղքերի ծով, միշտ կարիք է զգում փորձելու, փորձութիւնն է, որ նրան կարող է մաքրել: Անապատականը, մեծ, խորը, անապատականը փոթորկուող, սրտնոց հոգի է և նրա համար կարելի է ասել Լերմանդովի խօսքը. «Իսկ նա՝ ապստամբ՝ փնտռում է մրրիկ, կարծես հանգիստ կայ մրրիկների մէջ» (Առագաստ):

Ինքնագաստիարակութեամբ պարապող մեծ անապատականները կազմում են հրահանգ երիտասարդների համար թէ ինչ ձևով պէտք է նրանք լրեից դաստիարակեն. օրինակ, հպարտ, չարակամ, ամբարտաւան չլինել. երգերի ու խաղերի յեռեից չընկնել, ի զուր չծիծաղել. զրկող, տրտնջող, յանդուգն, ստախօս, չատախօս չլինել. աղօթքը չատել: Եթէ ինքը մաքուր հաց ունի, հիւանդին տայ, փափուկ բարձ ունի վերցնի և քար դնի գլխի տակ, ուտել, խմել, քնելու գործելու մէջ միշտ լրեն նեղութիւն տայ: Միանակեացի կերակուրը պիտի սուգն ու արցունքը լինի. ինչքան այժ ունի հառաչէ, տրտմէ, սպայ ամէն օր. մահուանը սպասէ, ամէն օր գերեզմանատուն գնայ, որ մահը յիշէ: Միանակեացը պէտք է մեղուի նման լինի. ծաղիկներից հիւթեր հաւաքէ և պատրաստէ մարդկանց համար: Նա պէտք է գլխաւոր առաքինութիւններին հետևէ, այն առաքինութիւնները,

որոնց համար մեծ անապատականները պայքարել են ու բազմաթիւ գիտողութիւններ, խօսքեր ասել (յատկապէս Հարանց Վարքը լի է այդ գիտողութիւններով): Այդ առաքինութիւններն են — կատարեալ առաքինութիւն, հանդարտութիւն, զղջումն եւ արտասուք, պահոց պնդութիւն, զգուշութիւն պոռնկութեան պատերազմից, անընչութիւն և ատել երկրաւորը, համբերութիւն և կրօնաւորական ճգնութիւն, ի ցոյց մարդկանց գործ չկատարել, եղբօրը չդատել եւ չբամբասել, երկիւղ ունենալ աստուածային դատաստանից, միշտ արթուն և զգաստ լինել, օտարասէր լինել և ողորմութիւն անել ուրախութեամբ, հոգեւոր հայրերին հնազանդ լինել, խոնարհ, անյիշաչար լինել, Աստծուն սիրել եւ ընկերոջը՝ իբրեւ իր անձը:

Անապատականը գիտէ, որ ինչպէս մարմնաւոր հիւանդութիւնները տարբեր պատճառներից են լինում և տարբեր բժշկութեանց ենթարկւում, այնպէս հոգու ախտերը տարբեր են և տարբեր միջոցներով էլ բժշկւում են: Անապատականներն էլ ապաշխարում են — բժշկւում են տարբեր միջոցներով՝ պաս պահելով, ծոմ մնալով, աղօթք անելով, ծունր դնելով, տասնեակ տարբեր մարդու երես չտեսնելով, կնոջից փախչելով: Ոմանք լրենց վրայ մոխիր են ցանում, ոմանք սուգ են անում, ոմանք անընդհատ սաղմոս են ասում, ոմանք լրենց մարմինը արջառաջլով ծեծում են, ոմանք քարե են հագնում. մէկը մի մըժղուկի պատահմամբ ոտքի տակ տալով հեռանում նըստում է մի վայրում, ուր մժղուկներ շատ են լինում, որ լրեն կծեն և գրանով իր մեղքը քաւէ: Մէկը իր խցում իր աջ ու ձախ կողմերում ունէր գրուած կո-

ղովքեր, երբ վատ միտք էր անցնում գլխովը՝ քարը ձգում էր մի կողովի մէջ, երբ լաւը՝ միւս կողովի մէջ. երեկոյեան համրում էր, և եթէ վատ մտքերը շատ էլին լինում, հաց չէր ուտում: Մէկն իւր մէջքին մազէ գօտին այնպէս էր ամուր կապել (Սիմէոն Սիւնակաց) որ մտել էր մարմնի մէջ, հազիւ ահագին դժուարութիւնից յետոյ կարողանում են հանել: Մէկին, որ կին է եղել, տղամարդու չորով, անարդար տեղը մեղադրում են թէ այսինչ մարդու աղջկանը առևանգել է. մեղադրողը լուել է, 7 տարի այդ աղջկանից երեկոյին իւր մօտ պահել է, վանքից արտաքսուած վիճակում և միայն մահից յետոյ իմացել է, որ նա կին է և առևանգել չէր կարող: Մէկը տարիներ չարունակ գծուծ կեցուով, իբր աղքատ իւր հարուստ հօր դրան առաջ ընկած է մնացել և չի ասել, թէ ինքը նրա, հարուստի որդին է. մահից յետոյ ծանօթները իմացել են որ նա իրենց որդին է (կամաւոր աղքատ Ալեքսիանոս): Մէկը 8 տարի չարունակ իրեն յիմար է ձեւացրել Աղէքսանդրիայի փողոցներում, թափառել է, գիշերը ծոմ է պահել, աղօթք արել: Մէկը օրական հազարաւոր ծունր է դրել, միւսը իրեն գերութեան է վաճառել և ստացած դուամրը չքաւորին տուել. երրորդը՝ քաղաքում ցերեկն աշխատել է, դրամը հաւաքել ու գիշերը տարել պոռնկատուն որևէ մէկին տուել, որ նա մարդ չընդունէ ու ինքն էլ նրա սենեակի մի անկիւնում գուճ է եկել, աղօթել, թէև նրան մեղադրել են, որ անառակութիւն է անում, բայց նա մինչև մահն էլ իւր գաղտնիքը չի ասել, և այլն. «ճգնութեանց հանդէսներ» որոնք զարմանալի կամքի տոկունութեան, համբերութեան և ֆանատիկ գաղափարապաշտութեան օրինակներ են:

Երիտասարդ անապատականի — Նարեկի «ճգնութեան հանդէսը» հետևեալն է — ամբողջ օրը պաս է պահում, գիշերն է հաց ուտում. գիշերւայ կէսը նվիրում է աղօթքի, կէսը քնելու: Ցերեկ և գիշեր սաղմոս է կարդում, ապա լինչ աղօթք կ'ուզենայ: Առաւօտը լոյսը ծագելիս ձեռքերը լւանայ ու ծունր դնէ. Քրիստոսի խաչի առաջ 40 անգամ, և ասէ հետևեալը. «Տէր Աստուած լինձ արժանի արա՛ որ քո սիրելի որդու անօրէնութիւնը իմ սրտում քաղցրանայ», նոյնպէս մինչև օրուայ երրորդ ժամը (ըստ հին ժամակարգութեան), ապա ձեռքերը տարածէ, ծունր դնէ, աչքերը վեր բարձրացնէ ու խնդրէ, որ Աստուած չնորհք տայ սաղմոսը հասկանալու. ապա հարանց խրատները և վարքը կարդայ մինչև կէս օր. ապա նորից սաղմոս, մինչև հասարակաց 9–րդ ժամը. ապա ձեռագործով պարապէ, յետոյ կերակուր ուտէ, երեկոյեան փառք տայ Աստծուն, ապա հաց ուտէ, նորից սաղմոս, Ս. Գրքի ընթերցանութիւն և երգ: Այս հրահանգը որքան և ունենայ խրատուցիչ կողմեր, բայց յատուկ ոխտիպլինայի է վարժեցնում անապատականին, ծանրութեան կեգրոնը հոգու վերածնութիւնը դարձնելով:

Վերջ ի վերջոյ անապատականի ճգնութեան հանդէսն էլ դառնում է ձև, խստանում է մոնելով հարմակարգութեան մէջ. մանաւանդ աղօթքը, որը իրօք հոգեկան տրամադրութեան հետևանք է և ժամանակ ու տեղ չպիտի լինի նրա համար, ինչպէս և չի եղել սկզբում: Վանքերում սակայն մշակւում է յատուկ ժամակարգութեան կանոն. գոյութիւն ունէր հասարակաց աղօթքի եօթ ժամ՝ հասարակաց, ի մէջ գի-

չերի, առաւօտեան, հասարակաւոր, լինն ժամու, երեկոյեան և խաղաղական (*)։

Անապատականների համար առանձնական աղօթքը — խցում, գրուում աղօթելը միշտ էլ սովորութիւն է եղել, և մեծ հայրերը գրել են անապատականի առանձնական աղօթքի համար աղօթագրքեր, աղօթքներ։ Դրանց մէջ ամենից աւելի տարածուածը Եփրեմի Յունին Ասորւոյն վերագրուած «Գիրք աղօթից»ն է, որը «Ժօսք ընդ Աստուածոյ է»։ Աղօթագրքի հնութեան գաղափարը խիստ ասկետական ոգուն համապատասխան չէ, Եփրեմը աւելի մեղմ, աւելի համբերատար ու զգայուն հոգի ունի և մեղաւորին դատապարտելուց հեռու է։

Անապատականը առհասարակ մեղքի խորը գիտակցութիւնն ունենալով հանդերձ, զգալով միշտ իրեն մեղաւոր՝ չի յուսահատւում վերջ ի վերջոյ, այլ պայքարում է, որովհետև նա հաւատացած է, որ Քրիստոս իրեն կ'օգնէ, որ եթէ անիրաւ դատաւորը անընդատ բողոքող այրու դատը արել է, ապա Փրկիչը, որ ողորմած դատաւոր է, իրեն դիմողին աւելի չատ կը լսէ և կը ներէ։ Եփրեմի կարծիքով իւրաքանչիւր մարդ, անապատական, թէ աշխարհական, պէտք է գիտենայ, որ մեղաւորը որքան և յանցանք ունենայ այնուամենայնիւ կը փրկւէ, հարկաւոր է միայն զղջալ։ Քրիստոս վրէժ լուծող չէ. բաւական է մի կաթիլ արցունք անկեղծ սրտից բղխած, որ մեղաւորը քաժշկւի։ Այս յոյսն է, որ ապաշխարողին պահել է։

(*) Թւերը առհասարակ խորհրդաւորութիւն են ատանում եկեղեցում. 1-ը, 3-ը, 4-ը, յատկապէս եօթը թիւը, որի համար կայ աւելի քան 30-40 բացատրութիւն. տե՛ս «Ցայսմաւուրք», 1706 թ. Պոլիս, 412-13 եր.։

Զղջման հետեւանքը իւրաքանչիւր անապատական իւրատեսակ է դրսեւորում. աղօթքով, երգով, մի բարի գործ կատարելով, քաղաքէ քաղաք, գիւղէ գիւղ չըջելով ու քարոզելով և այլն։ Ի հարկէ զղջման գալուց յետոյ անապատականը իւր գործն աւարտած չէ համարում. նա այնուամենայնիւ չարունակում է ապաչխարել, բայց աւելի թեթեւացած հոգով ու հանգստացած խղճով։ Անապատականի մեղքին ու ապաչխարութեանը վերջ չկայ մինչև իւր մահը։

Եզրափակելով անապատականի մեղքի ըմբռնման ու նրա դէմ վարած պայքարի խնդիրը, տեսնում ենք որ անապատականը անձնական օրինակով լինքնադաստիարակութեան ու ինքնակրթութեան գործով մի կողմից նմանողութեան օրինակ է դառնում ուրիշների համար և իրեն հեւից տանում որոշ խմբեր, միւս կողմից հասարակութեան մէջ եղած զանազան տգեղ երեւոյթների դէմ բողոքող է հանդիսանում և վարքագրութիւնները ցոյց են տալիս, որ անապատականները ընկած, պոռնկացող կանանց բարձրացնելու և վերածնելու գաղափարն են պաշտպանել. ժլատութեան, կծծիութեան դէմ են բողոքել (անողորմ Պետրոսի օրինակը), հարստութիւնը առ ոչինչ են համարել, հասարակութեան մէջ եղած հոգեկան հիւանդներին, չիմաստներին պաշտպան են հանդիսացել. չուայլ կեանքի դէմ են եղել, հոգեկան վերածնութեան ընկղմունքը ամենալայն չափով են ընդունել։

Կուլտուրական ներկայ աշխարհում էլ դեռ քրէական պատժական օրէնքները յանցագործների համար խոտութիւններ ունին, մինչև մահուան պատժի ատիճանը, իսկ անապատականի կեանքը ցոյց է տալիս, որ նա ընդունում է ամենայետին, անգամ տանեակ

տարիներով յանցանքներ գործողի վերածնութեան հնարաւորութիւնը: Եթէ քրիստոնէութեան բարոյական սկզբունքները հնարաւորութեան չափով գործադրողներ եղել են առհասարակ կեանքում, ապա դրանց մէջ այդ տեսակէտից անապատականները յետին տեղը չեն բռնում. բարոյական վերածնութեան սկզբունքը մարդերին յառաջդիմութեան համար եւ մանաւանդ անհատական կեանքի կատարելագործման տեսակէտից շատ կարեւոր խնդիր է, և դրա դրական լուծումը նպաստում է չինարար աշխատանքի ու յուսատու պայքարի: Անապատականի մեղքի դէմ վարուց պայքարը այս խնդիրը լուծում է դրական, առանց տարակուսանքի, առանց վարանման: Ինչքան աւելի խորը կերևայ ու հասարակական զարգացման համար աւելի օգտակար այդ գաղափարը, երբ ի նկատի ունենանք, որ դա քարոզւում էր Դ — Ե–րդ բարբարոսական պատիժներով հարուստ դարերում, երբ անհատը դեռ արժէք չէր, երբ հոգեկան աշխարհի խնդիրը մոռի էր ու տարտամ ընդհանրապէս: Եւ անապատականը այդ գաղափարը խօսքով չէ որ քարոզել է, այլ իւր խակ կեանքի դժուար պայքարով հասարակութեանը ցոյց է տուել, որով և նրա արժէքը էլ աւելի մեծանում է:

Գլ. Զ.

Անապատականը սուրբ:

Սրբերի պաշտամունքը բոլոր քրիստոնեայ եկեղեցիներում հաստատուում է Գ. դարում, հալածանքների հետեւանքով: Մարտիրոսներն են սկզբնական սրբերը, սրանց պատմութիւնները կազմում են կոստանդին Մեծից յետոյ, երբ հալածանքը դադարել էր, երբ մարտիրոսները որոշ չափով պատմական յիշողութիւններ էին դարձել:

Մարտիրոսներից յետոյ սրբանում են անապատականները, ապա հայրապետները, եպիսկոպոսները, երէցներ, սարկաւագներ և այլն: Անապատականները սրբանում են ուշ. անապատականներից շատ քչերն են ի հարկէ սրբոց դասը դասուել. հազարաւոր անապատականներից հազիւ մի երկու տասնեակ միայն մտել են այդ կարգը: Այս սրբերի կարգն անցնողների վարքը — կենսագրութիւնը հետզհետէ կազմւում է ու եկեղեցում ընթերցանութեան նիւթ դառնում. ժողովուրդն էլ մեծ հետաքրքրութեամբ կարդում է այդ պատմութիւնները, որ Վարք Սրբոցի, Յայսմաւուրքի մէջ կայ և եղել է նրա մանաւանդ որոնումների նիւթ:

Անապատականի սրբանալուն նպաստել է մի կողմից իւր արտակարգ, ճգնական կեանքը, որը չրջապատող ժողովրդին անսովոր է եղել, և այդ դժբաղդութիւնների հետ կապուած սրբացնող կեանքը ուշադրաւ է դարձել, մեւս կողմից անապատականի կատած «հրաշք»ները աւելի եւս մեծացրել են նրա համբաւը և նրան վերագրել են արտակարգ ոյժ, աս-

տուածային յատուկ շնորհք: Այս շնորհքը բացատրելու և «հրաշք»ը հոգեբանօրէն լրիւ պարզաբանելու առթիւ եղած այլ և այլ փորձերն ընդունելով հանդերձ, պէտք է նկատել, որ այդ ամենը դեռ չի պարզում խնդիրը, մի կողմ թողնելով հոգե–նեարդային լարուածներից առաջ եկած բժշկութեան դէպքերը, կէս մութի մէջ են թողնում դեռ խնդիրը, մի կողմ թողնելով սակայն, որ հրաշքների մէջ կան արդէն մտացածին, երևակայութեան արդիւնք եղողներ: Հաւատոյ խնդրին թողնելով այդ ամենը պիտի ասել, որ հէնց այդ անբացատրելիութիւնն է հրաշքի ամենակարևոր կողմը. հակառակ դէպքում նա այլ ևս հրաշք չէ, այլ բնական մի երևոյթ և ժողովուրդը ուշադրութեան չի առնի: Անսովորը, բնութեան երևոյթներից դուրս երևոյթ, գործ առաջ բերողը, կատարողը յատուկ է միայն, ըստ ժողովրդի ըմբռնման, յատուկ շնորք ունեցող մարդուն. յատուկ շնորհքն Աստծուց է տրւում, ուստի հրաշք գործողը Աստծու մարդն է, նրա սիրելին և նրա ընտրածը, սուրբը:

Անապատականների մէջ հրաշք գործելու դէպքերը համեմատաբար քիչ են, քան նահատակուած քրիստոնեայ սրբերի մէջ. որոնց մահը և մահից յետոյ եղածը աւելի քան հրաշապատում տարրեր ունի: Անապատականները ի հարկէ մի տեսակ շնորհքի տէր չեն, այլ ամեն մէկը իւր առանձնայատուկ շնորհքն ունի. կան նրանց մէջ գործնական–հասարակական կեանքում հրաշք գործողները, ժողովրդին օգնողներ, կան և իրենց անհատական կեանքի համար հրաշքներ կատարողներ: Մի անապատականի մօտ չըրջակայ գիւղի ժողովուրդը բերում է աւազ, որ սա օրհնէ, օրհնելուց յետոյ տանում ցանում դաշտերում

և առատ բերք է ստանում. մի ուրիշ անապատական ժողովրդին սարսափի տակ պահող բորենու բերանն է փակում, վիշապին է քարացնում. որով և ժողովրդին սիրելի սուրբ է դառնում: Ուրիշները իրենց անհատական կեանքի մէջ եղած հրաշքներով են իրենց հեղինակութիւնը բարձրացրել, մանաւանդ որ եղել են անապատականներ, որոնք այն կարծիքին են եղել թէ ամեն մի ճգնաւոր եթէ նա Աստծուն հաճելի է, պէտք է որևէ շնորհք ունենայ: Այսպէս մի անապատական գոգը կրակ է ածել և պատել ու հանդերձները չի այրել. մի ուրիշը այն հերձուածողին, որ ժողովրդին մոլորեցնելիս է եղել և որին լինքը բանակով չի կարողացել յաղթել, հրաւիրել է կրակի մրցութեան, խարոյկ են վառել եւ անապատականը խարոյկից անցել է, առանց որևէ վնաս կրելու, իսկ հերձուածողը կրակից չի անցել և այդպիսով ճշմարտութիւնը ճնացել է անապատականին: Այս դէպքը յիշեցնում է հնդկական փաքիրների մէջ գործադրուող նման երևոյթ մը, որը և միջնադարում դատաստանական մի միջոց էր համարւում երկար ժամանակ: Ամենից շատ անապատականի հրաշքը հրեշտակին տեսնելն է. հրեշտակը նրան մոլորուած ճանապարհին օգնութեան է հասնում և ճանապարհը ցոյց տալիս, հրեշտակը նրա համար հաց, ջուր է բերում, երբ հիւր է գալիս հիւրի համար էլ է բերում. նրան հովերի վրայ թռցնում տանում է. երազում երևում է և Աստուածոյ պատգամներն է յայտնում. նրան սատանայի դէմ մղած պայքարում: Հրեշտակները սատանաներից պակաս չեն թուով. նրանք բնակւում են երկնքում. լինն դաս են, և չարունակ Աստծուն են փառաբանում, Աստծու հրամաններն են կատարում:

Հրեշտակների մօտ են գնում նաեւ առաքեալների, նահատակների, ճգնաւորների, կոյսերի, միանձնեւրից հայրապետների եւ առհասարակ սրբերի հոգիները. այսպիսով երկինքը մի մեծ թագաւորութիւն է, ուր ահագին բազմութիւն կայ սրբերի եւ հրեշտակների. այս թագաւորութեան մէջ ապրողներն էլ աստիճանաւորութիւն ունին. ով աւելի մեծ սուրբ է, աւելի բարձր ու աւելի լաւ պայմաններում է: Անապատականն էլ ասում է, որ չատ աշխատողը չատ էլ վարձ պիտի ստանայ:

Անապատականը Աւետարանից գիտէր, որ Յիսուս իւր առաքեալներին չնորհք էր տւել դեւերին–չար ոգիներին հանելու, բժշկութիւն կատարելու, նաեւ լեռներին իսկ իրենց տեղից չարժելու: Նա գիտէր որ առաքեալները բժշկութիւններ չատ են արել եւ ինքն էլ իւր հերթին իւր հաւատոյ ոյժն է փորձում ու բժշկութիւններ է անում: Հոգետես հայրերի կենսագրութիւններից երեւում է, որ նրանք այն բոլոր հրաշքներն անում են, ինչ որ Յիսուս է արել. այսպէս մի եպիսկոպոս աղօթում է եւ ալէկոծող ծովը հանդարտում է. մի ուրիշ անապատական մեռեալին յարութիւն է տալիս. երրորդը լերանը իւր տեղից չարժում է. Միւսիս անապատականը ննջեցեալի հետ խօսում է եւ պատասխան է ստանում. մի ուրիշը նոր ծնւած մանկանը ասում է, խօսիր եւ խօսում է, կոպրէս անապատականը այսահարներին բժշկում է եւ դեւերին հալածում ու մեծամեծ սքանչելիքներ է գործում: Աւազակները մի անգամ կացիններով յարձակւում են մի անապատականի վրայ եւ նրանց կացինները փայտ են դառնում. մի անապատական արեւին ասում է կանգնիր, մինչեւ խուցս հասնիմ եւ արեւը

կանգնում է. սա անգամ թռչում է, երկինք է գնում եւ տեսնում թէ ինչեր են պատրաստւած այնտեղ միայնակեացների համար. Նեղոս գետն անցնում է թրջուելով միայն մինչեւ ծնկները. վիշապների հետ մաքառում է: Սպէլէս անապատականը նստում է կոկորդիլոսի վրայ, գետն անցնում ու վերադառնում. յետոյ կոկորդիլոսին ասում է՝ մեռի՛ր եւ մեռնում է: Մի այլ անապատական ունենում է այգի, որից որքան եւ պտուղ են ստանում այնուամենայնիւ չի վերջանում. Պարսամ ճգնաւորը դեռ պատանի ժամանակ մի երեխայի օրօրոցում օրօրելիս ասում է «Մեռի՛ր» եւ մեռնում է. յետոյ ասում է «ել» եւ յարութիւն առնում. Նա մէկ նկանակով մէկ չաթաթ իւր սպակիցներին կերակրում է. մի այլ անապատական կենդանութեան ժամանակ դրախտն է գնում, Ադամին, Եւային, Ենովքին տեսնում է, դրախտի պաղից քաղում է եւ բերում տալիս իւր եղբայրներին, Եայլն, Եայլն: Եթէ սրբերի ու անապատականների վարքերը լի են հրաշքներով այդ նաեւ նրա համար, որ այդ վարքերը ժողովրդի համար հէքիաթների նման հետաքրքիր են եղել. ժողովուրդն ինքն էլ իւր կողմից աւելացրել, ճոխացրել է ու չափազանացրել, վարքագրողն էլ իւր հերթին է իւր սիրած հերոսի, սրբի, անապատականի կեանքը «գեղեցկացրել» ու հրաշքներով լցրել. հեթանոսական ըմբռնումներն էլ երրորդ կողմից են աւելացրել եւ այդ ձեւով կազմւել է վարք Սրբոցն հրաշապատում վարքագրութիւնները:

Հրաշքների կարգը չի կարելի դասել այն երեւոյթը, որ անապատականներից ոմանք իրենց մահը կանխագուշում են, յայտնում են մօտիկներին, աշակերտներին, որ այս ինչ ժամանակ կը մեռնեն եւ մեռ-

նում են: Երազները, որոնց էությունը ցայսօր պարզված չէ, անապատականի կեանքում, դեր են խաղում. տեսիլքների, կօշմարի վերածւում, որոնք ժողովրդի աչքում դարձեալ իբր հրաշք են աչքի ընկնում: Անապատականներ կան, որոնք գրել կարդալ են սովորում երազ տեսնելուց յետոյ, այնպէս, ինչպէս որևէ աշակերտ երկրաչափական կամ հանրահաշւական դժւար խնդիր չի կարողանում լուծել, դիշերը չարունակում է նրա ուղեղը լարւած նոյն խնդրով պարապել ու վերջ ի վերջոյ պատահում է, որ լուծում է խնդիրը: Հոգեբանական երևոյթ, մտաւոր-հոգեկան այժերի սաստիկ լարման ու նոյն խնդրի չուրջը կենդրոնանալու, բոլոր այժերը նոյն ուղղութեամբ լարումի պատճառով խնդիրը պարզաբանւում է:

Հրաշապատում առհասարակ անգամ ներկայում, բնական գիտութիւնների, տեխնիկայի, մեխանիկայի զարգացած չրջանում, այնուամենայնիւ դեռ գոյութիւն ունի ժողովրդի մէջ: Հնդկաց ֆաքիրները, պարսից դերվիշները, ոչ միայն բնական կանոններին հակառակ փորձեր են անում, այլ և ապշեցուցիչ գործեր են կատարում. մանաւանդ 40 օր անսուաղ մնացող, գերեզմանում պառկող ու նիրվանային հասնող ֆաքիրը, որը իբր արուեստը ինտելլիգենտ Եւրոպացիների առաջ է կատարում: Չէ՞ որ այժմ էլ դեռ լրագրներում յայտարարութիւններ կը գտնէք «Սև մոգութեան» արուեստի իմացողների մասին կամ ապագան գուշակողների, զանազան ձեռնահմտների մասին: Իսկ որ ժողովուրդը, անհաւատ տարրը, դեռ այժմ էլ դիմում է զանազան գրքացների, գարի ձգողների, կուռ չափողների, մոմ թափողների, գայլի բերանը կապողների և այլ գուշակների այդ գիտեն նրանք,

ովքեր հայ գիւղերում ապրել են ու նրանց մասին եղածները կարդացել: Եթէ այժմ հրաշքը ժողովրդին ընդունելի է և հրաշքով է նա իւր բախտը տնօրինել ցանկանում, ի՞նչ խօսք, որ 15–16 դար սրանից առաջ ապրող քրիստոնեաները աւելի ևս հրաշքի սիրահար լինէին ու հրաշք պահանջէին սրբից, նրան հրաշագործի այժ վերագրէին:

Այն անապատականը, որը ինքնակրթութեան ու հոգու մաքրութեան սկզբունքին է նւիրւած եղել և անկեղծօրէն, հրաշք գործելը պահանջ չի եղել և նաև ամենևին ցանկութիւն էլ չի ունեցել սրբանալու: Անապատականը իւր մարմինը սատանայի բնակարան է համարել, մի բեռ, մեղքերի հաւաքարան և նա խընդրել է որ իր մահից յետոյ մարմինը գազաններին կուռ գարձնեն, բնական է որ իր մարմինը սուրբ չէր յայտարարի և համաձայն չէր լինի, որ իւր նշխարները սրբացնեն, մասունքներ կազմեն ու երկրպագութեան առարկայ գարձնեն:

Սրբացող անապատականի համբաւը չուտով տարածւում էր չրջակայքում, ապա բերնէ բերան անցընելով նաեւ հեռաւոր վայրերէ գեռ կենդանութեան ժամանակ սկսում են այցելել նրան, նրա օրհնութիւնը ստանալ, նրա հանդերձին կպչիլ, նրա խօսքը լսել եւ բժշկւել: Այցելում էին ահագին խմբերով, այնքան մեծ բազմութեամբ, որ «սուրբ»ը ստիպւած էր լինում հերթով ընդունել, եկողների համար յատուկ բնակարաններ պատրաստել, պատահում էր, որ հեռանում էր իւր տեղից, տեղափոխւում այլուր, այնուամենայնիւ վիտառում գտնում էին, անգամ նրա խցի պատերը քանդում էին և ստիպում, որ ելնէ իրենց օգնէ, բժշկէ. Սիմէոն Սիւնակեացի

ճգնարան սիւնը միչտ չըջապատուած էր ուխտաւորներով. Ս. Իլլարիոնը ստիպուած էր երկրէ երկիր փախչիլ, որ իւր մօտ եկողներից ազատուէ: Դալիս էին և քրիստոնեաները և հեթանոսները(*), և կըթուածները և անկիրթները, և հասարակ ժողովրդից և իշխանական տներից:

Հայ ժողովուրդն էլ իւր ժամանակ նոյնպէս ուխտաւորներ է տուել դէպի այդ սրբերը. հայ մարդն էլ օրերով ճանապարհ է կտրել սրբերի, անապատականների մօտ գնալու, նրա օրհնութիւնը առնելու, ինչպէս Սիմէոն Սիւնեակեացիի պատմութիւնից է յայտնի(**):

Այս ընդհանուր եկեղեցական երևոյթը բնական է որ հայ եկեղեցու համար անուշադիր չէր մնայ և նրա համար ևս արժէք պիտի ստանար: Հայ եկեղեցին կազմակերպելով Դ. դարում, դեռ մասը լինելով ընդհանուր եկեղեցու, իւր մէջ է առնում եկեղեցական երևոյթները. նրա համար արևելքն էր հարազատ և նա իւր սրտով արևելքին էր ուղղուած. բնականաբար արևելեան եկեղեցու կարգերն էլ փոխ պիտի առնէր ու ազգայնացնէր, ժողովրդին մատչելի դարձնէր, ինչպէս կոչուած պատմութիւնից պարզ երևում է: Եւ հայ եկեղեցին փոխ է առնում ի միջի այլ, քրիստոնէական ընդհանուր կարգերի, նաև անապատականների կարգը, արևելեան անապատականի, որոնց վարք սրբոցները հետզհետէ թարգմանուում են և տարածուում Հայաստանում և օրինակ դառնում նոր ակսուող հայ

(*) Այժմ էլ հայ ուխտատեղիներ կան, ուր մահմետականներն էլ ուխտի են գնում. օրինակ Ս. Կարապետը Մշոյ, Սևանայ Ս. Նշանը չրջակայ քրդերի համար:

(**) Lucius, 400 եր.:

անապատականութեան: Ժողովուրդն իւր հերթին, եկեղեցականութիւնը իւր՝ անապատականի պահանջն զգում են և երկուսն էլ միացեալ ոյժով նպաստում են այդ կարգի զարգացմանը ոչ պակաս չափով ու յաջողութեամբ, քան արևելքում էր:

Յ„ԿՁՅՈՂ”

ՆՅՍՅԿՅՁ ՂՈՈՐ

«ՆԱՐԵԿ»Ը

Գլ. Ա.

Անապատական կեանքը Հայաստանում մինչեւ Ժ.րդ դարու վերջը։

Քրիստոնէութիւնը Հայաստանում Դ. դարում պաշտօնական պետական կրօն ճանաչելուց յետոյ մուտք է գործում և անապատականութիւնը։ Թէև մինչև այդ էլ Հայաստանում յիշւում են ճգնաւորների խմբեր, որոնք այլ և այլ երկրներից փախել էին Հայաստան ապաստան գտնելու, սակայն սրանք ուժեղ ազդեցութիւն չեն ունեցել, որ շարժում յառաջ բերէին. դրանց գործունէութիւնը եղել է գաղտնի և նրանցից շատ քան յայտնի չէ։ Այդ խմբերից աչքի ընկողներն էին՝ Ոսկեանք Ծաղկէոյ լեռներում, Սուրբ Քիսեանք՝ Ջրաբաշխի լեռներում, ուր սրանք 44 տարի մնում են և «սոցա մարմինները քարի մամուռի նման էին, իսկ մազերը քաշ էին տալիս եռևնեբից, ինչպէս քարայծի մազեր»։ Հռիփսիմեան կոյսերը եղել են Արարատում — վաղարշապատի մօտերը։ Այս բոլոր խմբերն էլ նահատակւել են։

Գրիգոր Լուսաւորիչը՝ Կապադովկիայում կրթուելուն առած, այնտեղ էլ ձեռնադրուած լինելով, ինքն էլ մի ճգնաւոր սկզբում, քրիստոնէութիւնը Հայաստանում հաստատելուց յետոյ կեսարիայից բերում է Անտոն և կրօնիդէս ճգնաւորներին իւր հետ։ Նա լաւ ըմբռնում էր, որ քրիստոնէութիւնը տարածելու հա-

մար քարոզիչին հաւասար արժէք ունէր և անապատականը, որն իւր կենցաղով քրիստոնէական կրօնի առաքելութիւն հրապարակ էր հանում, ուստի և հեթանոսութեան ամենաուժեղ կենդրոնում, ուր քրիստոնեան դասը երկար պատերազմ էր մղել նոր մուտք գործող քրիստոնէութեան դէմ, այն է Տարօնի Իննակնեան կոչուած տեղում, որի մօտ յետոյ Ս. Կարապետի վանքը կառուցուեց, բնակեցրեց այդ ճգնաւորներին, որոնք ազդով յոյն էին, խստակրօն և բարոյապէս ազդում էին ժողովրդի վրայ:

Հայաստանը սահմանակից երկու քրիստոնեայ երկիրներ ունէր՝ Ասորիքը և Կապադովկիան. այս երկու երկրներից էլ քրիստոնէութիւնը մուտք է գործում, նրա հետ և անապատական կարգը. Լուսաւորչից յետոյ սկսում է յունական ազդեցութիւնն ուժեղանալ և այդպէս էլ չարունակւում է: Անապատականները առաջին չորսդում աւելի ասորական ազդեցութեան տակ էին, յատկապէս հարաւ-արեւելեան Հայաստանը, իրրև աւելի սահմանամերձ երկիր, աւելի է ազդեցութիւն կրում:

Քանի դեռ նոր էր մուտք գործել քրիստոնէութիւնը, ժողովուրդը դեռ անընտել էր քրիստոնէական կարգերին, անապատականներն էլ յատուկ ուշադրութեան չէն արժանանում և այդ կեանքը քչերին է գրաւում. եղած անապատականներն էլ անկազմակերպ վիճակ ունէին, ինքնագլուխ էին. իրենց կեցցաղի ու ազօթքի համար հրահանգ չունէին: Ներսէս Մեծի ժամանակ, երբ Հայաստանը սկզբում համեմատաբար աւելի խաղաղ վիճակ ունէր, քրիստոնէութիւնն աւելի արմատաւորուեց. անապատական կեանքն էլ զարգանում է չնորհիւ մեծ Հայրապետի ձեռք առած միջոցների. անկազմակերպ անապատականները տեղաւորուում են վանքերում և ենթարկուում Բարսեղ մեծի կանոնագրութեան: Այդ չորսդում էլ դեռ ասորական ազդեցութիւնն ուժեղ էր. հայ ժամերգութիւնը, յատկապէս պատարագը, ասորական էր. միայն 6-րդ դարում փոխուում է յունականի: Ասորական հոսանքի գլուխ էր Դանիէլ հայրապետը, որն ինք էլ մի անապատական էր. ըստ Փաւստոսի, «նրա բնակութեան տեղերը անմարդաբնակ լեռներն էին, միահանդերձ էր, մաշկեակով ծածկուած, ոտքերին սանդալներ, իւր կերակուրը բանջարների արմատներն էին, գաւազան անգամ չունէր»(*): Ալբում էր Հացեաց գաւառում, դարափոր տեղերում. իրը ականաւոր ապրատական ունէր և աշակերտներ, նոյն կենցաղին վարժեցրած, որոնք և Ներսէս Մեծի ժամանակ հիմնած անապատներում ու վանքերում տեղ են գրաւում և նրանցից մէկը գլխաւոր հսկողն է դառնում:

Ներսէս Մեծը «անապատ և անմարդաբնակ» տեղերում եղբայրանոցներ ու մենաստաններ էր չինում և յատկանձնականների խրճիթներ և նրանց տեսուչ է նչանակում Շաղիտային, Եպիփանին և Եփրեմին ու Գլնդին, որ Սկևռնեաց տեղից էր և ուրիշներին(**): Շաղիտան խոտաճարակ անապատական էր և քսան տարի էր չորսում նրա հետ: Եպիփանը Ծոփից աշխարհում էր վանք չինել, ուր 500 անապատական կար. վանքը «եղբայրանոց» էր և անունը Մամբրէի վանք. անապատականներն այստեղ միայն հաց ու ջուր էին գործածում(***): Իսկ Գլնդը, որ Տարօն գաւառից

(*) Փաւստոս, 1889 թ. հրատ., էջ 76:
(**) Խորենացի, Գ. Գիրք, գլ. Ի:
(***) Փաւստոս, էջ 226-28:

էր, նշանակւում է «աքեղանների գլուխ, միանձանց վարդապետ և միանձների առաջնորդ», վանքերի վերակացու և բոլոր անապատականների ուսուցիչ և այն բոլորի տեսուչը, որոնք Աստծու սիրոյ համար աշխարհից հեռացել էին, բնակւում էին անապատներում, քարանձաւներում էին ամրացել, երկրի այրերում և քարածերպերում և միահանդերձ էին, բոկագնաց, խոտաճարակներ, բոյսեր և արմատքներ ուտողներ, գազանների նման լեռներում էին չրջում, լեչկամաչկերով և այծերի մորթիներով, նեղուած, տառապած և չարչարած, անապատում մոլորուած, ցրտի և տօթի, քաղցի ծարաւի մատնուած Աստծու սիրոյ համար(*). թռչունների երամների նման բնակւում են վէմերի ծերպերում, քարանձաւներում. անինչք էին, անստաց, մարմինները ամենևին խնամքի, դեղի չենթարկող: Եւ սոցա բուն գլխաւորը Ս. Գինդն էր, ո-րովհետև Հայոց երկրում բոլոր մարդիկ սրան վարդապետ էին ասում «. . . Եւ Ս. Գինդը բոլոր անապատները լցնում էր միայնականներով, բոլոր չէները վանքերով . . .»(**): Ինքն ապրում էր Եփրատի ափին. սրա աշակերտներն էին՝ Մուշէ և Տրդատ. վերջինս ապրում էր Տարօնում: Ներսէս Մեծը չինել էր նաև կուսանոցներ «բոլոր գաւառներում», ուր հաւաքւում էին էքաւորները և կերակրւում:

Ասորական սերնդի ականաւոր անապատական ներկայացուցիչն էր և Յակովբ Մծբնայ հայրապետը, որին յատուկ չարական կայ նւիրած և ուր նա «անապատից կոչուած» է համարւում նման Մեծին Մովսէսի, Յովհաննու և Պետրոսի. նրա ճգնութեան համար երկնային զօրքն ուրախանում է, որովհետև Յակովբ հայրապետը իւր մարմնի մէջ վերին զուարթունի — հրեշտակի նմանութիւն է բերում. իւր արցունքներով մեռածներին կենագործում է, սա է որ ուզում է Նոյեան Տապանը տեսնել և հրեշտակը միայն նրան տալիս է մի մասը երազում(*):

Ներսէս Մեծի ժամանակ վանքերը ծաղկում են և որոշ հասարակական նպատակի ծառայում նրանք, որ որոշ վանքեր գառնում են, ուրկանոց, որբանոց, ծերանոց, մի խօսքով ժամանակի անուշադրութեան մատնւած, պետութեան խնամքից ու հասարակութեան հոգածութիւնից զուրկերը վանքերում են խնամքի արժանանում, որով և հայ վանքերը այդ չըրջանում որոշ չափով տարբերւում են Եգիպտոսի և Ասորիքի վանքերից և ժողովրդին աւելի համակրելի են գառնում. կրօնաւորների, վանականների թիւն սկսում է աճել:

Հայ երկրում իսկական անապատներ աշխարհագրական դերմինով չկան. բայց երկիրը հարուստ էր միայնակեաց լինել ցանկացողների համար յարմար տեղերով. լեռներով, ձորերով կտրտուած Հայաստանը դժւարագնաց, անմերձենալի, կտրւած տեղեր շատ ունէր, ուր և տեղաւորւում են վանքերը և անապատականները: Կլիմայական պայմաններն էլ Հայաստանում Եգիպտոսի նման չէին և Հայաստանի անապատականը աւելի քան հեռու էր կենդրոնական քաղաքներից. Հայաստանը չունէր Աղէքսանդրիայի նման մեծ, կուլտուրական քաղաք և ոչ էլ Եգիպտոսի նման

(*) Ա՛ր երբայեցիս, Գլ. ԺԱ. 37:
(**) Փաւստոս, Դպր. Ե., Գլ. ԺԶ., 280–81:

(*) Շարական, 1888 թ. էջմ. էջ 408:

զարգացած յունական դպրոցները. նոր անապատականը լինքն իւր այժերին էր թողնուած, իւր աշխարհայեացքը մշակելու սկզբում և վերծ էր մեծ քաղաքի կուլտուրայի վատ ազդեցութիւնից:

Անապատներն սկսում են աւելի շատ զարգանալ հիւսիսային Հայաստանում, յատկապէս Սիւնեաց աշխարհում, ուր առանձնանալու յարմար տեղերը շատ էին և յարձակումներից աւելի վերծ էին: Ըստ Օրբէլեանի «Սրանում (Սիւնիքում) անառիկ, ամուր տեղեր կան մարդկային հնարներից հեռու. եթէ միայն Տէրը չմատնէ»: Սիւնիքում վանքերի թիւը մեծանում են, նորանոր վանքեր են շինում է–Ը. դարերից սկսած Վայոց Ձորում, Գեղարքունիքում. շինւում են նաև կուսանոցներ, ուր հարիւրաւոր կոյսեր են հաւաքւում: Սո հասարակ հայ կուսանոցների կատարած դերը մեր հասարակական զարգացման մէջ պարզ չէ, յայտնի չէ թէ կուսանոցներում հաւաքուածները ի՞նչ են արել, ի՞նչով պարապել. մինչ վանքերում տղամարդիկ գրով, գրականութեամբ, գիտութեամբ են պարապել ու ահագին զարկ տւել հայ մտքի ծաղկմանը. կուսանոցներում նման մեծ գործ կատարուած չի յիշւում, բացի մի երկու կին գրողներից և մի քանի վանքեր շինել տւողներից կուսանոցների տարեգրութեանց մէջ ուրիշ բան չենք տեսնում. ըստ երևոյթին, այդտեղ միայն աղօթքով են անցկացրել կեանքները:

Ը–Զ. դարերում հայ վանքերի, անապատականների ներքին կեանքը աւելի ևս կազմակերպւում է և անապատական կեանքը դառնում է ուշագրաւ: Եղիշէի, Յովհան Մանդակունու գրուածներից և հաւանօրէն նոյն շրջանում կազմուած և Լուսաւորչին վերագրուած Յաճախապատումի Իջ. գլխից երևում է, որ ճգնաւորական կեանքը բաւական զարգացել էր և յատուկ խրատներ էին գրւում այդ առթիւ: Զ. դարում յիշւում են նշանաւոր ճգնաւորներ՝ Թաթուլ և Վարոս Վիշապաձորում (Կաղզուանի շրջան), Գիւտ ճգնաւորը Երասխի ափին, որ մի վանք է շինում, 500 հոգի հաւաքւում են, 300ը ապրում էր վանքում, 200ը քարանձաւներում. յիշւում է Երիցակ երիցու վանքը Բաղքում: Նոյն դարում Հայաստան են գալիս եօթը յոյն խոտաճարակներ և բնակւում Տարօնում, Նահատակւում Իննակնեան վանքում: Ուշադրութեան պիտի առնել այն հանգամանքը որ կային թափառական անապատականներ և երկրէ երկիր պտտողներ. Հայաստան գալիս են զանազան տեղերից, բայց և Հայաստանից էլ գնացողներ լինում են երուսաղէմ. ԺԱ. դարում 3 հայ անապատական գնում են Հռոմ, Իսպանիա, նահատակւում են այդտեղ և կաթոլիկ եկեղեցին նրանց իր սրբերի դասն է կարգում: Այս գնալ գալը օտարների մօտ և օտարների գալը ազդում է փոխադարձաբար անապատականների կեանքի ու մտաւորի վրայ և յղկում նրանց: Անապատականը իւր էութեամբ կոսմոպոլիտ էր եւ նրան ուշագրութեան կենդրոնը ազգն ու լեզուն չէր, այլ հոգեկան աշխարհը, որը բոլոր մարդկանց ի մի ձուլելու սաղմն ունէր իւր մէջ:

Անապատական կեանքի զարգացումը անջատ չէր հասարակական, պետական կեանքի զարգացումից, ուստի և է–Ը. դարերում, արաբական արշաւանքների ժամանակ, երբ հայ երկրում ոչ թէ մի գլխաւոր աւատական իշխան չկար, այլ և մանր իշխաններն էլ ցրուած էին, ժողովուրդը ահ ու սարսափի տակ էր, նրա հետ և եկեղեցիները, վանքերը, որոնցից շա-

տերն աւերուելու էին, անապատական կեանքը բաւական թուլացել էր: Թ. և ԺԱ.րդ դարերում, համեմատաբար խաղաղ ժամանակներում, երբ Հայաստանում երեք մեծ աւատական իշխանութիւնք կային՝ Բագրատունիների, Սիւնեաց և Արծրունիների, վանական–անապատական կեանքը նորից է ծաղկում և այս անգամ չատ աւելի մեծ չափերով:

Ժամանակի մարդկանց մտայնութեան մի արտայայտութիւնն էլ այն էր, որ մարդը իբր խոտ պիտի թառամի և նրա փառքը ծաղկի նման թօթափւի. ուստի լաւ է բարի գործ կատարել և հոգին փրկել: Եւ հայ իշխանների մէջ մի տեսակ մրցութիւն է սկսւում վանքեր շինելու տեսակէտից: Երեք իշխանութիւններում էլ հռչակաւոր վանքեր, անապատներ են շինում. ամենից չատ Սիւնեաց աշխարհում, Վայոց Ձորում և Գեղարքունեաց աշխարհում: Յովհաննէս Դրասխանակերտցի պատմաբանն ասում է, որ Սմբատի ժամանակ խաղաղութիւն կար երկրում «Եւ մեր գլխաւոր նախարարները ապահովուելով և հանգստութիւն ստանալով աւազակներից, շինում են քարից՝ ամուր եկեղեցիներ, ձուլուած կրով, մենաստաններում, աւաններում և այլ տեղեր: Բայց հայկազն իշխաններից ամենից աւելի Վրիւրը և սրա եղբայրներ՝ Սահակ և Վասակ իշխանները, որոնք իրր հայրենական սեպհականութիւն տիրում էին այն երկրներին, որոնք շրջապատում են Գեղամայ ծովը»(*):

Ասողիկը իւր Պ. գրքի Ի. գլխում(**) մանրամասն պատմում է, թէ ի՜նչ նշանաւոր անապատներ

(*) Դրասխանակերտցի, Մակ. 1853 թ. էջ 110:
(**) Ասողիկ, Պետեր. 1885 թ. էջ 171–180:

ու վանքեր են շինւում այդ շրջանում: Աբաս Բագրատունի թագաւորի և Անանիա Մոկացի կաթուղիկոսի ժամանակ «Հայոց աշխարհում ծաղկում և պայծառանում էր կրօնաւորական կարգերի հանդէսը: Եւ չատ տեղերում շինում են եղբայրանոցներ և Քրիստոսի սիրով միաբանածների ժողովարան»: Յիշատակում են հետևեալ նշանաւոր վանքերն ու անապատները. Կամրջաձորի մեծահռչակ ուխտը Արշարունիքում, ուր հաւաքւում են 300 ճգնաւորներ. Հռոմոսի վանքը Շիրակում, որն աչքի էր ընկնում իւր ողորմածասիրութեամբ. Ռշտունիքում Նարեկայ վանքը «Բազմազարդ, պաշտօնապայծառ երգեցողներով եւ գրական դիտողներով». Ալաճոյի վանքը Դերջանում, ուր «Ցայգատարած բազկատարածութեամբ, արցունք թափելով, ողբալով ժողովւում են արդար, ճգնազգեաց, խոնարհազարդ վայելչութեամբ զարդարուած մարդիկ, ճաշակելու կոզմից՝ չճաշակող, օրական մի անգամ ուտող, չրով զովացող, չաբաթ ու կիւրակի և քառասնորդի ժամանակ չճաշակող»: Կարբերդում Մովսէսի վանքը, Կարնում Ննջուց վանքը, Շիրակում՝ Դպրեվանքը, Վայոց Ձորում՝ Ցախաց Քարը: Աչոտ Ողորմածի ժամանակ Սևորդեաց աշխարհում շինում են կրօնաստաններ և ճգնատեղիներ. նշանաւորներն են՝ Հաղբատ և Սանահին: Բասենում Սկսիգոմս վանքը, որ յետոյ կոչւում է Յովհաննու վանք Շիրանեաց լերան ստորոտում: Նիպ գաւառում՝ Թեղինիոսի անապատը. Արշարունիքում Շիրիմ վանքը. Աբբասի ծայրը առանձնանում է Թրին վանքը:

Ըստ Օրբէլեանի(*) Ստեփաննոս Սիւնեաց եպիս-

(*) Օրբէլեան, Տփխիս, 1910 թ. էջ 130, և չրկ.:

կոպոսը է. գարում չինում է Մաքինեաց վանքը, որը կոչւում էր «Մեծ մայրաքաղաք», որի համար ասուած է «համբառատենչ և մեծասքանչ հանդիսարան, հրեշտակերամ կրօնաստան, սուրբ և աստուածարնակ առաքինաստան Մաքինեցւոց, աստուածազգեաց և սեռովբէատեսիլ հարանց հայրն Սաղոմ, որ էր էղանիմոս մեծ ուխտին, որ պայծառանայր յայնմ ժամանակի մեծամեծ հրաշիւք և անտանելի խստամբեր վարուք»: Մաքինեաց վանքը նշանաւոր էր իւր ճգնական կեանքի և յատկապէս օրինակելի աստուածպաշտութեան տեսակէտից, մինչ այն աստիճան, որ Ներսէս Շնորհալին, իւր ժամանակ, երբ կարգի էր բերում ժամակարգութիւնը, բերել է տալիս Մաքինեցոց ուխտի աստուածպաշտութեան կարգը և այդ հիմք ընդունելով, կանոնաւորում:

Աւելի հռչակաւոր էր Սիւնեաց երկրում Տաթևի վարդապետարանը, «որ էր գլուխ բոլոր հայ գիտուններին և ինչպէս ամենացիք հռոմէացիների և յոյների մէջ ճոխացած էին և իմաստութեան մայր կոչուած Բսպանացոց աշխարհում, լատին և հելլէն դպրութեամբ, այնպէս էլ սոքա Թորգոմայ տան մէջ Հայոց աշխարհում»: Տաթևի վանահայր Սաղմօնը «գիւաց հալածող» էր և ամեն տեսակ հիւանդութիւններ ողջացնող: Տաթևում Թ. դարում 500ի չափ եղբայրներ կային. կոչւում էր նոյնպէս «Մեծ մայրաքաղաք». վանքը «լի էր ծովամտոյց երաժշտական երգերի փիլիսոփաներով, ճոխ էր և վարժարանը վարդապետական կրթութեամբ. կային նաև նկարիչներ և գրողներ անհամար»(*):

(*) Տաթևի մասին մանրամասնութիւնները տե՛ս Օրբէլեան, էջ 201–234:

Վայոց Ձորում վաղ ժամանակներից խոտաճաքակ և խարազանազգեստ մարդիկ էին ապրում. մըշտընջենաւոր ազօթք ունէին. միայն կիւրակի օրերը հաւաքւում էին հաղորդելու: Ոմանք ծերպերում էին ապրում, ոմանք չատ նեղ խուղերում, ոմանք բացօթեայ լուռ և անմռունչ, քիչ հունտ և բանջար էին գործածում: Սրանց վանքն էր Խոտակերաց կամ Ջարկովի վանքը: Այդտեղ Մխիթար հայրը «բոլոր առաքինիների բազմութիւնից էլ անցել էր (իւր առաքինութեամբ) և վայրենի գազաններին՝ գայլերին, արջերին ս. եկեղեցումն հնազանդութեան էր բերում և վանքին ծառայեցնում»:

Սէքի էր ընկնում Սմաղու Նորավանքը: Սոփիա տիկինը Վայոց Ձորում չինում է Գնդէ վանքը (Գընդէվազ) «Վայոց Ձորը առանց ակի մատանի էր. չինեցի այս (վանքը) և իբր ակ դրի նրա վրայ»(*):

Վայոց Ձորում Սիոն լերան վրայ հռչակաւոր էր Թանահատի վանքը, Ը. դարում. «պայծառանում էր սուրբ և երկնահրաշ կարգերով գերափառ և հռչակաւոր Թանահատի վանքի միաբանութիւնը: Այդտեղ սահմանաւոր էին, միշտ պաշտամունքը կատարող, հեռու ամեն տեսակ փափուկ կերակուրներից, միայն աշտուճ հաց և լոկ ջրով էին իրենց կարիքը հոգում և այն էլ օրական մի անգամ՝ երեկոյեան. լռիկ էին, հեզ. իբր անչէջ կանթեղներ վառւում էին գիշեր և ցերեկ»: Միայն սպասաւորները իրաւունք ունէին վանքի պարսպից դուրս գալ, իւղ, պանիր, թան չէին գործածում, ուստի և Թանահատի վանք է կոչւել(**):

(*) Սիսական, Ալիշանի, էջ 248–251:
(**) Տե՛ս Օրբէլեան, էջ 166–183:

Գեղարքունեաց աշխարհում աչքի էր ընկնում Սևանայ անապատը, որ հիմնել էր Մաշտոց վանահօր (ապագայում կաթողիկոս) և Սիւնեաց Վասակ Գաբուռն իշխանի կնոջ Մարիամ իշխանուհու ձեռքով։ Ըստ Դրասխանակերտցու «Այդ ժամանակ (Թ.դդ դարում) փայլատակելով պայծառանում էր Աստծու սուրբ մարդը՝ Մաշտոցը Սևան կղզում, որը Աստուծոյ փառքը անշիջանելի լուսով իւր մէջ նկատւում էր, աստուածային ծառայմամբ և սրբափայլ կենդանի կրօնով և հոգու զօրութեամբ անտեսանելին տեսական աչքով տեսնում էր, ուստի և բոլորի աչքը նրան էր ուղղուած»(*)։ Գեղարքունիքում նշանաւոր էին նաև Վանէվանուց, Շողագայ վանքերը։

Սիւնեաց երկրում կային՝ Կնէվանք, Վաղատինէ վանք, Շատինեաց վանք — մշտապաշտօնները, Փոզորեաց վանք, Վահանա վանք, Տանձափարախ, Լուսակէ վանք, Լհէ վանք, Թադէի վանք, Կառափաձորոյ վանք, Միծառայ վանք, Նաչատրոյ վանք, և այլն։

Բագրատունեաց երկրում Գրիգոր Մամիկոնեան իշխանը շինում է Եղվարդի արևելեան կողմը «Նուիրանաց ուխտի կրօնաւորական դասուց»։ Սմբատ Շահնշահի ժամանակ շինւում է Մարմաշէնը. Սմբատ Մագիստրոսը շինում է Բագնայրի վանքը, Վեստ Սարգիսը Խծկոնքը(**)։

Դերջան գաւառում, Մանիա այրի մօտ Յովհաննէս կաթողիկոս Դրասխանակերտցին շրջելիս տեսնում է «քարանձաւների ծորձորներում և ամուր տեղերում

(*) Պատմութիւն Սեւանայ, Մանուէլ վ. Կիւմիւշխանեցու, էջ 18-19։

(**) Այրարատում եղած վանքերի ցուցակը տե՛ս «Արարատ», 1873 թ., էջ 364-66։

կուսակրօն և խարազանազգեստ մարդկանց, գետնափոր վրայ քնող, բոկոտն, մշտամռունչ աղօթք և աղերսալի պաղատանք անող»(*)։ Սրանք միասին չէին ապրում այլ ցան ու ցրիւ. լեռների ստորոտներում և իւրեանց աշխատանքով իւրեանց մարմնի պէտքերը հոգում էին։

Ընդհանրապէս հայ երկիրը անապատներով ու վանքերով լցւում է. անապատականների թիւը վանքերում 100–500ի էր հասնում. մեծ մասամբ մշտապաշտօն էին, այսինքն անդադար աղօթողներ. իրենց կենցաղով գրեթէ ոչնչով եգիպտոսի անապատականից յետ չէին մնում։ Անապատների և վանքերի զարգացնալուն նպաստում են հայ իշխանները, ունևոր դասը։ Իշխանների մէջ կար մրցութիւն քաղաքական դերակշռութիւն ձեռք բերելու երկրում և աշխատում էին երկիրը վանքերով հարստացնել, դիտութիւնը զարգացնել, հայոց կաթողիկոսին, որը այդ շրջանում աստանդական էր դարձել, գրաւել և իրենց հեղինակութիւնը մեծացնել։

Վանքերի վրայ եղած արձանագրութիւններից երևում է, որքա՜ն շատ նէբրներ են տւել իշխանները և ունևորը, իրենց հոգու փրկութեան համար, խնդրել, որ պատարագներ անեն 3–4 օրից սկսած մինչև 40–50 օր։ Իշխանների հովանաւորութիւնն էին վայելում վանքերը և ծաղկում(**)։ Վանքերից շատերում գրականութիւնը՝ աստուածաբանական, պատմական, մեկնաբանական, զարգանում էր։ Վերոյիշ-

(*) Դրասխանակերտցի, էջ 156։

(**) Արձանագրութիւնները տե՛ս Ալիշանի «Այրարատ», «Շիրակ», «Սիսական», Շահխաթունեանի, Սարգիս եպս.ի նոյնին, ժողով. երկերը։

եալ հայ պատմաբանները և գեռ չատ չատերը այդ վանքերից որևէ մէկում էին սովորել:

Անապատական կեանքը ոչ միայն անապատ քաշուող չքաւոր դասի մարդկանց էր գրաւում, որոնց մէջ էլ կային անշուշտ ոչ անմիջապէս կրօնական, այլ որևէ հասարակական–տնտեսական գրութիւնից փախչողներ, այլ նաև հայ իշխաններին, հայոց կաթողիկոսներին: Շատերը, Արիստակէս կաթողիկոսը, Ներսէս Մեծը, Սահակ Պարթևը, Յովհան Օձնեցին, Սեւանայ Մաշտոց կաթողիկոսը, Զրեակ անապատից Սողոմոն կաթողիկոսը, երբեմն անապատական կեանք են վարել: Այս հանգամանքն էլ նպաստում էր, որ հայ անապատականի վարկը բարձրանայ, հայ անապատը ուշադրութեան առնվի:

Ճշմարիտ է հայ վերոյիշեալ պատմաբաններից վերցուած հատուածների մէջ կայ ժամանակի արատական ուժի չափազանցութիւնները, խճողուածները, կայ և այն հանգամանքը, որ դրանցից ոմանք ազգապրական, ցեղական կապի պատճառով իրենց երկրի, իրենց ազգականի մասին կողմնապահութեամբ են գրել, արդարև արձանագրութիւններն էլ ցոյց են տալիս, որ յիրաւի այդ շրջանում անապատական կեանքը, վանքերը զարգանում է աւելի, քան երբևէ այնուհետև նա ունենում է:

Հայ անապատականները ազօթքով, կենցաղով չէին տարբերւում արևելեան անապատականներից, բացի տեղական մանրամասնութիւններից: Այդ շրջանում օտար երկրից եկած անապատականներ չեն յիշւում պատմագրերում. զուտ հայաբնակ էին անապատները: Այս անապատներում էլ կային «ծեր»եր և երիտասարդներ. որտեղ էլ երիտասարդները գնում էին

հռչակաւորների մօտ ճգնութիւն սովորել ու խնդրում էին, որ իրենց ազօթել սովորեցնեն: Եւ ահա պարզ է, թէ ինչո՞ւ Գրիգոր Նարեկացին իւր նշանաւոր Ողբերգութեան մատեանի սկզբում գրում է «ի խնդրոյ հարց միանձանց և բազմաց անապատականց»: Երբ մի անապատում միայն 500, միւսում 300 անապատական կար, — իսկ այդպիսիների թիւը չատ էր Հայաստանում — պարզ է, որ «բազում» անապատականներ կային: Հայ երկրում անապատական կեանքի ծաղկում, եթէ կարելի է ասել «ոսկեդարը» այդ շրջանն էր, երբ գրել է և հռչակաւոր «Նարեկ»ը:

Գլ. Բ.

«Նարեկ»ի ձախընթացը եւ Գրիգոր Նարեկացի։

1.— Մինչև հոգեչունչ «Նարեկ»ի ողբերգութեան գրութիւնը արդէն անցել էր 600 տարի՝ հայ ազնապատական կեանքը Հայաստանում հաստատուելուց յետոյ։ Այդ կեանքը կազմակերպւել, խորացել ու ընդարձակւել էր. Ներսէս Մեծը Աշխէշատի ժողովում վանական կեանքի համար կանոններ էր սահմանել. չինւել էին մեծ անապատներ. ուսումը շատ տեղերում պարտադիր էր դարձել. յառաջ էին եկել հրաշակաւոր վարդապետներ, որոնք լինքնուրոյն ու թարգմանական գրուածքներ էին արտադրել կրօնական-պատմական, փիլիսոփայական բովանդակութեամբ։ Այդ գրականութեան մէջ կային յատկապէս անապատականին վերաբերողներ էս, ուր որոշւում էին անապատականի կենցաղը, աղօթքը։ Ձեռագրերում ամփոփուած այդ գրականութիւնը վանքերում կարդացւում էր. անապատականը դրանից ստանում էր իւր մտաւոր սնունդը։

Բազմաթիւ են այդ ուղղութեամբ գրուածքները, և դրանց վերլուծելն ու միատմի թւելը այստեղ հրաշարաւոր չէ. մի քանի նմոյշներն էլ բաւական են գաղափար կազմելու, թէ ի՞նչ սնունդ էր տրւում հայ անապատականին։ Ահա օրինակ եղիշէի «Բան խրատու յաղագս միանձանց» աշխատութիւնը(*) — «Միանձ-

(*) Մատենագրութիւնք եղիշէի, Վենետիկ, 1838 թ., էջ 213-19։

ները իրենց կամքով աշխարհից հեռանում են, որովհետև դրանց համոզմունքով աշխարհը լի է «ամենայն չարիքներով». հեռանում են անապատ վայրերի խորշերը և ստորոտները. ապրում են երկու երկու կամ երեք երեք կամ բազմութեամբ, ունին փոքր խուց, խոտեղէն անկողին, շորերը գծուծ են, «կողոքս ամարայնի և թեզանաւորս ձմերայնի, արկանեն և աղաբողոն մեկնաւորս»։ Աչքերը գետին ձգած են մանպալիս. նայում են ոտքերի մատերին, նստում են աջ ձեռքը ծնօտին, ձախը կրծքին և այսպէս լարում են իրենց զգայարանները։ Ամբողջ օրը փառաբանում են վեցթևեան սերովբէների նման Աւարչին. ուտում են, որ չքաղցեն, և խմում են, որ չծարաւեն։ Հաց, բանջար և անձրևի ջուր. ահա նրանց կերակուրը։ Ձերեկը չեն ուտում, այլ գիշերը, երբ բոլոր աստղերը երևում են երկնքում. ուտում են ասելով՝ «Ի խաւարային ժամուս զխաւարային կերակուր խաւարային մարմնոյս տացուք»։ Ծերերը ջերմ ջուր են խմում. բոլորը միասին երգում են. առաջնորդը ձայնով սկսում է, միւսներն էլ նրա հետ յարմարւում են։ Առաւօտեան մինչև աղօթքը գիրք են կարդում, ամանք էլ մեկնութեամբ են զբաղւում։

Լուսաւորչին վերագրուած Յաճախապատում ճառերի ԻԳ. գլխում նոյնպէս վանականներին խրատ է տրւում. նկարագրւում է թէ վանքում ի՞նչ պաշտօններ կան և ի՞նչպէս պիտի կատարել։ Պրատի խմաստն այն է, որ ամեն կրօնաւոր հարկ եղած ժամանակ կարողանայ ասել «Այն օրից, երբ մենք մեզ Աստծուն ենք ընծայել, մարմնի և մտքի ամենատեսակ կամքը խափանել ենք և մեր անձը տւել ենք նախ Աստծու ծառայութեան և ապա առաջնորդների հնազանդութեան,

Աստծու պատուիրանի համաձայն»: Ուշագրաւ է Թա-
թուլ ճգնաւորի խրատը(*), որն ասկետական խստա-
պահանջութիւն չունի, աւելի մեղմ քրիստոնէական
ոգու արտայայտութիւն է խրատում, ի միջի այլոց
ասուած է՝ «Մանուկներին վարժեցրու հնազանդու-
թեան և ապաշխարութեան. ծերերին սաղմոսերգու-
թեան և ձեռագործի և մանուկներին խրատ տալու:
Հոգևոր առաջնորդը աստուածային հուր է, լուսաւո-
րիչ, մաքրող և տաքացնող. ապականացնող ախտերը
ցամաքեցնող, կրօնաւորական ճգնութեամբ քննում է,
իբրև քովում մաքրուած անաղարտ ոսկի՝ եղբայրնե-
րին Աստծուն է նվիրում սրբութեամբ, լինքն էլ թա-
գաւորում է տասը քաղաքների վրայ: Միսն ու գի-
նին կրօնաւորներին առելի չէ, այլ կարող են ճաշա-
կել նրանք, որոնք կարիք ունին «Ով հիւանդանում է
քնական կարգերը թուլացրու և սովորական բժշկական
դարմանը համաձայն պէտքերի առատացրու: Պէտք է
ժուժկալել, որքան կարելի է, յուսով աշխատիլ, հա-
ւատով աղօթել, զոհութեամբ ճաշակել: Մ'րդեակ թող
քո բերանում նզովք չլինի. թէև եղբայր կամ որդի,
մի մահճում չքնեն. ով սրտում խէթ ունի չպէտք է
աղօթէ, ոչ ուտէ և ոչ քնէ: — Որդեակ, եղբայրներիդ
հետ իշխանութեամբ մի' վարուիր, և այն ինչ որ դու
չես կարող անել՝ մի պահանջիր եղբայրներիդ...»:

Թ.—Ժ.րդ դարերում գրեթէ նոյն կարգերն են
իշխում, գեռ աւելի խստացրած: Այդ ժամանակ էլ
միանձը անձնական սեպհականութիւն չունէր, պէտք
է հասարակաց սեղանից ճաշակէր, ոչ միրգ, ոչ գա-
ւար խոտ ուտէր, այլ այն, ինչ որ հրամայուած է Աս-

(*) Վարք Սրբոց Լիակատար, հատ. Ի., էջ 26-32:

տծու հրամանի համաձայն պիտի գործել. գիշեր և
ցերեկ սաղմոս ասել և միշտ փառաբանել: Միանձ-
ները խաչակցեալ էին Քրիստոսին. քաղցով, ծարա-
ւով և հանապազամեռիկ կեանքով էին քաղաքավա-
րում այդ ժամանակ(*):

Միանձանց համար խրատ ունեցել է Նարեկացու
ուսուցիչ Անանիա Նարեկացին. իւր ոճով, մտքով
նման մեծ անապատականների խրատներին: Նարեկի
վանքում էլ նոյն ճգնական կեանքն էր իշխում և
տեղին առաջնորդը հարկ էր համարում այդ առթիւ
խրատ գրել: Ճգնական կեանքը զարգացած էր առ
հասարակ եւ Նարեկացին էլ ապրում էր այդպիսի
կեանքով աչքի ընկնող մի վանքում և ուսանում էր
նոյն տրամադրութիւնն ունեցող ուսուցչի մօտ(**):

Ինքնուրոյն գրուածքներից աւելի շատ էր թարգ-
մանականը, որ հայ վանականների ձեռքով էր կա-
տարուում: Մինչև Ժ.րդ դարը արդէն թարգմանուած
էին՝ Պօղոս անապատականի վարքը, Պօղ միայնակեցի
պատմութիւնը, Մակար եգիպտացու պատմութիւնը,
Յովհան Պրննեցունը, Անտոն անապատականի վարքը,
Իգնատիոսի վկայութիւնը, Ապողոնի վկայութիւնը,
եգիպտացի հայրերի պատմութիւնը, Ս. Թեկղէի պատ-
մութիւնը, Գուրիասի և Շմաւոնի վկայութիւնը, Թեզ-
բայեցի Յովհաննէսի վարքը, Մարութայի արևելեան
վկաների պատմութիւնը: Սրբերի վարքերը առաջին
անգամ հաւաքում է Մաքինեցոց վանքի առաջնորդ
«Հարանց հայր» կոչուող Սողոմոնը, 747–750 թուերին,

(*) Ասոլիկ, էջ 176-77:

(**) Անանիա Նարեկացու խրատը հրատարակուած չէ.
ձեռ. Մատենադարանի Ձեռ.:

և կազմում է «Տօնական», որը յետոյ ընդարձակւում է և դառնում Յայսմաւուրք: Գրւում են և հայ սըրբերի կեանքը՝ Լուսաւորչի, Ներսէս Մեծի, Օձնեցու, Սեանայ Մաշտոցի. վերջինիս պատմութիւնը գրում է իւր աշակերտ Ստեփանոս վանականը:

Բացի վկայաբանութիւններից թարգմանում են նաև նշանաւոր հայրերի գրուածքները, խրատները և աղօթքները: Թարգմանում են Եփրեմ խուրին ասորու, Բարսեղ կեսարացու, Կիւրեղ Աղէքսանդրացու, Կիւրեղ Երուսաղէմացու, Յովհան Ոսկեբերանի գըրուածքները: Այս երկերը ձեռագրներով տարածում են վանքերում ու նոյնպէս հայ անապատականի համար ուղեցոյց, օրինակ դառնում:

Այդ օտար մեծ անապատականների աղօթքները, խրատները իրենց ոգւով, ոճով, գաղափարներով նման են հայ անապատականների գրուածքներին. նիւթը նոյնն է, նպատակը նոյնը. ուստի և հայ անապատականին էս հարազատ էին դրանք: Դրանց մէջ բաւական տարածուածը Եփրեմ ասորու «Դիւրք աղօթից»ն էր, որը երբեմն էլ Նարեկացու Ողբերգութեան հետ հրատարակւել է, որովհետև գաղափարի ու ոճի նմանութիւն ունի: Եփրեմի աղօթքն էլ «Խօսք ընդ Աստուածոյ» է, ինչպէս հեղինակն է գրել, որից կը բերեմ մի երկու օրինակ գաղափար տալու, թէ որքան նման կողմեր ունի այդ աղօթագրքին Նարեկացու «Ողբերգութեան մատեան»ի հետ: «Ինձ լքելոյս ո՛ղորմեա՛». «Ինձ եղկելոյս օգնեա՛». «Ինձ խաւարելոյս ճառագայթեա՛». «Ինձ մոլորելոյս առաջնորդեա՛. որ լի եմ մեղօք և անթիւ յանցանօք. և ի յորձանս անօրէնութեան տարուբերեալ ծփիմ» (Բ). — «Մի՛ դատեր և մի՛ դատապարտեր զիս, Տէր, ըստ անբաւ

զազիր գործոց իմոց. և մի՛ կացուսցես զիս ընդ այլսն, որք զայրացուցին զքեզ. այլ ընդ փառաւորեալսն փառաւորեա՛ և ընդ պսակելոցն պսակեա՛ և ընդ բերկրելոցն ուրախացո՛» (Թ). — «Փրկեա զիս Տէր ի գաղտնաձիգ նետից սատանայի, որ բոլոր մեքենայիւք պատեալ պաշարէ զիս: Սւաբ առեալ զմիտս իմ վարէ ի գերութիւն՝ ցանկութեան մեղաց առնելով ծաղր և այպն կատականաց թշնամեաց» (ԿԱ) (*):

Նեղոսի խրատները ամենից չատ տարածուած էին և վանահայրերի, առաջնորդների համար ուղեցոյց: Նեղոսը այդ խրատներում ասում է. «Լաւ է յստակ խորհրդով քնել, քան պիղծ խորհրդով աղօթք անել և վարձ չստանալ: Զօրացիր Քրիստոսի չարչարանքներով և նրա համար համբերիր: Արցունքը մեղքի լւացումն է և յոգւոց հանելը՝ ապաշխարութիւն: Կրօնաւորը պէտք է տրտում և տխուր լինի. իբրև Աստծու սգաւոր. իսկ ով զւարթ է և ծիծաղում է՝ նա Քրիստոսի խաչը չի վերցրել: Մարմինդ նեղի՛ր գիտութիւնով և գրոց վկայութիւններով, որովհետև կան առաքինութիւններ, որոնք Աստծուն հաճոյ չեն և չարի խաբեբայութեան հետևանք են: Երբ աղօթում ես՝ իմացիր ո՞ւմ հետ ես խօսում և ի՞նչ ես խնդրում. խորհուրդներդ հաւաքիր և այնպէս աղօթիր» (**):

Նարեկացու Ողբերգութեան նմանութիւն ունի և Մանդակունու «Վանի խոստովանութեան» ճառի հետևեալ կտորը. «Զի խիղճ յանցանաց իմոց հեղձուցանէ զիս հանապազ, և չարիք իմ չարչարեն զիս յարաժամ, հայելով յանթիւ մեղաց իմոց բազմու-

(*) Դիւրք աղօթից, ասացեալ Եփրեմի. Պոլիս, 1807 թ.:
(**) Հարանց վարք, 1720 թ., Պոլիս, էջ 520-524:

թիւն, և յահեղ ախտից իմոց անօրէնութիւն. որ միշտ զմարմինս իմ մաշէ և զոսկերս իմ խարշատէ, և զսիրտ իմ գելոյ, և զորովայն իմ գալարէ, և անձն իմ դողայ երկիւղիւ, և զամենայն անդամս իմ հալէ հանապազ: Զի առ ցաւս վիրաց իմոց վարանիմ, և միտք իմ ափշեալ յամառին, զի գիտեմ զբարին, և առնեմ զչար. իմանամ զարդարութիւն, խօսիմ զուղղութիւն, և խորհիմ զանիրաւութիւն. երևիմ սրբութիւն, և մերձենամ յաղտեղութիւն. ճանաչեմ զճշմարտութիւն, և յարիմ ի մոլորութիւն. տեսանեմ զլոյսն, և խաւարին փափագիմ»(*):

Նման ոգու նմանող է և «Ապաշխարութիւն Որոգինէի վարդապետի հանդերձ երկամբք և ցաւօք» աղօթքը: Ըստ աւանդութեան Որոգինէսը մի անգամ ուրացել էր քրիստոնէութիւնը, հեթանոս աստուածներին զոհել, ապա ապաշխարել էր և այդ աղօթքը գրել. նա ողբում է — «Վայ է ինձ, մայր իմ, թէ ո՞րպէս զով ոք ծնար զիս. վայ ինձ զի այր օրինաւոր յանօրէնութեան որոշեալ, զի այր բարեպաշտ յամբարշտութիւն կործանեալ, զի այր արդար ի մոլորութիւն փոխեալ, վայ ինձ, զի որդիս արքայութեան՝ որդի գեհենին եղեալ, վայ ինձ, զի այրս քահանայապետ՝ ի պղծութեան գտեալ. վայ ինձ զի այրս մեծավայելուչ՝ անվայելչական բարբառեալ. վայ ինձ, զի այրս պանծալի յանկարծակի ի բազմաց պարառեալ ձաղեցաւ. վայ ինձ, զի այրս պարագլուխ արդարոց ի պղծոց հեղձամղձուկ եղեալ . . .»(**):

(*) Ճառք Յովհ. Մանդակունւոյ, Վենետիկ, 1836 թ.:

(**) «Արարատ», 1888 թ., էջ 100-105, համեմատել Նարեկի ՀԲ. գլխի հետ:

Հայ եկեղեցու ժամերգութիւնն էլ ապաշխարութեան աղօթքներով լի է. մանաւանդ որ ամեն օր ութ կանոն սաղմոսը կարդացւում էր ու հայ վանականի, անապատականի ականջին չարունակ հնչւում էր իւր մեղաւոր լինելու և ապաշխարելու գաղափարները: Մեծի պահոց ապաշխարութեան օրհնութիւնները մինչև ժ. դդ. դարը արդէն կային և դրանց գաղափարները ոչ պակաս անապատականի հոգուն հարազատ էին. օրինակ, «Ծով կենցաղոյս հանապազ զիս ալէկոծէ: Մրրկեալ ալիք թշնամին լինձ յարուցանէ: Նաւապետ բարի, լեր անձին իմոյ ապաւէն»(*) կամ «Ցամենայն ժամ աղաչանք իմ այս են. ի մեղաց իմոց սուրբ արա՛ զիս Տէր: Ցանցանաց իմոց զարհուրի սիրտ իմ. աղաչեմ զքեզ թող լինձ Տէր: Արտասուաց իմոց մի լռեր Տէր, զի պանդուխտ եմ ես յանցաւոր երկրի»(**):

Մեր հին ժամերգութեանց մէջ բաւական աղօթքներ ու քարոզներ կան զուտ ապաշխարութեան նուիրուած և անապատականի սրտին մօտ, անապատականի հոգուն հարազատ: Երկար ժամանակ հայ անապատներում ժամերգութիւնը եղել է երկար, սաղմոսերգութեամբ հարուստ և «Մեղա»ն ամեն օր առաւօտները ասել է(***): Անապատականի յարկը մեծ է եղել հայ եկեղեցում և նրա համար եկեղեցական աղօթքները մի կողմից անապատականի ոգու կնիքն ունին, միւս կողմից այդ աղօթքներում ու քարոզ-

(*) Համեմատել «Նարեկի» Իե. գլխի հետ:

(**) Շարական, 1888 թ., էջմ., էջ 90 և 92:

(***) Անապատականի աղօթքների ժամերի մանրամասնութիւնները տե՛ս Պատմութիւն Սեւանայ, Մանուէլ վ. Կիւմիշխանցու, 1830 թ.:

ներում աղօթում է անապատականների համար: Անապատականի ոգու կնիք ունին այժմ էլ դեռ եկեղեցում ասող «Վասն ի գիշերի եւ ի տունջեան եւ յամենայն ժամու խօսիլ մեզ զբան Տեառն» քարոզը և «ի գիշերի և ի տունջեան և յամենայն ժամու զքեզ աղաչեմք և ի քէն խնդրեմք մարդասէր Տէր» աղօթքը: «Վասն գտանելոյ» քարոզի մէջ ասած է «Վասն որք ի լերինս յայրս և ի փապարս բնակեալք են սուրբ հարքն մեր՝ զՏէր աղաչեսցուք: Վասն որք սաղմոսիւք և օրհնութեամբ կատարեն զամենայն ժամանակս իւրեանց՝ զՏէր աղաչեսցուք»(*):

Ինչպէս հայ, այնպէս էլ օտար մեծ անապատականները՝ ընդունելել են հայ եկեղեցու սրբերի շարքում և նրանց համար ևս յատուկ տօներ են կատարել: Ընդունուածներն են՝ Անտոն, Տրիփոն, Պարսամ և Ոնոփրիոս, Սիմէոն Սիւնակեաց, Թաթուլ, Վարոս, Թումաս, Անտոն և Կրօնիդէս, եօթը խոտաճարակները, Մինաս Եգիպտացի, Ռոմանոս միայնակեաց, Պօղոս, Պօղ, Մակար, Եւագր, Յովհան Գբնեցի, Յոհան կարճահասակ, Նեղոս, Աբսէն, Սիսիան, Դանիէլ, Սրապիոն, Մակար, Պիմէն, Յոհան և Ալէքսիանոս կամաւոր աղքատներ, Նաև Մարիանայ, Եւփիմէ, Քրիստինէ, Շուշան, Հռիփսիմեան, Գայիանեան կոյսեր ևն.:

Ամենօրեայ ժամերգութեան մէջ անապատներում ամեն օր, այժմ Մեծի պահոց օրերին, ասւել է «Ա-բեւագալի» ժամ, ուր կան երգեր և աղօթքներ, քարոզներ յատկապէս ճգնաւորներին նւիրւած(**): Այդ

(*) Ատենի ժամագիրք, 1891 թ., վաղարշապատ, էջք 39-41:

(**) Տե՛ս ժամագիրք Ատենի, 1891 թ., վաղարշապատ, էջք 102-108:

երգերում և աղօթքներում ճգնաւորները գովւում են իբրև «գովելիք աչխարհի և վերին պետութեանցն բաղձալիք», ճգնաւորների աղօթքները համարւում են աղբիւր ու միջոց որ Տէրը այդ աղօթքների չնորհիւ ազատէ մեղաւորներին: Ամեն սրբի տօնի ասւում է «Սուրբ ճգնաւորքն աղաչեսցուք զՏէր» քարոզը, որովհետև ճգնաւորի միջնորդութիւնը Աստծու առաջ մեծ յարգ է ունեցել աղօթողի աչքում: Եկեղեցում ճգնաւորի մասին այն գաղափարն էր տարածուած, որ նա զօրաւոր է, կենդանի է Աստծու առաջ և նրա աղօթքը կը փրկէ նրան՝ ով ճգնաւորին կը դիմէ հաւատով. «Ժամամուտներում», «ալէլուա»ներում ևս ամենօրեայ հասարակաց աստուածպաշտութեան մէջ ճգնաւորներին յատուկ կտորներ են նւիրուած:

Շարականներում առաւել ևս ճգնաւորները ուշադրութեան են առնուած ու գոհաբանուած: Անտոն անապատականին նւիրուած է յատուկ «Կանոն», ամբողջ օրհնութիւն և հարց. նոյնպէս կանոն ունի նաև Լուսաւորիչը, ուր նա գովւում է նաև իբր ճգնաւոր. միւս ճգնաւոր–անապատականներից ոմանք ունին «Մանկունք»ներ, յատուկ իրենց նւիրուած: Այդ շարականներում — հոգեւոր քնարերգութիւններում — կան գեղեցիկ համեմատութիւններ, այլաբանութիւններ, որոնք հաւատացող ու սիրով լցուած սրտերից բղխած են. Լուսաւորիչը համարւում է «Բարւոնակ ողկուզաբեր», «գարնանաբեր հնչուճն» հարաւային հողմի, յարազարմ դրախտ տնկւած Հայոց աչխարհում, «փչաբեր» արմատից իբր կարմրերփեան վարդ ծաղկեալ: Հայաստանեայց հաւատոյ հայր, ընտրեալ հեղինակ ճգնողական վարքով, Եայլն(*): Անտոն անա-

(*) Տե՛ս Ջամնքալ չարական, 1888 թ., Էջմ., էջ 152-55:

պատականի համար իրեն նուիրուած կանոնում ասւում է, որ նա իւր ճգնութեամբ գերազանցել է մարդկային բնութեանը և նրան հրեշտակները նայելով զարմանում են. նա թշնամու՝ սատանայի դէմ զանազան դժւարութիւններ կրելով պայքարել է. համարւում է նախասկիզբն միանձանց, համեմատւում է եղիայի և Յովհաննէս Մկրտչի հետ. նա եկեղեցու պարծանքն է և հրեշտակաց ուրախութիւնը, ասլն (*):

Միայն վանքերում կարդացուող աղօթքներում, երգուող շարականներում չէ, որ Թ.—Ժ.րդ դարու մարդը, վանականը քրիստոնէութեան համար իւր անձը զոհաբերողի, իրեն չարչարանքի ենթարկողի մասին լսում էր Տօնականում կամ կարդում, այլ եւ կեանքի մէջ նա տեսնում էր, որ շատերը, յանուն նոյն գաղափարի իրենց կեանքն են զոհում, արիւն են թափում, նահատակւում, մարտիրոսութեան պսակ ստանում: Հայ պատմութիւնը աւելի քան հարուստ է նահատակներով՝ սկսած բազմաչարչար Լուսաւորչից: Հայ երկրի դիրքն ու ներքին հասարակական կազմը նրան նահատակների երկիր էր դարձրել: Նահատակներ եղել են անհատական և խմբական, ծեր ու երիտասարդ, տղամարդ և կին: Սրանք ևս հայ եկեղեցում յատուկ ուշադրութեան են առնւել ու դրանց համար տօներ են կատարւել. եկեղեցիներ, մատուռներ են շինւել, մասունքներ են հաւաքւել և սրբացւել. շարականներ են երգւել: Այժմեան շարակնոցում կան ութ ձայնի օրհնութիւններ և հարցեր իրենց սաթօքն նուիրուած նահատակներին, մարտիրոսներին:

Այժմեան հայ Օրացոյցով և Տօնացոյցով, որը

(*) Ձայնքաղ շարական, էջ 31-35:

շատ է կրճատւած և առաջներում աւելի հարուստ է եղել (ինչպէս Յայսմաւուրքն է ցոյց տալիս, կան մօտաւոր հաշուով հետեւեալ քանակութեամբ սրբերի տօներ.

1) Առաքեալներ եւ Քրիստոսի աշակերտներ եւ հետեւողներ՝ 106.
2) Հայրապետներ՝ 738.
3) Եպիսկոպոսներ՝ 13.
4) Քահանաներ՝ 12 և Ոսկեանք ու Ղևոնդեանք.
5) Սարկաւագներ՝ 6.
6) Հրեշտակապետներ՝ 2, և 9 դաս հրեշտակներ.
7) Ճգնաւորներ՝ 38.
8) Թագաւորներ, իշխաններ՝ 9.
9) Մանուկներ՝ 44 և Բեթղեհէմի, Եփեսոսի մանուկներ.
10) Այլ և այլ Սրբեր՝ 1220.
11) Վկաներ՝ 140
12) Կոյսեր՝ 29.
13) Մարգարէներ՝ 24.
14) Նախահայրեր՝ 30.

Ընդամենայն չուրջ 2145 սրբեր այլ և այլ աստիճանների ու մեծութիւնների:

Այս սրբերը, դրանց թւում նահատակները՝ յատկապէս ունեցել են իրենց վարքագրութիւնները, ուր պատմած է, թէ ի՞նչ տանջանքներ, նեղութիւններ են կրել դրանք Քրիստոսի անուան, անանց կեանքին հասնելու համար(*): Այդ վկայաբանութիւններից ևրևում է, որ արիւնը սրբարանն է, սրբագործող ոյժ

(*) Տե՛ս «Վարք Սրբոց» և «Հայոց Նոր Վկաները», Յ. Մանանդեանի և Հ. Ա֊ճառեանի, Վաղարշապատ, 1903 թ.:

ունի. արիւնով կարելի է գնել, ձեռք բերել երկնքի արքայութիւնը: Քրիստոս՝ ինքը արիւնով է փրկել աշխարհը. Քրիստոսի արիւնը և մարմինը ճաշակելով է, որ քրիստոնեան փրկւում է իւր մեղքից: Նահատակն էլ իւր արիւնով է փրկում իւր անձը, միաժամանակ եկեղեցուն: «Քանզի աշխարհս հայոց ի վաղնջուց երաշտացեալ եւ ծարաւի գոյր ցօղոյ արեան մարտիրոսաց, արդ զովացեալ արբեցաւ արեամբ սուրբ»(*): Այսպիսով մի կողմից եկեղեցին հալածանքը, նահատակները համարում է եկեղեցու դժբախտութիւն. աղօթում է, հսկում է կատարում, ամեն քարոզի ու աղօթքի մէջ «կրկին ու կրկին խաղաղութեան համար աղաչենք Տիրոջը»ն է ասում, միւս կողմից նոյն եկեղեցին ցանկանում է որ նահատակները արիւն թափի, որ երկիրը երաշտի չմատնուի:

Ահա ժողովրդական, պարզ, նախնական մարդու իւր աստծուն վերաբերելու միամիտ եղանակի մի օրինակ Յայսմաւուրքից — Մի մարդ ծաղրում է մի քահանայի. քահանան բանադրում է այդ մարդուն. վերջինս ղղջում է, բայց քահանան անողոք է մնում: Առաքեալները երևում են և խնդրում քահանային, որ ներէ և չի ներում. Քրիստոս ինքն էլ, ասում է, չի ներում, վերջը Քրիստոս գալիս է խնդրում քահանային, վերջապէս ղիջում է: Աւելի պարզ, միամիտ յարաբերութիւն ու վերաբերմունք Քրիստոսի և իրեն հաւատացողի մէջ դժւար է պատկերացնել: Նոյնպիսի պարզամիտ, ժողովրդական ոգու արդիւնք խօսակցութիւն է և Յիսուսի ու մի անգամալոյծի խօսակցութիւնը, ուր Յիսուս իբր մի անծանօթ երևում է ու

(*) «Հայոց նոր վկաները», էջմ., 1903 թ., էջ 58:

բաւական սուր, երկար վիճաբանութիւն է ունենում անդամալոյծի հետ: Յիսուս ինքն է քննադատում այն բոլոր հրաչքները և պատմութիւնները, որ գրւել են առաքեալների մասին և ասում է, որ դրանք սուտ են. «Թուղթը չատ, թանաքն էլ բաւական, ինչ ուզեցել են գրել են». անդամալոյծը հակառակում է, և չնորհիւ իւր լեզուանի և կտրուկ լինելուն վերջապէս բժշկւում է(*): Նման ըմբռնման և որոշ ինքնագովեստեան հետևանք է այն պատմութիւնը, որուն համեմատ Յովհաննէս Տայեցի վրդ.ը Երուսաղէմ գնալով Քրիստոսի Գերեզմանի վրայ երեք կանթեղ է դնում՝ հայի, ֆրանգի և հոռոմի անունով և խնդրում Աստծուն թէ որ ազգին Աստուած չատ է սիրում թող նրա կանթեղը առաջ վառուի. հայի կանթեղը առաջ է վառւում, որից երևում է, թէ հայ կրօնը աւելի սիրելի է Աստծուն, քան միւս ազգերինը. այս լինում է 1222 թւին: Կամ նոյն Յայսմաւուրքում պատմում է, որ Գր. Լուսաւորիչը հրեշտակի հետ երկար խօսակցութիւն է ունենում. թէ ի՞նչպէս հրեշտակը մարդու հոգին առնում և հրեշտակը պատմում է, որ մեղաւորին երևում է սրով և դաժան ձևով, հոգին հանում է ցաւով. արդարին այլ ձևով. և երկար բացատրութիւններ կան այդ առթիւ տրւած:

Հրաշապատում պատմութիւններ կան ոչ միայն սրբերի այլ և Յիսուսի կեանքի մասին, որոնք բոլորն էլ Աւետարանից դուրս են և ժողովրդական աւանդութիւններ են: Այսպէս Յիսուսի ծննդեան պատմութեան մէջ մանրամասն նկարագրւում է թէ երկրպագութեան եկած երեք մոգերը ի՞նչ թագաւորներ են

(*) Յայսմաւուրք, էջ 553-556:

Եղել, իրենց հետ ի՞նչքան մարդ են վերցրել։ Ի՞նչ հազարապետներ են բերել, ի՞նչ ընծաներ են տվել Յիսուսին և ի՞նչ խորհուրդ ունին դրանք։ Կայ նաև Աստուածածնի մահուան ամբողջ պատմութիւնը, որ նա տախտակի վրայ իւր պատկերը հանել է, տախտակը դէմքին դնելով (Քրիստոսի գաստառակի պատմութեան նման) որ մեռել է 60 տարեկան հասակում, հէնց նոյն օրը երբ ծնւել է հայրն, Աստուած։

Հրաշքների, սքանչելիքների, մատուցածին՝ երեւակայական պատկերների աշխարհ է միջնադարի մարդու ըմբռնած երկինքը, համեմուած սկոլաստիկ մեկնութիւններով։ Ցայսմաւուրքից ու նահատակների պատմութիւններից պարզ երեւում է, որ միջնադարի հայ քրիստոնէի հոգեկան աշխարհը դևերի, սատանաների, հրեշտակների, սրբերի և սրանց սխրագործութիւնների պատկերներով խճողուած է, որ աշխարհը, երկինքն ու երկիրը հրաշքներով լի են, որ ամեն քայլափոխում մարդը չրջապատուած է իրենից անկախ զօրութիւններով, յատկապէս երկրում սատանաներով, դևերով, որոնք աշխատում են նրան ոչնչացնել, գեհենի մատնել. և մարդը օր ու գիշեր պիտի ապաշխարէ, մաքառէ այդ չար ոյժերի դէմ։ Այս ըմբռնումների ցայտուն օրինակը այն հաւատքն էր, որ տարածուած էր միջին դարում, թէ 1000 թուին Սատանան պիտի աշխարհի տէր դառնայ ու ամեն ինչ գրաւէ. նոյն հաւատքը կար և հայերի մէջ ժ.րդ դարում։ Ահա Ցայսմաւուրքում ի՞նչպէս է նկարագրուում այդ օրը. «Այդ օրը սատանայի արձակման յիշատակի օրն է. իւր բոլոր կապերից, ինչպէս հրեշտակն ասել է Յովհաննէս աւետարանչին, թէ սատանան հազար տարի կը կապւի և նորից կ'արձակւի իւր կապերից»։

Հայոց 478 թուին աւելացնելով 552 տարի ստացւում է 1030 թիւը, 30 տարին Քրիստոսի մկրտութեան տարին է, երբ սատանան չնչում է. ուրեմն 1030 թուին է սատանան արձակւում։ «Այնուհետև ոչ ոք հաստատուն չի կարող մնալ Աստծու պատուիրանին. ոչ հայրապետ, ոչ վարդապետ, ոչ աբեղայ, ոչ կրօնաւոր, ոչ իշխան, ոչ թագաւոր . . .»։ Կրօնաւորները պիտի վանքերը եւ անապատները թողնեն եւ չրջին փողոցներում եւ կանանց մէջ. պիտի ատեն աղօթքը և ժամակարգութիւնը, կրօնաւորութեան կարգը, և սիրեն աշխարհի վարքը, տալ և առնուլ, գնել և ծախել, վարել և վաստակել աշխարհականներից աւելի. ընկերների վրայ մեծաբանեն, փքացող, ծոյլ, դատարկաբան, անձնասէր, չոմոզ, քսուլ լինեն, սատանայի կամքը պիտի աւելի կատարեն քան Աստծունը. իշխանները գինարբուքեամբ կ'անցկացնեն կեանքը. պահքը, աղօթքը կը թուլանայ. ծնողները որդկանց կ'անիծեն. սիրելիի և բարեկամների մէջ գութը կը պակսի։ Իշխանները և առաջնորդները լինելու են ստախօս և կաշառակեր, չարիքը կը չատանայ, իրենց նմաններին կը սկսեն կողոպտել և այլն. և այս ամենը առաջ կը գայ սատանայի և իւր գևերի արձակւելուց»(*)։ Առաքել Դաւրիժեցին սատանայի արձակումը դնում է 1029 թուին և նկարագրում է իւր պատմութեան մէջ այսպէս. «Թուին ՆՀՂ արձակումն սատանայի. Ո. ամն լցեալ եղեն? և ահաւոր նշանք եղեալ բազում. զի երկինք հերձան յարեւելից յարեւմուտն և լոյսն ի վայր հոսեցաւ. և եղև խաւար. և երևեցան աստեղք և ձայնք ահաւորք» (էջ 621, Գ. տպգր. Վաղարշ.)։

(*) Ցայսմաւուրք, էջ 535-53։

Ահա այն տարօրինակ մտայնութիւնը, որ ժողովուրդը, սկոլաստիկ մեկնիչները, կազմել էին միջին դարում՝ ազդուելով ժամանակի հասարակական դըժբախտ վիճակից. լինի այդ բարբարոսների արշաւանքները, թէ հարատարած սով կամ ժանտախտ, երբ հասարակական անզարգացած միտքը պսիխոզի է մատնուում։

Ահա ի՛նչ նախընթաց ունէր Գրիգոր Նարեկացին իւր Ողբերգութիւնը գրելու ժամանակ, որն ապրում էր և գրում ճիշդ այդ «սատանայի արձակման» մասին կանխատեսուած դժբախտ շրջանում. ահա ի՛նչ միջավայր կար հայ երկրում Նարեկացու ժամանակաշրջանում։

Տեսական ու գործնական, գրական ու իրական կեանքը գերազանցօրէն միստիկ էր, որի ցանցերուն մէջ միջնադարի մարդը խճճուած էր, և օրն ի բուն տքնում նրանցից ազատուել։ Դժոխքի արհաւիրքները նրա երևակայութեան մէջ կենդանի նկարուում էին, իւր մեղաւոր լինելու, անվերջ մեղաւոր լինելու զգացումը նրան ճնշում էր ու անընդհատ սաղմոսելու, մեղքերը քաւելու ետևից էր ընկնում նա։ Սմեն տեղ և ամեն ձեռնարկութեան միջոցին սատանայի դէմ էր պայքարում և Աստծու օգնութիւնը խնդրում։ Նարեկացին այս մտայնութեան վերոյիշեալ գրական հոսանքների միջավայրում էր ապրել, սնել և գրել իւր Ողբերգութեան մատեանը։

2. — Արաբական երկարատև արշաւանքներից ու աւերումներից յետոյ Հայաստանը համեմատաբար չունէր քաշում 9-րդ դարի կիսում, երբ կազմել էին մի քանի մանր ֆէօդալական կարգի իշխանութիւններ։ Շի-

րակում՝ Բագրատունիք, իրենց կարսի և ապա Լօռեայ մասերով, Վասպուրականում՝ Արծրունիք, Աղձնեաց իշխանութեան հետ Սիսականում՝ Սիւնեաց իշխանութիւնը. կար և Տայոց Կիւրապաղատը։ Հայաստանի որոշ մասերում էլ կային արաբական ամիրաներ՝ Դանձակում, Դւինում, Մանազկերտում, Նախիջևանում, որոնք կենդրոնի հետ շատ թոյլ յարաբերութիւն ունէին, միմեանց դէմ ինտրիգներ էին լարում. այս հանգամանքը յօգուտ հայ իշխանների էր և նրանք աշխատում էին իրենց դիրքն ու տեղը ամրացնել։

Ժամանակի ոգու համաձայն երկիրը զարգանում էր վանքերով. «Լցեալ և խճողեալ էին կրօնաւորականաց դասուք, մինչ զի և զագարակս և զգեօղս առ բարի նախանձ քահեալ առնէին բնակութիւն կրօնաւորաց»(*)։ Հայաստանի Յունաց բաժնում Ռոմանոս կայսրը վատ էր վարուում. կրօնական միութիւն ստեղծելու ձգտումը Յունաց եկեղեցու հետ դեռ ուժեղ էր և կայսրը ստիպում էր հայ կրօնաւորներին քաղկեդոնիկ դառնալ, ուստի և վերջիններս հարկադրուում են տեղափոխուել Արաբատեան աշխարհը, և տեղաւորուել զանազան վանքերում։

Հայոց հայրապետութիւնը աւելի խառն վիճակ ունէր. Յովհաննէս Դրասխանակերտցուց սկսած էջմիածնի աթոռը որոշ ժամանակ տեղափոխուել էր Աղթամար. ապա Անանիա Մոկացու ժամանակ նորից Այրարատ. սակայն Աղթամարը ինքնագլուխ կաթողիկոսութիւն էր հռչակել։ Աղուանից կաթուղիկոսը և Սիւնեաց մետրոպոլիտը աշխատում էին անկախանալ և էջմիածնի աթոռից բաժանուել։ Անանիա Մո-

(*) Լաստիվերցի, էջ 49։

կացի կաթողիկոսի յաջորդ Վահան և ապա Ստեփանոս Սևանցի կաթողիկոսները այդ ներքին երկպառակութիւնները վերջացնելու խնդրով էին զբաղած։ Այս շրջանում է, որ նորից գլուխ էին բարձրացրել Թոնդրակեցի աղանդաւորները, երբ սրանց առաջնորդն էր «քրձազգեաց, պահեցող և բոկագնաց» Յակովբ եպիսկոպոսը։ Յատկապէս այդ եպիսկոպոսին ի կարգ հրաւիրելու համար Տարօնում երկիցս ժողով են գումարում, բայց ապարդիւն. վերջը կարգալոյծ են անում. աղուէսադրօշմ դնում. Թոնդրակեցոց մի այլ խումբի Մանանաղի գաւառի մի գիւղում հալածում են. գիւղն այրում և վեց վարդապետի էլ աղուէսադրօշմում։ Այս աղանդաւորների չուրջը բաւական զրպրուքիւններ են լինում, բացատրութիւններ են պահանջւում զանազան նշանաւոր վանքերի առաջնորդներից, կասկածելով, որ նրանք էլ կողմնակից են Թոնդրակեցոց։ Կասկածի տակ է ընկնում նաև հաւանօրէն Նարեկի վանքը. Նարեկացու ուսուցիչ Անանիա Նարեկացին ևս, որը գրել է իւր բացատրական թուղթն այդ առթիւ, հաւանօրէն Անանիա Մոկացուն, որին անուանակից է ասում իւր թղթում և բացատրում է, որ ինքն ամենևին նման մտածութեան տէր չէ։

Այս չարժումը առժամապէս կանգ է առնում և վանքերում զարգանում է գրականութիւնը, առաջ են գալիս մի շարք նշանաւոր վարդապետներ, գրողներ, որանցից պէտք է յիշել՝ Խոսրով Անձևացեաց եպիսկոպոս, Անանիա Նարեկացի, Յովհաննէս, Պօղիկարպոս, Սամուէլ Կամրջաձորեցի, Սիմէոն Իչխանաձորցի, Պետրոս Գլաձորցի, Վարդիկ Վանգոյի, Կարմիր Պողնացի, Մովսէս Տարօնցի, Սարգիս Հնձոցի, Յով-

հաննէս Խոտակեր, Կիրակոս գծծակերպ գիտնական, Սարգիս աղուան վայելչաբան, Ղևոնդ, Մեսրոպ վայոց Զորերի վարդապետներ, Յովհաննէս ամուսնացեալ քահանայ, Դաւիթ Մոկաց եպիսկոպոս, Ստեփանոս Ասողիկ, Ուխտանէս պատմիչ, Սարգիս Սևանայ, Յովհաննէս Կոզեռն և այլ վարդապետներ։ Սրանք զանազան պատմական–մեկնաբանական աստուածաբանական երկերով էին աչքի ընկել կամ իրենց ճըգնական օրինակելի կեանքով։

Այս նոյն շրջանին է պատկանում և Գրիգոր Նարեկացին։ Սրա հայրը Անձևացեաց իշխանութեան եպիսկոպոս էր. յայտնի չէ թէ քահանայութիւնից է անցել կրօնաւորութեան, թէ աշխարհական է եղել, յետոյ է մտել վանք։ Խոսրովն ունեցել է երեք որդի՝ որոնցից երկուսին Յովհաննէսին և Գրիգորին Նարեկայ վանքն է ուղարկել ուսանելու, ուր առաջնորդ էր և մեծ վարդապետ Անանիա Նարեկացին, որ յայտնի էր իբր մեծ փիլիսոփայ և խնամի էր Խոսրովին։ Նարեկացու հայրը գրական վաստակներ ունէր, որոնցից են ժամակարգութեան և պատարագի խորհուրդի մեկնութիւնները. Անանիա Նարեկացին էլ նոյնպէս զբաղւում էր գրականութեամբ, որի մասին վերը յիշուել է։

Նարեկացու ծննդավայրի մասին և առհասարակ նրա կեանքի մասին տեղեկութիւններ գրեթէ չկան. նրա ծննդեան ու մահուան թիւն էլ տարբեր են դնում։ Պօղոս Յակովբ պատրիարքը, որը ընդարձակ մեկնել է Նարեկը, ծննդեան թիւը համարում է 986ը, ըստ նրա Գրիգորն ապրել է 33 տարի և վախճանել է 1019 թւին. Օրմանեան պատրիարքը իւր Ազգապատումում այն կարծիքն է յայտնում, որ ծնւած է 951 թւին.

26 տարեկան հասակում աբեղայ է ձեռնադրւում. վախճանում է 1003 թվին. Նարեկը գրում է 1002ին: Ըստ Հ. Գաբրիէլ Աւետիքեանի, որը հմուտ լուսաբանութեամբ երկրորդ անգամ հրատարակել է Նարեկը Վենետիկ, 1827 թվ., Նարեկացին վախճանուած պիտի լինի 1002–1003 թվին, ապրած մօտ 60 տարի, ուրեմն ծնուած 941–943 թուերին, աւելի հաւանականը այս է, ինչպէս Ողբերգութիւնից էլ ընդհանրապէս եւ ըստ է:

Մինչև իւր նշանաւոր աղօթագիրքը գրելը Նարեկացին ունէր և այլ գրուածքներ՝ երգոց երգոյն Սողոմոնի–մեկնութիւնը, Գագիկ Արծրունի իշխանի խնդրանօք գրած. Պատմութիւն Ս. Խաչին Ապարանից հաւանօրէն Դաւիթ Ապարանից եպս.ի խնդրանօք գրած. Ներբողեան ի Ս. Խաչն Աստուածընկալ, ի Ս. Աստուածածինն, ի Ս. Առաքեալսն, ի Ս. Յակովբ Հայրապետն Մծբնայ. գանձեր Հոգւոյն Սրբոյ և եկեղեցւոյ և խաչի(*). նաև այլ և այլ յանգաւոր ոտանաւորներ, տաղեր:

Նարեկացին իւր ճգնական կեանքով, իւր իմաստալի երկերով և մանաւանդ իւր հռչակաւոր «Ողբերգութեան մատեան»ով գառնում է ժամանակի նշանաւոր վարդապետը. ինչպէս Սամուէլ Անեցին է ասում (էջ 103). «Փայլէր իբրև զարեգակն իմաստութեամբ և առաքինութեամբ սուրբ այրն Աստուծոյ Գրիգոր Նարեկացի»: Մահից յետոյ յայտնի չէ ե՞րբ դասւում է սրբերի չարքը. յիշւում է պատարագի ժամանակ ճգնաւորների հետ: Նրա Ողբերգութեան

(*) Տե՛ս Սբ. Հօրն Մերոյ Գ. Նարեկացւոյ երկրորդ մատեան ճառից. Վենետիկ, 1827, հրատ. Հ. Գ. Աւետիքեանի:

մատեանից «Ամենակալ բարերար մարդասէր» կտորը լգ. գլխից մտնում է պատարագի Մորհրդատետրի մէջ և ցայսօր ասւում է. իսկ երբ ծգ. դարում կազմւում է, հաւանօրէն Վանական վարդապետի ձեռօք «Հանգստեան» ժամերգութեան կարգը («Եկեսցէ») այդտեղ գրւում են նոյն Ողբերգութիւնից «Ընկալ քաղցրութեամբ» (Բան ժԲ.). «Որդի Աստուծոյ» (Բան ԽԱ.) և «Աստուած յաւիտենական» (Բան ՂԴ.) գլուխները, որոնք անապատներում յատկապէս ասել են մինչև այսօր էլ:

Այդքան մեծ ու պատուաւոր տեղ է բռնում Նարեկացին հայ եկեղեցում, և բնականաբար իբր սուրբ նրա մասին էլ պէտք է հրաշքներ պատմուէին. և իրօք էլ յիշւում են. օրինակ, որ երբ նրա մօտ են գալիս լինչ որ քննութեան համար (գուցէ և Թոնդրակեցոց աղանդի մասին) վարդապետներ, Նարեկացին ուրբաթ օրը՝ պահքին, իբր յանգէտս, նրանց առաջ է դնում տապակած աղաւնիներ. զարմացած վարդապետների տարակուսանքը Նարեկացին փարատում է նրանով, որ աղաւնիներին պատւիրում է թռչել, և թռչում են: Նարեկացին իւր սքանչացման բոպէին իւր ճգնարանում տեսնում է Աստուածամօրը, Յիսուսին գրկին՝ դիմացի կղզում և ձգտում է դէպի այդ պատկերը «Առ–Տէր». և կղզին կոչւում է Առտէր. նա էլ գևահարի բժշկում է, ևայլն:

Նարեկացին իբր ականաւոր վարդապետ ունէր իւր աշակերտները, որոնց հետ պարապում էր Նարեկի վանքում ժամանակի կրօնական ուսմունքը և իւր ըմբռնած մեկնութիւնները տալով նրանց, ազդելով և իւր ճգնական օրինակելի կեանքով:

Նարեկացին հայերի մէջ տարածուած սուրբն է

և սիրուած է ոչ միայն իւր հայրենի գաւառում այլ նաև այդ գաւառից դուրս։ «Նարեկ»ը Ս. Գրքին հաւասար և գուցէ աւելի սիրուած ու տարածուած աղօթագիրքն է և բժշկարանը, բազմապիսի դեղ ու դարման անողը, Նարեկից կտորներ անգիր իմացողներ շատ են եղել. պատահել են անապատականներ, ծայրէ ի ծայր Նարեկն անգիր իմացողներ։ Նարեկացու գերեզմանը և Նարեկի վանքը հայ ուխտաւորների համար յաճախ այցելու վայր է եղել և չատերի համար ցաւերի բժշկութիւն տուող։

«Վանի ծովից մի ժամաչափ դէպի հարաւ, մի բլրապաշտի վրայ գտնւում է Նարեկ գիւղը, որի մէջ տեղում բարձրանում է հռչակաւոր վանքի երկնանման տաճարի, բարձրաբերձ գմբէթը . . . ։ Տաճարի ետի խորաններից ամենավերջինումն է գտնւում Գրիգոր Նարեկացու համեստ դամբարանն, խոնարհ, նեղկիկ մի մատուռ, նուազած կանթեղի լուսով լուսաւորուած»։

«Նարեկացու դամբարանից զատ՝ մի սուրբ ու նուիրական տեղ էլ է մնացել մեզ յիշատակ, դա իւր աղօթատեղին — ճգնարանն է, հոգեկան վերապրումների վայրը, որ գտնւում է վանքից դէպի հիւսիս, կէս ժամաչափ հեռաւորութեամբ, որ ներկայացնում է մի քարաժայռ, կրկնայատակ փորուած, որ մի ճանապարհ միայն ունի վեր բարձրանալու համար՝ ուղիղ քարեայ պատ, մի քանի փոքրիկ խորշիկներ, այն էլ որպէս յենարան ձեռքի ու ոտքի»։

«Աղօթատեղիից բացւում է դէպի ծով մի լուսամուտ, որտեղ սուրբը ծնկաչոք աղօթելիս, տեսաւ դիմացի ափում փոքրիկ կղզու վրայ իւր պաշտած Տիրոջը՝ Փրկչին՝ Աստուածածնի գրկում «Գրիգորիէ-

առ անձկալիպ, Աս–Տէր» — «Աս Տէր» կրկնում է և սուրբը հոգով լեցուած, սրտով զգացած և արձանագրում իւր աղօթքում. «Այն զոր տեսի աչովք իսկ իմովք»(*)։

Նարեկացին եղել է նաև հայ գրողներից ոմանց գովաբանութեան առարկայ։ Կ. Պոլսի, Ղուկաս կաթողիկոսի ժամանակ հրատարակած Նարեկի վերջում ոմն Փէտրգի 5 տունից բաղկացած ոտանաւորը կայ. գրողի անուան տառերով սկզբնաւորուող, մի անարժանի բան։ Աւելի արժէքաւոր է «Տէր Առաքել վարդապետի առացեալ ներբողեան ի Սբ. Գրիգոր Նարեկացի», այբ ու բէնի բոլոր տառերով սկսած յանգաւոր բանաստեղծութիւնը։ Այստեղ Նարեկացուն գովաբանում է գրողը իբր ճգնաւորի, վարդապետի և միաժամանակ համառօտ պատմում նրա կեանքը։ Ոճը՝ հռետորական չափազանցութիւններով, համեմատութիւններով, այլաբանութիւններով. գրուած է յանգաւոր աճ, ի, առ ևայլն տողերով(**)։

Նարեկի հմայքը մեծ լինելով է, որ այդ աղօթագիրքը աւելի քան որևէ այլ հայ գրողի գրուածք հրատարակութիւններ է ունեցել ճառերի մէջ։ Ձեռքիս տակ եղել է հետևեալ հրատարակութիւնը, որի համաձայն և յետագայում նշանակուած են Նարեկից առնուած կտորների երեսները. «Նարեկ աղօթից. համառօտ և զգուշաւոր լուծմամբքն բացատրեալ միանգամ և այժմ երկրորդ անգամ յաւելուածով. աշխատասիրութեամբ Նորին Տեառն Հ. Գաբրիէլի Աւե-

(*) «Արաքս», Հանդէս, 1898թ., Գիրք Ա. «Նարեկի վանք» վարդ. էջ 81–87։ Այստեղ էլ պատմուած են նրա մասին եղած զանազան ժողովրդական աւանդութիւնները։

(**) Տե՛ս Նարեկի հրատարակ. Տփխիս, 1905թ., էջ 366-9։

տիքեան Աթոռակալ Վարդապետի. հրամանաւ արհիա-
պատիւ Տ՛ն. Սուքիասայ Սոմալեան արքեպ.ի և ընդ-
հանրական Աբբայի.— ի Վենետիկ, ի վանս Սրբոյն
Ղազարու, 1827 թ.»:

Ցիշեալ հրատարակութիւնների մէջ կան տարբե-
րութիւններ, որոնցից մատնանշեմ մի քանիսը: Պոլսի
1700 թ.ի հրատարակութեան մէջ «Վերստին յաւել-
ուած» խօսքը տպագրուած է այս ձևով. «Վերստին
յաւելուած, կրկին հեծութեան, նորին հակոզի առ
նոյն աղերս մաղթանաց: Բան ի խորոց սրտից խօսք
ընդ Աստուծոյ», «Բան» բառը միւս հրատարակու-
թիւններում սովորաբար գրւում է սեռական հոլովով
և միացւում է «մաղթանաց» բառին. և միտքն այլ է
լինում. նոյն ձևով, 1700 թուականի նման, տպագրուած
է նոյն խօսքը Պոլսի 1789 թ.ի հրատարակութեան մէջ:
1700 թ.ի հրատարակութեան մէջ աղօթագրքի Ղե.
վերջին գլխից յետոյ գրուած է իբր չարունակութիւն
նոյն կարգի Ղզ. գլուխ Նարեկացու Ասպարանից խաչի
ճառը. իբր չէ գլուխ նոյնի Աստուածածնի ներբողը.
և այլն առհասարակ Նարեկացու միւս ներբողեանները:

1789 թ.ի հրատարակութեան լուսանցքներում
նշանակուած են Աստուածաշնչի այն տեղերը, որոնց
մասին ակնարկներ կան Նարեկում, կամ որոնք առ-
նուած են Աստուածաշնչից: 1790 թ.ի հրատարակու-
թեան մէջ չկայ «Դրութիւնք յոգնաթախանց բանից»
վերնագիրը: 1795 թ.ի Վենետիկի հրատարակութեան
մէջ վերջում գրուած է «Ծուցակ երեսից տարբերու-
թեանց տպագիր կամ ձեռագիր օրինակաց ոմանց,
յորս անմիաբան գտանին ընդ մերումս այսր հարա-
զատ տպագրութեան»: Այդ ցուցակից երևում է, որ
այն ինչ որու մէջ կԲ. գլուխն է, միւսներում կՋ.

է, ընդհակառակը սրա Ղե. գլուխը միւսներում ՂԲ.
է և մի երկու նման բան: 1807 թ.ի հրատարակու-
թեան վերջը կցուած է դժւար բառերի բացատրու-
թիւնը. ապա հրատարակած է «Դիրք աղօթից սրբոյն
Եփրեմի» ապա «Աղօթք յորժամ յորոգայթ անկանի
ոք» ասացեալ Ս. Գրիգորի Լուսաւորչի. նոյնի մի այլ
աղօթքը «Դարձելոյն ի ղլջումն ապաշխարութեան»:
1812 թ.ի և մի քանի ուրիշներում աղօթագրքից յե-
տոյ գրուած են «Բժշկութեան Աւետարաններ». Աւե-
տարաններից այնպիսի կտորներ, որոնք Քրիստոսի ա-
րած բժշկութիւններին են վերաբերւում: Նարեկը յա-
ճախ է կարդացել հիւանդների վրայ իբր բժշկու-
թեան աղօթք. Նարեկը կարդալուց առաջ հարկ է հա-
մարել Աւետարանից բժշկութեան մի դէպք կարդալ,
ապա Նարեկի կտորը և դիւրութեան համար հրատա-
րակել են Աւետարանի բժշկութեան կտորն իբր աղօ-
թագրքի հետ: Մի քանի հրատարակութիւններում կան
աղօթքների խորացումն. այսպէս Առաւօտու աղօթք-
ներ՝ Ի. ԶԴ. Զե. ՂԲ. գլուխներ. Աղօթք գիշերայ-
նոյ՝ ԺԲ. ԽԱ. ՂԱ. և ՂԴ. գլուխներ. Աղօթք զըղջ-
ման՝ Է. Ը. ԻԲ. ԻՋ. ԻԷ. ՀԱ. գլուխները և այլն:

Նարեկի լուծմունքներով ու մեկնութիւններով
աչքի ընկնող երկու հրատարակութիւն կայ. մէկը Պո-
սի Յակովբ պատրիարքինը. 1745 թ.ին. շատ ընդար-
ձակ և քրտնաջան աշխատութեան արդիւնք, սակայն
ակօլաստիկ մեկնութիւններով հարուստ և աւելորդա-
բանութիւններով լի. միւսը 1827 թ.ի Աւետիքեանի
մեկնութիւնը, որ բանասիրական համառօտեան արդիւնք
է և համառօտ, սեղմ: Աւետիքեանը իւր «Բան առ
ընթերցողս» յառաջաբանում յայտնում է, որ Նարեկի
նման այլ ազգերի մէջ աղօթագիրք չկայ և որ Նա-

ըեկացին «Դաւիթ է հոգեբղող հայաստանեայց եկեղեցւոյ». Նա Նարեկացուն Վերգիլիոսից ու Հոմերոսից էլ բարձր է դասում։ Յակովբ պատրիարքը Նարեկը համարում է համառօտ Աստուածաչունչ և Աւետարան. Նարեկացուն նմանեցնում է Պրոմէթէոսին որն աստուածային կրակը մարդկանց է տւել։

Վերոյիշեալ հրատարակութիւնների տարբերութիւնները այլ է, Աւետիքեանի իւր մեկնութիւններում տւած մի քանի տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ Նարեկն իւր այժմեան հրատարակութեամբ զանազան խմբագրութիւնների է ենթարկւել, որ աղօթքները տարբեր են դասաւորուել և մի քանի գլուխներ մտել են աղօթագրքի մէջ, որոնք իրօք աղօթքներ չեն, այլ մեկնութիւններ, հակաճառութիւն, սրանք ապաշխարողի աղօթքի հետ կապ չունին։ Իրրև չատ տարածւած աղօթագիրք՝ չատ արտագրողների ձեռքից է անցել՝ և որովհետև արտագրողները երբեմն իրենցն էլ աւելացրել են ուստի և աղօթագիրքը հարազատ խմբագրութեամբ մեր ձեռքը չի հասել. գրաբախտաբար ձեռագրների համեմատութեամբ կատարուած բանասիրական հրատարակութիւն էլ ցայսօր լոյս չի տեսել։

Որքան յայտնի է Նարեկի ամբողջ թարգմանութիւնը օտար լեզուով նոյնպէս չկայ։

Գլ. Գ.

Նարեկացու վէպի հիմքերը։

Նարեկը մի ամփոփ ու կատարեալ ամբողջութիւն չէ։ Ինքը հեղինակը իւր գրքի նպատակը մի քանի կերպ է ձևակերպում. Գ. գլխում յայտնում է, որ «Այս ընթերցողների համար, իստակ սրտով, հոգւոց բժշկութիւն արա՛, յանցաւորների համար մաքրութիւն, պարտքի թողութիւն և մեղքերի կապանքներից արձակուրդ»։ ԿՋ. գլխում ասում է «եթէ մեղաւորներից լինի մատեանի ընթերցողը ես էլ խօսքով թող միացած լինիմ նրան, իսկ եթէ արդարներից լինի յառաջողը, ես էլ սրանով նրա հետ ողորմեալ–ներւած լինիմ»։ ՀԲ. գլխից երևում է, որ գիրքը գրւած է «Միանձանց և կրօնաստանների աշակերտների համար»։ Աղօթագիրքը բժշկարան է և միանձի համար հեծութեան աղբիւր և իւր՝ Նարեկացու մեղքի քաւութեան միջոց։ Նարեկի «Դրութիւնք» կոչւած վերնագիրը, որը հաւանօրէն հեղինակի գրածը չէ, այլ յետագայում է կազմւած, լաւ արտայայտում է այն տարբեր նպատակները, որ Ողբերգութեան Մատեանն ունի և որը Նարեկացու ոգին է ապրում։ «Դրութիւն յոգնաթախանձ բանից օգտակարաց ապաշաւանաց, հոգեշահ խրատուց անձին ստգտանաց, ղղջականաց կանոնաց կենաց կամաւորութեամբ յանձնառութեանց, մեղանաց խոստովանութեանց, ցուցմունք գաղտնեաց, տարածմունք ծածկեցելոց, յանդիմանութիւնք թողուցելոց։ Սպեղանիք զօրաւորք՝ վիրաց անբժշկականաց դեղք ազդողականք՝ ցաւոց անտեսականաց,

հնարաւորութիւնք բազմամանեայ երկանց վտանգից։ Ի դիմաց կարեաց ամենից բնութեանց առիթք արտասուաց, պատճառք աղօթից։ Ի խնդրոց հայցմանց հարց միանձանց և բազմաց անապատականաց ասացեալ Մատեան Ողբերգութեան Գրիգորի Նարեկայ վանից վանականի»։

Իւր «Ցիչատակարան Մատենիս Դրութեան» վերջաբանում Նարեկացին ասում է. «Բազմաստեղնեան դրուագս դրութեան այսմ սոփերի արդասաւորի» (էջ 540). կազմել է, դիզել, բարդել. ինքն էլ ընդունում է, որ այս սոփերքը «բազմաստեղնեան» է, որ նաև հոգեշահ խրատներ ունի և զղջական կեանքի կանոններ և գաղտնիքների ցուցմունք է և անբժշկելի վէրքերի սպեղանի. և աղօթքի պատճառ է և արցունքի։ Նպատակները մի ընդհանուր կապ ունին, բայց մասնաւորաբար ճիւղաւորուած են ու տարբեր։

Բնագրում էլ կան գլուխներ, որոնք անմիջապէս կապ չունին վերոյիշեալ նպատակների հետ և աւելի մեկնաբանական, պաշտպանողական ճառեր են, քան աղօթքներ, խրատներ կամ բժշկութեան դեղ։ Լ.Դ. և Հ.Ջ. գլուխները իւր ըմբռնած դաւանութեան ու Նիկիական հանգանակի մեկնութիւններն են, որոնք գրուած են գուցէ և իւր անձի պաշտպանութեան համար. Նարեկի վանքը և նրա ուսուցիչը մի ժամանակ կասկածի տակ էին։ Ղբ. գլուխը ժամհարի կոչնակի գովքն է. Ղդ. գլուխը, Մխուռնի եկեղեցական–կրօնական արժէքն է երկարօրէն բացատրում։ Կասկածելի է համարում Աւետիքեանը Իզ. գլխի վերջում աւելացած «ընդդիմամարտ դիւաց նեաղ աղօթից, և դիւասարսուռ ջերմեռանդնագնաց ախտաւորութեանց Աստուծով փարատիչ» կտորը (էջ 136–137)։

Այսպիսով Նարեկը թէ նպատակների և թէ բովանդակութեան, խմբագրութեան կողմից մի ամբողջութիւն չէ։ Տարբեր նպատակները առաջ է գալիս աւելի չատ Նարեկացու իւր բնաւորութիւնից, իւր հոգու կազմութիւնից։

Նարեկացին իւր էութեամբ աւելի բանաստեղծ է քան փիլիսոփայ, աւելի հռետոր է, քան մեկնաբանող։ Նրա հոգին հանդարտ մտածող, իրերը ըստ էութեան քննող, սառնասիրտ դատողի հոգի չէ. նա նման չէ մի մեկնաբան աստուածաբանի կամ մի պատմաբանի, որը նիւթը հաւաքում է, քննում, ուսումնասիրում և իւր եզրակացութիւնը տալիս. նա մի զգայուն հոգի է, որի մէջ տրամադրութիւնները յարափոփոխ են, որի հոգին չատ բռնկւում է, ալէկոծւում մինչև ծայրահեղութիւնը, մինչև չափազանցութիւնը, որը արտմութեան և ուրախութեան, ոգեւորելու և յուսահատութեան մօմենտներ է ունենում արագ յաջորդականութեամբ։ Բանաստեղծն առաւելապէս տրամադրութեան մարդ է և Նարեկացին այդպիսին է։

Տարբեր տրամադրութիւնների տակ գրած ողբերգութեան գլուխները մի միաձոյլ, անշփոթ ճարտարապետական ամբողջութիւն չեն կազմում։ Ողբերգութիւնն ուշի ուշով կարդացողը կը տեսնէ, որ Նարեկացու տաղանդաւոր ոճի, բուռն թափի ազդեցութեան տակ ընթերցանութեան ընթացքում մէկ յուսահատում է մինչև խպաո լքումը, մէկ յուսադրւում, երկինք բարձրանում, մէկ օրհնող լինում, մէկ նզովող, մէկ քննադատող, վերլուծող, մէկ հակաճառող. մէկ լալիս է, մէկ խնդրում է և այսպէս անվերջ։

Այս բոլոր տարուբերումների, ելևէջների հիմքը, ըստ իս, Նարեկացու հոգում ամբարուած իւրայատուկ վիշտն է։ Այդ վիշտը նրան խօսեցնում, ողբերգակ է դարձնում և բնական է, որ Նարեկը քերականական, տրամաբանական վերլուծութեան չի ենթարկւում և ով աշխատէ այդ ձևով պարզաբանել՝ նա և դժւարութիւնների և հակասութիւնների կը հանդիպէ։ Բանաստեղծ հոգով, ապրումներով ուժեղ, հոգու թափով խորը, զգայուն մինչև հիւանդագին աստիճան Նարեկացին տրամադրութեան ուժեղ ժամին գրել է, ասել որ և է գլուխ. զգացմունքը նրան թռիչքների է մղել. երբ երեւակայութիւնը հրդեհւել է՝ այդօրինակ երկունքների ծնունդը տրամաբանական սառն օրէնքների տակ դնելը և դժւար է և սխալ հետևանքի կը հասցնէ։

Նարեկն ըմբռնելը դժւարանալուն պակաս չեն նպաստում նրա Աստուածաշնչից յաճախակի արած մէջբերումները, այս ու այն դէպքերի մասին ակնարկները, որոնք սովորական ընթերցողի համար անհասկանալի են մնում առանց լուծմունքները – մեկնութիւնները ի նկատի ունենալու։ Նարեկացու ոճը իւր ժամանակի ճոռոմաբանութիւնն ունենալով իւրայատուկ է. Նարեկացին նոր բառեր է գործածում, իւրատեսակ դասաւորում նախադասութիւնները։ Նարեկացի իւր խորը վշտի ազդեցութեան տակ աշխատում է իւր խոր ու լայն հոգում ամբարուած ողբը – հեծեծանքը հեղեղի նման դուրս թափել. իսկ հեղեղը դժւար է որոշ ձևի տակ դնել. նա լինքն է իւր ճանապարհը հարթում։

Նարեկացու հոգին լիքն է անապատ, անհատնում աննուազելի մե՛ծ վշտով, մի վիշտ, որը ոչ կենդանութեան ժամանակ է վերջանում, ոչ մահուանից յետոյ, ոչ էլ մինչև աշխարհի վերջը։ Մի վիշտ, որ անբուժելի է, և ոչ մի մարդկային հնարք կարող չէ մեղմացնել այն. մի վիշտ, որ ուրիշը չէ պատճառել նրան, որ գրսից չէ եկել մէկի արարքի պատճառով, այլ ինքը ծնւել է իւր խոկ Նարեկացու էութիւնից։ Այդ վիշտը Նարեկացու գիտակցութեան ու զգացմունքի ծնունդն է, նրա մէջ էլ է մնում է, ապրում ու ելք որոնում դուրս գալու։ Մի վիշտ, որ որևէ յանցանքի՝ սպանութեան, գողութեան, անբարոյ կեանքի, ոտախօսութեան հետևանք չէ, այլ Նարեկացու իւր խոկ խառնուածքի. մի տեսակ հոգեբանական անբնական վիճակ այն չափով, ինչչափով անբնական կը համարուի մի մելանխոլիկ, մի ֆլեգմատիկ բնաւորութիւն, մի վշտոտ բնութիւն, մի յոռետես երգիչ, մի տխուր մօտիվներ նկարել սիրող նկարիչ։

Որքան նրա կենսագրութիւնից, նրա մասին մեզ հասած տեղեկութիւններից յայտնի է, Նարեկացին առաջ մի չբայտ կեանք չէ վարել, մի անբարոյ հասարակութեան մէջ չէ ապրել, իշխանաւոր չէ եղել՝ սրան նրան ճնշելու, իւր հաւատը ոյժի ազդեցութեան տակ չէ ուրացել, իւր վարդապետ իւր պաշտօնը չի չահագործել։ Արծրունի թագաւորի հետ յարաբերութիւն ունենալով նրան չի քծնել, հապա, հապա, որ այս յանցանքները կամ որևէ մէկն անելուց յետոյ ուժգին զղջման գար ու վշտի ծով դառնար։ Անապատականների մէջ եղել են անապատ մտնելուց առաջ չբայտ կեանք վարողներ, աւազակութիւն, պոռնկութիւն անողներ, ժողովրդին չահագործողներ և ապա դարձի եկողներ. դրանց վիշտը հասկանալի է և զղջումն էլ ըմբռնել կարելի է։ Նարեկացու վիշտը դրանցից չէ,

ուստի և իրատեսակ է և մանրամասն հոգեբանօրէն վերլուծելը գժւար է։

Այդ վիշտն էլ ունի իր հիմքերը, իր աղբիւրները, որոնք որոշ չափով պիտի պարզել Նարեկը հասկանալու համար։ Հանճարեղ ողբերգուն չափազանց է զգայուն և իրերը, երևոյթները հասցնում է բացարձակին, անսահմանին ուր նրանք բոլորն էլ փոքրանում, նսեմանում են. նրա հոգին պրպտում է, ոռընում, վախճանի վախճանը փնտռում, իսկ այդ բնազանցական որոնումը նրան յուսահատութեան է տանում։ Այն ինչ որ սովորական մարդու համար կեանքում անուշադիր է ձնում, Նարեկացու համար պրօբլեմ–առեղծուած է դառնում. մինչդեռ սովորական մարդը ւէալ կեանքի տեսլականները իբր այդպիսին է ընդունում ու նրանցից օգտւում կամ նրանց ժխտում, Նարեկացին աշխատում է արժէքաւորել, իմաստ տալ և գարձնել խորհրդածութեան նիւթ։ Նրա հոգին մտքնիսի նման է ու ամեն ինչ իրեն է քաշում, նրա հոգուն կպչում, ուստի և կարծես ողջ աշխարհը, տիեզերքը նրա հոգուց կախուած է և ծանրացած նրա վրայ։ Մինչդեռ պարզ ուտել խմելը, քնել, ելնելը սովորական մարդու համար չատ բնական երևոյթ է, նրա համար դա ողբերգութեան նիւթ է։ Նրա հոգին այդ տեսակէտից հիւանդագին զգայնութիւն ունի ու վշտի աղբիւր է դառնում։

Նա ինքն էլ ծանօթ է իր հոգու արտակարգ ուռնակութեանը, խորութեանը, ըմբռնում է իր ինչ լինելը, գիտակցում է իր ոյժը, և երբ այդ չէ կարողանում լիովին իրացնել ինքն իրենից գժգոհում է, իրեն գատափետում։ Նա «ծանիր զքեզ» սկզբունքը խոսն է իրացրել և այդ էլ նրա համար դառնում է

խաչ, տառապանք. որքան իր հոգու մէջ խորունկ է նայում՝ այնքան անդունդը մեծանում է, ինքը սարսափում չէարում է։ Նրա ըղձերի և իրականութեան մէջ ահագին վիհ կայ, նա ոյժ չունի այդ վիհը լցնելու, նա չի կարող չնայել վիհին և երբ նայում է՝ զգում է իր տկար լինելը այդ վիհի առաջ ու վշտանում է։ Դժւար է այն մարդու վիճակը, որն իւր վրայ սկսում է ողբալ, որը զգում է պահանջ, զգում է բուռն թափ իր չըջապատը, իրեն յաղթահարելու, փորձում է, ճգնում ու երբ չի յաջողւում ձեռքերը ծալած կանգնում է ու դառն արտասւում։ Նման հոգեբանութեան օրինակները այժմեան հասարակութեան իրատեսակ մտածող, զգացող անհատների մէջ ևս գտնւում են, որոնք ինչ որ թախիծ, ինչ որ վիշտ ունին անորոշ են, անձև են, անսահմանին հասնելու տեսակէտից։

Նարեկացին իւր վիշտը որքան և ստիպւում է արտայայտել բառերով, որքան և գրում է գլուխ գլխի ետևից «Իւ արդ» շաղկապով զօդելով գլուխները իրար, բայց նա չի կշտանում, չի հանգարտւում որովհետև ինչպէս ասած է Տիւտչև՝ խօսքը, բառը հոգու ներքին ըմբռնման չատ խեղճ, աղճատւած արտայայտութիւններն են. երբ ահաւոր և անպատում վիշտը որոշ հնչիւններից կազմւած բառերի մէջ է ամփոփւում, դառնում է սուտ, իսկական պատկերի, գաղափարի ոչ ճիշտ արտայայտողը. Նարեկացին այդ վիճակն ունի՝ ու ամենատեսակ ածականներով, անգամ ոչ գեղարուեստական, ոչ վայելուչ (օրինակ ջախջախւած լուս), իրեն մեղադրում է, բայց վիշտը չի փարատւում։

Իւր ոյժի գիտակցութեան հետևանք է այն, որ Գ. գլխում Դ. հատուածում (էջ 18–19), նա իւր

գիրքը մի տեսակ սուրբ գիրք է հրապարակում, մի բժշկարան, հրաշքներ կատարող։ Որքան և արևելեան անապատականների մէջ եղել են դէպքեր, որ անապատականը խնդրել է Աստծուն որ իրեն սրբացընէ, որ իրեն դիմողը բժշկէ, սակայն Նարեկացին այդ խմբին չէ որ պատկանում է։ Նրա ինքնավստահութիւնը առաջ է գալիս նրանից որ նա իւր մէջ հին Իսրայէլի մարգարէի նման զգում է Աստուծոյ չունչ, մի արտակարգ ոգի, որը երկնային ծագումն ունի, և այդ ոգին է, որ իւր գրքին պիտի դարձնէ «Դեզ կենաց՝ առ հնարս ցաւոց հոգւոց և մարմնոց քոց ստեղծուածոց» (էջ 20)։ Մի կողմից նա իրեն համարում է մի կաթ, մի ցեխ, ամենայետինը մեղաւորներից, որին ոչ այս կեանքում և ոչ հանդերձեալում թողութիւն չկայ. միւս կողմից ուզում է որ իւր գիրքը դառնայ «արձան փորագրեալ ամենևին անեղծանելի» (ԿՋ. գլուխ, էջ 335)։ Այս մեծ տարուբերումը, կաւից անեղծանելի արձանի հասնիլը՝ Նարեկացու որոնող, տանջուող հոգու հետևանք է. նրա արտակարգ զգայուն սրտի և մեծ վշտի արդիւնք։ Նա բռնուած է գերբնական մարդ դառնալու անզուսպ, հոգին այրող, տոգորող ձգտումով. նա իրեն համեմատում է Քրիստոսի հետ, և այդ համեմատութիւնը որքան և նրան յուսահատեցնում է, բայց ցոյց է տալիս, որ նա էլ Քրիստոսի նման լինել է ցանկանում, ձգտում է, զգում է պահանջ ու ոգորում է(*)։ Նա ինքն ասում է այս միտքը պարզապէս «Որ միայն մարմնացար վասն մեր ըստ մեզ, զի արասցես զմեզ վասն քո

(*) Տեսնել Ծն. գլուխ, էջ 291-92։ ՁԹ. գլուխ, էջ 439։ ՁՀ. գլուխ, էջ 458։

ըստ քեզ» (ԺԹ. գլուխ, էջ 85)։ Քրիստոս – Աստուած է և մարդ է. մարդ է եղել և աստուածացել է. դարձել մարդկային կատարելութեան տիպար։ Նարեկացին այդ տիպին է ուզում հասնիլ ու ձգտում է անվերջ, անդադար. տառապանքի, վշտի անհունութեան մէջ։ Նա գերմարդը լինելու ուղին է բռնել անդառնալիօրէն։ Նիցչէին գերմարդը հեղինակին հոգեկան հաւասարակշռութիւնից հանեց ու դարձրեց լուսեաց, մինակ մարդ. միջնադարի մարդու գերմարդը Քրիստոսի տւած գաղափարական մարդն էր և Նարեկացին այդ գերմարդուն է ձգտում, իսկ նման բացարձակի, անսահման կատարելութեան ձգտող հոգին անշուշտ պիտի վիշտ ունենար խո՛րը, անհատնում, անբուժելի. քանի որ սահմանաւոր երկիրը անսահմանին հասնելու պայմաններ չի տալիս. արգելքները շատ են, գեր մարդուն հասնելու ճամբան անվերջ է, դժւար ու չարչարանքով լի։

Ահա, ըստ իս, Նարեկացու վշտի ամենամեծ հիմքը, որը և նրա ողբերգութեան առատ աղբիւրն է. նրա որոնման ուղում ունեցած գայթուղիների արձագանքները, նրա անկումների տխուր հառաչանքները։

Իբրև միջնադարի բարեպաշտական ոգով հաբուստ միջավայրի զաւակ՝ Նարեկացին անմասն չէ ի հարկէ և այդ ոգուց, որը նոյնպէս նրան վիշտ է մատակարարում։ Նա խորապէս հաւատում է դժոխքին, դրախտին, հատուցմանը. նրա համար մեղքը իւր բոլոր տեսակներով գոյութիւն ունի. նրա համար էլ մարդը մեղքերի ծովում է լողում և պէտք է դրա դէմ մաքառել։ Նա էլ խճճւած է, կապկպուած սատանաների ցանցերով, և ճիգ է գործ դնում դրանցից ազատուելու. նա գիտէ, որ այս աշխարհում բոլորո-

վին ազատել չի կարող և ահա այդ գիտակցությունը անզօրության, այդ տակար լինելը մարմնի–մեղքի առաջ, նրան վշտացնում է նրա ինքնասիրությանը մեծ հարուած է տալիս: Նա ազատել է ուզում կաշկանդումներից. այդ նրան չի յաջողւում. նա զգում է իրեն բանտում, ուր որ չորս կողմը պահապանները վխտում են օր ու գիշեր, ծաղրում իրեն և նա ազատութեան, թէկուզ հոգու ազատութեան, մեծ երկրպագու տենչացողը բողոքում է, զայրանում, պայքարում, կռւում, ողբում ու բանտի՝ մարմնի մէջ պարփակւած զգալով իրեն անվերջ թախծում, հառաչում է ազատութեան համար: Բոլոր նրանք, որոնք ազատութեան, անկախութեան ոգին իրենց մէջ կրել են բուռն կերպով, որոնք պայքարել են ու պարտւած եղել պայքարից՝ եթէ չեն էլ յուսահատւել, այնուամենայնիւ տառապանքը նրանց հոգում վշտի հնիք է դրել: Նարեկացին այդ տիպերից է՝ թէև ի հարկէ միջնադարի մարդու մտայնութեամբ: Նրա յուսահատ պայքարը անզուսպ է, նրա խիզախելը յանդուգն. նա պայքարում է աչխարհի, մարմին–սատանայի, ամենամեծ ոյժի դէմ և պայքարում է մինակ, իւր ոյժի վրայ վստահացած անհաւասար պայքարը նրան վիշտ է մատակարարում: Այդ՝ Նարեկացու ճգնաւոր լինելու, անապատական կեանք վարելու ձգտման հետևանքն էր:

Անապատական լինելուց առաջ Նարեկացին սոսկ մարդ է. հանճարեղ լինելով հանդերձ նա ունի մարդկային բնական կարիքները: Նա կոյր չէ եղել, խուլ չէ եղել, կաղ չէ եղել, մարմնական արատ չէ ունեցել. գոնէ այս մասին տեղեկութիւնները չկան. հետևապէս նրա զգայարանները գործել են: Նա էլ լաւը տեսնելու, քաղցրը ճաշակելու, անոյշը, դրախտը լսելու կարիքն է ունեցել, իբր բնական պահանջ: Նա էլ ուզեցել է քնել հանգիստ, ուտել գոնէ լաւը և կուշտ. նա էլ կարիք է զգացել գեղեցիկը տեսնելու. բայց այդ ամենը նրա մէջ պէտք է մեռնէր, նա պիտի իրեն զսպէր. պէտք է պայքարէր այդ բնական ձգտումների դէմ իբր անապատական և իբր միջնադարի մարդ: Հարկաւ նման պահանջների դէմ պայքարիլը տարիներ չարունակ դժւար է և միշտ չէր յաջողւի. իսկ բծախնդիր, պրպտող Նարեկացու հոգին ամեն գայթումից պիտի վիրաւորէր. ամենազգոյշ, անգամ պատահական վրիպումը նրան պիտի վշտացնէր. նրա հոգին լայն էր տառապանքով: Նա Եզիպտոսի խորին անապատում ապրող անապատականի միջավայրը չունէր, որ մարդու երես չտեսնէր, չրջան չունենար, լինքը լինէր ու Աստուած. նա ապրում էր մի հռչակաւոր վանքում, ունէր աշակերտներ. կային այցելուներ, ազնւականներ ու հասարակ ժողովուրդ. և նա չփւում էր դրանց հետ, տեսնում, լսում էր. կեանքը նրա կողքին էր, նրա առաջը և նա ամեն րոպէ առիթ ունէր հէնց նրա դէմ մաքառելու, որից ինքը պիտի խուսափէր:

Նա իբրև վարդապետ ունէր աշակերտներ. որոնց դաս աւանդելով պէտք է և վշտանար և ուրախանար, պիտի դաստիարակէր իւր օրինակով և բարձր լինէր. իսկ դաստատու Նարեկացին անչուշտ պիտի ունենար նաև իւր վրիպումները իւր երազած իտէալական մարդու տեսակէտից և դժգոհէր, սրտնեղէր:

Նա միաբան էր մի վանքի, գուցէ և իւր եղբայր Յովհաննէսի հետ, որ վանահայր էր, վանքն էր կառավարում. հետևապէս կրկին առիթ ունէր իւր

իտէալը չիրականացած, ժժգունացած տեսնելու յանձինս իւր արարքների և վշտանալու: Նարեկացին ամեն երևոյթի մէջ, ամեն քայլափոխում իրեն կատարելագործուած էր ուզում տեսնել. նա ապրում էր եռուն կեանքում. միջնադարի վանքը ուշադրութեան կեդրոնն էր և չատերի համար դպրեվիչ: Նրա վրայ նայում էին իբրև սուրբի, օրինակելի մարդու, և այդ դրսի հայեացքը, շրջապատի կարծիքը նրան ճնշում էր, որովհետև ինքը լիովին չէր արդարացնում, գոնէ իւր կարծիքով, այդ կարծիքը բնական է որ պիտի վշտանար ու հառաչէր, թէ ինքն այն չէ, ինչ կարծում են կամ ինչ ինքն է ուզում լինել:

Բազմակերպ և բազմաթիւ առիթներ ու աղբիւրներ ունէր Նարեկացու վիշտը և նա հայ եկեղեցու, հայ վանքի սպասաւորը, այդ վիշտը ոչ պակաս աճեցնում էր հայ եկեղեցում աղօթելով: ԵՒս հասարակ վանքի և մանաւանդ հայ վանքի աղօթաւորը իւրատեսակ թախծոտ, վշտոտ տրամադրութիւն է ըստանում: Միսթիկան վանքում, առանձնութեան մէջ աւելի խորն է լինում և թախծի, վշտի մնունդ տալիս: Նարեկացին իւր վշտով նման միջավայրում էր աղօթում և լսում հայ մարդու աղաչաւոր աղօթքը, հեծկլտացող չարականը, ողբաձայն սաղմոսը. բնական է որ այդ միջավայրն էլ աւելի զօրացնէր նրա մէջ բոյն դրած վիշտը, աւելի խորացնէր: Վանական միջավայրը վշտի համար յարմար է և վիշտ ծնեցնող:

Ձգնարանում ծունկի եկող, աչքերը ծովին ուղած երազկոտ, տենչացող, ոգևորուող, անէանալ ցանկացող Նարեկացին նման հոգեկան մեծ վիշտ ունենալուն պատճառով հրաշակերտում է իւր «Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ» հոգերդութիւնը. ուր որ

գերբնական–գերմարդ լինելու տենչը իւր զանազան երանգաւորումներով արտայայտել է գեղարուեստաօրէն և կազմել հայ մարդու ոգևորութեան և աղօթքի լաւագոյն աղբիւրը, Ողբերգութեան Մատեանը — «Նարեկ»ը:

Գլ. Դ.

Քրիստոս ըստ Նարեկի։

Աշխարհն իւր տեսլներով, կեանքն իւր բազմօրինակ արտայայտութիւններով, իւր գեղեցկութիւններով ու բարիքներով առ հասարակ մարդկանց, անդամ նախապատմական մարդուն չի բաւարարել՝ և կեանքում դժգոհներ, իրենց դժբախտ զգացողներ թիւն աւելի է եղել, քան բախտաւորներն։ Դժգոհների մէջ յատուկ ուշադրութեան արժանի են նրանք, որոնց դժգոհութեան աղբիւրը նիւթական անապահով վիճակը չէ, այլ այն ձգտումը, որ նրանց մէջ եղել է իտէալ մարդու, կատարեալ անանց երջանկութեան մասին։ Այդ դժգոհները իրենց իտէալն են ունեցել երջանիկ և կատարեալ մարդու մասին, համեմատել են իրականութեան հետ, տեսել, որ իրականութիւնը չի բաւարարում իրենց պահանջներին, փորձեր են արել պայքարելու, նկատել են փորձերի թերութիւնը և դժգոհել են աշխարհից։

Այդպիսիների համար կեանքը, թէկուզ և իրենց միակողմանի հայեցակէտից նայած, եղել է թերի, անկատար, թոյլ, անբաւարար, աւելի դժբախտութեան, քան բախտաւորութեան աղբիւր։ Այդպիսիները իրենց հոգու խորքում ունեցել են սուր պայքար իրականութեան դէմ ուղղուած, և եղել են մաքառողներ։ Դրանք նիւթ ունենալով դրսի աշխարհը, իրենց սովորածը, տեսածն ու լսածը, իրենց հոգու բովում հալել, ձուլել են այդ նիւթը, նոր կերտուածք արտադրել, որն իրենց իտէալն է դարձել, որի նմանը

աշխարհում չեն տեսել։ Ոմանք այդ կատարելութեանը իտէալական մարդ են ասել, ոմանք հրեշտակ, ոմանք գերմարդ, ոմանք աստուած, և այլն։ Իտէալը ստեղծուել է, եղել է ձգտման առարկայ, բայց չիրականացող. որից և առաջ է եկել դժգոհութիւն։

Քրիստոնէական աշխարհում այդ իտէալը եղել է Քրիստոսի անձնաւորութիւնը, որը իբրաքանչիւր անկեղծ հաւատացողի ձգտման առարկան է եղել՝ իբրև մարդու զարգացման բարձրագոյն տիպար։ Եւ քրիստոնէութեան պատմութեան մէջ քիչ չեն օրինակները այն մարդկանց, որոնք ծանր զոհողութիւններ են յանձնն առել, նահատակուել են զարհուրելի տանջանքներով, այդ իտէալին հասնելու։

Քրիստոսի անձնաւորութիւնը իւր բարոյական ուսմունքով, մարդ անհատի կատարելագործման գաղափարով այնքան հարուստ, այնքան բազմակողմանի է, որ իբրաքանչիւր անկեղծ հաւատացեալ կարողացել է իւր հոգու պահանջների համապատասխան նիւթ գտնել, այդ անձնաւորութեան էութեան մէջ իրեն տագնապող հարցերի լուծումն ստանալու։ Քրիստոս կատարեալ մարդու լաւագոյն յատկութիւնների—առաքինութիւնների զարմանալի մարմնացումն է և կեանքի դժգոհներից չատերը նրա մէջ գտել են հոգու հանդարտութիւն։

Քրիստոսի անձնաւորութեան հարուստ բովանդակութեան ու բազմակողմանիութեան հետևանք է այն, որ իբրաքանչիւր ազգ նրա մէջ իւր բաւարարութիւնն է գտել և նրա անունով յատուկ եկեղեցի հիմնել։ Եկեղեցու գանազան աստուածաբանները — վարդապետները նրան տարբեր են հասկացել, և աղանդաւոր-

ները անպակաս են եղել եկեղեցու պատմութեան մէջ։ Նոյն եկեղեցու հաւատարիմ վարդապետներն էլ մի-օրինակ չեն հասկացել նրան. ոմանք նրա անձնաւորութեան մի կողմն են չեշտել, ոմանք միւսը։

Նարեկացին ևս նման տիպի կեանքի դժգոհներից է և նա ևս իւր խէալ–կատարելութիւնը Քրիստոսի մէջ է գտնում. նրա մէջ է որոնում իւր հոգու հանգիստը։ Նարեկացին դժգոհում է այն իսկ պատճառով, որ նա իրեն համեմատում է իւր խէալի հետ, տեսնում ահագին տարբերութիւն. խէալը կատարելութիւն է, ինքը թերութիւն. խէալը մեղքից–պակասութիւնից զերծ է, ինքը մեղքերի ծով։

Նարեկացու գաղափարական–խէալական մարդը, որին պիտի հասնել՝ Քրիստոս է. բայց նա իւր գաղափարականին միօրինակ պարզ չէ ուրուագծում. նրա աղօթագրքում Քրիստոս երկու ձևով է երևան գալիս եւ պատճառն այն է, որ Նարեկացին է՛ւ աղօթաւոր–որոնող–տանջուող հոգի է է՛ւ միաժամանակ որոշ հիմնարկութեան՝ հայ եկեղեցու պաշտօնեայ վարդապետ, որի համար կայ պարտադիր տօգմա, մշակուած հաւատամք։ Երբ Նարեկացին իբր վարդապետ է մտածում ու գրում, նա միջնադարի սկօլաստիկ վարդապետ է, չոր ու ցամաք տեսական դատողութիւններ տուող Քրիստոսի մասին, իսկ երբ նա իբր աղօթող–որոնող է խօսում, գրում՝ Քրիստոս չունչ, կենդանութիւն է ստանում, մարմնանում, նրա աղօթքի ջերմութեամբ կենդանանում, ստանում միաք, զգացմունք և աղօթողի առաջ կանգնում է իբրև մի կենդանի էակ։

Մեզ հետաքրքրողը այս դէպքում ի հարկէ նրա վերջին ըմբռնումն է, սակայն տարբերութիւնը պար-

զելու համար արժէ յիշել և նրա առաջին ըմբռնումը։ Ի.Դ. գլխում նա իր ըմբռնումն է տալիս Նիկիայի հաւատոյ հանգանակի մասին, որը Միջին դարու սովորական եկեղեցական ըմբռնումն է՝ արտայայտուած Նարեկացու իւրայատուկ ոճով միայն, որը ընդունած դաւանանքից հեռու չէ։ Ահա մի նմուշ այդ դատողական մեկնաբանական ըմբռնումից. «Խոստովանիմք և դաւանիմք, պաշտեմք և երկրպագեմք զուղղափառ միութիւն ամենասուրբ երրորդութեանն. աստուածութիւն անճառ, միշտ բարի, նոյնագոյ, հաւասարապատիւ, անհաս՝ իմաստից թևոց սլացման, ի վեր քան զօրինակ և անդր քան զնմանութիւն. զերազանց գոլով սահմանի անպարագիր բացարձակութեամբ, յառաջ քան զհին յաւիտեանց անտարբերութիւնք էութեանց ստեղծականաց կարգաց, օրհնաբանութեամբ անթարգմանելեաւ ամենահարուստ մեծութեամբ յաւէտ պսակեալ, հաստիչ ժամանակաց և որ ի ժամանակի են կերպաւորեալք, ինքն պատճառ հանդերձիչ և յարմարապէս յօրինիչ տեսականաց և անեղութիւն» (Ի.Դ. գլուխ, էջ 179)։ Քրիստոս «անապական խառնութեամբ կերպացեալ զմերս ի մարմնի, ըստ օրինի հոգւոյ ընդ մարմնոյ, և ոսկւոյ ընդ հրոյ. և կամ յայտնապէս իսկ ասել՝ լուսոյ ընդ օդոյ, ոչ փոփոխեալ և ոչ անջատեալ» (էջ 180)։ Մի մեկնաբանական բացատրութիւն, որ առ հասարակ եկեղեցու տօգմայի ոգուն է համապատասխան ու փիլիսոփայական–բնազանցական կնիք ունի իւր վրայ։

Այլ է Նարեկացու Քրիստոսը, երբ նրա առաջ ծունկի եկած, ձեռքերը վերամբարձած, աչքերը արցունքով լի, անվերջ հառաչում աղօթում է։ Այդ Քրիստոսը մետաֆիզիկ բնոյթ չունի այլևս, այլ կենդանի

է, և նա տեսնում է նրան. «աչօք իսկ իմովք տեսի» (Իէ. գլուխ, էջ 127)։ Սքանչացման հրաշալի բոպէն է ապրում աղօթասէր Նարեկացին, որովհետև նրա համար Քրիստոս որքան և մեծ է, Աստուած ըստ ամենայնի, բայց ամենից աւելի բարձր է նա, որովհետև նա միայն կարողանում է «թողուլ զմեղս և ջնջել զանօրէնութիւնս» (ԽԹ. գլուխ, էջ 251)։ Անհատական ողորմածութեան աղբիւր է Քրիստոս, երբ Նարեկացին աղօթում է և իրեն զգում է ամենից մեղաւոր, խնդրում է որ բոլոր մեղաւորներին ներէ, բայց երբ խօսում է մեկնող–վարդապետող Նարեկացին, իբրև եկեղեցու պաշտօնեայ դառնում է անհամբերատար, նզովող հալածող։ Եթէ որևէ մէկը երբորդութեան անարատ միութիւնը այլ կերպ բացատրէ, քան եկեղեցին՝ ինքն է ընդունում այդպիսին «իբր զդժնդակ դեւս զիմամարտիկս զազանականս հերձեալ ի միջոյ ի բաց հալածեմք, եդեալ ի նզովս զնոյնս ընդ նոսին՝ փակեմք ընդդէմ նոցին զկենացն մուտ եկեղեցականս զաւթիւ» (ԼԴ. գլուխ, էջ 181)։ Այն Նարեկացին որ ընդունում է թէ Քրիստոս հէնց մոլորեալ ոչխարի համար է աշխարհ եկել, որը պիտի իրեն անընդհատ ներէ եթէ օրական եօթանասուն անգամ եօթն էլ մեղանչէ, այդ Նարեկացին նզովում է և հալածում մի մոլորածի, որովհետև նրա մէջ խօսում է վարդապետ Նարեկացին, եկեղեցու պաշտօնեան։ Աւելի պարզ այդ երևում է Նարեկացու ընդդէմ «պիղծ աղանդաւորացն Թոնդրակեցւոց, նոր Մանիքեցոց» գրուած հատուածից (ՀԵ. գլուխ, էջ 381). ուր նա յայտնում է, որ եկեղեցին չընդունողին «մերժէ յերեսաց իւրոց Հայրն ամենակալ, ի ձեռն Բանին իւրոյ էակցի, բարձեալ ի նմանէ և զաւանդ չնորհի Հոգւոյն

փառակցի. փակեսցէ զդուռն կենացս այս առագաստի յանդիման նորին» (387)։ Թոնդրակեցոց աղանդին պիղծ ասող և երկնքի արքայութիւնից նրանց հեռացած համարող Նարեկացու մէջ խօսում է եկեղեցու տօզման պաշտպանողը։ Այս նզովքն ու մերժումը եկեղեցուց՝ կարդում է այն Նարեկացին յանուն Քրիստոսի, որին համար ասում է թէ ներող է երկայնամիտ, բազումողորմ, որ մարդասէր է, որի համար ոգևորուած գոչում է «Որ ոչ եկիր կորուսանել զմարդկան ոգիս, այլ կեցուցանել» (էջ 213)։

Թւում է ինձ, որ նրա այս գրած ամբողջ գլուխը, յատկապէս Թոնդրակեցոց դէմ գրած մասը (ՀԵ. գլուխ). աղօթագրքի համար չէ եղել և ոչ էլ աղօթք է, յետագայում միայն մտցրել են աղօթագրքի մէջ և ստացուել է մի անհամերաշխութիւն, հակասութիւն՝ աղօթքի ընդհանուր ոգու համեմատութեամբ։

Նարեկացու ըմբռնած Քրիստոսը ի հարկէ Աւետարանի ընդհանուր ոգուց է բղխում։ Նարեկացին աղանդաւոր չէ, մի նոր ուսմունքի հիմնադիր, Քրիստոսի Վարդապետութիւնը նոր ձևով մեկնող. մի նոր կրօնական վերածնութիւն–հոսանք առաջ բերող, ինչպէս ռէֆորմացիայի ժամանակ արևմտեան Եւրոպայում եղան Լուտէրը, Կալվինը, Ցվինգլի։ Նա միայն Քրիստոսի անձնաւորութեան մի կողմով յատկապէս գրում է. Քրիստոսին ընդունելով Աստուած, չեշտում է յատկապէս նրա ողորմած, գթած, ներող լինելը և այդ էլ դառնում է նրա հոգու վերածնութեան աղբիւրը։

Այս ըմբռնման արժէքի կարևորութիւնը կ'երեւայ, երբ համեմատենք միջնադարի կաթոլիկ եկեղեցու հաւատաքննութեան ժամանակ եղած Քրիստոսի

զաղափարի հետ։ Այստեղ յանուն Քրիստոսի, որ մի ահեղ դատաւոր է, չզիջող, խիստ, սարսափ տարածող «աղանդաւոր» անուան տակ բռնածներին կախում, տանջում, սպանում են զարհուրելի չարչարանքներով, մինչդեռ աղօթող Նարեկացու Քրիստոսը սիրող սիրտ, գուրգուրացող հոգի, ներող միտք ունի, ու ամեն կերպ աշխատում է մեղաւորին զարձի բերել, բայց երբե՛ք տանջել, չարչարել։ Նարեկացու այդ ըմբռնումը կենդրոնականն է Քրիստոսի անձնաւորութեան մէջ և լաւագոյնս արտայայտուում է ԽԹ. գլխում, ուր ասում է. «Ոչ զերկիւղս իւրովքն զարդուք և հրեշտակացն պայծառութիւնք. ոչ զերկիւղս և զմարդկութիւնս և որ առ սուսա են զարմանութիւնք. ոչ զսահման լայնութեան ծովու և որ ի նմա են եղելութիւնք. ոչ զանդունդս աղխուքն հանդերձ և որ ի սմա են անբաւութիւնք. ոչ բարձրացար յօրինմամբ այսքանեօք վեհիւք որչափ առ խմս կարեկցութիւն, յասելն քո սուրբ մարգարէիւն, քաղցրութեանց յուսոյ բարութիւն, ո՞վ է Աստուած իրրև դիս կարող թողուլ միշտ զմեզս և ջնջել զանօրէնութիւնս» (էջ 251)։ Տիեզերքը իւր բոլոր հրաշալիքներով Քրիստոսի ստեղծուածն է, բայց այդ այնքան զարմանալի ու գրաւիչ չէ, որքան այն, որ Քրիստոս մարդկանց նեղրել գիտէ ու մեղքերը թողնել։

Անձապատական ոգով լցուած, մեղքի մէջ լողացող Նարեկացու համար անչուշտ այդ գիծն է հարկաւոր, և այդ էլ նրա գրաւում է։ Հասարակական տեսակէտից մեղաւորին ազդելու գաղափարն էլ արժէքաւոր է, և Նարեկացու–աղօթաւոր Նարեկացու այդ ըմբռնումը արժէք ունի մանաւանդ Միջին դարում երբ անհանդուրժելիութիւն կար կրօնական ազա-

տութեան խնդրում և սարսափելի պատիժներ ու տանջանքներ պետական իշխանութեան մէջ։

Քրիստոսի ներողամտութիւնն է նրա փառքը. «Ոչ լ պարգեւն ես այնքան հռչակեալ, որքան յողորմութեան» (ԺԴ. գլուխ, էջ 61). նրա «ծայրագոյն բարութեան» չնորհիւ է, որ տկարը պաշտպանել է, չարագործը ներել։ Քրիստոս թէև կարող է ամեն ինչ անել իրրև հզօր, կարող է պարծել և գատապարտել և օրէնքի խստութեամբ վարուել, բայց նա այդ չի անում, որովհետև ունի «երկայնմտութիւն, քաղցրութիւն և քաւութիւն» (էջ 61)։ Այս է, որ Քրիստոսին սիրելի է գարձնում, պաշտամունքի առարկայ, և Նարեկացին՝ իրր սքանչացող էկզալտիկ բնաւորութիւն, ռօմանտիկ ու արևելեցի բանաստեղծ, անհուն բարեպաշտութեամբ անսահման գովում, փառաբանում է Քրիստոսին։

Նրա սէրը առ Քրիստոս անսահման է, բուռն, անկեղծ ու խորը և նա, կարելի է ասել, իրր պաշտած գաղափարն այնպէս է փառաբանել, գովել, որ ոչ մի հայ բանաստեղծ այդ չի արել։ Ի նկատի պիտի ունենալ այն առաւելութիւնը որ ունէր Նարեկացին իրր ներքողեաններում միւս բանաստեղծների հետ, որոնք սէր, գեղեցկութիւն, աչխարհ, կեանք են գովել, երգել։ Քրիստոս բոլոր լաւագոյն առաքինութիւնների մարմնացումն է, ապա ուրեմն Աստուած. իսկ այդպիսին այս աչխարհում չի կարող պարփակուել. նա ժամանակից, տարածութիւնից դուրս է. սովորական օրէնքներին ենթակայ չէ. բացարձակ է. հետևապէս նրան ամենաբարձր առաքինութիւնները կարելի է վերագրել գերագրական աստիճանի։ Նարեկացին այդ դէպքում անկաչկանդ է և մտքի թռիչքին սանձ չի

դնում, զգացմունքին պատաւար չէ քաշում։ Ուրիշ է սովորական նիւթ երգող բանաստեղծը, որի նիւթը սահմանաւորի և անկատարի, ժամանակաւորի, մահկանացուի տարրեր ունի իւր մէջ, այդ դէպքում բանաստեղծը որոշ չրջանակում է գտնւում և չափազանցութիւնը դառնում է կամ ծիծաղելի կամ անհաւատալի։

Թւել մի առ մի այն գովքը, այն ածականները, որ նարեկացին Քրիստոսին տւել է իւր աղօթագրքում կը նշանակէ նրա աղօթագրքի մի քառորդը արտագրել, այնքան շատ են. երբեմն էլ կրկնութիւններ։ Այդ ածականները ոչ այնքան նարեկացու ոգքան և միտքը պարզում, նոյնքան և նրա զգացմունքներն են արտայայտում. նա անսահման, անզուսպ սիրով է լցուած առ Քրիստոս և այդ սէրը նրան դարձնում է խօսող, երգող, ճառող, օր ու գիշեր կարող է նա գովել ու չկշտանալ. բերեմ մի օրինակ այդ գովքից, «Աստուած բոլորից, անճառ մեծութիւն, անբովանդակելի բնութիւն, անքննելի իսկութիւն, հզօր զօրութիւն, կարող բարձրութիւն, անպակաս լրութիւն, անճառ ժառանգութիւն, վայելչական վիճակ, առատ պատրաստութիւն, անստուեր իմաստութիւն, տենչալի տուրք, անձկալի ձիր, բաղձալի բերկրութիւն, անտխուր հանգիստ, անտարակոյս գիւտ, անկապուտ կեանք, անծախելի ստացուածք, անփոխանորդելի բարձրութիւն, ամենարուեստ բժիշկ, անսասանելի հաստատութիւն։ Դարձուցիչ մոլորելոց, գտիչ կորուսելոց, յոյս ապաւինելոց, լոյս խաւարելոց, քաւիչ մեղուցելոց, ծածկարան փախուցելոց, անդորրիչ խռովեցելից, փրկութիւնդ մահացելոց, արձակիչդ կապելոց, ազատիչդ մատնելոց, պատսպարանդ սահեցելոց, վչտակիցդ

գայթակղելոց, երկայնմտութիւն տարակուսելոց։ Լուսոյ տեսակ, ցնծութեան ցոյցք, օրհնութեան անձրեւ, հոգի երեսաց, զօրութիւն դիմաց, հովանի գլխոց, չարժարան չրթանց, ազդումն բանի, կառավար անձին, բարձումն բազկի, ձգումն ձեռին, երասանակալդ սրտի։ Ընտանի անուն, մերձաւոր ձայն, կցորդութիւն հարազատ, խնամածութիւն հայրենի, խոստովանեալ անուն, պաշտեցեալ պատկեր, անպարագիր տիպ, երկրպագեալ տէրութիւն, բարեբանեալ յիշատակ, խընդութեան մուտք, անվրէպ չաւիղ, փառաց դուռն, ճշմարտութեան ճանապարհ, երկնաճեմ սանդուղք։ Եւ այլ բազմութիւն բանից գովեստից անհամար կարգաց, և տանց անբաւից, զոր ոչ բերէ բերանս երկրածին, և ոչ տանի գործի մարմնեղէն, և ոչ կշռեն լուձ հոգեղէնք» (Լի. գլուխ, էջ 163–164)։ Այս ածականները, իրար ետևից անընդհատ գրելը, հակադրութիւններով, այլաբանութիւններով համեմելը զուտ արևելեան–արաբական պարսկական է և նրանց բանաստեղծների գրուածքներում յաճախ է պատահում. Նարեկացին իւր ժամանակի ոճն ունի, աւելի զարգացրած ու լուրաձև մշակած (*)։

Նարեկացին էլ, իբրև քրիստոնեայ և վարդապետ, ընդունում է երրորդութեան գաղափարը. գիտէ որ կայ Հայր, Որդի և Սուրբ Հոգի Աստուած, բայց նա ամենից առաջ և ամենից շատ Քրիստոսին է դիմում, նրան է իրեն հարազատ զգում, որովհետև նա՝ Քրիստոս մարմնացել է մեզ համար մեզ պէս, որ մեզ դարձնէ իւր համար իւր պէս (85)։ Քրիստոս մարդ է,

(*) Քրիստոսին տւած ածականների, գովքի գլուխներն են Դ., Ե., ԻԴ., ԻԷ., ԻԸ., ԻԹ., Լ., ՃԷ., և այլն։

իբր մարդ ծնուել է, ապրել, գործել, ուրեմն և նա կը հասկանայ տառապող մարդուն. նա Աստուած է դարձել և Նարեկացին այդ բանին է ձգտում, ուրեմն նա էլ պէտք է ճանապարհը ցոյց տայ և օգնէ իրեն:

Նարեկացու Քրիստոսը, այսպիսով կատարելագործուած, առաքինութիւնների մարմնացումն է, մարդն է և նրան մօտենում է առանց սարսափի, առանց վերացական տաւտանքների ու դեգերումների, այնպէս, ինչպէս որդին սիրող հօրը, մտերիմ ընկերը իւր սիրած ընկերոջ: Այս ընտանեութիւնն ու մերձաւորութիւնն է, որ Նարեկացուն իրաւունք է տալիս իրեն համեմատելու Քրիստոսի հետ. եթէ նա կայծակնացայտ եհովան լինէր, ամպ ու որոտի մէջ երևացող, հրեղէն կառքում չրջող՝ Նարեկացին չէր խլզախի այդ անել. միայն գլուխ կը խոնարհէր ու հրամանի կը սպասէր, մինչդեռ նա երբեմն իրեն զգում է երդուեալ հաւատարմատարի, վաստաբանի դերում ու Ս. Գրքից վկայութիւններ բերելով իրեն պաշտպանում է Քրիստոսի – մարգասէր Աստծու առաջ:

Ահա համեմատութեան մի նմոյշ, ուր երևում է թէ ինքը դեռ մարդ է և ձգտում է այն խէալին, որ Քրիստոսն է: Նարեկացին զգում է իրեն Շանթի լեզուով ասած «դեռ ոչ այն մարդը որ Աստուած ըստեղծել է ուզել». Դու լոյս ես և յոյս, և ես խաւար և յիմար. դու իսկութեամբ բարի գովելի, և ես համայնիւն չար ապիկար. դու տէր ստորիցս և երկնից, և ես անիչխան չնչոյս և հոգւոյս. դու բարձրեալ ի կարեաց գառեալ, և ես տաժանաւոր և վտանգաւոր. դու ի վեր քան զկիրս երկրի, և ես կաւ անարգութեան գարչութեան. դու ըստ մարգարէին, մնաս յաւիտեան յանբաւ բարձրութեան, և ես միշտ կորն-

չիմ՝ ըստ նորին բանին. ի քեզ ոչ է մթութիւն կամ նենգութիւն, և ես բավանդակն լ՛սկ եմ, որ զաւանդն իմ ոչ պահեցի» (ՋԳ. գլուխ, էջ 439): Տրամաբանական վերլուծութեան ենթարկելով կը տեսնենք, որ այստեղ մտքերի չփոթութիւն չատ կայ. այսպէս եթէ ինքը խաւար է չէր կարող լոյսին տեսնել. եթէ ինքը անարգ կաւ է չէր կարող գիտակցել Քրիստոսի յաւիտենական բարձրութեանը և գոյութեանը. Քրիստոսին նա ասում է, որ «ըստ մեզ» եղաւ, մարդ դարձաւ. Նարեկացին ինքն էլ մարդ է և կաւ անարգ. մի թէ Քրիստոս էլ անարգ կաւ դարձաւ ուրեմն. ի հարկէ ոչ. Նարեկացին այդ ոչ մտածել կարող էր և ոչ մտածել է. պարզ է, որ նրա համեմատութիւնները այլաբանութիւններ են միայն ու բանաստեղծական թռիչքներ և ոչ տրամաբանական S. P. և M. անդամներով կազմուող հաւաքաբանութիւններ:

Նոյն Նարեկացին, որ ասում է իւր համար թէ անարգ կաւ է ինքը, ե. գլխում էլ ասում է, որ Քրիստոս մարդուն իւր պատկերով է ստեղծել. «Զարդարեցեր բանիւ, փայլեցուցեր փչմամբ, մտօք ճոխացուցեր, իմաստիւք աճեցուցեր, հանճարով հաստատեցեր, ի չնչականացն որոշեցեր, հոգով իմանալեաւ խառնեցեր, իշխանականին գոյլս պճնեցեր» (էջ 29): Ահա այս է մարդը, որ ունի տեսլներ Քրիստոսից ստացած և դրանց վրայ վստահանալով է, որ մարդը, նաև Նարեկացին՝ ինքը կարող է ձգտել Քրիստոսին ու կատարելութեան հասնիլ: Այդ տեսլները Նարեկացու մէջ այնքան ուժեղ են, որ նա վարանում է ասելու թէ ինքն էլ աստուածային գործ կարող է կատարել և իւր գրածը այդպիսին է. այս միտքն է երևում հետևեալ տողերից. «Զսկսեալս իմ դու կա-

տարեա՛. եղիցի հոգի քո խառնեալ ի սա. չունէ զօրութեան մեծիդ միասցի ի քո լինձ չնորհեալ ստեղծաքանութիւնս. զի գու տաս զօրութիւն վհատեալ սըրտից» (Գ. գլուխ, էջ 26)։ Նարեկացին զգում է, որ իրեն մէջ Քրիստոսի չունէ կայ, որ ինքը այնպիսի լաւ գործ է կատարում, որ կարող է նրան խնդրել, որ Քրիստոս աւարտէ։ Անարգ կաւը, յիմարը, խաւարը, ինչպէս համեմատութեան մէջ էր ասում ինքն իրեն համար այդտեղ Քրիստոսի չունէ ունեցող է դառնում, ստեղծաբանութեան չնորհք ունեցող։ Ինքը ի հարկէ պակասաւոր, մեղաւոր է և այդ պատճառով Ե.—Ժե. գլուխը անընդհատ իւր մեղքերն է թւում, բայց և գիտէ, որ մարդ չկայ, որ մեղք չունենայ. եթէ Յովհաննէս Աւետարանիչը կատարեալ մաքրութիւն ունենալով ասում էր, թէ «թէ ասիմք մեղս ինչ մեք չանել, սուտ առնեմք զնա» (էջ 70)։ Ի՞նչ խօսք, որ Նարեկացին պիտի ասէր, որ ինքը մեղաւոր էր, բայց և պիտի ձգտէր իւր իտէալին—Քրիստոսին, որովհետև ինքն էլ նրանից ունի իւր մէջ չունէ, ոգի, Քրիստոս էլ «ըստ մեզ էր» մարդ էր և աշխատում է իւր նման դարձնել մարդկանց։

Բացարձակի, անսահմանի, լաւագոյն առաքինութիւնների կատարեալ մարմնացում Քրիստոս յատուկենական է, մշտ կենդանի, ամեն ինչ տեսնող, երկինքի ու երկրի, մարդկանց սրտերի բոլոր դաղտնիքներին ծանօթ և նրա բնակութեան վայրը, ըստ Նարեկացու, երկինքն է, որը նոյնպէս անսահմանութիւնն է և անվերջ ժամանակի տեսակէտից։ Այս դէպքում արդէն խօսում է մշկնադարի Նարեկացին, և նա երկինքը զարդարում է այնպէս, ինչպէս մշկնադարի մարդու ըմբռնումն է։ Քրիստոսին չրջապատում են

հրեշտակաց գնդերը, մարտիրոսաց դասեր, առաքեալների, մարգարէների, հայրապետների, կոյսերի, ճգնաւորների և առ հասարակ բոլոր սրբերի խմբերը, և անընդհատ փառաբանում են Քրիստոսին։ Նոյն եկեղեցական ըմբռնմամբ Քրիստոս վերջին դատաստանի դատաւորն է ու թէև ահեղ է, հզօր, արդարամիտ, սակայն անգամ այդ վերջին րոպէին էլ Նարեկացու Քրիստոսը ներող է և ոչ միայն ահեղ դատաւոր։ Նարեկացին սպասում է, հաւատում է, որ վերջին վայրկեանին իսկ եթէ մեղաւորը զղջայ, խնդրէ՝ կ'ազատուի դատապարտութիւնից։ Այսքան անսահման է Քրիստոսի ներողամտութիւնը, Նարեկացու ըմբռնած Քրիստոսի։

Այդ Քրիստոսն է, որ ըստ Նարեկացու սկիզբն է ամեն բանի և ամեն բանի մէջ լրիւ կայ։ Նա մահուան մէջ կեանք է, խաւարի մէջ լոյս։ Նրան ծունր են դնում երկնաւորները, երկրաւորները և սանդարամետականները։ Նարեկացու համար նա Աստուած է, կեանք, ապաւէն, յոյս և վստահութիւն (ՂՓ. գլուխ, էջ 536)։ Այս հաւատքն է որ նրան թևաւորում է իւր հոգու սաստիկ պայքարը միշտ առաջ տանելու իւր անթիւ չարիքների դէմ կռւելու, քանի որ երբ Քրիստոսի ողորմութեան նշոյլները երևալուն պէս, «տեղի տան տխրութիւնք, նահանջին հեծութիւնք, փախնու խաւարն, մեկնի մէգն, մերժի մառախուղն, փարատի մռայլն, սպառի աղջամուղջն, վերանայ մութն, գնայ գիշերն, տարագրի տաղնապն, չքանան չարիքն, հալածին յուսահատութիւնքն» (ԽԱ. գլուխ, էջ 212)։ Այդ մեծ ոյժն ունի Քրիստոս, որովհետև նա կայ «ի տարր գոյի և յեղբս ծագաց աշխարհի» (213)։ Ամեն տեղ ու ամեն տարրի մէջ կայ։ Այս ըմբռնումը պան-

թէխտական չունչ ունի իւր մէջ և Նարեկացու որոնող, զմայլուող բանաստեղծական ոգուն այդ հարազատ է և հասկանալի: Նա տիեզերականն է ձգտում ընդգրկել ու նրա մէջ էլ իրեն կատարելութեան հասցընել. այդ ձգտման համեմատ էլ նրա իտէալը տիեզերականի մէջ պիտի լինի և տիեզերականը ընդգրկած:

Գլ. Ե.

Ապաչխարող Նարեկացին:

1.— Ժ.րդ դարու հայ մարդն ընդհանրապէս ապաչխարող էր: Սատանայի կապանքներից արձակուելու երկիւղի ակնկալութեամբ համակած ողջ քրիստոնեայ աշխարհի հետ հայ մարդն էլ սպասում էր չարի թագաւորութեանը և իւրաքանչիւր ոք իւր հոգու փրկութեան համար էր մտածում, այս ու այն ձևով: Թագաւորից սկսած մինչև ռամիկը, հայրապետից մինչև դպիրը կարծես ապաչխարող էին: Ժամանակի հայ ժողովրդի պատկերը կարծես ողբ ու կասկածի, սարսափի ու տագնապի ընդհանուր ֆոն ունէր:

Այդ համատարած ապաչխարութեան մէջ էր և Նարեկի վանուց վանական մեծ ապաչխարող Արիծուն Գրիգորը, սակայն իբր եզակի դէմք, իբր առանձնայատուկ ապաչխարողների գլխաւոր ու ուշագրաւ մեծութիւն: Իւր հոգեկան ուրոյն կառուցուածքի եւ տեսլեների չնորհիւ ապաչխարութեան զգացումը իւր կատարելութեան էր հասցրել ու այդ հոսանքի՝ ապաչխարողների տոն տուողը, առաջնորդը դարձել բնականաբար և ոչ որևէ ընտրութեամբ կամ իշխանաւորի նշանակումով:

Ի զուր չէ՞ր, որ նրան էին դիմում բազմաթիւ անապատականները և միանձները իրենց ապաչխարելու աղօթքներ սովորեցնելու: Այդ ժամանակի «հրատապ հարց»ի պահանջի հետևանք է Նարեկացու բանաստեղծական պատկերաւորութեամբ հարուստ «Ողբերգութեան Մատեան»ը, որ գրուած է ոչ միայն ա-

պաշխարող մխանձանց, այլ և ամեն դասակարգի ու տեսի մարդկանց համար, որովհետև ապաշխարելը ժամանակի մարդու պահանջն էր:

Ապաշխարող Նարեկացու համար «Բոլոր գուսմարս բազմահոլով տիեզերակոյտ քրիստոնէից» (Գ. գլուխ, էջ 18) ապաշխարող են. որովհետև բոլոր մարդիկ էլ մեղաւոր են. ուստի և իւր ողբերգութիւնը «որ զամենեցունց ունի զկրից պատահմանց նշաւակեալ յիւրում պատկերի» (էջ 18), վերաբերում է և՛ երիտասարդին և՛ ծերին և «Մինչակայնոց և պայազատաց, չինականաց և տոհմականաց, արուաց և իգաց, հրամայողաց և հնազանդելոց, պերելոց և նուաստից, վեհից և փոքունց, պատուականաց և ոամկաց, ձիավարժից և սոսկականաց, քաղաքականաց և գեղչկաց, արքայից զոռոզութեանց, ի սանձս ահաւորին ըմբռնեցելոց: Միայնացելոց՝ վերնականաց խօսակցաց. մաքրականաց, տիրանուէր զգաստութեանց, քահանայական երջանկակրօն ընտրութեանց, այցելութեանց բարեզգեստից դիտողութեանց, աթոռակալութեանց նախագահից, սրբանուէր տեսչութեանց, որոնց ոմանց աղերս աղաչանաց, և ոմանց խրատ բարեաց՝ առ դէմս աղօթից այսու մատենիւ մատակարարեցի, ձեռնարկեալ հոգւոյդ զօրութեամբ, կարգել ինձ մաղթանս բազմագիմիս, և ամենեցուն սոցին խնդրուածս՝ գըթութեան մեծիդ յանդիման լինել սովաւ հանապազ» (Գ. գլուխ, էջ 18):

Ամեն մարդ ունի կիրք, որը մեղքի աւիթ է դառնում, մանաւանդ քրիստոնեան, որը որոշ ըմբռնում ունի այս աշխարհի մասին Քրիստոսի տւած պատուէրների հիման վրայ. բնականաբար Նարեկացու համոզումով պէտք է ապաշխարէ և նա վարուել է

որ ինքն ամենատեսակ մարդկային կրքերին ծանօթ է, ու դրանց մասին էլ գրում է:

Որքան և Նարեկացին իրեն ընդհանուր ապաշխարողների կարգի մէջ ընդունում, սակայն գրուածքից երևում է և ինքն էլ բազմիցս խոստովանում, որ իւր նման մեղաւոր ընդհանրապէս չկայ, որ իւր յանցանքները տարբեր են քան ուրիշներինը, որովհետև ինքը տարբեր դրութիւն ունի: Ապաշխարող Նարեկացին սոսկ անապատական չէ, մի այրի մէջ իւր մարմինը տանջանքների ենթարկող, կտրուած աշխարհից և մարդկանցից, այլ նաև քահանայ է, կուսակրօն, վարդապետ է, նա ուսուցիչ է, նա վանքի միաբան եղբայր է, նա գրական աշխատաւոր է, քարոզող է և հետևապէս աւելի պարտականութիւններ ունի իբր քրիստոնեայ: Իւրաքանչիւր պաշտօնի պարտաւորութիւն նրա մէջ ծնում է մեծ պատասխանատուութեան գիտակցութիւն. իւրաքանչիւր պաշտօնի համար ունի իւր որոշ գաղափարը. երբ համեմատում է իւր արածը այդ գաղափարի հետ տեսնում է անհամապատասխան լինելը, պաշտօնի գաղափարի համաձայն չգործելը և նրա զգայուն հոգում ծնում է վիշտ, դժգոհութիւն և ողբերգութեան առիթ դառնում. նա ամեն տեղ կատարեալին, բացարձակին է ձգտում, իսկ իբր մարդ իւր ոյժերը տկար են դրան հասնելու և ողբերգութիւն է ծագում հոգում. իդէալին ձգտողի և չհասնողի ողբերգութիւն: Նա իրեն նկրել է եկեղեցուն, նա ի պաշտօնէ Քրիստոսի քարոզած սկզբունքները կեանքում պիտի իրականացնէ և այդ նրան լիովին չի յաջողւում, ուստի և «Զայն հառաչանաց, հեծութեան սրտի, ողբոց աղաղակի» է վերընծայում գաղտնեաց տեսողին (Ա.

գլուխ, էջ 3)։ Իւր մատեանում սկզբից մինչև վերջը։

Նա իրեն «ի չարս գումարտակաց» է համարել (վանականների չարքում) (ԻԴ. գլուխ, էջ 107), նա «Աստուած է զգեցալ» (ԼԴ. գլուխ, էջ 169)։ ԵՒ պատրաստ անելու «Ամենակալ բարերար մարդասէր Աստուած» հոգեշունչ աղօթքն ասել «նախընծայ սկզբան պատարագին, յորում գառնըդ երկնաւոր զենաւ» (էջ 170)։ Նա «պետ վարժից է կոչեալ» բարբի, բարբի անուանուել, բարի է աստուել, մարդկանցից սուրբ է վկայուել, արդար է գաւանուել, հսկող է կոչեալ (ՀԲ. գլուխ, էջ 366)։ Այսքան բարեմասնութիւնների տէր համարուող, իւր իսկ կենդանութեան ժամանակ սուրբ կոչուող հեզութեան ու խոնարհութեան ոգով լի ապաշխարող Նարեկացին բնական է, որ իրեն ճընշուած պիտի զգար։ Ունակ, մեծ գործ կատարող մարդը երբեք հաճոյքով չի լսում իրեն երեսն ի վեր չըռայլուած գովաբանական ածականները. աւելի շատ ճնշւում է և կրկնապատկում եռանդը որ կարողանայ արդարացնել ուրիշների իւր մասին ունեցած գաղափարը։ Նարեկացին այդ վիճակում էր։

Հասկանալի է այժմ, թէ ինչո՞ւ Նարեկացին անընդհատ իւր անձն է դատուում, մեղադրում. նա եգիպտոսի անապատականի նման չէ ապաշխարում, մէկ ծնրադրութիւնը չատացնելով, մէկ ծոմն ու պահքը, մէկ արշաւաջլով իրեն խարազանելը, մէկ ուտելիքն ու խմելիքը նւազագոյնի հասցնելը։ Նարեկացին բացառապէս իւր հոգու վերլուծութեամբ է զբաղւում, իւր կրքերն է հոգեբանական նուրբ մանրակրկտութեամբ հրապարակ հանում։ Նա ապրում է ինքը իւր հոգու աշխարհում ամփոփուած և այդ զարմանալի աշխարհը սրատես հայեացքով ընդգրկում է լրիւ ու

դրսերևւում բանաստեղծական սիրուն ոճով ու տաք զգացումով։ Նա իւր հոգու աշխարհի մի գլխաւ կողմն է քննում ու պարզում — այդ կրքերի — վատ հակումների աշխարհն է։ Նարեկացին իւր ժամանակի մեղքի–կրքերի աշխարհի ամենացայտուն ու կարելի է ասել համաշխարհային լաւագոյն արտայայտիչ երգիչն է։

Նա միջնադարի միստիկայի և ասկետիզմի հարազատ զաւակն է, խտացրած իւր ժամանակի հայ և օտար լեզուներից թարգմանած ապաշխարողական գրուածքները։ Նրա զգայուն հոգին այդ գրուածքներից խտացրել է մեղքի աշխարհայեացքը լրիւ և այնպէս խորն է տպաւորուել նրա արևելցու վառ երեւակայութեան մէջ, որ այդ բազմաթիւ և բազմատեսակ մեղքերը, որոնց մասին միայն կարդացել է, համոզուած է որ ինքն էլ կատարել է, որքան էլ նրա կեանքը, որքան մեզ յայտնի է, այդպիսի դէպքեր չի ունեցել։ Նա տեսականը գործնականի ուժգնութեամբ ապրող է. այն բնաւորութիւններից է, որոնց երևակայութեան և իրական աշխարհի մէջ մեծ պատնէշ չկայ, այլ մէկը միւսի չարունակութիւնն է, կամ լաւ ևս է ասել մի միւսութիւն է։

Մարդկային կրքերը — վատ հակումները նկարագրող ու երգող Նարեկացին ինքն էլ կրքի ազդեցութեան տակ է ընկնում կրքերի մասին գրելիս, կրքոտում է, և նրա կրքի ալէկոծումների հետ ուռճանում, մեծանում է և իջնում, խոնարհւում, հզօրանում և թուլանում, մէկ յուսահատւում է իսպառ իւր մեղքերի ծանրութիւնը չիչելով, մէկ կենդանանում ու յուսոյ փրկութեան նշոյլ տեսնում. մէկ մինչև ծովի անդունդն է իջնում և ձեռքերը կարկառում

օգնութեան աղերսը չրթունքին, մէկ իբր փաստաբան, որ կանգնում է դատարանի առաջ, սպառազինուած օրէնքների հմտութեամբ, իրեն պաշտպանում է և նոյն իսկ պահանջ գնում, որ իրեն պէտք է վրկել, ազատել:

Մեղքի և զղջման զգացումները հաւատարապէս ուժեղ կրքեր են մարդուն ծայրայեղութիւնից ծայրայեղութեան հասցնող. Նարեկացին այդ գիտէ և ասում է «Եւ արդ քանզի միապէս մուտն է կորստեան և զղջումն ուժգնապէս և մեղանչելն մոլեգնաբար» (ժ. գլուխ, էջ 46). ուստի և խուսափում է անընդհատ մեղքերը թւելուց և դիմում է ինքնապաշտպանութեան. նա տարբերում է մեղքի և զղջման հակադիր ոյժերի միջև չի կարողանում մէկի վրայ կանգնել, հաստատուել:

Յաւիտենական երկուութիւնը նրա մէջ ուժեղ է. բարին ու չարը միշտ են պայքարում, և նա զգայուն է, ուշադիր ու լարուած հետևում է իր հոգում կատարուող այդ մեծ մրցութեանը: Նա այդ հոգեկան վիճակը պատկերացնում է նմանեցնելով այն մարդուն, որի ձեռքին երկու բաժակ կայ՝ մէկը արիւնով, միւսը կաթով լի. երկու բուրանոց՝ մէկի մէջ խունկ, միւսում՝ ձենձեր. երկու սկաւառակ՝ մինը քաղցր, միւսը՝ դառը. և աւելի հոգեբանօրէն արտայայտուած որի մէջ կայ «երկու ազդմունս» (Լ. գլուխ, էջ 150): Այդ երկու ազդմունքների մրցութիւնն է նրա հոգում իշխում և իւր Ողբերգութեան 95 գլուխներում սակաւ բարութեամբ այդ մրցութիւնն է նա հոգերգում: Այդքան երկար, ընդարձակ նկարագրութիւնը ունի և կրկնութիւններ, ունի ոճի, մտքերի, բառերի դարձուածքների կողմից. սակայն ամբողջը մի աղօթք է, մի երկա՜ր «Մեղայ»:

Նարեկը վշտի փղձկումների, տառապանքների, նկարագրութիւնների, մեղքերի արտայայտութիւնների, մի ամբողջութիւն է և նստիլ ծայրէ ի ծայր կարդալ դժուար է, այլ և Նարեկի լմաստը կը կորչի, ճիշտ այնպէս, ինչպէս մի քնարերգու բանաստեղծի ոտանաւորների ժողովածուն մի շնչում կարդալ միտք չունի, որովհետև տարբեր տրամադրութիւնների արդիւնք են դրանք և տարբեր զգացումներից բղխած:

Նարեկացին իւր իտէալ Քրիստոսի հետ համեմատելով իրեն աւելի ու աւելի է մեղաւոր զգում, յուսահատում, որովհետև Քրիստոս մաքուր էր ըստ ամենայնի, իսկ իւր մէջ կրքերի խլրտումները անընդհատ չատանում են: Նա մեղքի մասին տարբեր գաղափար ունի, քան սովորականն է. նա իւր մէջ կրած անտեսանելիները իրրև տեսանելիներ է նկատում, սրտի մէջ կրած գաղտնիքները, իբր արտասանուած խօսքեր. ձեռքը զայրոյթի պատճառով բարձրացնելը՝ իբր արիւն թափել. ակամաները կամաւոր մեղք, դըրսից ստացածը իբր իւր բնութիւնից բղխած. և աւելացնում է «Զայսոսիկ յաճախեա՛ կուտեա՛, կրկին յանձնառութեամբ վերստին պատմեալ աստանօր մեծաւ հեծութեամբ զչէոցն իբր զեղելոց» (Խե. գլուխ, էջ 222): Զեղածն էլ եղած է համարում, մեղքը բոլորովին այլ ըմբռնման տակ է դնում, ուստի և բնական է, որ իւր բոլոր աղօթքներն էլ սկսում է «Վերստին յաւելուած, կրկին հեծութեան նորին հրսկողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի: Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ» նշանակալից խօսքով: Նա ընդունում է, որ իւր մեղքերը այնքան չատ են, որ եթէ ծովը թանաք դառնայ և երկար անսահման դաշտերը – քարտէս գրելու և անտառների եղէգները

դրիչները, այնուամենայնիւ չեն բաւի իւր մեղքերը թաւելու (Թ. գլուխ, էջ 42)։ Նա ասում է, որ եթէ դրախտից ելնող չորս գետերն էլ, որոնք լիապէս ոռոգում են դաշտերը և բաւարարում մարդկանց, իբր արցունք հոսեն իւր աչքերից դարձեալ չի զովանայ։ Նա մեղաւոր է զգում ոչ միայն իւր կենդանութեան ժամանակ, այլ և ծնուելուց առաջ. ուստի չգիտէ ո՞ր մեղքերը թաւէ «Զներկայի՞ցս, զորս արդէն ունիմ, թէ զանցելոցն, զոր մթերեցի. զապագայի՞ցն, յորոց կասկածեմ» (ԻԸ. գլուխ, էջ 133). Նրա մեղքերը ջրում ապրող ու առատութեամբ ածող ճճմներից էլ շատ են (Զ. գլուխ)։ Այսքան ծայրայեղութիւն, մինչև անբնականութիւն. հիւանդագին ըմբռնման հասնող Նարեկացին չէր կարող անընդհատ լրեն չպախարակել և ամեն տեսակ ածականներ չտալ. ածականները որոնք վարձես ուղղուած են իւր անձի դէմ՝ վարկաբեկելու, ստորնացնելու, ցեխին հաւասարեցնելու այն, որովհետև մարմինն է մեղքի բոյնը, իւր ամենամեծ հակառակորդը. որքան անզուսպ է նա մեղքերը թաւելում, նոյնքան անողոք է լրեն վատաբանելիս։ «Տախտակ անչարժուն, կոճղ կիսայրեաց, արձան անզգայ, պատկեր անբարբառ, զգայութիւն անչունչ, ողորմելի տեսիլ, աչխարելի կերպարան, ողբալի օրինակ, եղկելի դէմք, արտասուելի նմանութիւն, լռեցեալ լեզու, ցամաքեալ խոտ, թօթափեալ ծաղիկ, ծորեալ գեղ, չիջեալ ղամբար, դատարկ կոկորդ, խոպանացեալ սիրտ, աղխեալ ավդարան, քարշեալ աղբիւր, թալկացեալ մարմին, ժողխեալ ոքովային, քակտեալ տաղաւար, կոտրեալ ոստք, բաժանեալ յօդք, հատեալ ծառ, սղոցեալ արմատ, թաղեալ տուն, հնձեալ արտ, ստորախուղեալ բոյս, օտա-

բացեալ բարեկամ, մոռացեալ պահեստ, թաղեալ գարշութիւն, մերժեալ ատելի, քարձեալ խէթ, անարդեալ կմախք և իբր զանպիտան առ ոտն կոխեալ» (ՀԳ. գլուխ, էջ 370)։ Մի այլ նմայչ նոյն գաւափետուրթեան. «անարժանս բարեաց, անձիրս երախտեաց, անընդունակս սիրոյ, տոռամբք մեղաց ձգեալս, յերկամունս խորոց խոցեալս, քանցեալ ծառս արմատեանց, գինիս յեղաչրջեալ, ցորեանս հեղեղեալ, մուրհակս ջրեալ, վճիռս պատառեալ, կնիքս այլակերպեալ, նմանութիւնս փոխեալ, արկանելիքս կիզեալ, ըմպանակս կորուսեալ, նաւս ընկղմեալ, մարգարիտս մանրեալ, ակնս պատուականս սուզեալ, տունկս գօսացեալ, նեցուկս խորտակեալ, յարկս տապալեալ, խորանս խարխալեալ, բոյսս արմատաքի խլեալ, ձէթս հեղեալ ի գետինս աղբևաց, կաթնս հոսեալ ի կոյտս մոխրոց, այրս մահու ի յարեաց գնդից» (ԿԷ. գլուխ, էջ 342)։

Եւ լ՞ինչպէս իրեն չմեղադրէ, չդատապարտէ նաև ընկալչին, երբ Քրիստոս նրան անթիւ բարիք է արել, անընդհատ օգնել է, իսկ լինքը Քրիստոսից հեռացել է և չարութեան է դիմել։ «Ծնար հայրաբար, սնուցեր դայեկապէս, տածեր ստացողապէս։ Տնկեցեր զամպարիշտս ի քումդ գաւթի, ջրովք կենաց ոռոգեցեր, աւազանին ցօղով մաքրեցեր, կենացն վտակաւ արմատացուցեր, հացիւդ երկնայնով չամբեցեր, աստուածային արեամբդ արբուցեր, անհպիցն և անհասանելեացն ընտանեցուցեր, զաչս երկրեղէն ի քեզ համարձակեցեր, լուսովդ փառաց վերատածակեցեր, զհողանիւթ մատունս անմաքուր ձեռացս՝ ի քեզ մատուցեր, զմոխիրս անարգ մահացու՝ իբր զնչոյլ լուսոյ յարգեցեր, զհայր քո, հզօր, ահաւոր, օրհնեալ, մարդա-

սիրապէս և անարժանիս իմոյ անձին կնքեցեր» (Ե. գլուխ, էջ 29)։ Այսքան բարիք ստացող Նարեկացին կեանքում սրանց հակառակն է վարուել։ «Մինչդեռ զգաստ երևիմ, թմբրիմ, ի բարեպաշտելս իմում՝ գայթագղիմ, մինչդեռ աղօթեմս՝ և վրիպիմ, ի յընթանալս իմում՝ և կասիմ, յարդարանալս իմ՝ և մեղանչեմ, ի խաղաղանալս իմում՝ ամբոխիմ, մինչդեռ արշաւեմս՝ առ ի յետոյն հակամիտեմ։ Ընդ լուսոյն մանին և խաւար յարեմ, ընդ քաղցրութեան ճաշակ օձինդր խառնեմ, ընդ կուղս բարեացն՝ չարիս հիւսեմ, ընդ կանգնելն՝ և կրկին գլորիմ։ Ծաղկիմ և ոչ պըտղաբերիմ, ասեմ և ոչ առնեմ, խոստանամ և ոչ կատարեմ, ուխտեմ և ոչ վճարեմ» (ՀՍ. գլուխ, էջ 358–359)։ Այսպէս ամբողջ երեսներ իւր մեղքն է թուում, որոնք ճգնող անապատականի մաքրագործուող հոգու նշան են և ճշգրիտ արտայայտութիւն որ անապատականը խոստանում է չանել, բայց անում է. ասում է որ այս կամ այն յանցանք է, բայց ինքը չի կատարում. գործի ու խօսքի մէջ չի կարողանում համերաշխութիւն ստեղծել։

Այդ մեղքերի ծանրութեան տակ Նարեկացին իւր ծնեւելը, մեծանալը, գեղեցիկ պատկերով զարդարեւելը, քննելու ընդունակութիւն ունենալը աւաղում է և լաւ է համարում որ ամենևին ծնուած չլինէր. վա՛յ է տալիս իրեն, որ իւր արարչին բարկացրել է, վա՛յ է տալիս, որ վերջին դատաստանին պէտք է լսէ երկնաւոր թագաւորի վճիռը, թէ «Ոչ գիտեմ զքեզ» (Է. գլուխ, էջ 38–9)։

Վերջին դատաստանը ապաշխարողի համար երկիւղի ամենամեծ աղբիւրն է. նրա մէջ պատասխանատուութեան զգացումն է ծնում և ահ ու դողի մէջ

ձգում։ Այդ դատաստանը իրական գոյութիւնն էր ապաշխարողի համար և ոչ ցնորք. նրա պատկերը նկարւում էր երևակայութեան մէջ վառ գոյներով։ Երկիւղի զգացումը սիրոյ զգացումից էլ երբեմն աւելի ուժեղ է լինում եւ մարդուն յուսահատեցնում, ընկճում։ Այդ երկիւղը Նարեկացու հոգում էլ կայ և ոչ պակաս ուժեղ աղբիւր է գառնում նրա ապաշխարութեան հանդէսը սաստկացնելու։

Նարեկացին նկարագրում է վերջին դատաստանը. երկինքը պիտի գալարուի, երկիրը դղրդայ, լայնատարած գետինը տատանուի, լեռները չարժւին, հուրը երկրի ներսից ելնէ և հալէ լեռները և բլուրները և երկինքն այլայլուի. բոլոր արարածները նոր ձեւով ծնուին։ Կազմուելու է ատեան. երկնքի թագաւորը նըստելու է վճիռը ձեռքին. հրեշտակը պիտի ամբաստանէ. թագաւորի սպասաւորները ոմանց կեանքի պիտի հրաւիրեն, ոմանց դատապարտութեան ամօթի և ինքը, որքան էլ ուզենայ ճողոպրել, փախչիլ պատժից չի կարող, որովհետև թաքնուելու ոչ մի տեղ չկայ։ Այս սարսափելի վտանգը խորապէս ապրում է Նարեկացին ու գոչում յուսահատուած. «Ահա հատաւ և կամ խզեցաւ լար կենաց յուսոյն. տիրեցայ ի բորոտութեանցն գարշութենէ, համայն ախտացեալ, ամենայնիւ սպառեալ մարմինս, ապականութիւն չրջապատեալ մեռոյց Աստուծոյ» (ԻԴ. գլուխ, էջ 108)։ Այսպէս «Վերջին դատաստանն է համարում» ապաշխարող Նարեկացին իւր մեղքերի ծանրութեան տակ վերջին դատաստանի ժամանակ։

2.— Ապաշխարողի վիճակը սոսկալի կը լինէր, եթէ նրա հոգում միայն մեղքի գիտակցութիւնը լինէր

և ոչ մի յոյս փրկութեան։ Այլևս ի՞նչ միտք կ'ունե-
նար նրա չարչարանքը. աղօթքն ու ողբը. էլ ի՞նչ
արժէք պիտի ունենար սոսկալի քաղցի ու ծարաւի
դիմանալը, պաս պահելը, եթէ դարձեալ լինքը պիտի
դատապարտի։ Եթէ մարդ ծնելն արդէն յանցաւոր
լինել կը նշանակէ, եթէ մարդը լինքը մեղք ասել է,
ապա ի զուր են նրա աչքերից արցունքները հոսում,
սրտից հառաչանքները դուրս թռղում, աշխարհից ի
զուր է փախչում։ Այն հանգամանքը, որ այնուամե-
նայնիւ անապատականը ճգնում, տքնում է՝ ապացոյց
է որ նա իւր հոգում ունի փրկութեան յոյս, որ նա
խորապէս համոզուած է թէ լինքը կը փրկւի։ Աստ-
խարող Նարեկացին այդ լաւ գիտէ. նրան Հին և Նոր
Կտակարանից չատ օրինակներ են յայտնի, որ մե-
ղաւորները ապաշխարել են ու փրկւել։ Իբր հմուտ
աստուածաբան Ս. Գիրքը ծայր է ի ծայր լմացող
Նարեկացին զօրեղ, խելօք և հմուտ և պաշտպա-
նում է իւր դատը. նա Քրիստոսի իսկ խօսքերով, կա-
տարած հրաշագործութիւնների օրինակներով տըրա-
մաբանօրէն պաշտպանում է իրեն դատը, լինքն ի-
րեն համոզում է, որ իրաւունք ունի փրկւելու, ներ-
չընչում է նոյնը և անապատականներին։ Նա յիշում
է Սողոմոնի խօսքը, որ ոչ մի մարդ չի կարող վըս-
տահանալ, թէ սուրբ սիրտ ունի և կամ «Ո՞վ ոք պար-
ծեսցի մաքուր լինել ի մեղաց» (ՀԳ. գլուխ, էջ 331)։
Նա գիտէ, որ Յովհաննէս Աւետարանիչն էլ նոյն միտքն
է ասում. հետևապէս լինքը մինակ չէ մեղաւոր այս
աշխարհում, այլ բոլոր մարդիկ։ Այլ կը լինէր իւր
վիճակը եթէ մինակ լինէր. այլ է, երբ յանցաւոր են
ամենքը և լինքը բացառութիւն չէ, այլ է երբ հա-
զարաւորներից մէկն է։ Նա համոզւած է, որ Աս-

տըծուն ճանաչելը, նրա գոյութիւնը ընդունելը արդէն
արդարանալ կը նշանակէ և նրա գօրութիւնն ըմբըռ-
նելը անմահութեան նշան է (ԽՀ. գլուխ, էջ 237–8).
Նա գիտէ, որ սամարացուն ազատել է Քրիստոս, որ
աւազակին ներել է խաչի վրայ, երբ աւազակը դար-
ձի է եկել. նա գիտէ, որ Սողոմոնը, Մանասէն, Ցօվ-
նան մարգարէն և այլ չատերը մեղաւոր են եղել,
դարձի են եկել և ներւել են. հետևապէս և լինքն էլ
կարող է յուսալ ներման։

Եղել է ժամանակ, որ լինքը վստահ է եղել, թէ
կեանքի ծովը–իւր նաւով՝ մարմնով անվտանգ կան-
ցընէ, առանց որ և է կասկածի ափ կը հասնէ. սակայն
իւր նաւը, իւր իմանալի գոյութեան տապանը, ջախ-
ջախւել է և նա այժմ ողբում է և «ձեռն ի ծնօտի եդ-
եալ արտասուաց գետս իջուցանէ» (ԻԵ. գլուխ, էջ
112)։ Ողբում է անընդհատ «ի յոտս քո անկանիմ և
զգաբշապարիւդ հետս համբուրեմ . . . հառաչանօք
սրտիս տապանամ. ի խէթ խղճիս խոցոտիմ, բոցով
չնչոյս ճենճերիմ. աղի ցօղով արտասուացս այրիմ.
և երիկամանացս ազդմամբ կիզանիմ. յուսակտուր օ-
դով ցամաքիմ . . . կողկողագին հեծութեամբ դո-
ղամ, տպժանելի կրւէք տուայտիմ և տագնապաւ
հոգւոյս տատանիմ. ի կոծ մըրկաց ծփիմ և ի բախ-
մանէ ալեաց սասանիմ» (ԿՋ. գլուխ, էջ 338)։ Երբ
աղի արցունք է թափւում նրա դէմքն էլ փոխւում է
և դառնում ապաշխարողի «տխուր դէմ, քաղեալ ճա-
ճանչ, ցամաքեալ խոնաւութիւն, երիթացեալ չուրթն,
անչքեալ տիպ, տրտմեալ ոգի, այլայլեալ ձայն, կրկ-
նեալ պարանոց» (ԻԹ. գլուխ, էջ 144)։

Ողբալն էլ ձևեր ունի, տարբեր միջոցներ, և Նա-
րեկացին երբեմն դիմում է այն ձևին, որ աւելի կ'ազդէ

լսողին. դա յանգաւոր բանաստեղծութեան ձևն է. «առաւել սաստիկ մորմոքեալ ճմլեցուցանեն զաղէտս կարեացն սրտին ըղձից առ արտասուացն բղխմունս» (ԻԶ. գլուխ, էջ 119)։ Եւ նա երկու գլուխ աղօթք է գրում առաջինը (ԻԶ.) «ի» ձայնով վերջացող. երկրորդը (ԻԷ.) «մեզայ» բառով սկսուող ու վերջացող տողերով։ Ամեն միջոցի դիմում է Նարեկացին Քրիստոսի սիրտը մեղմացնելու որքան էլ այդ միջոցները նոյնիսկ ձևական արժէք ունենան։

Աննպատակ չէ իւր արցունք թափելը, որովհետև գիտէ, որ ինչպէս ճճիների բազմութեան վրայ մի կաթիլ ձէթ կամ սատակչական դեղ ածելով ոչնչանում են, այնպէս էլ «սակաւ մի արտօսր կաթուածոց աչաց . . . և զոյկն մի հառաչումն սրտի հեծութեան ելեալ ի յոգւոյ, իբր հնչումն հարաւային ջերմութեան խառնեալ յարևու զսառնամանեաց սաստկութիւն հալէ» (է. գլուխ, էջ 37)։

Թէև այս դեղեցիկ համեմատութիւնն էլ բաւական էր որ Նարեկացին իրեն արդարացած զգար, քանի որ ինքը ոչ թէ մի կաթիլ, այլ հազարաւոր կաթիլներ է թափել արցունքի, սակայն նա չի՛շում է նաև Քրիստոսի այն խօսքը թէ եղբօրը պէտք է ներել՝ մի օրում ընթացքում 70 անգամ եօթը. որը Նարեկացին բառացի ըմբռնելով բազմապատկում և ստանում է 490. ուրեմն մի ժամում 20 անգամ էլ որ յանցանք գործէ եղբայրը՝ պիտի ներել. հետևապէս ինքը յոյս պիտի ունենայ վրկուելու։ Քրիստոս ինքը իւր ներողամտութեանը սահման չի դրել. և իւր բարութիւնը մարդկանց վրայ է թափում «անչափ յաճախութեամբ, քան զոր խնդրեմք և իմանամք» (ԻԹ. գլուխ, էջ 142). Քրիստոս անդունդները երկնքի է վերածում, լեղուդառնութիւնը՝ մանանայի քաղցրութեան. և այս ամենը նրա համար հեշտ է. մի՞թէ ուրեմն ապաշխարող, խնդրող Նարեկացուն չի՛ ների (145)։

Քրիստոս սովորական մարդկանց նման չէ, որ Նարեկացուն չլսէ. և նա չի դիմում «առ իշխանս երկրաւոր գահից, եթէ անցաւոր է ընդ ինքեանս և իւրեանց բարութիւն. առ եղբա՞յր ոք հարազատ, եթէ կարօտ է կամելոյն առ անձինն անդորրութիւն. առ հա՞յրն իմ երկրաւոր, եթէ պակասեալ են խնամականքն ընդ աւուրց նեազութեան. առ մա՞յրն իմ որ երկնեաց, եթէ կասեցան գթութիւնքն ընդ նահանջել կենդանութեան» (ԾԱ. գլուխ, էջ 260)։ Նա դիմում է Քրիստոսին, որը երբ իրենից փախչում են՝ գնում է հետևից, եթէ մարդը տկարանում է՝ զօրացնում է նրան. «եթէ տամք՝ ընդունիս. եթէ յամրանամք՝ երկայնմտիս. եթէ մեք՝ ժխտեմք, դու առատապէս չնորհեալ ընձեռես. եթէ լքանիմք՝ տրտմիս. եթէ արիանամք՝ խնդաս» (ԾԱ. գլուխ, էջ 261). Նարեկացու վիճակը այս դէպքում փոխւում է, որովհետև աշխարհի վրայ գործող օրէնքներով առաջնորդուող մէկին չի դիմում, այլ սրանց հակառակը մտածողի. և տրամաբանական եզրակացութեամբ ապաշխարող Նարեկացին վստահութիւն է ձեռք բերում ասելու «Եւ արդ՝ զի՞ դրդ ո՛չ ողորմեսցիս, բարեգութ, այսքանեացս ձայնարկութեանց, կողկողագինս հեծեծանաց, որ անուամբս այսու մեծացար, թէ ողորմած եմ ես Տէր» (Լ. գլուխ, էջ 151). եթէ ողորմած Տէր է, պէտք է իրեն ներէ, եթէ չի ների, կը նշանակէ ողորմած Տէր չէ. այս մտայնութիւնն է Նարեկացու մէջ։

Իբրև միջնադարի զաւակ, Նարեկացին կամքի վարդապետութեան այն ըմբռնումն ունի, թէ մարդը

չէ, որ իրեն կարող է ազատել, այլ Քրիստոս միայն որքան և հառաչէ, թախծէ և օդը լցնէ իւր ազերս-ներով վերջ ի վերջոյ Քրիստոսին է պատկանում փըր-կելու և պատժելու իրաւունքը. «եթէ ոչ կամք քո գթասցին, ոչ զօրեմ փրկիլ մահու պարտականս. և ե-թէ ոչ կառավարդ յարդարեսցես պատրաստել ինձ հետս ճանապարհի՝ որ առ քեզ բերէ, վիհ է ինձ խորոց յաջ-մէ և յահեկէ» (ՇԻ. գլուխ, էջ 278)։ Միջնադարի մարդն է խօսում, որի կամքը ընդարմացած է, մի այլ կամքի տակ դրւած, որին ընթացք է տալիս Բար-ձրը Ոյժը։

Այստեղից հասկանալի է, թէ ինչո՞ւ Նարեկացին գիտնալով հանդերձ, որ մի կաթիլ արցունքն էլ կա-րող է փրկել, որ Քրիստոս անվերջ ողորմած է, այ-նուամենայնիւ հառաչում է անընդհատ, որովհետև ինքը չէ իրեն փրկողը, ազատողը, այլ մի ուրիշը, մի այլ մեծ կամք, որի ձեռքին է ապաշխարողի բախտը. իսկ այդ կամքը չի արտայայտւում այժմ, չի երևում մինչև վերջին դատաստանը։

Թէև Նարեկացին այդ կամքի ճնշումից մի րոպէ իրեն ազատւած է զգում և ինքն է իւր գլխի տէր դառնում կարծես և ասում է. «Արդարև լուար, բա-րեգութ. անսացեր, թագաւոր. ունկնդրեցեր, կեանք և յոյս, ի միտ առեր, երկնաւոր, յարգեցեր, հզօր. նկա-տեցեր, ծածկատես. տեսեր, խնամակալ. կարեկցեցեր, անպատում» (ԼԴ. գլուխ, էջ 183), բայց այդ վստա-հութիւնը կորչում է խպտառ, կրկին ընկնում է իւր ողբացեալի վիճակի մէջ և այդ դրութեամբ հասնում գերեզմանին, ուսալ և քանի դեռ չունէ կայ բերա-նում խնդրում է, որ Քրիստոս գոնէ այդ վերջին վայրկեանին ասէ. «Ողջ եղիջիր յոգւոյդ խորատակմա-

նէ, և կամ թողեալ լիցին քեզ մեղանք քո. կամ թէ և՛ըթ ի խաղաղութիւն, որբեալ ի մեղաց» (ՀԳ. գլուխ, էջ 370). խնդրում է, որ գերեզմանն էլ պահպանուի. գերեզմանում դրւելուց յետոյ էլ օգնութեան գայ Քրիստոս. «Օրհնեսցի անուամբ քո, գթած, վիհն իմ հանգստեան. ողորմութեամբ քո լցցի գուբն իմ գե-րութեան. ընդարձակեսցի քև ինձ՝ տեղին թշուառու-թեան. անդորր եղիցի, խնամող, ինձ բանտն կարկու-թեան. անուսոյց վիս առ յաճումն՝ արգանդն մթու-թեան. յուսով քո չտեմարանեսցէ վիս՝ յարկն այն անձկութեան. ձեռամբ քո պահեցայց ի խշտին տար-տամութեան. թևօք քո ընկալայց՝ ի տունն տապնա-պի. դու, դովեալ, ընդ իս՝ ի սենեակն վտանգի» (կե. գլուխ, էջ 331)։ Նա հաւատում է յարութեան և նոյն իսկ այդ վերջին վայրկեանի համար, ահ ու դողի մէջ տապնապող, փրկութեան ամեն մի ջոցի դիմող, պըր-պըտող, որոնող Նարեկացին այժմեանից խնդրում է, որ եթէ Քրիստոս չի ներել, գոնէ այն ժամանակ ներէ «Եւ զոր յայնմ ժամու ոչ ժամանեցից պազատել, այսօր ընկալցիս մարդասիրապէս, ո՛վ երկայնամիտ բազմաչնորհ, ամենակեցոյց» (ՀԳ. գլուխ, էջ 570)։

Ծերութեան ժամին հասնելու վտանգը տեսնող Նարեկացին խնդրում է իւր միակ պաշտպան Քրիս-տոսին, որ իւր ծերութեան ալիքը չանարգի, ան-գործման չմատչ, իւր իմաստը (բանականութիւնը) չը խլի իրենից. «մի՛ պատուհանք աչացս փակեալ, մի՛ լուսաւորութիւն նորին խափանեալ, մի՛ պատկերն խո-սուն անկեալ։ Ահա աղաչեմ զքեզ՝ բարեգութ, ամե-նայն սրբովք պաղատիմ, լուր սոցին ինձ կանխաւ, զի զանազանն մի՛ մոռասցիս» (ՁԻ. գլուխ, էջ 454)։ Այժմեանից խնդրում է, չլինի՞ թէ Քրիստոս մոռա-

նայ ապագայում. ո՞րքան միամիտ ըմբռնում է. այն Նարեկացին, որ ամենագէտ է համարում Քրիստոսին, այժմ վէմի ազդեցութեան տակ մոռանում է այդ ու կարծում, որ Քրիստոս կարող է մոռանալ. ահա ո՞րքան մեղքը, վէմը նրան տարուբերում է ու հակասութիւնների մէջ ձգում: Միայն խորը վիշտ անբժշկելի հոգեկան ցաւ ունեցողը կարող է նման տարուբերումներ ունենալ. վիշտն է նրան այդպէս Քրիստոսին Աստուած գարձնում և նոյնին մարդկային մոռացկոտութիւն վերագրում:

Ամբողջ աշխարհի մեղքի ծանրութիւնը իւր վրայ առնող Նարեկացին, Ադամից մինչև վերջին մարդու մեղքերը իրեն վերագրողը, մինակ չէր կարող քաւել այդ մեղքը. որը եթէ դնեն մի կշռի մէջ, որի լծակը Լիբանանի փայտերը լինին և նժարներից մէկում Աբրահամեան լեռը, այնուամենայնիւ իւր մեղքը աւելի կը կշռէ: Եւ Նարեկացին դիմում է Աստուածածնի, հրեշտակների, առաքեալների, մարգարէների բարեխօսութեանը. «պարք առաքելոց, դասք մարգարէից, գունդք մարտիրոսաց... գումարք միանձանց, բոյլք բանականաց ընտրելոց, ժողովք բարեկրօնից, հոյլք հոգեղինաց» (Լ.Ա. գլուխ, էջ 156): Աստուածածնին խնդրում է. «Հիւսեա՛, միացո՛ զմեզուցելոյս դառն հեծութիւն ընդ քումդ երջանիկ և խնկաւորեալ հայցուածոց, տունկդ կենաց, պտղոյն օրհնութեան» (Զ. գլուխ, էջ 422): Հրեշտակները, որոնք բարեգործներ են, Նարեկացու համար, «գոչեն առանց լռելոյ հանապազորդեան արգահատութեամբ մաքուր բերանոց» (ՁԱ. գլուխ, էջ 426):

Մեղքի ահաւորութեան ու մեծութեան չափ էլ Նարեկացին խնդրողներ ունի՝ սկսած Աստուածածնից,

ամբողջ երկնային զօրքերը, սրբերը, որոնք հազարք հազարաց են և բիւրք բիւրուց: Մեղքի ահաւորութեան հանդէպ միջնորդների ահագին բազմութիւն, որ ապաչխարող Նարեկացու մեղաւորութեան գիտակցութեան սաստկութիւնն է ցոյց տալիս: Ինքը երկրի վրայ, նրանք երկնքում միացեալ ոյժերով պիտի աղերսեն և անընդհատ: Սակայն Աւետարանին հմուտ Նարեկացին էլ զգում է մի րոպէ, որ չափազանցութեան է հասցնում իւր աղերսը. գիտէ, որ Քրիստոս երկար աղօթք չի պահանջել, «Հայր մեր»ը աղօթքի համար լի ու լի բաւարար է համարել. բայց եթէ ինքը այնուամենայնիւ աղօթում է անընդհատ, և կրկնում այն յուսով որ «թերևս գրեսցէ ինձ ամենագէտն՝ զայս յանդիմանութեան դատակնիք կսկծեցուցանողական բանի՝ ճշմարիտ խոստովանութիւն համայնից գործոց գաղտնութեանց չարեաց» (ԻԲ. գլուխ, էջ 99): Սակայն կարծես ինքն էլ մի տեսակ անյարմար վիճակի մէջ է զգում իրեն, որ Քրիստոսին ձանձրացնում է, իրեն այն այրի կնոջ դերում է զգում, որ անիրաւ դատաւորին չարունակ խնդրում էր իւր դատը տեսնել. ուստի և կարծես մտերմաբար, սիրով Քրիստոսին դիմում է, որ իրեն դատը տեսնի, որ այլևս չձանձրացնէ նրան «արա՛ ինձ անդորը ի մեղաց ապաչխարութեանց, զի և քեզ լիցի հանգիստ ի մշտադատս հեծութեանց, ձանձրացուցիչս թախանձանաց որ ոչ այլ իւիք քան թէ վիրկութեամբ մարդկան պարիս» (Հ. գլուխ, էջ 354–5): Դարձեալ մի միամիտ, զուտ մարդկային ըմբռնում Քրիստոսի մասին, որ Նարեկացին արտայայտում է իւր վշտի րոպէին, սիրող սրտից բղխած մի խօսք, որով Քրիստոսի մարդ լինելն է ցոյց տալիս. չէ՞ որ իբր Աստուած–կատա-

բելութիւն և արթուն աչք՝ նա ձանձրանալուց, դժգոհելուց հեռու պիտի լինի. իսկ Նարեկացու Քրիստոսը տեսանք, որ կարող է մոռնալ, չլսել իրեն արած խնդիրը, այժմ էլ երևում է, որ կարող է ձանձրանալ չատ խնդրելուց. զուտ մարդկային յատկութիւններ, որ Նարեկացու համար խորթ չեն այլ հարազատ, և Քրիստոս դրանով աւելի է կարծես Նարեկացուն և մատչելի և սիրելի:

Քրիստոսի մեծութիւնն աւելի ևս պարզ երևում է Նարեկացուն այն ժամանակ, երբ ապաշխարողը իսպառ յուսահատած է և յանկարծ նրա համար փըրկութիւն է գալիս. չսպասած տեղից լոյս է ծագում. այդ անակնկալը ի հարկէ փորձանքի մէջ եղած մարդուն աւելի է ուրախացնում և օգնութիւն հասցնողի անձը բարձրացնում: «Անդանօր է բժշկութիւն աստուածային քո ձեռինդ, յորժամ բնաւ անդամոցն տեղի ետ կենդանութիւն, այն վայր է այցելութեան, յորում ելք հնարից ոչ գոյ: Այն է քո մեծութիւն, յորժամ զյուսահատութեան վէրն ողջացուցանես. այն է հարազատ քումդ ազգակցութեան, եթէ յանակնկալն ժամու արուեստաւորեացես փրկութիւն: Այն է հանդիսարան քում յաղթանակի, եթէ զփակեալն մուտս կենաց ի սպառուածն չնչոյս, բացցես. այն են քո չնորհք վայելչականք, եթէ զչարեացս իմոց մոռացեալ՝ ըզբարեացդ քո յիշեացես» (ՀԴ. գլուխ, էջ 372–73):

3.— Ապաշխարող Նարեկացուն մեղքերի ծովում լողացնողը, այսպէս տարուբերողը անդունդների վրայ մեղքն է, որը մարմնանում է նրա համար յանձինս սատանայի: Նարեկացին Ս. Գրքին մօտենում է հաւատով և նրա համար Ս. Գրքի մէջ կաս-

կածելի ոչինչ չկայ. այդ նոյն աղբիւրում է յիշւում և սատանան, որին նա էլ ընդունում է իբր մի չար ոյժ: Սատանան մարդու մարմնի մէջ է զգայարաններում. նա ամեն կերպ մարդկանց գայթակղեցնում է. նա մարդու մէջ մտնելով նրան գևահարում է, դարձնում «քարակոչկոճ, հեղձամղձուկ, եղկելի անձն»: Սատանաները չրգողութեան հիւանդութեան նման են, որ ծածուկ մարդու մէջ է մտնում ու հետզհետէ մեծանում, ուռչում և ցաւ պատճառում: Սատանան հազարաւոր արբանեակներ ունի և նրանք մարդու մէջ են մտնում ու պայքարում նրա հետ ամեն ուղղութեամբ:

Ամենից ցայտուն ձևով սատանայի ինչ լինելը և ինչ վտանգներ հասցնելը ապաշխարող Նարեկացին ներկայացրել է իւր գեղեցիկ «Ընկալ քաղցրութեամբ» աղօթքում, որը մի փայլուն օրինակ է այն ծանր հոգեկան վիճակի, որ ունէր անապատականը Միջին դարում չնորհիւ սատանայի: Սատանան խաւարի որդի է և գիշերը նրա համար ամենալաւ ժամանակն է որպայթներ լարելու: Ապաշխարողն այդ գիտէ և երբ նա քուն պիտի մտնէ սարսափի մէջ, որովհետև այն համոզման է, որ սատանան իւր բոլոր արբանեակներով չրջապատել է իրան և իւր անկողինը և պիտի գայթակղեցնէ նրան:

Ապաշխարող Նարեկացին աղօթում է, որ սենեակի պատուհանը, դուռը, առաստաղը, սեմը, անկողինը, վերմակը Քրիստոս պահէ, չլինի թէ սատանան սպրդէ այդ տեղերը: Աղերսում է, որ իւր չունչն ու զգայարանները պահպանէ Տէրը, որ սատանան չը մտնէ իւր մէջ և չ'աղաւաղէ հոգին: Խնդրում է երկընքի զօրքերից գնդեր գնել իւր չուրջը, որ գևերի

դէմ պայքարեն ամբողջ գիշերը, մինչև առաւօտը ելնէ կրկին աղօթելու. «Տո՛ւր հանդիստ բերկրութեան մահահանդոյնս նիրհման՝ ի խորութեան գիշերիս բարեխօսութեամբ սուրբ աստուածածնիդ և ամենայն ընտրելոց» (ԺԲ. 58):

Աւելի ծանր, հոգեկան տառապալի վիճակ, քան նկարագրուած է այդ աղօթքում, անապատականի համար գժւար է երևակայել. անընդհատ երկիւղ, ամեն կողմից, ամեն ժամ և թշնամին չի երևում. նա կայ, բայց յայտնի չէ ի՞նչ ձևով, ե՞րբ կը յարձակւի և ո՞ր կողմից, ո՞ր մասի վրայ: Միջնադարի մարդի համար այդ դրութիւնը լոկ հոգեբանական մի դառն վիճակ չէ, այլ կենդանի հաւատալիքի առարկայ: Սատանան եկեղեցում էլ չփոթեցնում է աղօթքի գնացող անապատականին և նրա հարկ է համարում նախ երեսը դէպի արևմուտք դարձնել (որովհետև Քրիստոս արև է և արևելքից է ծագում հետևապէս սատանան հակառակ կողմը պիտի լինի — արևմուտքում, ուր ոչնչանալն է իշխում, լոյսը խաւարում) և ասում է. «Հրաժարիմք ի սատանայէ և յամենայն խաբէութենէ նորա». նախ սատանային պէտք է վանել, եկեղեցում ուր Քրիստոսի խաչն է, ապա թէ օրհնել Աստծուն և փառաբանել Քրիստոսին:

Այսքան ուժեղ է սատանան և նրա իշխանութիւնը և ապաշխարողը նրա ձեռքից ազատւելու հնար չունի: Սատանան անապատականին ամենից շատ է հակառակ. ուստի և զանազան ցաւեր է նիւթում՝ չունչն է ուզում կտրել, գաղտնաձիգ նետերով հարուածներ է տալիս, յուռութների բժժանքներով կախարդում է, գիշերային մթութեան մէջ սկսում է պայքարել, մինչօրէի տագնապալի տօթին ուզում է մոլեցնել, խածողական ժանիքներ է ցոյց տալիս, խածում է, մոլորեցնում է, մահուան տագնապին է ենթարկում, դժոխքի երկունքներով չրջապատում է, մինչև մահուան յատակն է նայել տալիս, ուրախանում է անապատականի մարդկօրէն գայթակղութեան վրայ, և այլն (ԿՋ. գլուխ, էջ 336–38):

Սատանայի իշխանութիւնն աւելի զօրեղանում է, որովհետև հազարամեակը մօտենում էր և նրա իշխանութիւնը պիտի տարածուէր: Նարեկացին ևս հաւատում է միջնադարի այդ էջքէնդային և որոշ չափով երկիւղ է կրում. «Եթէ ընդ լուծանել փոքր կապանաց հազարամէից՝ (մեծ կապանքը Նեռի ժամանակ պիտի լուծւի, Յայտնութիւն Յովհաննու Ի. 2) բերկրեսցի դողացեալ կրկնեալ վերստին իսկոյն ընդ վերջին չղթայս անզերծ տագնապին ըմբռնման սաստկագունի յանվախճան տանջարանի» (ԿՋ. գլուխ, էջ 338): Սատանան թէև կապուած է, բայց իշխանութիւն ունի դեռ երկրի վրայ և նրա դէմ պայքարիլը գժւար է. առանց Քրիստոսի աջակցութեան սատանային յաղթել չի կարելի: Սատանային Քրիստոս յաղթեց անապատում. ըստ սկօլաստիկ մեկնութեան Յորդանանում մկրտելիս Ադամի սատանային տւած ձեռագիր–պարտամուրհակը ոչնչացրեց և վերջապէս Յարութիւնից յետոյ բոլոր հոգիներին գժոխից ազատեց. «աւարեաց զդժոխս և ազատեաց զհոգիս»: Քրիստոս է, որից սատանան փախչում է, վախում է, ուստի և Քրիստոսին է դիմում ապաշխարող Նարեկացին գիշերուայ ժամին, որ օգնութեան հասնէ. «Որ ի ծագել անստուեր նշուլից՝ ողորմութեան քոյ փառաց, հալին մեղք. հալածին դևք, ջնջին յանցանք, խզին կապանք, խորտակին չղթայք, կենդանածնին մահացեալք, բժշկին

հարուածք, ողջանան վէրք, բառնին ապականութիւնք, տեղի տան ախորժութիւնք, նահանջին հեծութիւնք, փախնու խաւարն, մեկնի մէգն, մերժի մառախուղն, փարատի մռայլն, սպառի աղջամուղջն, վերանայ մութն, գնայ գիշերն, տարագրի տագնապն, չքանան չարիքն, հալածին յուսահատութիւնքն, եւ թագաւորէ ձեռն քո ամենակար, քաւիչդ ամենայնի» (ՄՆ. գլուխ, 212–213)։ Գիշերուայ սարսափն այնքան մեծ է, որ Նարեկացին ունի ևս երկու այլ աղօթք գրած, Ղև. և ՂԴ., ուղղուած դարձեալ սատանայի դէմ. այսպիսով չորս յատուկ աղօթք ուղղուած է սատանայի գիշերային խարդաւանանքների դէմ և այդ բլխում է ժամանակի իրական պահանջից. ցաւոտ կողմը անապատականի համար գիշերն է, սատանան և անապատականի համար աղօթք գրող, ապաշխարող Նարեկացին այդ ցաւոտ կողմին էլ ամենից շատ է աչք դարձնում։

Ժամանակի հասարակական պետական կարգերն էլ անապատականի համար ծանր էին, դժւարին, որովհետև Քրիստոսի սկզբունքներից շատ հեռու էին ու հակասող. անապատականը որքան էլ կտրուած լիներ, սակայն ուներ չփում գոնէ կողմնակի կերպով և այդ կեանքը նրան նոյնպէս տանջում է։ Այդտեղ էլ նա ոչ թէ գրսի կարգերն է մեղադրում, ոչ թէ հասարակական պետական վարիչներին է մեղաւոր ճանաչում, այլ իրեն և երկիւղ է կրում, թէ որ և է յանցանքի համար պէտք է դատապարտեն. «Եթէ պինուոր տեսանեմ՝ մահու ակն ունիմ, եթէ պատգամաւոր՝ խոտութեան, եթէ մատենագէտ՝ մուրհակի կորստեան, եթէ օրինաւոր՝ անիծից, եթէ աւետարանական՝ փուշոյ ոտից թօթափման, եթէ բարեկրօն՝

յանդիմանութեան, եթէ սպառում՝ կսկծման» (ԻԴ. գլուխ, էջ 103)։ Որքան և այս փոխաբերական մըտքով է գործածուած, սակայն պարզ է, որ ժամանակի պինուորը, պատգամաւորը, մատենագէտը սարսափ են ազդել առհասարակ, և այդ հասարակական դժբախտութիւնը ապաշխարող Նարեկացու, ինչպէս առհասարակ միջնադարի ամեն մի մտածողի համար մեղքի հետևանք է. հոգեկան աշխարհն է տեղափոխուում, սովորական երևոյթն էլ ստանում մեղքի կերպարանք, սատանայի ծնունդ։

Դրսում սատանան է իշխողը, ներսում նոյնպէս այսպիսով ապաշխարողի համար ոչ մի ազատ վայր չկայ, որ հանգիստ գտնէ. միայն Քրիստոս է պաշտպանը և այդպիսով մի կողմում կանգնած է Սատանան, միւս կողմը Քրիստոս. սրանց մէջ միջնադարի մարդը — նաև ապաշխարող Նարեկացին. Քրիստոս ուժեղ է և նա յաղթութիւնը պիտի տանէ. որովհետև Քրիստոս մարդկանց համար է եկել աշխարհ փըրկելու և ոչ սատանայի։ Մարդն էլ, սատանան էլ Աստծուց մերժուած էին, հեռացրուած մէկը դրախտից, միւսը դժոխքից. Քրիստոս եկաւ դրախտից հեռացածին — մարդուն փրկելու և սատանային հալածելու, որովհետև մարդը ուղղուելու ցանկութիւն ունի, իսկ սատանան — անդիմադրելի է, և չարուն նակում է իւր պայքարը Աստուծոյ դէմ մինչև վերջն էլ և մարդին էլ իւր հետ ուզում է տանել, իւր ընկեր աշակիցը դարձընել։ «Զի վասն նորա (սատանայի) յայն սակս յայտնեցաւ, զի լուծցէ զգործս նորին. և վասն լմ՝ զի զհնացեալ պատկերս նորոգեսցէ. առեալ զկերպարանս բոլոր էութիւն կերպին իսկութեան մեծին Աստուծոյ միացոյց ինքեան անշուշտ խառնութեամբ։ Նորա

ոչ են չնորհեալ ի բազմացն, և ինձ զբովանդակն եհեղ առատութեամբ. վասն նորա ոչ երբեք չարչարեալ, և վասն իմ հանապազ պատարագի. նա անհաղորդ է կենացն, և ես միշտ վայելեմ ի փրկութիւնն. նա վանեալ է խաչիւն և ես զօրացեալ նշանաւն. նա հերքեալ է ի լուսոյն, և ես միացեալ ընդ փառացն. նորա ոչ խոստացաւ հանգիստ և յերկրի, և ինձ զերկինս սեպհականեաց. զնորայն կարեաց զառհասատչեայ, և զիմն առանց խզելոյ յարակայեաց. զնա յերամակս խոզիցն արգել, և յիս ինքն զօրացաւ. զնա կարճաց օրինակեաց, և զիս ճառագայթ նշանակեաց. զնա սոյնոց նմանեցոյց, և զիս իւրովն անուամբ կնքեաց» (կէ. գլուխ, էջ 342)։

Որքան և Նարեկացու այս տողերից երևում է, որ սատանայի ու իւր մէջ եղած պայքարում գերակշռութիւնը իւր կողմն է, քանի որ Քրիստոս–անպարտելի ոյժը իւր կողմն է, այնուամենայնիւ նրա հոգեկան աշխարհը սատանայի ոյժի, երկիւղի ազդեցութեան տակ շատ է ընկճւած, և նա այս պարզ ըմբռնումից էլ չի կարողանում հետևութիւն հանել ու հանգստանալ։ Ինքը համոզուած է որ Քրիստոս սատանայից ուժեղ է, Քրիստոս իւր կողմն է, հետևապէս ինքը սատանային կը յաղթէ, կարիք չկայ վախենալու։ Բայց այլ է տրամաբանութիւնը ու զգացմունքը. Նարեկացին գլխովին զգացմունքի մարդ է և մարդկօրէն չարի բնազդն աւելի ուժեղ է քան բարունը։ Ահա Նարեկացին, յաւիտենական պայքար է յայտարարում սատանային, պայքար ուր ոչ միայն իւր կենդանութեան ժամանակ է տևում մինչև մահը, այլ և մահից յետոյ, դարեր–տանեակ, հարիւրաւոր դարեր, անվերջ, քանի կայ մարդը, քանի կայ

կռիւը երկու սկզբունքների։ Նրա պայքարի միջոցը ապաշխարելն է. նա այդ ապաշխարութեան աղօթքը գրել է և ուզում է, համոզւած է, որ այդ աղօթագիրքը պիտի մնայ դարե ցդար, անվերջ իբրև սատանայի դէմ ուղղուած անհաշտ պայքարի կոթող, առանց զիջումի, տեղի տալու կռուի յայտարար նշան։

«Մնասցէ սա անեղծ ի կամս քո, Տէր, ինձ պատժապարտիս համբարձեալ միշտ՝ անդուլ դատիչ. անաչառ կշտամբիչ, անպատկառ յանդիմանիչ, անանխայելի դատաւիչ, անողոքելի պարսաւիչ, անհամբոյր ծանակիչ, անմարդասիրելի մատնիչ, անփրկելի տանջիչ, անկաշառ կառափիչ, անխնամելի յայտնիչ, ապառում հրապարակիչ, աշխարհալուր բողոքիչ։ «Փողով մեծութեան ազգման առանց լռութեան և կամ դադարման, զիմոց պարտեացս խոստովանեսցի» (ՁՀ. գլուխ, էջ 458)։

Ապաշխարող Նարեկացին այսպիսով յաւիտենական է, ապրում է այժմ և պիտի ապրէ դարե ցդար. նա ապաշխարութեան զգացումը իւր գագաթնակէտին է հասցրել — բացարձակին և իւր մեծութիւնը, բանաստեղծական հանճարը այդտեղ է իւր ուժգնութեամբ դրսևորել։ Կը հասկանանք ապաշխարութիւնը միջին դարու մարդու մտքով, և կը տեսնենք որ Նարեկայ վանքի վանականը հայ մտքի լաւագոյն արտադրութեամբ մարդկային հոգու վերածնութեան, ազատման — լաւին, բարու, գեղեցկին ու անանցին հասնելու մի զգացումի գեղարուեստական անմահ արտադրութիւնն է տւել։

Ապաշխարող Նարեկացին ապրում է ու կ'ապրի որովհետև որոնող մարդու ճամբան գայթումի ու ելնումի անվերջ չարքով է առաջ գնում։

Գլ. Զ.

Նարեկը հրաշագործ–աղօթապիրք եւ նրա արժէքը։

Աղօթք գրելը հայ և ընդհանուր եկեղեցու հայրերի մէջ սովորութիւն է եղել Բ. դարուց սկսած։ Անապատականներն ևս ունեցել են աղօթք ու խրատ գրելու սովորութիւն. Նարեկացին իւր աղօթապիրքը գրելով մի սովորական գործ է կատարել և եկեղեցու տեսակէտից նորութիւն չէ նրա արածը։

Իւր Ողբերգութեան մատեանը Նարեկացին գրել է այրական կատարեալ հասակում, երբ տարիները չարունակ աղօթաւոր է եղել. վարել է ճգնական կեանք, ունեցել է իւր ներքին աշխարհի ապրումները. համբաւ է հանել իբրև մեծ ճգնաւոր ու սուրբ անձնաւորութիւն։ Նրա հեղինակաւոր վարդապետ լինելը և ճգնական առաքինի կեանք վարելը պատճառ է եղել շատ անապատականների՝ դիմելու իրանց իրենց համար աղօթքներ գրելու։

Հայ անապատականը մինչև Նարեկացին մի լրիւ, անապատականի ապաշխարութեան համար կազմուած հայ հեղինակի գործ աղօթապիրք չի ունեցել. եղածները փոքր բաներ են, խրատական բովանդակութեամբ։ Նարեկացին իւր աղօթագրքով այդ թերին լրացրել է։

Աղօթքը հոգեկան զօրեղ տենչի, սքանչացման, վշտի, թախծի արտայայտութիւնն է մի մեծ ոյժի առաջ, որը աղօթաւորի համար կենդանի է, կատարեալ և որը կարող է օգնել նեղութեան մէջ եղող աղօթաւորին։ Աղօթքն էլ իւր արտայայտութեան տարբեր ձևերն ունի, ինչպէս սիրոյ զգացումը քնարերգու բանաստեղծների մէջ։ Նարեկացին իւր բանաստեղծ աղօթքը գրել է զգացումով ու խորը հաւատով և նրա տողերի մէջ այդ երևում է պարզ կերպով. անապատականին, որը զգացումների ծովում էր ապրում՝ այդ հանգամանքը գրաւիչ է դառնում։ Նարեկացին իւր աղօթքը գրել էր առաջին հերթին անապատականների համար և բնականաբար նրանց մէջ էլ տարածւում է այդ, արտագրւում ու մի տեսակ ձեռնարկ–ուղեցոյց դառնում։

Նարեկը տարածւում է նաև ժողովրդի մէջ նրա համար, որ միջին դարու մարդը առհասարակ ապաշխարող էր, և Նարեկացին իր աղօթագիրքը գրել էր նաև բոլորի համար՝ ծերի ու տղայի, կուսի ու երիտասարդի և կնոջ (Դ. գլուխ, էջ 464). ամեն ոք իւր համար կարող էր գտնել յարմար աղօթք։ Այսպիսով Նարեկը եկեղեցականների և աշխարհականների մէջ տարածւում է իբր իւր ժամանակի ամենից յաջող, զգացմունքով, հասարակ գրուած աղօթագիրքը։ Նարեկը միայն աւետ մեղքը քաւելու մի միջոց չէ. այլ ունի և գործնական նպատակ. սովորական, առօրեայ կեանքի որոշ երևոյթներն ևս ի նկատի են առնուած և դրանց համար էլ կան գրուած աղօթքներ։ Բացի վերոյիշեալ գիշերային յատուկ աղօթքներից (ԾԲ., ԼԱ., ՂԱ. և ՂԲ.) ունի նաև առաւօտեան աղօթք, որ քրիստոնեան գործն սկսելուց առաջ կարող էր ասել իւր օրական աշխատանքի յաջողութիւնը ապահովելու համար. չէ՞ որ ամեն քայլափոխը, ամեն ափոքը արարքն անգամ միջին դարու մարդու ըմբռնմամբ կապուած էր սատանայի խարդաւանանքները յաղթելու հետ. հետևապէս կարիք ունէր Քրիս-

տոսի օգնութեանը դիմելու։ Բնական է, որ առաքեալեան անկողնից ելնող ու գործի դիմողը կարիք պիտի ունենար աղօթքի և Նարեկացին այդ առթիւ իւր սովորական ոճով ունի գրած աղօթք. «Ընդ ըստկզբան բերման լուսոյ՝ զողորմութիւն քո ծագեա՛. ընդ ելից արեւուն՝ արդարութեան արեգակնդ ի յանձկութիւն սրտիս մտցէ. ճառագայթ քո փառացդ՝ ի յիմաստիցս խորհրդանոց ջահեացի. խաչիդ տեառնագրութիւն՝ ընդ չունչս և ընդ մարմինս համաստիւռ տարածեացի։ Ցանձն առնեմ քեզ յաւուրս՝ զքո յարմարեալ տաղաւարս պահպանաւ ոգւոյս որ ի սմին» (ՁԴ. զլուխ, էջ 445)։ Սովորական աշխատանքն ըստկսելու ժամանակ ևս աղօթքի կարիք կար և Նարեկացին այդ էլ ի նկատի է ունեցել ու գրել է աղօթք. «Ուղղեա՛ Հոգւոյդ քո լիմաստութեամբ զյաջողուած ձեռինս գործոյ ընդ հեծութեան ձայնիս մաղթանաց։ Զօրացո՛ Տէր ի հանդէս բարի ճգնաւորական արի վաստակոյ. կցորդ լեր կարեացս տկարութեան. թեթեւս կացո զաշխատութեանս այս սկիզբն. արագեա՛ միչտ կարող զյառաջադրեալ ձեռակերտս. դիւրաւորս ընթացո ի յաւարտումն լրմանն։ Ի վախճան իրին՝ բերկրութեամբ զիս հասո. ժաման կացուսցես՝ ի հանդիպումն յուսոյն. կցորդ լեր ուղւոյն, ճանապարհիս ընթացից» (Ձե. զլուխ, էջ 446–7)։ Հին դարու հեթանոս մարդն ևս իւր բոլոր ձեռնարկներն սկսելուց առաջ համապատասխան աստծու էր դիմում զոհում. արևելքում աստղերի դասաւորութեանն էին նայում ու նոր գործ սկսում. քրիստոնեան էլ իւր Աստծուն պիտի դիմէր գործի յաջողութեան համար։

Նարեկը տարածելուն և հրաշագործ աղօթագիրք դառնալուն նպաստել է նաև այն հանգամանքը,

որ աղօթագրքում կայ բժշկութեան աղօթք, դիւահարին, լուսնոտին վերաբերող (ԻՀ. 136)։ Դիւահար ասելով միջին դարում հասկանում են ամեն տեսակ ներքին հիւանդութիւններ. յատկապէս ընկճաւորներին–էպիլէպտիկներին, որոնց համարում էին սատանաներից բռնուած, ու երկիւղ էին կրում։ Այդպիսիներին բժշկել միայն Քրիստոսից չնորհք ունեցողը կարող էր. Նարեկացին համբաւաւոր սուրբ էր. ժողովրդի հաւատալիքով իւր կենդանութեան ժամանակ դիւահարին բժշկել է. նա Քրիստոսին իւր իսկ աչքով տեսել է. Նարեկացին ինքն էլ իւր աղօթագիրքը բժշկարան է յայտարարում. բնական հետևանքն այն կը լինի, որ սուրբը մարդու գրածը արժէք ունի. բժշկութիւն անողը իւր չնորհքը իւր գրածի մէջ էլ կը դնի. հետևապէս աղօթագիրքը սուրբ է, բժշկութեան միջոց և հրաշագործ(*)։

Նարեկացին ինքը իւր գրքին այդպիսի հրաշագործ բժշկութեան չնորհ վերագրելու խնդրով դիմում է, և որովհետև սուրբ է ժողովրդի համոզմունքով, ուրեմն և նրա խնդիրը Աստուած կը կատարէ «եթէ վտանգ մահու անձնական ցաւոյ՝ զոք պաշարեսցէ, դուցէ փրկութիւն սովաւ առ ի յոյս կենաց՝ յաղօթելն առ քեզ կեցուցիչ. եթէ տագնապաւ տարակուսի՝ ի սիրտ խոցիցի, քաղցրութեամբ քո սովաւ ապրեալ ողջասցի։ . . . եթէ սարսուռ դիւային ջերման՝ զօրութեամբ ինչ զոք խռովեսցէ, սթափեսցէ ի սոյն յայս նշան խոստովանեալ եւ երկրպագեալ խաչիդ խորհրդոյ» (Գ. զլուխ, էջ 19–20). կամ ասում է «Շօշափեսցին սովաւ որսքն, գտցին գայթակղութիւն–

(*) Տե՛ս յաւելուած։

քըն, յանդիմանեսցի անճառք, քամեսցին չարեացն մեացուածքն» (ՋՀ. գլուխ, էջ 458). կամ «Եւ որ ոք ընթերցցի զայս ազերս ձայնի՝ մաղթանաց գոչման աղօթիւցն հայցման ծերոյ և տղայոյ, կուսի և երիտասարդի, և եթէ յաղախնաց ոք պաղատեսցի աստուածսիրաբար, հաւատարապէս անաչառութեամբ ընկալցի ի քէն մասն երանութեան՝ պարտուց ազատութեան, հասանել վերստին յանարատութիւն նորոգ մաքրութեան, նկարեալ գարձեալ զքոյդ կերպարան անվոխելի» (Ղ. գլուխ, էջ 464–5)։

Այսպիսով յիրաւի աղօթագիրքը միայն «առիթք արտասուաց եւ պատճառք աղօթից» չէ, այլ նաեւ «Սպեղանիք զօրաւորք՝ վիրաց անբժշկականաց դեղք ազդուականք ցաւոց անտեսականաց հնարաւորութիւնք բազմամանեայ երկանց վտանգից» ինչպէս «Դրութիւնք»ում է գրած։

Անապատականն ու աշխարհականը հաւասարապէս իրենց կարիքներին յարմար էին գտնում Նարեկը, մէկը աղօթելու և արտասուելու, մեսը իւր հիւանդութիւնը բժշկելու համար։ Եւ ցայսօր էլ հայ ժողովրդի մէջ կան և հոգևորական և աշխարհական անձինք, որոնք Նարեկը իբր հրաշագործ գիրք են պահում մօտները, հիւանդների վրայ կարդում. Նարեկի առաջ մոմ վառում, խունկ ծխում։ Միջնադարի մարդը դեռ ապրում է այժմ էլ իւր հոգու որոշ մասով, որքան էլ անցած լինի չուրջ հազար տարի։ Հեթանոսական ըմբռնումը շատ է ուժեղ և եկեղեցին պահել է այդ ըմբռնումը ու ժողովրդի հետ նրանով ապրել ու ապրում է դեռ, թէև թոյլ, աղաւաղուած, բայց դեռ կայ այդ։

Նարեկը արժէք է դարձել ժողովրդի համար և

հրաշագործ հէնց այս ըմբռնման չնորհիւ և ոչ թէ իբր գեղարուեստով, փիլիսոփայական արժէքի տեսակէտից։ Նարեկը իւր խրթին ոճով այժմ էլ լրիւ վերծանել դժւար է, ոչ միայն հասարակ ընթերցողի, այլ նաև աստուածաբան–բանասէրի համար։ Նարեկը լի է միջնադարեան սկոլաստիկ ըմբռնումներով մի կողմից, որոնց անծանօթ մարդը չի հասկանայ, միւս կողմից Ս. Գրքից բազմաթիւ մէջբերումներ ունի, ակնարկներ կան այս ու այն դէպքի, գաղափարի մասին և ով Ս. Գիրքը լաւ չգիտէ նա չի էլ հասկանայ այդ կտորները. եթէ գիտնական վարդապետը հազիւ կարողանում էր լուծել, լուսաբանել Նարեկը, ի՞նչ խօսք, որ սովորական ընթերցողի համար Նարեկը մեծ մասամբ անհասկանալի էր մնում և նա կարդում էր գիտնալով միայն, որ այդ կարդալը ապաշխարել կը նշանակէ և դրանով էլ գոհանում էր։ Նրան գրաւում էր արևելեան ճոռոմաբան ոճը, խրթնաբանութիւնը. հոգեբանական է որ խրթին ոճը առհասարակ ընթերցողի մէջ այն միտքն է զարթեցնում, որ գրուածքը իմաստալի է, փիլիսոփայական է. հայ սովորական ընթերցողը նոյն հոգեբանութեամբ էր առաջնորդւում և Նարեկի արժէքը բարձրանում էր նրա աչքում, որովհետև չատ բան մութ, անորոշ էր մնում և նրանից իբրև աստուածային գաղտնիք էր երևում այդ։

Դաւանաբանական խրթնաբանութեան մի քանի օրինակներն էլ բաւական կը լինին ցոյց տալու, որ Նարեկը իւր ամբողջութեամբ անմատչելի էր ընթերցողին եւ որ նա երբեմն թողնում է եգիպտական Իերօգլիֆի տպաւորութիւն ու զարմանք առաջ բերում, քան պարզ ուսած գաղափարի հիացում։ Օրինակ «Եւ քեզ միայնոյ պատճառիդ, և միոյդ ի միոյ

պատճառէ, և ունողիդ զպատճառ միոյ» (Լհ. գլուխ, էջ 165). կամ «եւ քեզ միայնոյ սկզբանդ և անսկզբանդ, ընդ սկզբանդ, և սկզբնաւորիդ սկզբանդ» (ՅՀ. գլուխ, էջ 243). կամ իւր դաւանական ըմբռնումները պարզող Լդ. և Հգ. գլուխները, կամ զանազան գլուխներում Թեւերի, անուննների, երկնքի, դժոխքի, Քրիստոսի աստուածութեան մասին տուած սկոլաստիկ մեկնութիւնները:

Նարեկը միստիկ գրուածք է ամբողջապէս. Նարեկացին հայ մեծ միստիկն է միջին դարու: Միստիկների գրական երկերում նկատուած է հակասական արտայայտութիւններ, որոնք տրամաբանական վերլուծութեան չեն ենթարկուում: Միստիկի համար Աստծու գաղափարը հակասող որակումներով, միմեանց ժխտող ածականներով է արտայայտուած. միստիկը Աստծուն ըմբռնում է ոչ բանականութեամբ և ոչ ըզգացմունքներով կամ զգայարաններով, այլ վեր-գիտակցութեամբ, մի այնպիսի հոգեկան վիճակով, որ իրեն՝ այդ վիճակը կրողին միայն յայտնի է և նա չի կարող արտայայտել լրիւ:

Միստիկը աւելի չատ իւր գրական արտայայտութիւնների մէջ երաժշտական ներդաշնակութիւն է ընդունում, քան իմացական գաղափար: Միստիկի գրուածքը չի կարելի քննել, պարզաբանել, վերլուծել սովորական քննադատական իրաւունքով՝ ոճի, տրամաբանութեան, գեղարուեստական արտադրութիւնների կամ հոգեբանական ճշտութեան տեսակէտից. այստեղ մենք գործ պիտի ունենանք իւրայատուկ քննութեան եղանակի հետ: Ըստ իս, այս դէպքում նախ անհրաժեշտ է այդպիսի գրուածքը կարդացողի և քննադատողի համար միստիկ տրամադրութեան տեւելը, ապա թէ

գրուածքը քննադատելիս բազմիցս կարդալ գրուածքը, որ ականջը վարժւի գրուածքի երաժշտականութեան և երրորդ՝ պիտի իբր մի միաձոյլ ամբողջական քննել, հասկանալ, առանց մասերի բաժանելու, առանց խնդրին այս կամ այն տեսակէտից մօտենալու. այլապէս գրուածքը կը կորցնէ իւր արժէքը, ոչ միայն այդքան, այլև կը թեայ տարօրինակ հոգեկան անբնական վիճակի արտադրութիւն:

Նարեկը միստիկ գրուածք է ամբողջապէս, Նարեկացին իւր այդ գրուածքում երևան է գալիս իբր քնական հայ միստիկ որը իւր հոգեկան զմայլանքներով, իւր ապրումներով, իւր սքանչացման տեսիլքներով աւելի բիւրեղացած, աւելի նուրբ ու գրաւիչ է քան կաթոլիկ եկեղեցու ամենամեծ միստիկ սրբուհի Թերեզան կամ Իգնատիոսը կամ Յովհաննէսը, և այլն:

Նարեկացին չի գործադրել երբեք միստիկ տրամադրութիւն առաջ բերելու այն արհեստական միջոցները, որ գործադրել են չատ չատերը. լինի այդ խիստ ճգնաւորական կեանքի միջոցները, թէ վարժութիւն մարմնի ֆիզիքական արտայայտութիւնների, որ գործադրել են ու գործադրում են հնդկական և այլ ճգնաւորներ:

Նարեկացին իւր միստիկայով, իւր միստիկ հոգեկան ապրումով համաչխարհային հանճար է, որի գրուածքը դրա լաւագոյն ապացոյցն է: Նարեկը հասկանալ գերականական-տրամաբանական վերլուծութեամբ կը նշանակէ Ռափայելի «Սիքստինեան Մատոննան» նկարը հասկանալու համար նկարի ներկերի քիմիական բաղադրութիւնները քննել, որոշել որի՞ց որքան է խառնած և ի՞նչ խառնուրդներէն կազմուած, որոշել կտաւի չափը, ծանրութիւնը, արժէ-

քը, այսպէս վարուող գեղարուեստը կը դատապարտէ վաճառականական գծուծ հաշիւ, և հետևանքը կը լինի ծաղր:

Նոյնը և Նարեկի գրուածքն է. Նարեկը հասկանալու համար պիտի իւր ամբողջութեամբ վերցնել այն, թափանցել Նարեկացու միստիկ հոգին, որ հասկանալի լինի. իսկ միստիկ տրամադրութիւնը նոյնքան հազուագիւտ է և իւրատեսակ մեծ տաղանդ, որքան իւրաքանչիւր այլ գրական տաղանդ: Նարեկը հայ միստիկայի լրացած գեղարուեստական, կատարեալ գործուած խօսուն արձանն է:

Հայ մարդն ընդհանրապէս աղօթող է եղել. առևելցի որոնող հոգու տէր, կրօնական տրամադրութեամբ հարուստ: Հայ ժողովրդի կեանքի պատմական մէջավայրն էլ նպաստել է այդ տրամադրութեան ուժեղանալուն, արմատաւորելուն: Հանգիստ կուլտուրական ստեղծագործման չրջան նրա պատմականում քիչ է եղել. անընդհատ խռովայոյզ հասարակական կեանք է ունեցել նա. արտաքին թշնամիների յարձակումից, թէ ներքին ֆէօտալական կողմից ապրող աւատական իշխանների ընդհատումներից: Նրա կեանքի մեծագոյն չրջանը նուիրուած է եղել ինքնապաշտպանութեան. նրա աչքը առաւելապէս ուղղուած է եղել իւր գոյութիւնը սրից, հրից, տանջանքից որևէ կերպ փրկելուն. հայրենիքը թողնելն ու գաղթելը նրա պահանջն է դարձել. գժոխք է նկատել նա իւր երկիրը. արիւն է տեսել, մոխիր ամեն սերունդ իւր կեանքի ընթացքում: Բնական է, որ վիշտը պիտի մթերւէր նրա հոգում, տառապանքը ծանրանայ նրա սրտի վրայ և կարիք զգար սիրտը հանգստացնելու, հոգին թեթևացնելու: «Ածու փոքր» հայ ժողովուրդը չունէր բացի իրենից ոչ մի պաշտպան, ոչ արևելքում և ոչ արևմուտքում, և նրա աչքը ուղղուել է երկինք. վերին Այծն է եղել նրա վերջին հանգրուանը իւր ալէկոծուող, ժայռերին խփուող նաւակի նաւահանգիստը:

Վիշտը քամելու, տառապանքը մէկին պատմելու միակ միջոցը նա իրրև ամբողջութիւն գտել է աղօթքում. նրա պատմական ֆօնի վրայ ամենից ցայտուն պատկերը եղել է վանքը և նրա առաջ չոքած աղօթաւոր հայը: Այդ է ասում մեզ հասած հայ պատմագիրը ընդհանուր առմամբ և այդ ընդհանուր պատմական հոսանքի, այդ լաւագոյն արտայայտողը Նարեկացին է եղել իւր հոգեչունչ աղօթքը գրելով: Նարեկացին իւր այդ Ողբերգութեան մատեանով հայ մարդու ոգին է ցուցադրել համաչխարհային պատմութեան առաջ. ապաչխարող հայ մարդու, որը վշտերի մէջ է տապակւում, որին ամեն տեսակ սատանաներ–աւերումներ, յարձակումներ նեղում են և որը չմառաօրէն ձգտում է մեծին–բարձրին, յաւիտենականին անգամ մոխրի մէջ նստած, թէ հրդեհով չրջապատած:

Եթէ հայ մարդը պիտի ունենար իւր էպօսը, իւր դիւցազներգութիւնը, գրուած որևէ հեղինակի ձեռքով, ապա սխալած չեմ լինի եթէ ասեմ, որ Նարեկացին է եղել այդ էպօսը – Ողբերգութիւնը և ոչ դիւցազներգութիւնը գրելու, որովհետև հայ մարդը դիւցազուններով աղքատ է, ողբով հարուստ:

Նարեկացին այդ հոգեկուծող մատեանը գրելիս, եթէ կարելի է ասել, կարծես այդ պահանջի – անգիտակցականի գիտակցութիւնն է եղել, նրա մէջ եղել է Ինտուիտիւ ըմբռնումն այդ բանի: Ինչպէս կլասիկ մեծ դիւցազներգուները (Հոմերոս, Վիրգիլիոս) էպօսը

դրելուց առաջ դիմել են «մուսայի»ն, որ իրենց ոյժ տայ և չնորհք երգելու իրենց դիւցազնի սխրագործութիւնները, այսպէս էլ Նարեկացին կարծես մի ձօնով դիմում է Սուրբ Հոգուն, որ իրեն ներչնչէ, չնորհք տայ աղօթաւորի, ապաչխարողի երգը երգելու, նրա հոգու դժբախտութիւններն ու վշտերը հոգերգելու։

«Զայն հառաչանաց, հեծութեան սրտի՝ ողբոց աղաղակի քեզ վերընծայեմ տեսողդ գաղտնեաց. և մատուցեալ եդեալ ի հուր թախծութեան անձին տոչորման՝ զպտուղ ըղձից ճենճերոյ սասանեալ մտացս, բուրվառաւ կամացս առաքել առ քեզ» (Ս. գլուխ, էջ 3)։ Ասպա նախընտրում է Ս. Հոգուն, որ իրեն ոյժ տայ և կարողութիւն երկնելու իր հրաշալի ծնունդը. «ա՛ռ զաւանդ մաղթանացս, և տուր զողորմութիւնն քո չնորհացդ. ընկալ զփոքրս ի տկարէս և չնորհեա՛ զմեծդ առ ի հզօրէդ. զօրացո՛ զբան ըղձման, առաքեալ ի մեզ զհոգի ի բարձանց աստուածաչունչ պատգամօքս ի սմա եդելոցս։ . . . Մի՛ լիցի լինձ երկնել, և ոչ ծնանել. ողբալ և ոչ արտասուել, խորհել և ոչ հառաչել. ամպել և ոչ անձրևել» (Բ. գլուխ, էջ 10)։ Հոգերգուն իր սկսած գործը—մարդու հոգու աշխարհի մաքրագործման, աստուածացման տաժանակիր աշխատանքը ծանր է համարում իր համար. ոյժից վեր և կարիք է զգում որ նոյն Ս. Հոգին, նոյն Մեծ Ոյժը, երկնայինը, որին ինքը դիմել է և որից ներչնչել է իր սկսածը նա աւարտէ, որ թերի չլինի, որ տգեղ չլինի. այլ մեծ, գեղեցիկ, հոյակապ. «Զսկսեալս իմ դու կատարեա՛. եղիցի հոգի քո խառնեալ ի սա. չունչ զօրութեան մեծիդ միասցի ի քո ինձ չնորհեալ ստեղծաբանութիւնս» (Գ. գլուխ, էջ 20)։

Մինչև Դ. գլուխը մի մեծ ձօն է, խնդրանք Ս. Հոգուն, նրա չնորհը խնդրելու, ապա թէ սկսւում է տենչացող, ձգտող, ապաչխարող մարդու հոգու ապրումները երգել զանազան տարուբերումներով, վայրի-վերացումներով։ Կրքերն են նրա հոգերգութեան պատերազմի մարտիկները. նրա դիւցազնը Քրիստոսին հասնել ցանկացող մարդն է, որ պայքարում է այդ հակառակորդների հետ անընդհատ, և այդ պայքարը վերջ չունի։ Եթէ դիւցազներգութեան համար ընդունուած բանաձևից հրաժարուենք ու նկատենք, որ ոչ պակաս դիւցազներգութիւն — էպօս է եւ Միլտօնի «Դրախտ կորուսեալ»ը ապա կարող կը լինինք ընդունելու, որ Նարեկն էլ իր հերթին նման մի արժէքաւոր էպօս է. հայ մարդու — Նարեկայ վանուց վանականի տենչացող, ձգտող այրուող ու չվառուող հոգուց ելած իբր գեղարուեստական կերտուածք, երբ մանաւանդ նրա սկզբնական խորագրութիւնը կը վերականգնուի և աւելորդ յաւելումները, որոնք ընդհանուր չէնքի ուրոյն ոճին խանգարում են, կը հեռացուին, կը զատուին։

Նարեկացին հայ մարդ լինելով ընդգրկել է և տիեզերականը, համամարդկայինը, ու ապրել խորապէս. այդ համամարդկայինը միշտ վերածնելու ձգտող ցանկութիւնն է մարդու, որը աշխարհի առեղծուածները լուծելով առաջ է գնում, տիեզերքի գաղտնիքները որոշելով բարձրանում է յաւիտենականի սանդուխքով դէպի վեր, դէպի միշտ վեր — դէպի երկինք, դէպի այն՝ որին ձգտում է մարդը, տենչում է իր կապանքների, չղթաների մէջ, ազատագրւում է կարատելով ծանր չղթաների օղակները մէկը միւսի ետևից տաժանակիր աշխատանք, արիւն, արցունք

թափելով, ուղեղ մաշելով, նեարդները քայքայելով։ Այդ յաւիտենական, համամարդկային մեծ տենչն է հոգերգել Նարեկացին ու դրել Բարձրեալի–յաւիտենական զարգացման մեծ գաղափարի առաջ, որ Նրան յիշեցնէ կարծես թէ մարդը ձգտել է, ձգտում է ու պիտի ձգտէ. անվերջ պիտի հասնէ անհասին, տեսնէ անտեսին, ընդգրկէ անսահմանին, ապրէ յաւիտենականը «Եւ արդ՝ ընկալ զայս հիւսուած բանի աղիողորմ հեծեծանաց, և հոտոտեսցիս յայս նուէր բանի՝ անարիւն զոհի՝ թագաւոր երկնի. և օրհնեալ սրբեա զտառ մատենի այսր ողբերգութեան. և գրեալ գրոշմեսցես յարձան յաւիտեան՝ ընդ հաճոյականացն ըստացաւորութիւն։ կացցէ առաջի քո մշտնջենաւոր և յիշատակեսցի ի լսելիսդ քո հանապազ. բարբառեսցի շրթամբք ընտրելոց քոց, և խօսեսցի բերանովք հրեշտակաց քոց. տարածեսցի հանդէպ աթոռոյ քոյ և ընծայեսցի ի սրահ սրբութեան քոյ. խնկեսցի ի տաճար անուան քոյ, և բուրեսցի ի սեղան վառաց քոց. պահեսցի ի գանձարանի քում և համբարեսցի ի ըստացուածս քո։ Պատմեսցի ի յականջս ազգաց, և քարոզեցի ի լուր ժողովրդոց. նկարեսցի ի գրունս իմաստից և տպաւորեսցի ի սեամս զգայութեանց. իբր կենդանեօք՝ զիմս պատմեսցէ խոստովանեալ զանօրէնութիւն. և թէպէտ վախճան ընկալայց իբր զմահացու, այլ յարակայութեամբ բարի այսր սուիերի գրեցայց կենդանի։ Մնասցէ սա անեղծ ի կամս քո Տէր՝ ինձ պատժապարտիս համբարձեալ միշտ՝ անդուլ գաթիչ, . . . աշխարհալուր բողոքիչ» (ՁՀ. գլուխ, էջ 457)։

Անապատականն իւր էութեամբ տիեզերաքաղաքացի է. ազատ՝ ազգային, աշխարհագրական, պատմական, լեզուական սահմանափակումներից։ Անապատականը «անասունից մարդ–ապա և աստուած» դառնալ ցանկացող մարդն է. նոյն տենչի ներկայացուցիչը, որի համար ժամանակաւորը և սահմանաւորը չղթայ է և որից ազատագրելու բուռն պայքարն է վարում նա իւր հոգու աշխարհում։ Նարեկացու հոգերգած Ողբերգութեան մատեան — Նարեկը այդ տենդի — պայքարի մի ուշագրաւ, իւրատեսակ արտայայտութիւնն է, մի դեռ ոչ լիովին յղկուած ադամանդ ընդհանուր գեղարուեստական գոհարների համամարդկային մեծ թանգարանում դրուած։

9-ն Փետր. 1923 թ.

Սեւան

ՎԵՐՋ

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ-Арм.ССР
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
им. А. Мясникяна

ՅԱԽԵԼՈՒԱԾ

Նարեկացին ժողովրդից, յատկապէս Վասպուրականի ժողովրդից սիրուած սուրբն է եղել և քնակատարար ժողովրդական առասպելի, երգի մէջ մտել։ Կան բաւական երգեր, առասպելներ Նարեկացու մասին, թէև ոչ լրիւ գրի առնուած. այդ երգերից մէկը կարևոր եմ համարում յիշել, ցոյց տալու համար թէ ժողովրդի գիտակցութեան մէջ ի՞նչպէս է անդրադարձել այդ հայ մեծ միտքիկը, հայ աղօթաւոր ճգնաւորը.

«Նարեկացի սուրբ վարդապետ
Հոգին սուրբ եր պեմուցաք,
Ոչ մեջ սրտին խեռ կբռներ
Ոչ մեկ մարդուց կառներ նիպք
Ծառայ կելնեմ Նարեկացուն։

Տարին բամամ տասն մեկն եր
Հաց տարաւ մշակներաց
Մշակներ օրօխկեցին՝ ջուրն գնաց
Մշակներ հացն առեն կերան
Մեզար լիք բեակաւ արին
Նարեկացուն ծաղր անեին
Ծառայ կելնեմ Նարեկացուն։

Մեզար ուր առջեւ բաշեց
Զորս գլեօխ խաչակնքեց

Գարձուց եւ գնացն Նարեկացին
Մշակներ զարմանիք մնացին
Ինկան ձեռք ոտք Նարեկացուն
Ծառայ կելնիմ Նարեկացուն։

Վանք մ'ի շինեք վերեւ գեղին
Վեղար գլխուն փիլոն քեւին
Գիշեր ցորեկ ժամատեղին
Լեռս եր սիւռաք մարթ չեր տեսնայ։

Մեկ ուս Գորգ մը կեր մեջ են գեղին
Ամենեւին ժամ չեր իջե
Նարեկացին խոսեց ուս Գորգին
Հեր չես ի գայ ժամ աղօքին.
— Ես շատ ունիմ տամ տեղվաք
Ի՞նչ անեմ ժամու խերիաք
Ի՞նչխ թողնեմ իմ բան գամ ժամ։

Օրն եկաւ տարին բմմաւ
Վաղջանին եկաւ ուս Գորգին
Խող տեղ չեր ի տայ Ցարաղաք
Նօր տեղով տապան բացին
Փեշաս կանչեց տաք խամաճ
Խող տեղ չեր իտայ Ցարաղաք։

Ինկան ձեռք ոտք Նարեկացուն
Ծառայ կելնեմ Նարեկացուն
Խաչակնքեց Ուս Գորգին
Ուս Գորգն եր ար յարբցուց
Որ յարբցուց խոստվանցուց
Նոր հող տեղ իտու Ցարաղաք։

Երկու վարդապետ կին (գային) կէս Սիս
Ուրիմ բարձրին բռնե ճանց Մասիս
Էլան չափիւկ ջուր լցուցին
Աստուծոյ շնորհով դադրցուցին.
Նարեկացուն օրօղկեցին
Մենք էլ տեսանք ուր ճարամաք
Ծառայ կելնեմ Նարեկացուն:

Ինոնց օրօղկաց չափկի ջուր փոխեց
Գզած բամբակ ուր ձեռ բռնեց
Վառվառ կրակ մէջ փաթուրեց
Ջապկի ջրի մէջն էլ դրեց
Վարդապետացն էլ օրօղկեց:

Վարդապետներ որ էն տեսան
Ինոնք էն տեղ շատ զարմացան
Երբանք տեսնենք Նարեկացին:

Էկան խաստան Նարեկ սարին
Հրեշտակ խապար տվու Նարեկացուն
Քեոյ վարդապետ էկան ճե խուր
Ծառայ կելնեմ Նարեկացուն:

Վեղար գլխեն էլ վեր իտիր
Խովուվու ճապանակ առից բեւին
Գնաց խաստաւ մէջ ուր սարին
Էկաւ դիմաց ջուխտ վարդապետին
Աչքն առեց ջուխտ վարդապետին:

Վարդապետներ ջուր ուզեցին
Ծառայ կելնիմ էն խովուվուն

Նաչակնկեց վեր էն սարին
Գաւազան իզար վեր չոր տարին
Ջուր բղխեցուց տարի մէջեն:

Առաւ խմցուց վարդապետաց
Ծեր սիւտակ մուրուսնին ճանէլացաւ
Ինոնք էնտեղ շատ զարմացան
Ինոնք էնտեղ անմահացան
Ծառայ կելնեմ Նարեկացուն:

Ճամբախ ընանց իտուր վարդապետաց
Նաչակնեց վերայ սարին
Երկու գէլ եկան առջեւ ոչխարին
Գէլերն առաց նովիւ ուր ոչխարին
Գնաց հասաւ մէջ ուր վանքին
Հանդերձ հագաւ վարդապետի
Էկաւ դիմաց վարդապետաց
Աչերն առեց վարդապետաց:

Օրն էր ուրբաթ մէջ շաբաթին
Երկու եղունիկ էլ բռնեց
Խրաւեց ուան գեախն էլ խփեց
Վարդապետներ պատիւ կանչեց
Խնդում արին Նարեկացուն:

Նարեկացին ծուռ ի ուր օրինաց
Ուրբաթ շաբաթն էլ չի գիտե
Ծառայ կելնիմ Նարեկացուն
Սեղան ուր առջեւն էլ տաբեց
Ջորս գլխոխ խաչակնեց
Փետուր եկաւ ուրիմ ծածկեց

Թռաւ գնացին խեհ հրամին
Վարդապետներ մաք մնացին։

Ինոնք հնտեղ շատ զարմացան
Լալով ինկան ձեռ nsf Նարեկացուն
Քե տուե ատուածութիւն
Մարմնով կանես ուրախութիւն
Հոգւով կերթաս արքայութիւն»։

(Լուսոյ, 1899, Դիւրբ Բ., էջ 325–328)

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՆԱՐԵԿԱՑՈՒ ԵՒ ՆԱՐԵԿԻ ՄԱՍԻՆ

1. *Միսակ Գոչունեան (Բասիմ)* – Նարեկի աշխարհաբար թարգմանութիւն Կ. Պոլիս, 1902 թ.
2. *Բարսեղ Սարգսեան* – Ուսումնասիրութիւն Մանիքէա–Պօղիկեան աղանդոյն. «Բազմավէպ» 1892–93
3. «Լուսոյ» ամսագիր. 1899 թ., եր. 322 – ժողովրդի խօսքը, և 1903 թ., N. 4., եր. 251.
4. *Արշ. Զօպանեան* – «Ծաղիկ» 1895 թ.
5. *Ստ. Մալխասեան* – «Ցուշարձան» ժողովածու Վիեննա, 1911 թ.
6. «Անահիտ» – ամսագիր, 1907 թ. N. 3–4–5
7. «Բազմավէպ» – 1892 թ. օգոստ. 1900 թ.
8. «Հայապատում» – Ալիշան, Բ. հտ. 1900 թ.
9. «Լոյս» – ամսագիր, 1906 թ.
10. «Տաճար» – ամսագիր, 1909, 1910, 1912 թ.
11. «Միսն» – ամսագիր, 1870 թ.
12. «Ճռաքաղ» – 1861 թ. տետր ԺԹ. հատոր. Բ.
13. «Բիւզանդիոն» – 1903 թ. N. 2031
14. «Համբաւաբեր» – 1916 թ. N. 14, եր. 435–39
15. «Մատենագիտութիւն» – Ղազիկեան, «Աղօթագրքեր» մասը
16. «Արեւելք» – 1893 թ. N. 2727, 2757, և 1890 թ.ին N. 1999
17. Getzer - Real-Encylop, *բառարանում։*

ԳՐ. ՆԱՐԵԿԱՑՈՒ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. *Վենետիկ* – 1827 թ., *Գրիգորի Նարեկայ Վանից Վանականի Մատենագրութիւնք.*
2. *Վենետիկ* – 1840
3. *Մարսիլիա* – 1673
4. *Կ. Պոլիս* – 1700+
5. *Կ. Պոլիս* – 1726
6. *Կ. Պոլիս* – 1755
7. *Կ. Պոլիս* – 1763
8. *Վենետիկ* – 1766
9. *Կ. Պոլիս* – 1774
10. *Կ. Պոլիս* – 1782
11. *Վենետիկ* – 1789
12. *Կ. Պոլիս* – 1790
13. *Վենետիկ* – 1795
14. *Կ. Պոլիս* – 1802
15. *Կ. Պոլիս* – 1807
16. *Վենետիկ* – 1807
17. *Կ. Պոլիս* – 1822
18. *Կ. Պոլիս* – 1832
19. *Վենետիկ* – 1833
20. *Կ. Պոլիս (?)* – 1836
21. *Կ. Պոլիս* – 1839
22. *Զմիւռնիա* – 1843
23. *Վենետիկ* – 1844
24. *Կ. Պոլիս* – 1845
25. *Կ. Պոլիս* – 1847
26. *Վենետիկ* – 1851
27. *Կ. Պոլիս* – 1852
28. *Կ. Պոլիս* – 1858
29. *Փարիզ* – 1860
30. *Կ. Պոլիս (?)* – 1864
31. *Երուսաղէմ* – 1868
32. *Զմիւռնիա* – 1870
33. *Երուսաղէմ* – 1875
34. *Երուսաղէմ* – 1886
35. *Վենետիկ* – 1893
36. *Վենետիկ* – 1804
37. *Տփխիս* – 1905
38. *Կ. Պոլիս* – 1902, *Աչխարհաբար, Քասխմի Թարգմանութիւն:*

ԳԼԽԱԿԱՐԳՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱՆԱՊԱՏԱԿԱՆԸ

	Երես
ՀԵԳԻՆԱԿԻՆ ՄԱՍԻՆ	Գ — Ժ
Գլ. Ա.	
Յոյն–հռոմէական աշխարհը եւ Եկեղեցու կազմակերպումը Բ. — Ե. դարերում:	7
Գլ. Բ.	
Անապատականի առաքնձայատուկ կողմը եւ կրօնական սահմնչացումը (էֆսազ):	26
Գլ. Գ.	
Անապատ եւ անապատ բաժուողներ:	47
Գլ. Դ.	
Անապատականի կենցաղը:	61
Գլ. Ե.	
Մեղքը եւ անապատականի պայքարը նրա դէմ:	81
Գլ. Զ.	
Անապատականը սուրբ:	103

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

“ՆԱՐԵԿ„Ը

Երես

Գլ. Ա.

Անապատական կեանքը Հայաստանում մինչեւ Ժ.րդ դարու վերջը։ 115

Գլ. Բ.

«Նարեկ»ի ճախընթացը եւ Գրիգոր Նարեկացի։ 130

Գլ. Գ.

Նարեկացու վճռի հիմքերը։ 157

Գլ. Դ.

Քրիստոս ըստ Նարեկի։ 170

Գլ. Ե.

Ապաշխարող Նարեկացին։ 185

Գլ. Զ.

Նարեկը հրաշագործ–աղօթագիրք եւ նրա արժէքը։ 212

ՅԱՒԵԼՈՒԱԾ. 226

Գրականութիւն Նարեկացու եւ Նարեկի մասին. 231

Գր. Նարեկացու հրատարակութիւնները. 232

Դիմակարգութիւն. 233

ՀՀ Ազգային գրադարան
NL0168217